

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԱԴՐԲԵՋԱՆԱՆԱՅՈՒԹՅՈՒՆ.
ԿՈՐՍՎԱԾ ՆԱՅՐԵՆԻՔ.
ՆԱՄԱՐԺԵՔ ՓՈԽՆԱՏՈՒՅՈՒՄ

ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆՅՈՒԹԵՐԸ
ԵՐԵՎԱՆ , 19.12.2005

«ԱԴԻԲԵՋԱՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ.
ԿՈՐՍՎԱԾ ՀԱՅՐԵՆԻՔ.
ՀԱՄԱՐԺԵՔ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ»

ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆՅՈՒԹԵՐԸ
ԵՐԵՎԱՆ, 19.12.2005

ԵՐԵՎԱՆ
«ՆԱԻՐԻ»
2006

1368

Ա 211 Աղրբեջանահայություն. կորսված հայրենիք. համարժեք փոխհատուցում» կոնֆերանսի նյութերը, Երևան, 19.12.2005.–
Եր.: Նաիրի, 2006, 232 էջ:

Սույն հրատարակությունն իր մեջ ամփոփում է «Ղարաբաղյան հակա-
մարտություն» փախստականներ, տարածքներ, անվտանգություն» աշխա-
տությունում (հրատարակված՝ «Որակի համընդհանուր ղեկավարման
աջակցության» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ,
Տիգրանուհի և Էդմոնդ Ռուսիյանների աջակցությամբ) առաջարկվող մո-
տեցումների քննարկման նպատակով «Որակի համընդհանուր ղեկավար-
ման աջակցության» հասարակական կազմակերպության և Թուֆենկյան
քարեգործական հիմնադրամի համագործակցությամբ 2005 թվականի դեկ-
տեմբերի 19-ին Երևանում կազմակերպված «ԱՂԻՐԲԵԶԱՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ.
ԿՈՐՄՎԱԾ ՀԱՅՐԵՆԻԷ. ՀԱՄԱՐԺԵԸ ՓՈՆՀԱՏՈՒՅՈՒՄ» կոնֆե-
րանսի նյութերը: Աղրբեջանահայության հիմնախնդիրների համակողմանի
վերլուծության և քննարկման նպատակով կոնֆերանսի կազմակերպիչները
քազմակարծության դրսևորման հնարավորությունն ապահովելու համար
կոնֆերանսին մասնակից էին դարձրել տարբեր քաղաքական գործիչների,
գիտնականների և փորձագետների:

Կոնֆերանսի նյութերը մշակվել և խմբագրվել են «Որակի համընդ-
հանուր ղեկավարման աջակցության» հասարակական կազմակերպության
ջանքերով:

Կոնֆերանսի նյութերը հրատարակվել են Թուֆենկյան քարեգործական
հիմնադրամի հովանավորությամբ, որը հիմնադրվել է 1999 թ. և ծրագրեր է
իրականացնում Հայաստանում ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետու-
թյունում՝ սոցիալական ապահովության, տնտեսության վերականգնման,
շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտներում: Թուֆենկյան քարե-
գործական հիմնադրամը 2003թ. սկսած ակտիվորեն ներգրավված է Լեռնա-
յին Ղարաբաղի սահմանամերձ գոտիների վերաբնակեցման գործընթացում:

0803010413
Ա _____ 2006
705(01)2006

ԳՄԴ-66.3 (2Հ)

ISBN 5-550-01448-3

© «Որակի համընդհանուր ղեկավարման աջակցության»
հասարակական կազմակերպություն

«ՈՐՄԿԻ ՀԱՄԵՆԴՀԱՆՈՒՐ ԴԵՄՈՎԱԿՐԱՄԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ» ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ԹՈՒՖԵՆԿՅԱՆ
ԲՄԲԳՈՐԾԱՎԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ
«Ղարաբաղյան հակամարտություն»
փախստականներ, տարածքներ, անվտանգություն»
աշխատությունում առաջարկվող մոտեցումների քննարկման նպատակով

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ
«ԱՂԻՐԲԵԶԱՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ. ԿՈՐՄՎԱԾ ՀԱՅՐԵՆԻԷ.
ՀԱՄԱՐԺԵԸ ՓՈՆՀԱՏՈՒՅՈՒՄ»
Կ Ո Ն Ֆ Ե Ր Ա Ն Ս Ի
(Երևան, «Կոնգրես» հյուրանոց, 19.12.2005)

ՄԱՆՆԱԿԻՑՆԵՐԻ ԿԱԶՄԸ

- | | |
|------------------|---|
| Տիգրան Թոլոսյան | ՀՀ ազգային ժողովի փոխնախագահ, ՀՀԿ |
| Արմեն Ռուստամյան | ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների
հանձնաժողովի նախագահ, ՀՅԴ |
| Վազգեն Մանուկյան | Ազգային ժողովրդավարական միության
նախագահ, ՀՀ ԱԺ պատգամավոր |
| Իգոր Մուրադյան | Քաղաքագետ |
| Ռաֆայել Ղազարյան | Ակադեմիկոս |
| Արման Հակոբյան | ՀՀ ԱԳՆ ռազմաքաղաքական վարչության
պետ |
| Վահրամ Աթանեսյան | ԼՂՀ ԱԺ Արտաքին հարաբերությունների
մշտական հանձնաժողովի նախագահ |
| Գագիկ Պետրոսյան | ԼՂՀ ԱԺ Արտաքին հարաբերությունների
մշտական հանձնաժողովի նախագահի տե-
ղակալ |
| Արմեն Աղայան | «Ազատագրված տարածքների պաշտպա-
նություն» հասարակական նախաձեռնու-
թյան քաղաքական քարտուղար |

Արկաղի Կարապետյան	ԼՂՀ պաշտպանության բանակի առաջին հրամանատար
Շավարշ Քոչարյան	Ազգային ժողովրդավարական կուսակցության նախագահ, ՀՀ ԱԺ պատգամավոր
Լարիսա Ալավերդյան	ՀՀ մարդու իրավունքների պաշտպան
Ալեքսանդր Արզումանյան	ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան
Արարատ Զուրաբյան	«Հայոց համազգային շարժում» կուսակցության վարչության նախագահ
Արամ Գ. Սարգսյան	Հայաստանի դեմոկրատական կուսակցության նախագահ, ՀՀ ԱԺ պատգամավոր
Ալբերտ Բազեյան	«Ազգային վերածնունդ» կուսակցության նախագահ, ՀՀ ԱԺ պատգամավոր
Վաղարշակ Հարությունյան	«Ազգային վերածնունդ» կուսակցության վարչության անդամ
Սուրեն Զոլյան	Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվի համալսարանի ռեկտոր
Ալեքսանդր Մանասյան	Պրոֆեսոր
Աշոտ Եղիազարյան	Տնտեսագետ
Գագիկ Եզանյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիայի գործակալության պետ
Սարասար Սարյան	«ԼՂՀ փախստականների կոմիտե» ՀԿ նախագահ
Մարգարիտա Հովհաննիսյան	Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի տնօրեն
Կամո Մարտիրոսյան	Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղի վերակառուցման և վերաբնակեցման ծրագրերի համակարգող
Արմեն Հարությունյան	Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի ծրագրերի համակարգող, Երևան
Սերգեյ Մինասյան	Հարավային Կովկասում ինտեգրացիայի և անվտանգության հարցերի գիտահետազոտական կենտրոնի տնօրեն, քաղաքագետ

Միխայիլ Աղաջանյան	Հարավային Կովկասում ինտեգրացիայի և անվտանգության հարցերի գիտահետազոտական կենտրոնի գիտաշխատող, իրավաբան-միջազգայնագետ
Արմեն Այվազյան	Հայաստանի Ամերիկյան համալսարանի պրոֆեսոր, քաղաքագետ
Ալեք Եմիգոմշյան	«Մոնթե Մելքոնյան» ՀԿ տնօրեն
Տիգրան Կյուրեղյան	«Մենք» ՀԿ նախագահ
Հրանուշ Խառատյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության պետ
Սևակ Արծրունի	«Երկիր» հասարակական կազմակերպությունների միության նախագահ
Հարութ Սասունյան	Լինսի հիմնադրամի փոխնախագահ
Հրաչյա Արզումանյան	Անվտանգության հարցերով փորձագետ
Ֆելիքս Խաչատրյան	ԼՂՀ ԱԳՆ տեղեկատվական վերլուծական վարչության պետ
Արա Տեր-Մարտիրոսյան	ՀՀ ԿԲ նախագահի խորհրդական
Էլեոնորա Ասատրյան	«Որակի համընդհանուր դեկավարման աջակցության» ՀԿ նախագահ
Գառնիկ Իսազուլյան	ՀՀ նախագահի անվտանգության հարցերով խորհրդական
Արման Մելիքյան	ԼՂՀ ԱԳ Նախարար

ԿՈՆՖԵՐԱՆՍԻ
ԾՐԱԳԻՐ

ՆԻՍ ԱՌԱՋԻՆ

10⁰⁰ - 12⁰⁰

Էլեոնորա Ասատրյան

Բացման խոսք

Շավարշ Բոչարյան

«ԼՂՀ հարցի կարգավորման ներկա փուլի միտումները»

Վահրամ Աբանեսյան

«ԼՂՀ-ն՝ որպես նախկին Ադրբեջանական ԽՍՀ հայության իրավունքների երաշխավոր»

Արմեն Ռուստամյան

«ԼՂՀ միջազգային ճանաչման հրամայականը»

Ալեքսանդր Մանասյան

«Ադրբեջանահայությունը՝ որպես ԼՂ հակամարտության մոռացված կողմ»

Հարցեր և ելույթներ

Ընդմիջում

12⁰⁰ - 12³⁰

ՆԻՍ ԵՐԿՐՈՐԴ

12³⁰ -14³⁰

Արմեն Աղայան

«Ազատագրված տարածքների պատկանելությունը՝ որպես դարաբաղյան բանակցությունների առանցքային խնդիր»

Վազգեն Մանուկյան

«Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման հեռանկարները»

Լարիսա Ալավերդյան

«Արցախի հիմնահարցը՝ մարդու իրավունքների համատեքստում»

Աշոտ Եղիազարյան

«Նախթախին սեկտորի իրական դերն ու նշանակությունը Ադրբեջանի սոցիալտնտեսական զարգացման համատեքստում»

Հարցեր և ելույթներ

Ընդմիջում

14³⁰ -15³⁰

ՆԻՍ ԵՐԿՐՈՐԴ

15³⁰ -17³⁰

Անդրանիկ Գասպարյան

«ԼՂՀ վերաբնակեցման ուղղությունը՝ տարածքային, անվտանգության և մարդու իրավունքների տեսանկյունից»

Արա Տեր-Մարտիրոսյան

«Կորսված հայրենիք. համարժեք փոխհատուցման կիրարկման կարգը»

Սերգեյ Մինասյան

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության նոր համակարգում»

Իգոր Մուրադյան

«Ղարաբաղյան խնդրի աշխարհաքաղաքական տեսանկյունը»

Արման Սելիբյան

«ԼՂՀ վարվող արտաքին քաղաքականության հիմնատարրերը»

Հարցեր և ելույթներ

Ընթրիք

18³⁰

«ԱՎԱՆ ՎԻԼԼԱ ՀՈԹԵԼ»-ում:

ՆԻՍ ԱՌԱՋԻՆ

ԲԱՅՄԱՆ ԽՈՍՔ

Էլեոնորա Ասատրյան

*«Որակի համընդհանուր դեկավարման աջակցության»
հասարակական կազմակերպության նախագահ*

Հարգելի գործընկերներ, տիկնայք և պարոնայք.

Նախ. թույլ տվեք կոնֆերանսի կազմակերպիչների անունից շնորհակալություն հայտնել ձեզ՝ *«Ղարաբաղյան հակամարտություն» փախստականներ, տարածքներ, անվտանգություն»* աշխատությունում ներկայացված մոտեցումների քննարկմանն այսօր ձեր մասնակցությունը բերելու համար: Աշխատության համահեղինակների, կոնֆերանսի կազմակերպիչների համոզմամբ, ադրբեջանահայության իրավունքների պաշտպանության խնդիրը՝ թեև փաստացի անտեսված է եղել դարաբաղյան խնդրի կարգավորմանն ուղղված բանակցությունների համարյա ողջ ընթացքում, այնուամենայնիվ, իրավացիորեն հանդիսանում է հնարավոր կարգավորման առավել էական հիմնատարրերից մեկը: Խնդրի կարևորության մասին են վկայում և՛ կոնֆերանսի հարգարժան մասնակիցների կազմը, և՛ այստեղ հնչեցվելիք զեկույցները: Քննարկման առարկա խնդրի համակողմանի վերլուծության նպատակով կազմակերպիչները փորձել են այս քննարկմանը մասնակից դարձնել տարբեր քաղաքական գործիչների, գիտնականների և փորձագետների: Հուսով եմ, որ քաղաքականության դրսևորման հնարավորությունը անկեղծ և շահագրգիռ քննարկման լավ նախադրյալ կլինի:

Հիշեցնեմ, որ ադրբեջանահայ փախստականների հիմնախնդիրն վերջին անդրադարձը եղել է մի քանի օր առաջ Միսակի խմբի համանախագահների հետ ԼՂՀ Նախագահ Արկաղի Ղուկասյանի հանդիպման ժամանակ:

Այժմ, մի քանի խոսք առաջարկվող աշխատակարգի մասին, կոնֆերանսի ծրագիրը նախատեսում է երեք նիստ, որոնց ընթացքում ներկայացվելու է 13 զեկույց: Յուրաքանչյուր զեկույցի համար նախատեսվում է 15 րոպե, որից հետո հեղինակին 5 րոպե կարող են տրվել հարցեր: Կարծում եմ, որ յուրաքանչյուր նիստի վերջում, ժամանակ կունենանք ընդհանուր քննարկումների կամ առանձին կարճ ելույթների համար: Օգտակար կլինի նաև, եթե զեկույցողներին ուղղվեն գրավոր հարցեր:

Կոնֆերանսի կազմակերպիչները նախատեսում են նաև կոնֆերանսի նյութերի անգլերեն և ռուսերեն թարգմանությունը: Կարծում եմ, որ հնարավոր կլինի դրանք հրատարակել երեք լեզուներով՝ ներառյալ հայերենը: Ուստի, խնդրում եմ զեկույցողներին թոքի և էլեկտրոնային կրիչների վրա մեզ տրամադրել զեկույցների տեքստերը:

Շնորհակալություն ձեր ուշադրության համար և թույլ տվեք խոսքը տալ մեր առաջին զեկույցող Շավարշ Քոչարյանին:

ԼՂՀ ՀԱՐՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆԵՐԿԱ ՓՈՒԼԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Շավարշ Քոչարյան

*Ազգային ժողովրդավարական կուսակցության
վարչության նախագահ, ՀՀ ԱԺ պատգամավոր*

Իմ զեկույցը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը հայեցակարգային մոտեցումն է Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորմանը, երկրորդը՝ հարցի կարգավորման ներկա փուլի միտումները: Առաջին մասի շարադրանքը ավելի սեղմ և դյուրին է դարձնում ձեզ բաժանված հողվածը, որը տպագրվել է մայիս ամսին «ԱյրՖե» թերթում: Իր հերթին այդ հողվածը շարադրանք է այս տարվա գարնանը Ազգային ժողովում կայացած Ղարաբաղի հարցին նվիրված լսումներին ներկայացված ելույթի: Ես ձեզ կներկայացնեմ մեր հայեցակարգային մոտեցման հիմնական թեզերը, որպեսզի հետո, երբ ներկայացնելու լինեմ այն մո-

դելը, որն այսօր ներկայացվում է Մինսկի խմբի համանախագահների կողմից, հստակ լինեն մեր և ներկա փուլում առաջարկվող մոտեցումների տարբերությունները:

1. Իրավական տեսակետից Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրականացումը անքերի է և ԽՍՀՄ-ի լուծարումով նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքում ձևավորվեցին երկու իրավահավասար անկախ պետություններ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և Ադրբեջանական Հանրապետությունը: Այլ կերպ ասած, Լեռնային Ղարաբաղի ժողովրդի, տարածքի և իշխանությունների ենթակայության հարաբերությունները Ադրբեջանի հետ դադարեցվել են օրինական ձևով: Դրանով իսկ Ղարաբաղի ժողովուրդը օրինական ձևով իրականացրել է տարածքային ամբողջականության սկզբունքը՝ կիրառված Ադրբեջանի նկատմամբ:

Կան նաև այլ իրավական փաստարկներ, մասնավորապես՝ այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղը երբևիցե չի եղել անկախ Ադրբեջանի կազմում:

2. Հարցի միջազգայնացման ամենաարդյունավետ շեշտադրումը, դա ինքնորոշման իրավունքի իրականացման փաստն է, ինչը համապատասխանում է Ղարաբաղի ժողովրդի արտահայտած կամքին և կատարած քայլերին: Հիշեցնենք, որ այլ շեշտադրումները վերաբերում են բռնի բաժանված ազգի վերամիավորման կամ ազգային փոքրամասնության իրավունքներին:

3. Հակամարտության հետևանքներ, հազարավոր զոհեր, հարյուր հազարավոր փախստականներ և տեղահանվածներ, հակամարտող կողմերի՝ Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի վերահսկողության տակ անցած հակառակորդի տարածքներ. այս բոլորը արդյունք է Ադրբեջանի, ի սկզբանե ընտրված, ոչ թե խաղաղ բանակցային՝ այլ ուժային լուծումների տարբերակի: Դրանք են՝ հայերի ջարդեր, էթնիկ զտումներ, Լեռնային Ղարաբաղի դեմ կազմակերպված ագրեսիա՝ միջազգային ահաբեկչական կառույցների վարձկանների ներգրավմամբ: Հիշեցնենք, որ

ղարաբաղյան ռազմաճակատում Ադրբեջանի բանակի կողմից մեր դեմ կռվել են 1500-2000 թալիբանի մոջահեդներ, հիշեցնենք նաև, որ Շամիլ Բասաևը իր ջոկատով, իր առաջին մարտական փորձը ստացավ հենց Ղարաբաղում: Ճիշտ է, անփառունակ՝ իր և իր ջոկատի համար:

4. Լեռնային Ղարաբաղի հարցում Հայաստանի Հանրապետությունն ունի երեք հիմնական գործառույթ.

ա) Հայաստանի Հանրապետությունը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անվտանգության երաշխավորն է.

բ) Հայաստանի Հանրապետությունը Լեռնային Ղարաբաղի անկախության երաշխավորն է և միջազգային ճանաչման նպաստողը.

գ) Քանի դեռ Լեռնային Ղարաբաղը ճանաչված չէ, Հայաստանը պետք է միջազգային հանրությանը հասցնի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ծայնը, բայց ոչ մի դեպքում, և այդ թվում նաև բանակցային գործընթացում, Հայաստանն իրենով չպետք է փոխարինի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը:

5. Փուլային կամ փաթեթային անվանումները չպետք է քողարկեն կամ հետագա բանակցությունների համար թողնեն Լեռնային Ղարաբաղի անկախության կարգավիճակի և անվտանգության այլ երաշխիքների ամրագրումը: Այդ հարցերի՝ ներառյալ տարածքների հարցի լուծումների պատասխանը, կարող է տալ միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

6. Ժողովրդավարության հաստատումը և՛ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, և՛ Հայաստանի Հանրապետությունում հիմնարար նշանակություն ունեն ԼՂՀ-ի միջազգային ճանաչման և անվտանգության այլ երաշխիքների ապահովման համար:

Մրանք են մեր հայեցակարգային մոտեցման հիմնական թեզերը:

Այժմ անցնենք կարգավորման ներկա փուլին: Ներկայացնեմ մի քանի հարցադրումներ.

- Ո՞րն է տարբեր միջնորդ կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների ներկայացուցիչների հարցի կարգավորմանը մոտակա ժամանակում հասնելու լավատեսական հայտարարությունների պատճառը:
Հաջորդ հարցը.

- Որո՞նք են Մինսկի խմբի հայկական և ադրբեջանական կողմերի քննարկմանը ներկայացված կարգավորման մոդելի հիմնական դրույթները:

Եվ վերջապես.

- Ինչո՞վ է տարբերվում ներկա փուլի մոդելը նախկինում առաջարկված մոդելներից:

Նախևառաջ, պետք է նշեմ, որ այդ մոդելի մասին ցանկացած ուշադիր ընթերցող կարող էր պատկերացումներ ստանալ մամուլից: Ի դեպ, պետք է ցավով նշեմ, որ ավելի ամբողջական պատկեր կարելի է ստանալ՝ կարդալով Ադրբեջանի մամուլը: Այնտեղ շատ ավելի հաճախ է անդրադարձ լինում մոդելին, մոդելի մանրամասնություններին, քան Հայաստանի մամուլում:

Այն, ինչ ձեզ ներկայացնելու եմ, դա հիմնականում ձևավորվել է ոչ այնքան մամուլից ստացած պատկերացումների, որքան անձնական շփումների և, առաջին հերթին, սեպտեմբերի 12-ին Փարիզում կայացած Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի Ղարաբաղի հարցով հատուկ հանձնաժողովի նիստի արդյունքների հիման վրա: Այդ նիստի մասնակիցներն էին՝ Ռուսաստանի համանախագահող Մերզլյակովը, Ֆրանսիայի համանախագահող պարոն Բերնար Ֆասինեն, Սթիվեն Մաննը չկարողացավ ներկա գտնվել նիստին և նրան փոխարինեց Ամերիկայի Պետդեպարտամենտի լիազոր ներկայացուցիչ պարոն Զրոսթին: Ներկա էր նաև Գորան Լենմարկերը, որն, ինչպես տեղյակ եք, ԵԱՀԿ Խորհրդարանական Վեհաժողովի գեկուցողն է Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցով, Եվրա-

միության տարածաշրջանի համար պատասխանատու Հեյկի Տալվիտին, ինչպես նաև ԵԱՀԿ նախագահի հատուկ ներկայացուցիչ Կասպերչիկը, որը համակարգում է զինադադարի մոնիթորինգը: Եվ վերջապես, ներկա էին նաև Մինսկի խմբի անդամ երկրների Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովում ներկայացված երկրների պատվիրակությունների ղեկավարները: Նրանք բոլորը ելույթներ ունեցան:

Եվ այսպես, որո՞նք են մոդելի հիմնական դրույթները.

1. Կողմերը չեն կարող և չէին կարող համաձայնության գալ, քանի որ հայկական կողմը պնդում էր ինքնորոշման սկզբունքի վրա, իսկ ադրբեջանական կողմը՝ տարածքային ամբողջականության: Այս երկու մոտեցումները թվում են անհամատեղելի: Բայց այն մոդելը, որն առաջարկվում է, փորձում է այդ անհամատեղելիությունը հաղթահարել: Ինչպե՞ս: Հարցադրումը հետևյալն է.

- Այո՛, Ադրբեջանի տարածքային ամբողջականություն, բայց դա վերաբերվում է այն տարածքներին, որոնք Լեռնային Ղարաբաղից դուրս են, այո՛, ինքնորոշում, բայց դա վերաբերում է Լեռնային Ղարաբաղի տարածքին:

2. Լեռնային Ղարաբաղը չի կարող լինել անկլավ: Նա պետք է երաշխավորված, հուսալի տարածքային կապ ունենա Հայաստանի հետ:

3. Լաչինի և Մեղրու միջանցքները չեն հավասարեցվում: Այսինքն՝ այն, ինչ վերաբերում է Նախիջևանի և Բաքվի կապին, դիտարկվում է կոմունիկացիաների ընդհանուր բացման համատեքստում: Բազմիցս հայտարարվել է, որ հակամարտության հաղթահարման հիմնական նպատակներից է տարածաշրջանում բոլոր կոմունիկացիաների անխափան աշխատանքը:

4. Ինչպիսի՞ն են մոդելի իրականացման փուլերը:

Պետք է վերադարձվեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերահսկողության տակ գտնվող տարածքները կամ նրանց մի մասը, Ղարաբաղ պետք է վերադառնան մինչև հակամարտությունը այնտեղ բնակվող ադրբեջանցիները և դրանից

հետո Ղարաբաղում կկազմակերպվի հանրաքվե, որի որոշումը կլինի վերջնական բոլոր կողմերի համար:

5. Տարածքների վերադարձը չի ենթադրում ադրբեջանական բանակի դիրքերի առաջխաղացում, կողմերին բաժանում են միջազգային խաղաղապահ ուժերը, հենց որ կողմերը գան համաձայնության, Վարշավայում խաղաղարար օպերացիաներ պլանավորող գրասենյակը կանցնի գործի:

6. Սկսած ինչ-որ փուլից, Լեռնային Ղարաբաղը ամբողջապես մերգրավվելու է մոդելի համաձայնեցման գործընթացում: Ղարաբաղի մասնակցությունը դեռևս միջնորդվում է Հայաստանով, չնայած, օրինակ, համանախագահների Հայաստան կատարած վերջին այցի ժամանակ նրանք հանդիպեցին Լեռնային Ղարաբաղի ղեկավարության հետ:

7. Կարգավորման հարցով պետք է զբաղվի միայն ԵԱՀԿ Մինսկի խումբը: Մասնավորապես, Եվրոպայի Խորհուրդը և Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովը կարող են օժանդակ դեր կատարել միայն այն հարցերում, որոնք Հայաստանի և Ադրբեջանի անդամակցության պարտավորություններն են:

- հարցը կարգավորել միայն խաղաղ բանակցային ճանապարհով.
- խուսափել ռազմատենչ հայտարարություններից և մանուկով թշնամանքի քարոզումից:

Այսպիսով, ներկա փուլում, ըստ էության, մերժվում է Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի 2005 թվականի հունվարյան բանաձևի՝ հարցի կազավորմանը Եվրոպայի Խորհրդի կառույցները ներգրավելու միտումը, ինչը դրական է, եթե հաշվի առնենք հունվարյան բանաձևի բացահայտ պրո-ադրբեջանական մոտեցումը:

Մրանք են մոդելի հիմնական դրույթները: Նշեմ նաև, որ բանակցությունների ինտենսիվությունը դադարեցված էր Ադրբեջանի խորհրդարանական ընտրությունների պատճառով և

երևում էր, որ Ադրբեջանի իշխանությունները մոդելին ոչ համահունչ խոսելու որոշակի «քարտ-բլանշ» էին ստացել: Միջնորդների կողմից անընդհատ շեշտվել և շեշտվում է, որ եթե հարցը չկարգավորվի մոտակա տարվա ընթացքում, ապա անորոշ ձգձգվելու է, հաշվի առնելով, որ 2007 թվականից Հայաստանում սկսվում են խորհրդարանական, հետո՝ նախագահական ընտրությունները, հետո լինելու են Ադրբեջանի ընտրությունների փուլերը: Այնպես որ, հակված են հնարավորինս անելու, որպեսզի հակամարտությունը կարգավորվի 2006 թվականի ընթացքում:

Որո՞նք են իմ տեսակետից մոդելի հիմնական դրական և բացասական կողմերը:

Հիմնական դրական կողմը, ավելի ճիշտ, հիմնական դրական տեղաշարժը, կայանում է նրանում, որ ինքնորոշման իրավունքի սկզբունքը հավասարեցվել է տարածքային ամբողջականության սկզբունքին: Նախորդ բոլոր քննարկումներում, մոդելներում դա այդպես հստակ չէր արտահայտված, ավելին, ըստ էության, առաջնայնությունը տրվում էր տարածքային ամբողջականությանը, ինչը հակասում է Հելսինկյան եզրափակիչ ակտին, որտեղ այդ երկու սկզբունքները իրավահավասար են:

Հիմնական բացասական կամ վտանգավոր կողմը կայանում է նրանում, որ ենթադրվում է նոր հանրաքվե, որը կայանալու է տարածքների վերադարձի և փախստականների վերաբնակեցումից հետո: Դա անորոշ ժամանակ է պահանջում, Ղարաբաղի պաշտպանությունը դառնում է խոցելի, իսկ իրավիճակը կարող է փոխվել: Ադրբեջանական կողմը կարող է ինքը հրահրել իրադարձություններ, որոնք հետո հիմք կդարձնի նախնական պայմանավորվածությունից հրաժարվելու համար: Այն հանգամանքը, որ կողմերին բաժանելու են խաղաղապահ զորքերը՝ դրական է, սակայն պետք է հաշվի առնել Կոստվոյի ղեկավարը, որոնք ցույց տվեցին, որ խաղաղապահ զորքերը միշտ չէ, որ կարողանում են զսպել կողմերին: Մոդելի վտանգավոր կողմը չի

թույլացնում այն հանգամանքը, որ մոդելի իրականացման սկզբնական փուլերում Լեռնային Ղարաբաղը ստանում է, ըստ էության, միջանկյալ կարգավիճակ, որովհետև մինչև հանրաքվեի անցկացումը, Ղարաբաղը՝ ճանաչված չլինելով որպես անկախ պետություն, միաժամանակ չի համարվելու, որ գտնվում է Ադրբեջանի կազմում: Եվ վերջապես, չի կարելի խոսել ադրբեջանցի փախստականների վերադարձի իրավունքի դեմ, քայց միաժամանակ չի կարելի ասիմետրիկ մոտեցում ցուցաբերել և անտեսել Ադրբեջանից այն հարյուր հազարավոր հայ փախստականներին, որոնք իրավունք ունեն ցանկացած պարագայում բնակվելու Ղարաբաղում և ստանալու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիություն: Այս հարցի շուրջ ես չեմ տարածվի, քանի որ բոլորը ծանոթ եք այսօր սեղանին դրված աշխատության հետ, որտեղ այդ խնդիրն ամբողջական ներկայացված է:

Հիմա փորձեմ տալ իմ գնահատականը լավատեսական այն հայտարարությունների կապակցությամբ, որ 2006 թվականի ընթացքում հարցը կարգավորվելու է: Իմ գնահատմամբ, դա քիչ հավանական է առնվազն երկու պատճառով: Առաջինը. Ադրբեջանը շարունակում է ձգտել հարցն իր օգտին ուժով լուծելուն, ինչն ակնհայտ երևում է Ադրբեջանի բոլոր քայլերից, սակայն, չի էլ ցանկանում քացահայտ հակադրվել միջազգային կառույցների և միջնորդ պետությունների ջանքերին: Մյուս կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը որպես բանակցությունների կողմ չներգրավելը և առաջարկվող մոդելի վտանգավոր միտումները կարող են հայկական կողմերին էլ դրդել որդեգրելու ժամանակ ձգձգելու ճանապարհը:

Մյուս կողմից, բոլորիս համար ակնհայտ է, որ կա նավթային դոլարների հոսք, ակնհայտ է Ադրբեջանի բյուջեի և ռազմական ծախսերի առաջ աճը, ակնհայտ է նաև այն աջակցությունը, որը ցուցաբերում է Թուրքիան, մասնավորապես՝ ադրբեջանական բանակի հզորացմանը: Դրանով մեր առջև կանգնած է շատ

հատակ խնդիր՝ հզորացնել պետությունը և բանակը: Մյուս կողմից, Հայաստանը գտնվում է տնտեսական և տրանսպորտային մեկուսացման պայմաններում, ինչը խոչընդոտում է համարժեքորեն զարգանալու և հզորանալու հնարավորությանը:

Իմ տեսանկյունն այն է, որ այդ խնդիրը հնարավոր է լուծել միայն մեկ պարագայում, եթե խնդիրը խորը գիտակցվի և կտրուկ ու հաստատական քայլեր կատարվեն ժողովրդավարություն հաստատելու ուղղությամբ: Սա նախապայման է, որպեսզի մենք կարողանանք զարգացնել առաջատար տեխնոլոգիաների վրա հիմնված տնտեսությունը և հաղթանակած դուրս գալ ստեղծված վիճակից: Նման քայլեր կատարելու դեպքում Արևմուտքն ավելի հակված կլինի, որպեսզի շարունակի խորացնել դրական տեղաշարժը, որն այսօր առկա է հակամարտության կարգավորման հարցում: Այսինքն՝ ընդունի արդեն փաստացի կայացած ԼՂՀ ինքնորոշումը, այլ ոչ թե առաջարկի նոր հանրաքվեի կազմակերպում, ինչպես նաև ընդունի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անվտանգության համար այլ երաշխիքների անհրաժեշտությունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԵԼՈՒՅԹՆԵՐ

Ռաֆայել Ղազարյան

Խնդրում եմ ավելի մանրամասն ասել ԼՂՀ-ի ապագա հանրաքվեի մասին: Ասենք, օրինակ, հանրաքվեին մասնակցելու են 1988 թվականին Ղարաբաղում ապրող ադրբեջանցիները, թե՞ այդ ժամանակ արդեն բազմացած ադրբեջանցիները, որոնք 10-15 տարի հետո կներկայանան որպես նախկին շուշեցիներ և այլն:

Շավարշ Զոչարյան

Պատասխանելով Չեր հարցին, ընդամենը կրկնեմ այնտեղի բանավեճի և քննարկումների այն հատվածները, որոնք վերաբերում են այդ հարցին: Ասենք, ադրբեջանական կողմը մի թիվ

փորձեց ներկայացնել, որ իբրև թե այնտեղ ապրել են շուրջ 50 հազար աղքատացիներ և, բնական է, դրան միանգամից հակադարձվեցին մարդահամարի փաստացի տվյալները, որոնք ցույց են տալիս, որ դա այդպես չէ: Մյուս կողմից, ահա միջնորդների արձագանքը՝ Խորհրդային Միությունը, այնուամենայնիվ, ուներ մարդահամարի փայտուն համակարգ, որը շատ լավ հնարավորություն է ստեղծում ճշգրիտ կերպով վերահսկելու, որպեսզի վերադառնան միայն նրանք, ովքեր ապրել են այնտեղ: Իհարկե, կարող է առաջանալ նաև երկրորդ հարցը, որի մասին այստեղ խոսք չգնաց. «Իսկ քանի՞ երեխա են ունեցել և այլն և այլն»:

Այսքանն այն մասին, թե ով կարող է վերադառնալ:

Հիմա հանրաքվեի մասին. որևէ ժամկետի մասին խոսք չկա, որովհետև բոլորը լավ հասկանում են, որ փախստականը մեկ ամսում, մեկ տարում կամ երկու տարում դժվար թե վերադառնա: Այս ամենը պահանջում է հստակեցում: Հասկանալի է նաև, որ փախստականների մեծ մասը դժվար թե ցանկանա վերադառնալ այս պայմաններում: Դա նշանակում է, որ նրանց պետք է խրախուսեն վերադառնալու համար:

Իզոր Մուրադյան

Ինձ մոտ այնպիսի տպավորություն ստեղծվեց, որ Դուք կարծես թե համաձայն եք պաշտոնական կարծիքի հետ: Բայց, Դուք, կարծես թե ընդդիմադիր եք, այո՞:

Շավարշ Բոչարյան

Ինչի՞ և ո՞ւմ հետ են համաձայն:

Իզոր Մուրադյան

Այստեղ Ձեր դիրքորոշումը համընկնո՞ւմ է կառավարության դիրքորոշման հետ:

Շավարշ Բոչարյան

Իմ դիրքորոշումը այն չէ, ինչ ես ասում էի մոդելի մասին, այլ իմ դիրքորոշումն այն է, որի մասին ես խոսեցի զեկույցի առաջին

մասում: Ավելին, Ձեր ձեռքի տակ կա հողված, որտեղ Դուք կարող եք տեսնել իմ և իմ կուսակցության դիրքորոշման տարբերությունն այն դիրքորոշումից կամ գծից, որն ունի Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը և դեկավարությունը, որի հետ ես համաձայն չեմ:

Իզոր Մուրադյան

Իսկ Դուք զիտե՞ք արտաքին գործերի նախարարության դիրքորոշումը:

Շավարշ Բոչարյան

Իսկ ինչ է, Դուք չզիտե՞ք ԱԳՆ-ի դիրքորոշումը: Ես կարող եմ Ձեզ հստակ ասել: Երբ ես խոսում էի միջազգայնացման երեք ուղղությունների մասին, ապա ակնհայտ էր, որ մենք հիմա շատ ավելի ծանր բանակցային վիճակում ենք մի պարզ պատճառով. իմ գնահատականն այն է, որ, ի սկզբանե, պետք է հետևողական լինել ինքնորոշման իրավունքի շեշտադրությամբ: Բայց, իրականում, ես կարծում եմ, որ Դուք էլ կհամաձայնվեք, որ նախորդ իշխանությունները ավելի շատ շեշտադրումը տանում էին դեպի ազգային փոքրամասնության իրավունքը, ինչը լավագույն դեպքում կարող է ենթադրել այս կամ այն աստիճանի ինքնավարություն Ադրբեջանի կազմում: Դրա համար բազմաթիվ ապացույցներ կան, որոնց ես չեմ ուզում անդրադառնալ, սակայն, եթե պետք է՝ կարող եմ: Երբ Հայաստանում տեղի ունեցավ իշխանափոխություն, ցավոք սրտի, այդ ժամանակ շեշտադրումը գնաց մյուս ուղղությամբ. բռնի բաժանված ազգի վերամիավորում: Իհարկե, դա արդարացի է, դրա համար հիմքեր կան, բայց պետք է շատ լավ գնահատել, որ այդ պարագայում միջազգային հանրության դիմադրությունը կլինի շատ ավելի մեծ: Ավելի մեծ է վտանգը, որ դա կընկալվի որպես տարածքային վեճ երկու երկրների միջև և Հայաստանը կարող է պիտակվել որպես ագրեսոր, իսկ դա հակասում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի հստակ արտահայտված կամքին և քայլերին: Որտեղի՞ց է գալիս

իմ այս պնդումը, որ իշխանափոխությունից հետո, ավելի շատ այդ ուղղությամբ գնաց: Գիտեք ինչ, եկե՛ք հեռու չգնանք, եթե արագորժնախարարը հրապարակային արտահայտվում է, որ մենք վերամիավորված ենք, ապա ինչի՞ մասին է խոսքը: Ընդ որում՝ բազմիցս... Ես պետք է, իհարկե, նշեմ, որ արդեն մեկ տարի է, որ նմանատիպ հայտարարություններ չկան, արդեն մեկ տարի է շեշտադրումը գնալով ավելի ճշգրիտ է դառնում՝ կապված և՛ ինքնորոշման, և՛ այլ իրավական փաստերի ու սնտեցումների հետ: Բայց սկզբնական շրջանում, իմ գնահատմամբ, դա էր պիսվը:

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՊԵՍ ՆԱՆԿԻՆ ԱԳՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԽՍՀ ՀԱՅՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐ

Վահրամ Աթանեսյան

*ԼՂՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական
հանձնաժողովի նախագահ*

(Չեկույցը հնչեցրել է Է. Ասատրյանը)

Միացյալ հայկական թագավորության անկումից ընդհուպ մինչև Ռուսական կայսրության կողմից նվաճումը Արևելյան Անդրկովկասի նախաբնիկ հայությունը կազմակերպվածության այս կամ այն ձևով, բայց անընդմեջ, ունեցել է իր պետականությունը կամ՝ դրան հավասար կարգավիճակ:

1918 թվականի մայիսի 26-ին, Անդրկովկասյան սեյմի լուծարման հետևանքով, տարածաշրջանի նախաբնիկ ժողովուրդները ստացան ազգային պետականությունը վերականգնելու հնարավորություն: Հայոց Ազգային խորհուրդը իրեն հայտարարեց Անդրկովկասի հայաբնակ գավառների իշխանություն, իսկ Մեյմի մուսավաթական պատգամավորները՝ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետություն, որի իշխանությունը, սա-

կայն, հռչակման պահին տարածվում էր միայն Գանձակ քաղաքի մուսուլմանաբնակ հատվածի վրա:

Նույն թվականի սեպտեմբերին թուրքական էքսպեդիցիոն կորպուսը գրավեց Բաքուն, կազմակերպեց քաղաքի և Բաքվի նահանգի հոծ հայության սպանող, ինչպես նաև տիրեց Դաշտային Ղարաբաղին և նախկին Ելիզավետպոլի նահանգի զգալի մասը, որի արդյունքում բռնաճնշվեց Արևելյան Անդրկովկասի նախաբնիկ հայության ազգային պետության՝ Հայաստանի Հանրապետության իրավատիրոջի տակ ընդգրկվելու կամ երկրորդ հայկական անկախ պետություն կերտելու իրավունքը:

Այդուհանդերձ, Լեռնային Ղարաբաղը զինված ինքնապաշտպանության և քաղաքական կազմակերպվածության սեփական ինստիտուտների ստեղծման միջոցով կարողացավ գրեթե Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության հետ հավասար հիմքով և մակարդակով իրավական հարաբերություններ հաստատել Անդրկովկասում Բրիտանական կայսրության զինված ուժերի ներկայացուցիչների հետ և պահպանել անկախությանը մոտ կարգավիճակ:

Գերազանցապես այդ հիմքով էր, որ Ազգերի լիգան մերժեց ճանաչել Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը մույնիսկ դե-ֆակտո և միաժամանակ Լեռնային Ղարաբաղը հայտարարեց «վիճելի տարածք», որի վերջնական կարգավիճակը պետք է որոշվեր Փարիզի խաղաղության վեհաժողովում:

Նույնիսկ 1920 թվականի մարտին Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Շուշիի կործանումը թուրք-ադրբեջանական զորքերի և մուսուլման խառնամբոխի կողմից չկանխորոշեց Լեռնային Ղարաբաղի պատկանելությունն Ադրբեջանի ինքնահռչակ դեմոկրատական հանրապետությանը, որը պատմության թատերաբեմից հեռացավ՝ առանց ունենալու հստակ ամրագրված պետական կարգ, իրավական հարաբերություններ այլ երկրների հետ և լեգիտիմ սահմաններ:

Ինքնահռչակված Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության, Թուրքիայի և արդեն խորհրդային դարձած Ռուսաստանի միջև ձեռք բերված գաղտնի, ուստի և, միջազգային իրավունքի տեսակետից ապօրինի համաձայնության արդյունքում, 1920 թվականի ապրիլի 28-ին ՌԽՖՍՀ-ի զինված ուժերի 11-րդ բանակը մտավ Բաքու և հռչակեց Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն:

Նույն թվականի մայիսին ՌԽՖՍՀ-ի զինված ուժերն օկուպացրին Լեռնային Ղարաբաղը և տապալեցին իշխանության ազգային մարմինները, սակայն նույնիսկ այդ իրավիճակում բոլշևիկյան Ռուսաստանը Հայաստանի Հանրապետության հետ նույն թվականի օգոստոսին հրադադարի մասին կնքած համաձայնագրում ստիպված եղավ արձանագրել, որ Լեռնային Ղարաբաղի և այլ հայաբնակ շրջանների «ժամանակավոր օկուպացիան չի կանխորոշում այդ տարածքների պատկանելությունը որևէ պետության»: Բարձր պայմանավորվող կողմն, ըստ էության, «որևէ պետություն» ասելիս նկատի ունեն Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը, որը հավակնում էր Ռուսական նախկին կայսրության Բաքվի և Ելիզավետպոլի նահանգների ամբողջ տարածքին, ինչպես նաև՝ Նախիջևանին, որը նույնպես օկուպացված էր, բայց՝ թուրքական զինուժի կողմից:

Դժբախտաբար, հետագայում Խորհրդային Ռուսաստանը դրժեց իր իսկ խոստումը և Լեռնային Ղարաբաղը 1921 թվականի հուլիսի 5-ին Ռուսաստանի կոմունիստական կուսակցության Կովկասյան քյուրդյի ապօրինի որոշմամբ, հայտարարեց Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմում «մարզային լայն ինքնավարություն՝ Շուշի կենտրոնով»:

Պատմական անցքերի այս համառոտ շարադրանքից հետևում է, որ նույնիսկ ամենաբռնապետական համակարգում Լեռնային Ղարաբաղը չի դիտվել որպես Ադրբեջանի «անբաժանելի մաս» և, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար կար-

գավիճակը բոլորովին էլ «նվեր չի եղել» նրա նախաբնիկ ժողովրդին:

Խորհրդային պետաիրավական համակարգում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը ավելի շուտ պետք է համարել այն իրողության ընդունում, որ Ադրբեջանական ԽՍՀ-ի իրավասիրույթն այնտեղ ապրող նախաբնիկ հայության վրա ուղղակիորեն չի տարածվել, այլ միայն՝ ԽՍՀՄ-ի միասնական իրավակարգի ուժով, որը ամրագրված էր ԽՍՀՄ-ի Սահմանադրության մեջ:

ԽՍՀՄ-ի Սահմանադրության իրավական ուժով, ի դեմս Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի, Ադրբեջանական ԽՍՀ-ի հայությունը, պետականակիր մյուս հանրության հետ, հավասար լիազորություններով, իրավասու էր ԽՍՀՄ-ի կազմավորման մասին միութենական պայմանագրի չեղարկման կամ միջազգային իրավական այլ իրավիճակում, որը կհանգեցներ ԽՍՀ-ի՝ որպես միութենական հանրապետության կարգավիճակի լուծարմանը, օգտագործել պետականություն ունենալու իրավունքը:

Նման իրավիճակ ստեղծվեց 1991 թվականի օգոստոսին, երբ Ադրբեջանական ԽՍՀ-ի պետական իշխանության բարձրագույն մարմինը՝ Գերագույն Խորհուրդը, հռչակեց իր տարածքում ԽՍՀՄ-ի Սահմանադրության իրավական ուժի կասեցումը և ստանձնեց 1918-20 թվականների Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդությունը:

Որպես այդ պետի տրամաբանական շարունակություն, 1991 թվականի սեպտեմբերի 2-ին ԼՂԻՄ-ի մարզային խորհուրդը հռչակեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն՝ որպես դեռևս գոյություն ունեցող ԽՍՀՄ-ի իրավասուբյեկտ և միութենական տարածք՝ ներառելով նաև Շահումյանի շրջանը, որտեղ այդ պահի դրությամբ ապրում էր համահավաք հայություն և, որի նկատմամբ Ադրբեջանի՝ արդեն իրավաբանորեն անկախ հանրապետության, իրավագործությունը նույնպես ապօրինի էր:

Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունն, այսպիսով, մասամբ իրացրեց Արևելյան Անդրկովկասի հայաբնակ շրջաններում ազգային պետական կարգ հաստատելու՝ հայ ժողովրդի անկապտելի իրավունքը, որը 1918 թվականին բռնաճնշվել էր նախ՝ բուրջական, ապա նաև՝ բուլշևիկյան Ռուսաստանի զինված նախահարձակման հետևանքով:

ԽՍՀՄ-ի արդեն իրավաբանական փլուզման պահին, ցավոք, Ադրբեջանը հռչակված Լեոնային Ղարաբաղի Հանրապետության հետ քաղաքակիրթ և լիովին օրինական երկխոսություն սկսելու, առկա մարդասիրական, անվտանգության և հաղորդակցության խնդիրները փոխշահավետ պայմանագրային հիմունքներով կարգավորելու նախաձեռնության փոխարեն, նախընտրեց ռազմական քիթ ուժի կիրառումը, որևէ այլ ելք չթողնելով, բացի՝ զինված դիմակայությունից:

Դաժանորեն շրջափակված և կենսաապահովման տարրական միջոցներից զուրկ լինելով, Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունն այլընտրանք չուներ և ստիպված էր ընդունել կենաց-մահու մարտահրավերը:

Այսպիսով, դարաբաղա-ադրբեջանական դիմակայության գոտում այսօր առկա իրողությունները ոչ թե ԼՂՀ-ի կողմից էթնիկ գոտումներ իրականացնելու և նոր տարածքներ զբաղեցնելու նպատակի, այլ նախահարձակ կողմին հակահարված տալու և հավաքական ինքնապաշտպանության դիմելու ԼՂՀ-ի ժողովրդի անկապտելի իրավունքի իրացման արդյունք են, իրավունք, որը միջազգայնորեն ընդունված է Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրությանը:

Որպես նախահարձակ երկիր, Ադրբեջանն այսօր իրավասու չէ քննարկման առարկա դարձնել իր տարածքային ամբողջականության հարցը, մանավանդ, որ հռչակվել է իբրև Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդ, իսկ այդպիսի պետություն միջազգային հանրությունը ո՛չ փաստացի, ո՛չ իրավաբանորեն չի ճանաչել որևէ լեգիտիմ սահմաններում:

Այսպիսով, իրացրած լինելով Արևելյան Անդրկովկասում ազգային պետություն կերտելու հայ ժողովրդի անօտարելի իրավունքը, Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունը, որպես այդ իրավունքը հավաքական ինքնապաշտպանության միջոցով նախահարձակ երկրից՝ Ադրբեջանից պաշտպանած, Ադրբեջանի հետ իրավահավասար հիմքերով առկա խնդիրները քաղաքակիրթ եղանակով լուծելու մասին քազմիցս պատրաստականություն հայտնած պետություն, իրավասու է միջազգային և միջպետական հարաբերություններում քննարկման ներկայացնել նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ի պետականակիր ամբողջ հայության իրավունքների պաշտպանության հարցը, որից պետականակիր հայության մի մասը զրկվել է նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ում պետական մակարդակով կազմակերպված Մում-գայիթի և Բաքվի ցեղասպանությամբ՝ 1988 և 1990 թվականներին, ԽՍՀՄ-ի պատժիչ մարմինների աջակցությամբ 1989-1991 թվականներին անկացված էթնիկ գոտումների և 1991-1994 թվականներին ԼՂՀ-ի դեմ Ադրբեջանի զինված նախահարձակման հետևանքով:

ԼՂՀ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀՐԱՄԱՅՈՒԿՆԸ

Արմեն Ռուստամյան

*ՀՀ Աժ արտաքին հարաբերությունների
հանձնաժողովի նախագահ, ՀՅԴ*

Նախ ասեմ, որ մեր տեսակետը, այս պահին ես ի նկատի ունեմ ոչ թե դաշնակցության, այլ Ազգային Ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի տեսակետը, գտնվում է ձևավորման փուլում: Գիտեք, որ այս տարվա սկզբում Ղարաբաղի հարցով լուսմներ տեղի ունեցան և այդ կապակցությամբ բավականին լուրջ նյութ է հավաքվել, որն այսօր արդեն ամփոփված է: Մոտ ժամանակներս մենք հանձնաժողովի հատուկ նիստ կունենանք, որտեղ այդ նյութի հիման վրա եզրակացու-

թյուն կընդունվի և սա կլինի, թերևս, բավականին ամբողջական, առավել հայեցակարգված պատասխանը բոլոր այն հարցերի, որոնք այսօր ընդհանուր առմամբ մենք քննարկում ենք: Այս առումով, կարծում եմ, մենք դեռ հնարավորություն կունենանք նաև մեր այդ գրքի շնորհանդեսի ժամանակ խոսել Ղարաբաղի մասին, որովհետև, ինչպես խոստացել էինք, մենք նյութերը պատրաստել ենք և շուտով կհանձնենք տպագրման: Այնտեղ կամփոփվեն այդ լումաների ժամանակ հնչած բոլոր զեկույցները, ինչպես նաև, բոլոր այն նյութերը, որոնք մինչ օրս եղել են Ղարաբաղի հարցով և հիմք են ծառայում միջազգային ատյաններում Ղարաբաղի հարցի քննարկման համար: Գրքում կլինի նաև այն եզրակացությունը, որը ինչպես ասացի՝ կընդունվի: Դրա համար, ես կուզենայի մի առանձին տեսանկյունից, ինչպես դրված է այսօրվա իմ զեկույցի վերնագրում. միջազգային ճանաչման հրամայականի տեսանկյունից անդրադառնալ հարցին:

Բավականին երկար ժամանակ է, որ միջազգային հանրությունը, միջազգային ատյաններն, ըստ էության, զբաղվում են դարաբաղյան հարցի կարգավորմամբ և ժամանակն է, որ մենք ճիշտ կարողանանք գնահատել նաև այդ ամբողջ ընթացքի արդյունավետությունը: Ես այստեղ կուզենայի հարցին հենց այս տեսակետից մոտենալ և, կարծում եմ, որ մարտավարական տեսակետից ճիշտ կլինի, եթե մենք զուգահեռաբար տանենք երկու գործընթաց. մեկը՝ Ադրբեջանի հետ հաշտության ամբողջական պայմանագիրն է, որի վրա աշխատում են թե՛ Մինսկի խումբը և թե՛ նաև մնացած հնարավոր իրավասու կառույցները: Չանագան երկրներ են ներքաշված այս պրոբլեմի մեջ: Սա ընդունված, արդեն ավանդական դարձած սովորական ճանապարհն է, որը մենք համարում ենք Ղարաբաղի հարցի կարգավորման էապես ամենագործուն մեխանիզմը: Բայց ես սրան ուզում եմ հավելել նաև երկրորդ գործընթացը, որը իսկապես պետք է իրականացվի զուգահեռաբար. դա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

միջազգային ճանաչման առանցքային գործառույթն է, որի ինքնուրույն իրականացման համար, ինչը ես կփորձեմ հիմա հիմնավորել, մենք ունենք բոլոր հնարավորությունները՝ չպայմանավորելով դա Ադրբեջանի հետ հաշտության պայմանագիր կնքելով, ինչը, ոչ մեկի համար զարդնիք ասած չեմ լինի, շատ կասկածներ է առաջացնում: Ըստ էության, այդպիսի պայմանագիր կլինի: Իսկ ե՞րբ կլինի. հենց սրա հետ են կապված մեր այսօրվա հիմնական խնդիրները: Եթե մեր կողմից մենք քայլեր չկատարենք, ապա նորից ընթացքը մեզ կդնի այն տրամաբանության մեջ, որ մենք ստիպված կլինենք հետևել դրան, հետո ընթացքում կողմնորոշվել ճիշտ ու սխալի միջև և գնալ դեպքերի հետևից: Ուստի, որպեսզի մենք ստանձնենք նախաձեռնողի մեր ֆունկցիաները, իսկ ես այս պահին շատ եմ կարևորում դա, քանի որ մենք, դժբախտաբար, կարծես միշտ դեպքերի հետևից ենք գնացել, պետք է փորձենք բեկում մտցնել մեր մարտավարության մեջ և գտնել այն ձևերը, որոնք մեզ կդարձնեն ավելի նախաձեռնող: Եվ այս երկրորդ գործընթացը, դա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչման խնդրի իրականացումն է՝ ինքնուրույնաբար: Այդ գործընթացը հայկական կողմերը պետք է դարձնեն իրենց, էապես նոր, ռազմավարությունը և իրականացնեն այն առանձին՝ չպայմանավորելով դա Ադրբեջանով, ընթացիկ գործընթացներով և Ադրբեջանի տեսակետներով: Սրա համար մենք ունենք բոլոր հիմքերը և, այս առումով, ես կփորձեմ այստեղ արծարծել նաև միջազգային ատյանների պատասխանատվության հարցը, որովհետև նախահարձակ լինելու համար մենք պետք է շատ լավ հասկանանք, որ այստեղ, երբ փորձում ենք իրականացնել երկրորդ գործընթացը, ապա մեր գործընկերը, մեր գրուցակիցը դառնում է միջազգային հանրությունը, մեր գրուցակիցն են դառնում բոլոր այն միջազգային իրավասու ատյանները և կառույցները, որտեղ մենք ներկա ենք: Մենք պետք է այս իմաստով սկսենք ակտիվացնել մեր բանակցությունները: Այս գործընթացը իրականաց-

նելու համար մենք պետք է փոխենք մեր գրուցակցին: Ո՞րն է այս մոտեցման տրամաբանությունը: Այստեղ հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ միջազգային կազմակերպությունները, որոնք ներքաշված են կարգավորման գործընթացի մեջ, պետք է ունենան որոշակի պատասխանատվություն: Մտնելով կարգավորման գործընթացի մեջ, բնական է, որ նրանք կրում են պատասխանատվություն և այդ պատասխանատվությամբ է պայմանավորված հաճախ նաև այն կարևոր արձագանքը, որ մենք փորձում ենք տալ այս կամ այն փաստաթուղթը ընդունելուց հետո: Մենք հենց այդ պատասխանատվությամբ ենք զնահատում բոլոր այդ փաստաթղթերը, ասելով, որ եթե ընդունում եք մի փաստաթուղթ, որը ոչ միայն չի օգնում գործընթացին, այլ նաև կարող է խանգարել, ապա ավելի լավ է չընդունել այն: Օրինակ, նման կեցվածքով, մասնավորապես, ես հանդես եմ եկել Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովում, երբ քննարկվում էին Դևիսի և Աքքիմսոնի հայտնի զեկույցները: Լավ մի խոսք կա. «Մի՛ վնասիր», իսկ սա այն գործընթացն է, որին չպետք է վնասել: Եթե այս գործընթացում ինչ-որ բան է արվում, ապա պետք է տեսնել, թե որքանով է դա մոտեցնում խաղաղ կարգավորումը: Եվ այստեղ երկու չափանիշ կա, որ կարող է մեզ տանել այս ուղղությամբ: Առաջինը, ինչպես ասացի, դա այն ատյաններն են, որոնք մտել են այս գործընթացի մեջ և թիվ մեկ խնդիր են դրել, որ հարցը պետք է խաղաղ կարգավորվի, որ խաղաղ կարգավորումը պարզապես խոսքեր չլինեն, այլ լինեն գործողություններ, փաստաթուղթ կամ հրապարակային ելույթ կամ ընդունված բանաձև, որոնք կկարողանան ավելին կատարել և անհնար դարձնել, բացառել պատերազմի վերսկսումը: Ցանկացած նոր փաստաթուղթ պետք է բացառի, չեզոքացնի նոր պատերազմի վերսկսման վտանգը: Եվ այստեղ, միջազգային ատյանների, միջազգային կազմակերպությունների պատասխանատվությունն ուղղակի է: Այսինքն՝ որքան պատասխանատու են հակամարտող կողմերը, իհարկե, ոչ պակաս

պատասխանատու են նաև միջազգային ատյանները, որովհետև վերջում շատ հստակ է դառնալու, թե, ի վերջո, ո՞վ «նպաստեց» իր լուրջամբ կամ իր ոչ ճիշտ հայտարարություններով, Աստված չանի, պատերազմի վերսկսմանը: Ո՞վ է մեղավորը լինելու... Եվ այստեղ է, որ մենք պետք է մի քիչ ավելի շատ պահանջող դիրքերից հանդես գանք, որովհետև այս կետում մեր մոտեցումները և դիրքերը զրեթե անխոցելի են, քանի որ բոլորի համար պարզ է, որ հայկական կողմը նոր պատերազմ սկսելու որևէ տրամաբանություն, որևէ շահագրգռվածություն չունի: Բոլորի համար դա պարզ է: Աղբրեջանն էլ է դա լավ հասկանում, քայց ամեն ինչ անում է, որպեսզի իր հնարավոր ազդեցիկան, նոր պատերազմը հիմնավորի ինչ-որ թվացյալ երևույթներով, փաստերով, որ, իբրև թե, մենք ենք անընդհատ հրադադարը խախտում և այլն և այլն: Բազմաթիվ են այդ ձևերը, սակայն դրանց ես չեմ ուզում անդրադառնալ: Եվ բնական է, որ հայկական կողմը շահագրգռող լինելով, որ նոր պատերազմ չսկսվի, նման ձևով պետք է իր հարաբերություններում նաև հանդես գա միջազգային ատյաններում և հասնի նրան, որ այդ միջազգային ատյաններն իսկապես նպաստեն այդ խնդրի լուծմանը: Սա մեկ կարևոր խնդիր:

Երկրորդ կարևոր խնդիրը, բոլոր այդ ատյաններն ընդունում են մարդու իրավունքների պաշտպանության գերակայությունը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության չճանաչվածությունն, այսօր արդեն, հանգեցրել է նրան, որ Լեռնային Ղարաբաղում ապրող մարդկանց իրավունքները ճանաչված չեն: Սա փաստ է: Եվ չի կարելի թողնել, որ սա այսպես անընդհատ շարունակվի: Զճանաչված լինելու պատճառով Լեռնային Ղարաբաղի բնակչությունն այսօր օտարված է միջազգային հանրությունից, չունի տարրական իրավունքներ, այդ թվում՝ տեղաշարժի, հաղորդակցության: Այդ խախտված իրավունքների պաշտպանության մասով Հայաստանի կողմից ստանձնած դերակատարությունը խրախուսանքի փոխարեն, Հայաստանին այսօր դարձրել է մե-

դադրանքների հիմնական թիրախ: Մա երկրորդ կարևոր հարցն է, որ մենք պետք է լքորեն օգտագործենք, քանի որ սա զարգացման մեծ տեղ ունի:

Հաջորդ խնդիրը, դա Ադրբեջանով չպայմանավորելու հարցն է: Մենք ունենք մի շատ կարևոր հիմք, որը մինչև հիմա չենք օգտագործել: Եղել են մի շարք ընդունված եռակողմ համաձայնագրեր, ասենք, օրինակ, նույն հրադադարի համաձայնագիրը: Եռակողմ ասելով, ես ի նկատի ունեմ՝ Ղարաբաղ, Հայաստան, Ադրբեջան: Այդ համաձայնագրերը միակողմանիորեն անտեսվում են, մերժվում միայն Ադրբեջանի կողմից: Ադրբեջանը, փաստորեն, իրեն իրավունք է վերապահում մի կողմ դնել այս գործընթացի ամբողջ սրամաքանությունը, ինքն է անտեսում և շրջանցում Ղարաբաղը, այսպես ասած, Ղարաբաղի գոյությունը, իբրև թե չկա Ղարաբաղ և փորձում է առաջ տանել այն տրամաքանությունը, որը, չգիտես ինչու, դարձել է միակ ընդունելին, այսինքն՝ գնալ հաշտության համաձայնագրի, իսկ եթե Ադրբեջանը համաձայն չի, ուրեմն հարցը մտավ փակուղի: Այսօր մենք պետք է հասնենք նրան, որ միջազգային հանրությունն իր մեջ ուժ գտնի ընդունելու և ճանաչելու Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը: Եթե միջազգային հանրությունն իր մեջ ուժ գտնի հարգելու այդ իրավունքը, ապա Ադրբեջանն ինքը շատ լավ կհասկանա, որ իր մերժումով չի պայմանավորված ամեն ինչ: Օրինակ, ասենք, շատ լիարկե նման չէ այս հարցին, բայց այստեղ որոշակի նմանություն կա ցեղասպանության ճանաչման խնդրի հետ: Եթե Թուրքիան ճանաչի հայոց ցեղասպանությունը, ապա հարցը միանգամից կփակվի: Բայց սա չի նշանակում, որ ցեղասպանության միջազգային ճանաչումը այս հարցին չի օգնել կամ չի բերելու նրան, որ Թուրքիան մի օր հասկանա, որ ինքը դուրս է գալիս ընդդեմ ողջ միջազգային հանրության: Այժմ ընթանում է այս գործընթացը: Քանի-քանի երկրներ, քանի-քանի կազմակերպություններ ճանաչում են հայոց ցեղասպանությունը: Այո՛, նմանօրինակ գործընթաց պետք է

իրականացվի նաև այստեղ՝ Ղարաբաղի հարցով, որպեսզի Ադրբեջանն օր առաջ զգա, որ իսկապես ինքն արդեն հայտնվում է նույն այդ միջազգային ատյանների կողմից չընկալվող, չընդունվող կարգավիճակում: Եվ սրան մենք պիտի հասնենք ինքնուրույն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության համատեղ ջանքերով:

Մյուս կարևոր խնդիրն այն է, որ Ադրբեջանը մինչև հիմա մեզ հնարավորություն է տվել այս կարևոր խնդիրը առաջ տանել առանց իրեն՝ պարզապես չճանաչելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը որպես բանակցային կողմ: Իսկ ես ուղղակի ասում եմ, որ միջազգային բոլոր չափանիշներով չի կարելի խոսել ամբողջական բանակցությունների մասին, քանի դեռ բանակցային կողմերն իրար չեն ճանաչել և չեն նստել սեղանի շուրջ: Չկան այսօր այդպիսի ամբողջական բանակցություններ: Պարզապես չկան: Այն, ինչ տեղի է ունենում Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպումների մակարդակում կամ արտգործնախարարների հանդիպումներում, ավելի շուտ կարելի է անվանել կոնսուլտացիաներ կամ իրական բանակցությունների, այսպես ասած, նախապատրաստություն: Մա է իրականությունը: Մենք պետք է շատ հստակ ասենք, որ, ըստ էության, Ադրբեջանի այս պահվածքը արդեն ենթադրում է, որ լիարժեք բանակցություններ չկան: Ադրբեջանի այս պահվածքը շատ հստակ ասում է, որ ես, փաստորեն, այլ ճանապարհ եմ որդեգրել, ես բանակցել չեմ ուզում, իսկ այլ ճանապարհն այն է՝ կամ պտույտ տեղում, ինչն արդեն այսքան ժամանակ է ձգձգել բանակցությունների ընթացքում և, որը, չգիտես ինչու, որպես մեղադրանք ներկայացվում է հայկական կողմին, կամ՝ պատերազմ: Ուրիշ ճանապարհ չկա:

Դրա համար մենք բոլոր իմքերն ունենք հստակորեն ասելու, որ մենք զուգահեռաբար պետք է իրականացնենք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչման գործընթացը:

Եվ մյուս կարևոր հարցերը, որոնք, այսպես ասած, հավելում, լրացում են այս փաստարկները. կարգավորման բուն առարկան այսօր շրջանցվում է հենց այն պատճառով, որ առաջնային հարցը, որը խնդրի սկզբնաղբյուրն է հանդիսանում՝ կարգավիճակի հարցը, շրջանցվում է: Դա արվում է հենց այն պատճառով, որ բանակցություններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որպես այս հարցով անփոխարինելի կողմ, ներկա չէ, քանի որ Հայաստանը չի կարող փոխարինել Ղարաբաղը, մասնավորապես՝ կարգավիճակի հարցում: Եվ էլի կան հարցեր, թե ինչու Հայաստանը չի կարող փոխարինել Ղարաբաղին, օրինակ՝ անվտանգության հարցում: Այսօր, պետք է Ղարաբաղն ինքը որոշի անվտանգության իրեն անհրաժեշտ այն ծավալը, որն առաջին հերթին ապահովվում է այն տարածքներով, որոնք այսօր մենք վերահսկում ենք: Մեզ ասում են՝ ետ տվեք այդ տարածքները Ադրբեջանին: Իսկ դրա դիմաց ի՞նչ անվտանգության երաշխիքներ կան, որոնք համապատասխան և համարժեք փոխհատուցում կարող են առաջացնել: Որո՞նք են դրանք: Այս հարցն է, որ մենք պետք է կարողանանք դուրս բերել այս շահարկումների շրջանակներից: Հենց այստեղ պետք է դրվի հարցը, որ՝ այո, հենց Ղարաբաղը պետք է ինքը որոշի անվտանգության այն ծավալը, որը բավարար կլինի, որպեսզի նա ասի, որ ես համաձայն եմ, որ իմ անվտանգության երաշխիքները լիարժեք ապահովված են: Սա Ղարաբաղի բացառիկ իրավունքն է: Այսինքն՝ այս երկու հարցով, որոնք փաստորեն խնդրի առանցքային մասն են կազմում, արդեն իսկ շատ պարզ, ակնհայտ երևում է, որ կարգավորումը լրիվ այլ ընթացքի մեջ է դրվում ադրբեջանական այս մտտեցումների պատճառով:

Հաջորդ կարևոր հարցը, դա այլ հակամարտություններից այն տարանջատելու հարցն է: Սա շատ կարևոր խնդիր է, որը նույնպես այս գործընթացով մենք կարող ենք իրականացնել: Մենք պետք է կարողանանք Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը տարանջատել, դուրս բերել մնացած բոլոր չլուծված

հակամարտությունների համատեքստից: Սա մեր ձեռքն ու ոտքը կապում է բոլոր տեղերում և մեծ շանսեր է տալիս Ադրբեջանին: Ամեն անգամ, երբ այս հարցը բարձրանում է, Ադրբեջանն, այսպես ասած, խնդիրներ ունեցող երկրներին անընդհատ ասում է՝ տեսեք, եթե ես այս հարցը այսպես լուծեմ, ապա ձերն էլ այսպես կլուծվի, կառաջանա դոմինոյի էֆեկտ, դե ուրեմն, միանգամից բլուկ դնենք, որպեսզի Ղարաբաղում հարցը, այս՝ ինքնորոշման իրավունքի տրամաբանությամբ չլուծվի: Որպեսզի դա տեղի չունենա, մենք հենց այս ուղղությամբ շատ լուրջ գործընթաց պետք է իրականացնենք, հասկացնելու համար միջազգային հանրությանը, որ յուրաքանչյուր հակամարտություն ուրույն է, ունի իր առանձնահատկությունները և դրա ամենացայտուն օրինակը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման հարցն է, որ ինքնորոշումը այնքան խորը հիմնավորումներ ունի՝ բազմաթիվ բաղադրիչներով: Ես դրան չեմ ուզում անդրադառնալ, քանի որ իմ նշած եզրակացության մեջ այդ ամենը կլինի, որտեղ ամրագրվելու է նաև, որ չկա ուղղակի որևէ համեմատություն այս հակամարտության և այսօր չկարգավորված այլ հակամարտությունների միջև: Եվ վերջապես, կան արդեն նախադեպեր: Դրանք շատ են և հեռու գնալ պետք չէ: Վերջնենք վերջին ժամանակների նախադեպերը, որոնք շատ հստակ ասում են, որ, այո, նման կարգավորումները արդեն դառնում են անխուսափելի, որովհետև հակառակ պարագայում, եթե հարցը ճիշտ չի լուծվում և ճիշտ ժամանակին չի լուծվում, ապա պատերազմի վերսկսման վտանգը դառնում է հավանական: Դրա համար Ղարաբաղի օրինակը շատ պերճախոս է, որովհետև Ղարաբաղի հակամարտության զարգացման պատմությունը հենց դա է ցույց տալիս, որ ամեն անգամ, երբ հարցը չի լուծվում՝ իրավիճակն ավելի է բարդանում: Եվ սա նույն տրամաբանությամբ անընդհատ շարունակվելու է: Ուստի մի տեղ պետք է կանգ առնել, իսկ կանգ առնելու տեղն ու բանալին և ձևը՝ ինքնորոշման իրավունքը հարգելն է:

Իմ միտքն ամբողջացնելու համար ուզում եմ անդրադառնալ Հայաստանի դերակատարությանը և դրա հետ կապված Ադրբեջանի արձագանքին: Հայաստանի դերակատարության հետ կապված, Ադրբեջանը շատ ջղաձիգ շարժումներ է արդեն կատարել, երբ ինչ-որ տեղ հայտարարվում է, որ Հայաստանը կարող է, օրինակի համար, ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Սրա հետ կապված երկու խոսք եմ ցանկանում ասել, որպեսզի կարողանամ ամբողջացնել պատկերը: Ղարաբաղի ճանաչման խնդիրը շատ է բարձրացվում Հայաստանի կողմից: Ես վստահ եմ, որ Հայաստանը հիմա էլ բոլոր հիմքերը ունի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ճանաչելու համար և այստեղ որևէ լրացուցիչ հիմքեր ձեռք բերելու խնդիր չկա: Նախ՝ եթե դա լինի, ապա դա ևս մեկ անգամ պարզապես առավել ակնհայտ և պարզորոշ կընդգծի հակամարտության կողմերի դիրքորոշումները և նպատակները: Շատ ավելի պարզորոշ կդարձնի, թե ինչ է ցանկանում հայկական կողմը և, դրան արձագանքելով, Ադրբեջանը նույնպես կպարզեցնի իր նպատակները և դրանով այս ողջ գործընթացի, այսպես կոչված, գտում կկատարվի: Ես համարում եմ, որ չնայած Հայաստանը դե-յուրե չի ճանաչել Ղարաբաղը, այնուհանդերձ, դե-ֆակտո դա կատարվում է և, ըստ էության, բազմաթիվ տեսանկյուններից դա իրականացվում է: Օրինակ, նույն միջպետական վարկի տրամադրումը. մենք ամեն տարի մեր բյուջեում հստակ գրում ենք... Ումի՞ց ենք թաքում պահում մեր միջպետական պաշտոնական հարաբերությունները, մեր ներկայացուցչությունը, Լեռնային Ղարաբաղի արտգործնախարարության գործունեությունը, բազմաթիվ պաշտոնական կապերը:

Կա ևս մեկ կարևոր հարց, որին ես կցանկանայի անդրադառնալ: Եկեք չմտնենք այն բարդույթի մեջ, թե չենք արել և արդեն ուշ է ու դա շտկել հնարավոր չէ: Այս կապակցությամբ ես մի պարզաբանում եմ կատարում միշտ և դա շատ ընդունելի արձագանքներ է ստանում: Օրինակ, տեսեք, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, Ադրբեջանի նման, հետխորհրդային տա-

րածքում հռչակեց իր հանրապետությունը, այնպես՝ ինչպես դա կատարեցին մնացած հանրապետությունները Խորհրդային Միության փլուզման ժամանակ: Նման ձևով ստեղծվեց Հայաստանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, Ադրբեջանը, Վրաստանը, Ուկրաինան և այլն: Ես չեմ կարծում, որ այս տրամաբանությունը՝ անկախություն և ինքնորոշում հռչակելը, որ ձեռք է բերվել պատմաքաղաքական միևնույն պայմաններում և միևնույն տրամաբանությամբ, փոխադարձ ճանաչումների պարտադիր փուլով պիտի անցնեն: Այսինքն՝ գիտեք, հաճախ մեկ երկիրը ճանաչում է մյուսի անկախությունը, երբ ինքն արդեն կա, երբ ինքն էլ ունի այդ կարգավիճակը, մյուսը ձևավորվում է, հռչակում է՝ դու ճանաչում ես նրա անկախությունը: Դրա համար մենք ուրախանում էինք, որ Հայաստանին ճանաչեց Մեծ Բրիտանիան և այլն: Հիշեք այդ օրերը, երբ մեծ ցնձություն էինք ապրում, երբ ամեն մի նոր երկիր ճանաչում էր մեզ: Բայց Հայաստանը խնդի՞ր էր դրել արդյոք ճանաչելու Մեծ Բրիտանիային, Ֆրանսիային, Ուկրաինային: Ո՛չ, այդպես չէ՞: Այս առումով, ես ցանկանում եմ ասել, որ եկեք չկոմպլեքսավորվենք այդքան այս խնդրի մեջ և, վստահ եմ, որ մյուս հարցը կգա, կլրացնի այն, եթե Հայաստանը, որը ստանձնում է այս դերակատարությունը, շատ ավելի հստակ և ցցուն դարձնի Լեռնային Ղարաբաղի ճանաչման հետ կապված Հայաստանի մոտեցումները: Պարզ ասած, դա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչմանը գրեթե հավասարազոր, կարևոր խնդիր է, որ Հայաստանը ճանաչվի որպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության և անվտանգության երաշխավոր: Ասել է թե, այն դերակատարությունը, որն ի սկզբանե ունեցել է Հայաստանը 1988 թվականից ի վեր, պետք է հստակորեն ամրագրվի՝ Հայաստանն է եղել և մնում ինքնորոշման իրավունքի իրականացման, Լեռնային Ղարաբաղի ժողովրդի երաշխավորը՝ դրանից բխող բոլոր իրավունքներով և պարտավորություն-

ներով: Սա է շատ կարևոր և, երբ այս հստակությունը տեղի կունենա, ես վստահ եմ, որ բոլոր հարցերը իրենց տեղը կընկնեն: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունը պետք է իրականացնեն այս գործընթացը, որպեսզի ճանաչվի թե՛ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, թե՛ անրագրվի Հայաստանի երաշխավորի կարգավիճակը: Ասեմ, որ մեր տարբեր քննարկումները, օրինակ, հենց Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովում շատ և շատ հեռու են այս մոտեցումներից: Եվ այստեղ է այն վտանգը, որ հակամարտությունը հաճախ ներկայացվում է որպես խնդիր Հայաստանի և Ադրբեջանի միջև: Այս պրոբլեմից դուրս գալու և հարցերը ճիշտ իրենց տեղերում դնելու համար հարկավոր է լուծել այս շատ կարևոր խնդիրները:

Ինչ վերաբերում է Ադրբեջանին. Ադրբեջանի արձագանքներն արդեն երևում են, երբ, օրինակ, հարց է բարձրացնում Հայաստանի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման: Այն փորձում է որակել դա որպես նոր պատերազմի նախերգանք: Սույնով, մենք մտածում ենք, որ վերջ, սա նշանակում է պատերազմ, եթե Հայաստանը ճանաչում է Ղարաբաղի Հանրապետությունը: Իրականում, դա ուղղակի նպատակ ունի կանխելու նման անբարենպաստ զարգացումը: Ադրբեջանի համար սա կործանարար զարգացում կլինի և բնական է, որ սրանով՝ այս հայտարարությամբ, նա փորձում է արդարացնել բանակցային գործընթացում մինչև օրս իր ունեցած ոչ կառուցողական պահվածքը, քանի որ ակնհայտ է դառնում այն, որ Ադրբեջանը ողջ ընթացքում ձգտել է նախապայմաններ առաջադրելու բացառիկ իրավունք ձեռք բերել: Ինքն է միշտ նախապայմաններ դնում՝ խոսենք միայն այն պայմանով, որ Ղարաբաղը Ադրբեջանի կազմում է կամ եկեք խոսենք միայն այն պայմանով, ասենք, երբ կընդունվի իմ համար կարևոր այս կամ այն բանաձևը և այլն և այլն: Հայկական կողմը հասկանալով և ունենա-

լով այն համոզմունքը, որ ինքնորոշման իրավունքն իսկապես աշխատող է և, որ մեր հիմքերը շատ ավելին են, ըստ էության, միշտ առանց նախապայմանների է զննել բանակցությունների: Նախապայմաններ չի դրել և սրան միշտ հակադրվել է մյուս կողմի նախապայմանների պարտադրանքը: Սա նույնպես պետք է ի ցույց դրվի միջազգային հանրությանը:

Եվ հաջորդը. շատ հստակ է դրվում այն մոտեցումը, որտեղ ակնհայտ ասվում է, որ եթե ճանաչես Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ ես պատերազմ կսկսեմ: Սա պարզ նշանակում է, որ ադրբեջանական կողմը կարևոր հարցով, ըստ էության, զիջման պատրաստ չէ և երբեք չի զիջելու: Այս հարցը երբեք չդնեք օրակարգ՝ այսպես է ի ցույց դնում իր անզիջում կեցվածքը Ադրբեջանը, ինչը որևէ կերպ չի մտնում բանակցային տրամաբանության մեջ: Սրանով նաև, ըստ էության, Ադրբեջանի համար ձախողվում է փուլային կարգավորման նրա մարտավարական առանցքային թեզը: Իսկ նրա համար առանցքային թեզը եղել է և մնում է այն, որ՝ իմը ինձ տվեք, հետո կխոսենք, ինձ տվեք իմ տարածքները, հետո կխոսենք մնացածի մասին: Սա է Ադրբեջանի տրամաբանությունը բոլոր տեղերում և պետք է ասեմ, որ շատ դեպքերում սա աշխատել է և համարվում է, որ սա է Ադրբեջանի պահանջը՝ արդար և հասկանալի: Սա է, որ մենք պետք է կուտենք և լուրջ աշխատանք իրականացնենք՝ ուղղորդելով դա Ադրբեջանի կողմից, այս, իբր արդար, ներկայացվող պահանջի տրամաբանության դեմ: Փաստորեն, «Իմը ինձ տվեք» բանաձևի կիրառմամբ փորձել են, և ոչ առանց հաջողության, բանակցություններից հանել հակամարտության բուն առարկան՝ կարգավիճակի հարցը:

Ուրեմն, շատ հստակ է, որ այժմ շատ կարևոր է իրականացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգայնացման հարցը, ճանաչման հարցը: Սա է օրվա խնդիրը, օրվա հրամայականը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԵԼՈՒՅԹՆԵՐ

Արմեն Ադայան

Մենք այսօր խոսում ենք Ղարաբաղի պրոբլեմից՝ ամենևին չմոտենալով այդ պրոբլեմին: Ո՞վ է մեզանից կասկածում, որ Ստեփանակերտի հարցը լուծված է, Շուշիի հարցը լուծված է: Ո՞վ է մեզանից կասկածում: Կարծում եմ, այսօր հայերիս համար, Հայաստանի Հանրապետության համար Ղարաբաղի հարց չկա: Այսօր միայն ազատագրված տարածքների պրոբլեմը կա: Մենք ամենակարևոր, մեր բուն խնդիրը թողած, ինչ-որ հպանցիկ բաների մասին ենք խոսում: Ազատագրված տարածքների խնդրի մասին, ինչ-ինչ պատճառներով, չենք ուզում անկեղծ խոսել: Վերջին անգամ 2001 թվականի վերջին էր, թե՞ 2002 թվականի սկզբին, Ազգային ժողովի խումբ-խմբակցությունները մի հայտարարություն ընդունեցին, որտեղ առաջարկվեց խնդրի լուծման իրենց բանաձևը: Քիչ առաջ, պարոն Ռուստամյան, Դուք ասում էիք, որ ազատագրված տարածքների խնդիրը լուծելու բացառիկ իրավունքը տրված է Արցախի ժողովրդին: Դա, ինչ ասեմ, կարճ ասած, դա արտուրդ է: Խոսքը գնում է նույն Հայաստանի, միևնույն հայրենիքի մասին: Մի քիչ դժվար է հիմա բառեր գտնել, մի քիչ դժվար է հիմա դրա մասին խոսել, ինքներդ էլ գիտեք, թե ինչ մթնոլորտ է տիրում երկրում, երբ բոլոր բառերն արժեզրկված են: Այս դեպքում նշանակում է, որ դաշնակցությունը չի խոսում ազատագրված տարածքների մասին շատ կոնկրետ և այդ իրավունքը վերապահում է արցախցիներին և շատ հանգիստ առաջ է գնում: Այս կապակցությամբ, ես շատ կուզեմ, որ այսօր բոլորս ինչ-որ ձևով կամ մեծամասամբ մեր ելույթներում անդադառնալիս՝ ազատագրված տարածքների խնդրին: Ղարաբաղի պրոբլեմ՝ նշանակում է ազատագրված տարածքների պրոբլեմ և մենք այսօր պետք է հենց բուն պրոբլեմից խոսենք, այլ ոչ թե հարակից բաներից: Եվ հարցս. «Ինչու՞ այսօր դաշնակցությունը ազատագրված տարածքների մասին

շատ կոնկրետ չի խոսում, չի արտահայտվում: Դա այն պատճառով, որ դա դարաբաղիների բացառիկ իրավունքն է»:

Արմեն Ռուստամյան

Ես ուղղակի զարմանում եմ, թե ինչպես կարելի էր իմ ելույթից այդպիսի եզրակացություններ անել:

Արմեն Ադայան

Ես բառացի գրել եմ. «Լեռնային Ղարաբաղը պետք է որոշի տարածքների դիմաց անվտանգության երաշխիքների ծավալը»:

Մենք չկա՞նք, թող իրե՞նք որոշեն:

Արմեն Ռուստամյան

Քոլորովին չեք հասկացել, թե ինչ եմ ասել: Ուրեմն, նախ, եկեք ձերբազատվենք ամբողջական մոդելը, հայեցակարգը չընկալված դետալներով դիտարկելուց: Գիտեք, երևի արդեն հասել ենք այն աստիճանի, որ պետք չի փորձել Ղարաբաղի ամբողջական հարցը տարանջատել բաղադրիչների, այնքան դետալացնել, որ սկսի արդեն սատանան երևալ: Չի կարելի, ընդհանրապես, Ղարաբաղի հարցը չհայեցակարգված մոտեցմամբ պաշտպանել: Դա անհնար է: Ես խոսում եմ Ղարաբաղի հարցի պաշտպանության մասին միջազգային ատյաններում: Իմ թեման այսօր այս է: Եվ շատ ճիշտ է այսօր ասում պարոն Քոչարյանը, որ մոդելը այն է, որը մենք սկսել ենք և պետք է շարունակենք, չի կարելի տրամաբանությունը փոխել: 1991 թվականին մենք Լեռնային Ղարաբաղում հանրաքվե ենք կատարել, ժողովուրդն է որոշել, թե ինչ ուղղությամբ պետք է գնա, ինչպես պիտի գնա և այլն: Եվ Հայաստանը պետք է հենվի դրա վրա: Եթե այդպես չլինի, ապա խոցելի է դառնում Ղարաբաղի հարցի պաշտպանությունը: Իսկ ո՞վ ասաց, որ Հայաստանը պետք է մեկ կողմ քաշվի: Հայաստանը ոչ թե պետք է մեկ կողմ քաշվի, այլ ամենակտիվ ներգրավվումը պետք է ունենա գործընթացում՝ ձեռք բերելով հենց երաշխավորի կարգավիճակ: Դուք երևի լավ չեք ըն-

կայում, թե երաշխավորի կարգավիճակ ասածն՝ ինչ պարտավորություններ և ինչ իրավունքներ է տալիս: Այստեղ հարց չկա, որ՝ Հայաստանը թողնի Ղարաբաղի ժողովրդին... Այսպիսի մոտեցում երբեք չի եղել այս հարցի տրամաբանության մեջ: Մենք բոլորս էլ լավ հասկանում ենք, որ այս հարցի տրամաբանական ավարտը կարող է լինել երկուսը. կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակում, կամ Հայաստանի հետ միացում:

Արմեն Աղայան

Ի՞նչ սահմաններում:

Արմեն Ռուստամյան

Սահմանները, դրանք դետալներ են, որոնք պետք է ճշտվեն պայմանագրերով և համաձայնագրերով: Ես չեմ այդ սահմանները գծողը, որ իմ ուզած ձևով գծեի... Ես իմ սահմանները կգծեմ, այնպիսի սահմաններ գծեմ, որ բոլորը զարմանան և Դուք էլ՝ այդ թվում:

Այս ամենը կարող է ունենալ երկու տրամաբանական ավարտ: Եթե Ձեզ թվում է, թե, օրինակ, երբ Ղարաբաղի Հանրապետության հռչակումը կամ ճանաչումը լինի, Ադրբեյջանը չի ասելու՝ միացեք, սխալվում եք: Միացեք է ասելու, որովհետև իրեն շատ ավելի ձեռնտու է այս տարածաշրջանում ունենալ մեկ հայկական պետություն՝ երկուսի փոխարեն, որոշ տեղերում երկու համապատասխան երկուական ձայնով և այլն: Այսինքն՝ խոսքն այստեղ գնում է մարտավարական ճիշտ մեխանիզմներ ընտրելու մասին: Մենք պետք է շատ պարզ հասկանանք, թե ի՞նչ ենք ուզում, ինչպե՞ս դա պետք է ուզենք և ինչպե՞ս դա պետք է իրականացնենք: Դրա մասին է խոսքը: Իսկ դաշնակցության տեսակետները 115 տարի է հայտնի են և սրա մասին չէ, որ ես այստեղ խոսել եմ: Եվ ընդհանրապես, ազատագրված տարածքներ տերմինը, այս իրականության մեջ, առաջին անգամ արծարծել է դաշնակցությունը, ինչի՞ մասին է խոսքը:

ԱԳՐԲԵՋԱՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ՝ ՈՐՊԵՍ ԼՂ ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄ

Ալեքսանդր Մանասյան

Պրոֆեսոր

Մինչև բուն նյութին անցնելը ես մի քանի դիտարկումներ ունեմ: Առաջին հերթին, ցանկանում եմ խոսել հակամարտության տեղեկատվական կերպի նշանակության մասին: Բանն այն է, որ մեր օրերում չկա որևէ մեկ հակամարտություն՝ տնտեսական, իրավական, ռազմական և այլն, որը որևէ ձևով չարտացոլվի խնդրի տեղեկատվական կերպի մեջ և, որ այդ կերպը չունենա իր կարևորագույն դերակատարությունը այդ կարևորագույն խնդիրների գործում: Ցավոք, պետք է արձանագրեն, որ հենց այս լսարանում տեղի ունեցած մեր խոսակցությունները գալիս են հաստատելու, որ մենք միասնական պատկերացումներ չունենք հակամարտության մասին: Կարծում եմ, որ այս հանդիպումը, գուցե, դառնա այն հանդիպումներից առաջինը, որտեղ պետք է զուտ փորձագիտական մակարդակով քննարկվեն հարցերը: Այստեղ մի երկու անգամ դիտարկումների և դիտողությունների, նույնիսկ հանդիմանության ձևով խոսք գնաց այն մասին, թե՛ ինչո՞ւ, ո՞րն է ձեր կուսակցության դիրքորոշումը, դուք ընդդիմադիր ուժ եք, բայց այդ դիրքորոշումը համապատասխանել է կառավարության, իշխանությունների դիրքորոշման հետ... Ես կարծում եմ, որ այստեղ թաքնված է մեծագույն վտանգներից մեկը: Փորձագիտական քննության ժամանակ մենք բոլորս պետք է հանենք մեր կուսակցական գլխարկները և հանդես գանք ոչ որպես ընդդիմություն կամ դիմություն: Մենք պետք է հանդես գանք միայն իբրև մասնագետներ: Դաշնակցության դիրքորոշումը... Այնուհետև ինչպես պարոն Քոչարյանը ասաց՝ իմ կուսակցության դիրքորոշումը... Ես կարծում եմ՝ այս կարգի քննարկումների ժամանակ այսպիսի մոտեցումներ ուղղակի չպետք է հնչեցվեն: Խոսքը պետք է գնա խնդրի գիտական քննարկման և ոչ թե կուսակցականացման մասին: Այստեղ ուղ-

դակի ուզում եմ ասել, որ հակամարտության տեղեկատվական կերպը շատ բարդ և նուրբ գործ է և այն առաջին բառերը, այն առաջին զաղափարները, որոնք դրվում են այդ կերպի հիմքում՝ այդ կերպը ստեղծելու համար, կարող են հետագայում արտակարգ վատ հետևանքներ ունենալ: Պետք է ասել, որ Ադրբեջանն այդ իմաստով գերազանցում է մեզ: Տեղեկատվական կերպում և պայքարում նրանց համեմատությամբ մենք շատ ավելի կոպիտ սխալներ ենք թույլ տվել, իսկ հակամարտության կարգավորումը ուղղակի չի կարող շրջանցել այդ կերպը: Այստեղ նշվեց, որ ադրբեջանական կողմը ասում է, որ դա մեր հողն է, մերը մեզ տվեք՝ հետո կլուծենք... Սա էլ է տեղեկատվական կերպի, հակամարտության պատկերի մասը, որը յուրացվել է միջազգային հանրության կողմից՝ այդ թվում նաև մեր պատճառով: Այդ կապակցությամբ ես կուզենայի ներկայացնել այն մի քանի սխալները, որ մենք թույլ ենք տվել: Առաջինը, հենց սկզբից ի վեր, այս տարիների ընթացքում, հայ փախստականների հետ մեկտեղ ադրբեջանցիներին մենք անվանում ենք փախստականներ: Ադրբեջանցի փախստական, ըստ էության, չկա: Գոնե ինձ դա հաջողվել է ապացուցել Դաթթմության համաժողովում, որի երկրորդ ռաունդը այս օրերին վերջացավ և որտեղից վերադարձել ենք եռակողմ ստորագրված մի փաստաթղթով՝ համատեղ համաձայնեցված Ադրբեջանի, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հասարակությունների ներկայացուցիչների հետ: Դաթթմության այդ ինը ռաունդների ընթացքում մեր փորձագետներին կոնկրետ հաջողվել է ցույց տալ, որ ադրբեջանցի փախստականներ չկան: «Փախստական» բառը շատ կարևոր *բանալի* բառ է հակամարտության կերպում: Կա՞ն արդյոք ադրբեջանցի փախստականներ, արդյոք ադրբեջանցիները, որոնք հայտնվել են իրենց բնակավայրերից դուրս, ենթարկվել են բռնությունների, կոտորածների, ցեղասպանության: Այս ամենը լի է հետևանքներով: Մենք պետք է կարողանանք անցնել այն գիծը, որից այնկողմ պարզ է դառնում, որ հակամարտության համա-

տեքստում եղել են միայն հայ փախստականներ, և դա պետք է անել: Իսկ Դաթթմուքը ցույց տվեց, որ դա կարելի է անել: Ուղղակի կատակ է խոսել ադրբեջանցի փախստականների մասին: Այստեղ շատ խոսվեց այդ մասին: Օրինակ, մենք ինքներս ենք հավասարության նշան դրել Լեռնային Ղարաբաղի և ԼՂԻՄ-ի միջև: Պատմական, աշխարհագրական և քաղաքական տեսակետից սա ուղղակի կոպիտ սխալ է: Եվ, մինչև օրս, մենք դա անում ենք: Նախ, հավասարության նշան ենք դնում Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի տարածքի և Լեռնային Ղարաբաղի միջև: Այնինչ, հիմնարար փաստաթղթերում գրված է, որ Լեռնային Ղարաբաղը մարզ չէ: Եթե վերցնենք կովկասյան բյուրոյի որոշումը, որտեղ ասվում է, որ՝ Լեռնային Ղարաբաղին տալ լայն ինքնավարություն և, հետո, նայենք Բաքվում հյուստարակված դեկրետը, ապա կտեսնենք, որ այնտեղ գրված է՝ Լեռնային Ղարաբաղի հայկական մասում ստեղծել ինքնավարություն: Մենք ինքներս ենք այս տարիների ընթացքում հավասարության նշան դրել *Լեռնային Ղարաբաղ* և *ԼՂԻՄ* հասկացությունների միջև, իսկ ադրբեջանցին այս ուղղությամբ աշխատել և հաղթել է մեզ:

Հաջորդ սխալը, որ մենք կատարել ենք այս կերպի մեջ, դա այն է, որ մենք որևէ ձևով չենք նույնացնում Արևելյան Անդրկովկասի հայոց ցեղասպանությունը Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած ցեղասպանության հետ: Թուրքերը 1918 թվականին Բաքվում և ողջ Արևելյան Անդրկովկասում հայկական գյուղերում կոտորածներ են իրականացրել, դրան հետևել է Շուշիի երկիզումը: Մենք բաժանել ենք իրարից այս ցեղասպանությունները: Մենք հայոց ցեղասպանության տակ չենք հասկացել Արևելյան Անդրկովկասի հայոց ցեղասպանությունը՝ որպես թուրքերի կողմից իրականացրած միևնույն ժողովրդի ցեղասպանություն: Արևմտահայությունը և ադրբեջանահայությունը նույն ժողովրդի երկու հատվածներն են և այդ ցեղասպանությունը չի ավարտվել ո՛չ 1918 թվականին և ո՛չ էլ՝ 1923-ին: Այդ ցե-

դասպանությունը շարունակվել է ու, եթե այնտեղ՝ Թուրքիայում, ուժացման այդ գործընթացը այլ կերպ է ընթացել, ապա նույնը, թուրքերի կողմից հիմնված մեկ այլ՝ աղբյուրաբանական կոչվող պետության մեջ, իրագործվել է 70 տարի շարունակ՝ մինչև 90-ական թվականները: Հայոց ցեղասպանության շարունակական գործընթացը վերջացել է 90-ական թվականներին, ըստ էության, Արևելյան Անդրկովկասի այն մասում, որտեղ մինչև հիմա իշխում են աղբյուրաբանական ուժերը: Նույնիսկ ցեղասպանության 90-ամյակի կապակցությամբ մենք այդպես չարեցինք, նույնիսկ հայոց ցեղասպանության 90-ամյակը մենք հանգեցնում ենք Մեծ Եղեռնի, էլ չեմ ասում նախանցյալ դարի 90-ական թվականներից մինչև անցյալ դարի 20-ական թվականները իրականացրած հայոց ցեղասպանության շարունակական ընթացքի մասին: Ինքներս գլխապատահ մտանք տարածքային ամբողջության և ազգերի ինքնորոշման սկզբունքների մտածված, մեզ մատուցած ծուղակի մեջ: Շատ պարզ բան է, որ տարածքային ամբողջականության սկզբունքը մեծ հաշվով ոչ մի հակասության մեջ չի մտնում ինքնորոշման իրավունքի հետ, դրա մասին են պնդում բազմաթիվ իրավաբաններ, այդ թվում նաև՝ ռուս, օտար մասնագետներ: Բայց մենք ինքներս կասկածի տակ դրեցինք դա: Հիշո՞ւմ ենք մեր առաջին նախագահի հրաժեշտի ելույթը, որտեղ ասվում էր, որ այդ հարցը կլուծվի այն ժամանակ, երբ հաշտեցվեն այդ երկու սկզբունքները: Մինչդեռ այդ երկու սկզբունքները հաշտ են և հակասությունը ստեղծվում է հատուկ՝ մեր չիմացության պայմաններում: Այնուամենայնիվ, տեղեկատվական կերպարի տեսակետից, ես ցանկանում եմ, որ այստեղ պարզենք. ի՞նչ պետք է հասկանանք մերօրյա Աղբյուրաբանական Հանրապետության տարածքային ամբողջականությունն ասելով: Զննությունը, եթե մենք փաստաթղթերով ենք դատում, ցույց է տալիս, որ այդ նորօրյա Աղբյուրաբանական Հանրապետությունը չունի հռչակված սահմաններ, տարածքներ: Չունի առ այսօր: Այն, ճիշտ է, ճանաչվել է այդ տարածքում, սակայն եթե վերցնենք նրա

հիմնարար փաստաթղթերը՝ 1991 թվականի օգոստոսի 30-ի անկախության Հռչակագիրը և պետական անկախության սահմանադրական ակտը, ապա կտեսնենք, որ այն սահմաններ չի հռչակել: Այնինչ, այն պարտավոր էր սահմաններ հռչակել, որովհետև հրաժարվել էր Խորհրդային Աղբյուրաբանի իրավահաջորդությունից և վերականգնել էր 1918-1920 թվականների թուրքական սվիններով ստեղծված Աղբյուրաբանական Հանրապետությունը, պետություն՝ որը ճանաչված սահմաններ չի ունեցել: Այն վերականգնել է սահմաններ չունեցող մի պետություն և այս պարագայում, զոնե հայտարարեր, որ, ենթադրենք, անկախանում է Խորհրդային Աղբյուրաբանի սահմաններում: Դա էլ չի արել: Ինչո՞ւ: Որովհետև գիտեր, որ դրա իրավունքն էլ չունի: Որովհետև կա Կարսի պայմանագիրը, օրինակ, ըստ որի, եթե Բաքուն հրաժարվում է Խորհրդային Աղբյուրաբանի իրավահաջորդությունից, ապա իր կապերը Նախիջևանի հետ ընդհանրապես վերանում են: Այս տարիների ընթացքում, եթե ոչ մեր պաշտոնական շրջանակները, ապա նրանց կողմից սատարվող մեր լրագրողները, հասարակական գործիչները, հատկապես Սփյուռքում, երբևիցե բարձրացրե՞ն են այս հարցը: Ոչ, չեն բարձրացրել: Եվ սա թույլ է տալիս Աղբյուրաբանին այս խնդիրը դարձնել ՄԱԿ-ի կողմից ընդունված երկու պետությունների խնդիր՝ դուրս մղելով Դարաբաղը և, հետո ասում են, որ եթե ձեզ զիջենք Լեռնային Դարաբաղը, ապա դուք մեզ պետք է տաք Մեղրին: Շատ պարզ հարցադրում է, եթե հարցը հանգեցնում ես երկու հանրապետությունների միջև տարածքային վեճի: Շատ տրամաբանական է, քանի որ մենք ինքներս երբևիցե չենք ասել, որ պահանջելով Մեղրին՝ Աղբյուրաբանը պահաջում է ճանապարհ դեպի իր կողմից բռնագավթված տարածքները: Մեկ անգամ մինչև օրս չենք ասել: Ընդ որում, այդ ասելու համար, հատկապես նախիջևանահայության շահերը պաշտպանելու մեխանիզմների մասով, շատ մեծ են Սփյուռքի հնարավորությունները: Բայց դա մենք չենք անում:

Վերջապես ևս մեկ խնդիր, որը դարձյալ հետաքրքիր է իմ տեսանկյունից. դա այն է, ինչն այստեղ արդեն շատ հնչեցվեց, որ մենք, գլխավորապես և առաջին հերթին, պետք է հենվենք ազգերի ինքնորոշման սկզբունքի վրա: Ես կարծում եմ, որ դա դարձյալ ծուղակ է: Իմ տեսանկյունից դա սխալ է: Ինչո՞ւ: Որովհետև, որքան էլ մեզ սիրեն Եվրոպայում, այնուհանդերձ ազգերի ինքնորոշման խնդիր բոլորն էլ ունեն՝ Ֆրանսիան, Բուլղարիան, Թուրքիան, Բելգիան... Մեզ կարող են ժպտալ, բայց չեն պաշտպանելու: Մենք ավելի հզոր կովաններ ունենք: Ընդհակառակը, մենք ազգերի ինքնորոշման խնդիրը պետք է երկրորդ պլան տանենք: Առաջին պլանում պետք է լինի այն, ինչ ասվում է վերջին մի քանի տարիների ընթացքում, այն է՝ Լեռնային Ղարաբաղը երբեք չի եղել անկախ Ադրբեջանական Հանրապետության մաս: Ընդհանրապես չի եղել: Սրա մասին ասում է նախագահը, իսկ արտգործնախարարը սեղմում է ինքնորոշման սկզբունքի վրա: Երբ մենք հենվում ենք ազգերի ինքնորոշման սկզբունքի վրա, մենք դրանով բարեկամներ ձեռք չենք բերում: Ես ձեզ պետք է ասեմ, երբ մեզ մոտ Ազգային ժողովում լսումներ էին գնում, մեր բարեկամ երկրներից մեկի ներկայացուցիչը մոտեցավ ինձ և իմանալով, որ ես տարածքային հարցը միշտ առաջին պլանում եմ դնում, ասաց. «Դուք այդ մասին ասել եք երկու անգամ, բայց պետք է 202 անգամ ասեք: Պետք է այդ մասին անընդհատ ասել»: Մենք պետք է սրա վրա շեշտադրում կատարենք: Խոսում ենք ամբողջական հայեցակարգի մասին, սակայն քննարկում ենք էլեմենտներ: Ամեն բանը շատ կարևոր է: Փախտակալները, Լաչինի միջանցքն էլ, Շուշիի կարգավիճակն էլ, ադրբեջանահայությունը, Ադրբեջանի հայ ժողովուրդը, տարածքային ամբողջականությունը, սահմանը՝ բոլոր բաներն էլ կարևոր են: Բոլոր բաները պետք է բխեն միասնական հայեցակարգից: Եվ մենք չպետք է, ինչպես նախագահի և արտգործնախարարի հայտարարությունների դեպքում, միմյանց հակառակ բաներ ասենք: Կարծեմ պարոն Ռուստամյանն այստեղ

ասաց, որ այսքան ժամանակ վարվող բանակցությունները լիարժեք բանակցություններ չեն եղել, ես դրա հետ համաձայն եմ: Մենք ինքներս պետք է ասենք, որ դրանք կոնսուլտացիաներ են եղել, խորհրդատվություններ, քանի որ Մինսկի խումբը վարուց է որոշել, որ բանակցությունները պետք է եռակողմ լինեն: Մինսկի խմբի որոշումից հետո այլ որոշում չի եղել, բայց մենք ինքներս, իհարկե նաև նախագահը, նույնպես պետք է խուսափեինք այդպիսի հանդիպումներից, այդ կարգի երկարատև գործընթացից, որը բերեց ձևաչափի փոփոխության՝ դարձնելով այն երկկողմ: Մենք գոնե պետք է հստակ ասենք, որ այդ հանդիպումները միայն հանդիպումներ են բանակցությունների ընթացքում: Դա պետք է հստակ արվի: Մենք՝ մեր լրատվությունը, լրագրողները, դա անվանում ենք բանակցություններ: Չի կարելի այդպիսի բան անել: Տեսեք, պարզ ու հասարակ բան է թվում՝ բանակցություններ անվանել թե՞ չանվանել: Չի կարելի դրանք բանակցություններ անվանել: Պաշտոնական ձևաչափին չի կարելի նման մոտեցում ցուցաբերել:

Եվ վերջապես, ես գալիս եմ մեկ այլ խնդրի, որի մասին մենք քիչ ենք խոսում՝ դա վստահությունն է: Վստահության մասին մենք քիչ ենք խոսում, մենք դա երբեք չենք շեշտում: Բանն այն է, որ հնարավոր չէ որևէ քայլ կատարել, փաստաթուղթ ընդունել առանց վստահության: Վստահության քայլերի մասին մենք բնավ քիչ ենք խոսում: Եվ դա առաջին հերթին պետք է անեն լրագրողները, մեր քաղաքական գործիչները: Գնում են եվրոպաառլամենտներում ելույթ են ունենում և չեն խոսում Ադրբեջանի վարքագծի մասին հետխորհրդային ժամանակաշրջանում, վարքագիծ, որը վստահության համար ոչ մի հիմք չի տալիս: Սրա մասին պետք է խոսել, որովհետև առանց վստահության որևէ փաստաթուղթ չի կարող ընդունելի լինել և ժողովուրդները պատրաստ չեն լինի գնալու դրան:

Վերջապես, մի հետաքրքիր դիտարկում ևս. մենք անընդհատ ընդգծում ենք, որ Եվրոպայի կամ Մինսկի խմբի դիրքորոշումը

քաղաքական է: Իսկապես այն քաղաքական է, բայց հենց խոսում են տարածքային ամբողջականության սկզբունքի մասին, մենք պետք է ասենք. «Շնորհակալություն, դա իրավական մոտեցում է»: Հենց Ադրբեջանի տարածքային ամբողջականության մասին խոսք է լինում, պետք է ասել. «Դա իրավական մոտեցում է, ուրեմն մնացած իրավական փաստաթղթերն էլ մեջտեղ բերեք»: Իսկ մենք դա չենք նկատում, դրա փոխարեն ազգային ինքնորոշման սկզբունք ենք առաջ տանում և հետո էլ տարածքային ամբողջականության սկզբունքն անվանում ենք քաղաքական սկզբունք: Ինքններս ենք ուղղակի մեզ տրված շանսը կորցնում: Դա քաղաքական մոտեցում չէ: Մենք երբեմն նույնիսկ պետք է շնորհակալություն հայտնենք Մինսկի խմբին, որ տարածքային ամբողջականության սկզբունքի և ազգերի ինքնորոշման սկզբունքի մասին խոսելիս, այն ցուցաբերում է իրավական մոտեցում, քանի որ մեզ համար իրավական փաստաթղթերի մասին ազատ խոսելու կռիվն է ստեղծում: Բայց մեզ համոզել են, որ այստեղ քաղաքական մոտեցում կա, իսկ Ադրբեջանն անընդհատ տարածքային ամբողջականության սկզբունքի մասին է խոսում, որը՝ որպես այդպիսին, քաղաքական չէ: Մեզ ասում են՝ մի խոսեք պատմությունից: Ադրբեջանն անընդհատ պատմությունից է խոսում, ասելով, թե դրանք պատմականորեն մեր հողերն են, իսկ մենք էլ ասել ենք՝ չէ, չի կարելի խոսել պատմությունից: Այս ամենը խնդրի կերպարի մասին է և մենք գործ ունենք հենց խնդրի կերպարի հետ, իսկ ամենացավալին այն է, որ մենք ինքներս մեր կողմից խնդրից դուրս մղեցինք ադրբեջանահայությանը: Մենք նույնիսկ այդպիսի բառ չունենք՝ *ադրբեջանահայություն*: Մենք ունենք՝ *բաքվեցի, տունգայիթցի, զանձակեցի*... Այսպես չի կարելի: Ադրբեջանցիները, թուրքերը մի տեղում հավաք մի հինգ հոգի են փնտրում, որպեսզի տարածքին անուն կպցնեն՝ որիմյան թաթարներ, չգիտեն էլ որտեղ՝ մեկ ուրիշ թաթարներ, մեսխեթցի թուրքեր, նույնիսկ Երևանից գնացածների անունը դրեցին *եքազ*, որպեսզի անունը կապվի: Մենք

չենք կարողանում այդ կուլտուրան, մտածողության այդ կերպը ձեռք բերել: Եվ նույնիսկ հակամարտության կերպարում չունենք գլխավոր գոհի անունը: Չունենք: Մենք ինքներս ենք հավասարության նշան դրել ադրբեջանցի փախստականների, որոնց ինքներս ենք այդպես կոչել, և հայ փախստականների միջև: Բայց դրանք տարբեր բաներ են: Ադրբեջանահայությունը և հայաստանաբնակ ադրբեջանցիները տարբեր բաներ են, այստեղ այդ մասին արդեն խոսվեց Աթանեսյանի գեկույցի մեջ, որի համար ես շնորհակալ եմ, շատ լավ բան էր գրել: Մենք չենք նկատել, որ դրանք տարբեր բաներ են և հավասարության նշան ենք դրել: Մինչև ԽՍՀՄ լուծարումը, հայերը Ադրբեջանում եղել են պետականակիր ազգերից մեկը այն իմաստով, որ ունեցել են խորհրդային պետականության ձևերից մեկը՝ մարզ: Ադրբեջանահայության իրավունքները բոլորովին տարբեր են եղել ազգային փոքրամասնություն կազմող հայաստանաբնակ ադրբեջանցիներից: Մենք այս հանգամանքը բոլորովին չենք օգտագործել: Քիչ ենք ասում այն մասին, որ Ադրբեջանը չի ստեղծվել որպես այսօրվա ադրբեջանական թուրքերի պետություն: Դա եղել է և դա գրված է դեկրետում, որ խորհրդային իշխանության նպատակն է հանդիսանում ստեղծել բոլոր ժողովուրդների համագործակցություն: Սկզբից խոսվում է միասնական պետական միության մեջ մուտավմանների և հայերի մասին և իրենց իսկ հրապարակված 1988 թ.՝ 1989 թվականի փաստաթղթում գրված է, որ ԼՂԻՄ-ը հանդիսանում է պետականության խորհրդային ձև: Մեզ՝ հայերիս, ադրբեջանահայությանը հրավիրել են այդ պետություն՝ ո՛չ որպես ազգային պետություն: Մենք քիչ ենք ասում այդ մասին, բայց ադրբեջանահայությունը, լինելով այդ պետության հիմնադիր ազգերից մեկը, ենթարկվել է ցեղասպանության և, ավելին, ի տարբերություն հայաստանաբնակ ադրբեջանցիների, այն դուրս է մղվել իր հայրենիքից առանց որևէ փոխհատուցման: Ես իմ հիմնավորումներում միշտ ասում եմ, որ ադրբեջանցի փախստական չկա երկու պատճառով. առաջինը՝ նրանց

մի մասը փոխել է իր բնակարանները Բաքվից, Մումգայիթից և այլ տեղերից եկած փախստականների հետ, մյուս կողմից էլ՝ 14500 աղքեղացի ընտանիքներ ստացել են փոխհատուցում: Նրանց մի մասն էլ փոխհատուցում է ստացել Սպիտակի երկրաշարժից հետո: Այսինքն՝ փոխհատուցման, բնակարանների փոխանակման համատեքստում Հայաստանից գրեթե փախստական աղքեղացի չի մնում: Հիմա մենք խոսում ենք բնակավայրը տեղափոխած աղքեղացիների մասին: Այնտեղ էլ նրանք փախստական չեն երկու պատճառով: Նախ, նրանք զանգվածաբար մասնակցել են շրջափակմանը և չեն կարող դիտարկվել որպես խաղաղ բնակչություն: Նրանք զանգվածաբար մասնակցել են ռազմական գործողություններին: Շուշեցին գրեթե մեկ տարի ունակած է Մտեփանակերտը, և նրան համարում ենք խաղաղ բնակիչ, աղղամցին, որտեղից որտեղ, ունակածում էր Մալիբեյլին, Ստեփանակերտը, և նրան մենք խաղաղ բնակիչ ենք համարում: Մենք չենք ասում, որ նրանք մասնակցել են պատերազմին և այդ պատճառով էլ փախստականներ չեն: Սա առաջինը, իսկ երկրորդը, որով հիմնավորվում է, որ նրանք փախստականներ չեն, այդ այն է, որ այն պետությունը, որտեղ նրանք հիմա ապրում են, իրենք համարում են հենց իրենց պետությունը: Թող չհամարեն իրենց պետությունը, թող ասեն, որ ԼՂՀ-ն է մեր պետությունը: Այդ դեպքում մենք սիրով նրանց փախստականի կարգավիճակ կտանք: Այսինքն՝ ստացվեց երկու գլխավոր պատճառ, որով նրանք չեն կարող փախստական համարվել. նրանք ապրում են այն պետությունում, որը համարում են իրենց ազգային պետությունը և հետո, որ նրանք զանգվածաբար մասնակցել են շրջափակմանը, պատերազմին: Նրանց տղամարդիկ երեխաներին և կանանց մտեցրել էին ճանապարհի վրա, որպեսզի ռուս զինվորները իրենց ձեռք չտան և չմաքրեն Ադդամով անցնող ճանապարհը:

Մենք պետք է փորձենք կազմակերպել աղքեղանահայությանը: Իսկ ի՞նչ ենք արել մենք: Ես ինքս էլ բաքվեցի եմ... Բերել

ենք այստեղ բաքվեցիներին ու սկսել ենք երեսին խփել, թե՛ ռուսախոս ես, ռուսախոս: Ի՞նչ անենք, որ հայախոս չեն այդ մարդիկ: Դրանից հետո էլ նրանց շատ են նեղել և, այդ ինտելիգենտ մարդկանց, տարել են գյուղերը: Նրանցից ոմանք հարմարվել են գյուղական կյանքին, ոմանք չեն հարմարվել և նեղացած մեր իշխանություններից՝ հեռացել են: Հիմա մենք պետք է կարողանանք վերգտնել այդ վստահությունը նրանց մոտ: Պետք է կարողանանք նրանց ձևավորել իբրև պահանջատեր: Որովհետև ամենաշատը նրանք իրավունք ունեն իրենց ունեցվածքի համար պահանջ ներկայացնելու: Աղքեղանահայությունը՝ իբրև հակամարտության գլխավոր գոհի գաղափար, ընդհանրապես դուրս է մնացել հակամարտության կարգավորման քաղաքական գործընթացից: Եվ սա մեր մեղքով: Ո՞վ է այդ ժողովրդի տերը: Մենք, չէ՞: Եվ առաջին պատասխանատուն Մտեփանակերտն է, որովհետև մարզը ստեղծվել է որպես ամբողջ Արևելյան Անդրկովկասի հայության անվտանգության երաշխավոր: Բայց, այնուամենայնիվ, մենք պետք է տեր կանգնենք մեր ազգի այդ հատվածին: Գիտեք, դա մեր ազգի անանուն մի մասն է, որը վիթխարի տոկոս է կազմում: Պատկերացնո՞ւմ եք, վերցնում ենք և մեր ազգի այդ տոկոսը մի կողմ ենք շարտում: Այ հե՛նց այսպես ենք վարվում: Մենք այդ հարցում պետք է արմատապես փոխենք մեր հարցադրումը, ընդ որում՝ կապելով դա այսօր Աղքեղանում ապրող մյուս ժողովուրդների կարգավիճակի հետ: Բանն այն է, որ այնտեղ տարբեր ազգերի բազմաթիվ մարդիկ են ապրում, որոնք գտնվում են ընդհատակում: Վախենում են իրենց լեզվին անվանել, վախենում են իրենց թախչ անվանել: Մենք պետք է բարձրացնենք այն հարցը, որ դա մի պետություն է, որտեղ դեռևս կան ընդհատակում գտնվող բնիկ ժողովուրդներ:

Ես կարծում եմ, այս համատեքստում միայն մենք կարող ենք աղքեղանահայությանը դարձնել պահանջատեր: Սակայն, նորից եմ կրկնում, սկզբից, մենք պետք է բարձրացնենք փոխհատուցման հարցը և դրանից հետո նոր, աստիճանաբար, գնանք

դեպի հարցի քաղաքականացումը: Որպեսզի նրանց միավորենք, մենք պետք է նրանց ասենք, որ դուք այնտեղ ստանալիք ունեք, եթե կազմակերպվեք՝ մենք ձեզ կօգնենք:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԵԼՈՒՅԹՆԵՐ

Արկաղի Կարապետյան

Ես երկու հարց ունեմ Արմեն Ռուստամյանին: Քանի որ ձեր հանձնաժողովը պետք է աշխատի ԼՂՀ ճանաչման խնդրի վրա, ապա ինձ հետաքրքիր է, թե ինչպիսի՞ ասիմաններում է պատկերացնում ձեր հանձնաժողովը ԼՂՀ սահմանները:

Արմեն Ռուստամյան

Մեր հանձնաժողովը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը չէ, որպեսզի որոշի սահմանները: Դա որոշված է: Ինչպես որոշված է, այնպես էլ հասկանում ենք: Երբ ասում ենք՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, հասկանում ենք այն, ինչը վաղուց արդեն հայտնի է: Նոր բան այստեղ հանձնաժողովը չունի ասելու: Դրա իրավունք էլ չունի: Հաջորդը, ինչ վերաբերում է պատերազմի կանխման հարցերին, ապա կա երկու հարց, որ կարող է կանխել այդ պատերազմը: Մեկը մեր հզորությունն է: Այլընտրանք չենք գտնում, որ ասումը կտրում է՝ կկծի: Սա է տրամաբանությունը: Ես բազմիցս ասել եմ աղբյուրացիներին, որ հիմա խոսում եք 20%-ի մասին, իսկ ո՞ր է այն երաշխիքը, որ այդ նոր պատերազմի արդյունքում չեք սկսելու խոսել 40%-ի մասին: Այդպիսի երաշխիք իրենք չպետք է ունենան, ընդհակառակը, պետք է շատ համոզված լինեն, որ դրա հավանականությունը մեծ է: Եվ սա է ամենակարևոր երաշխիքներից մեկը, իսկ դա խոսքերով չի լինում: Դա լինում է իրական գնահատումներով, իսկ որ նրանք այդքան իրատեսություն ունեն, ես դրանում համոզված եմ: Դա է պատճառը, որ իրենք չեն վերսկսում պատերազմը: Իսկ նրանց սպառնալիքներով լի հայտարարությունները, որ անընդհատ հնչում են, ավելի շատ քարոզչական բնույթ

ունեն և այս առումով այստեղ նոր բան գոյություն չունի: Բայց այստեղ երկրորդ քաղաղրիչն էլ կա՝ դա պաշտպանվածության խնդիրն է պատերազմից: Դե-յուրե պաշտպանվածությունը ես պակաս կարևոր չեմ համարում: Դե-յուրե պաշտպանվածությունը դա միջազգային երաշխիքներն են, կարգավիճակի ճանաչումն է, այո՛, որովհետև, գիտեք, մի բան է, երբ դու ասում ես, որ այս տարածքները ես իմ վերահսկողության տակ եմ վերցնում, որովհետև դե-յուրե դա ճիշտ է, որ դու ասես ես վերահսկեմ և աշխարհը դա ընկալում է, մեկ այլ բան է, երբ դու միջազգային այդ երաշխիքը ձեռք չես բերել: Այսօր, երբ տարբեր երկրներ տարբեր բաղադրիչներով նշում են պաշտպանվածության մասին, առաջին հերթին, որպես ամենակարևոր բաղադրիչ, նշում են այն, որ միջազգային չափանիշներով ազդեալիս է համարվում այն գործողությունը, որով խախտվում են մեկ այլ երկրի միջազգայնորեն ճանաչված սահմանները և տվյալ երկրի տարածքային անբողջականությունը: Սակայն այն երկրորդ գործընթացը, որի մասին ես խոսում էի, պակաս կարևոր չէ այն ամենից, ինչ մենք ձեռք ենք բերել պատերազմի դաշտում, սա բոլորովին էլ պակաս չէ: Մենք պետք է կարողանանք ամրագրել այդ դաշտում ձեռք բերվածը: Ես բազմաթիվ փաստեր կախող եմ բերել պատմությունից, թե ինչեր ենք կորցրել մեր ունեցածից, որը դե-յուրե ֆիքսված չի եղել: Այ սրա՛ նշանակությունը պետք չէ քերականահատել: Սա է, որ շատ կարևոր է, որպեսզի մեր դիվանագիտությունը իրականացնի և, ես վստահ եմ, որ այդ դիվանագիտության բաղադրիչները մենք լիարժեք չենք օգտագործել: Դիվանագիտության առումով երկու կարևոր բաղադրիչ կա, որոնցից մենք հետ ենք մնում, դրանցից մեկը խորհրդարանական դիվանագիտությունն է, իսկ մյուսը լայն թափ ստացող, այսպես ասած՝ ժողովրդային դիվանագիտությունը...

Էլեոնորա Ասատրյան

Դուք իսկապես հավատո՞ւմ եք ժողովրդական դիվանագիտությանը:

Այննն Ռուստամյան

Այո, իհարկե, ժողովրդական դիվանագիտությանը ես հավատում եմ, ես դրա փաստերն ունեմ, որ այն իսկապես արդյունք է տվել: Իսկ այդ լոբբինգը, որն այսօր ամբողջ աշխարհում տեղի է ունենում, այդ ի՞նչ դիվանագիտության արդյունք է, հենց այդ լոբբինգի արդյունքն է, որ զանազան հակահայկական փաստաթղթեր են կանխվում և ստեղծվում հայամետ փաստաթղթեր: Դրանք ի՞նչ դիվանագիտության արդյունք են: Միայն դեսպանատները չեն, որ աշխատում են դեսպանների միջոցով, այդպես չէ՞: Այսքանը:

Իզոր Մուրադյան

Պարոն Մանասյան, Դուք ինչպե՞ս եք դիտարկում ԼՂՀ-ի սահմանները՝ ԼՂԽՄ-ի շրջանակներում:

Ալեքսանդր Մանասյան

Միմսկի խումբը միշտ ասում է՝ զորքերը հետ քաշեք ԼՂԽՄ-ի սահմանները: Միշտ էլ, բոլոր փաստաթղթերում, այդպես է գրվում:

Իզոր Մուրադյան

Դուք հաստատո՞ւմ եք այդ թեզը:

Ալեքսանդր Մանասյան

Ոչ:

Իզոր Մուրադյան

Ոչ, բայց Դուք նոր ասացիք, որ հայերը Ադրբեջանում պետություն կազմավորող ազգ էին և ունեին պետականություն:

Ալեքսանդր Մանասյան

Դա չի նշանակում պետականություն՝ հենց այդ սահմաններում:

Իզոր Մուրադյան

Ինչպե՞ս թե չի նշանակում:

Ալեքսանդր Մանասյան

Հիմա կասեմ՝ ինչպես: Սկզբից, Կովբյուրոն որոշեց Լեռնային Ղարաբաղին տալ ինքնավարություն, այնուհետև, Բաքուն երկու տարի հետո որոշեց, որ այդ ինքնավարությունն ունի միայն Լեռնային Ղարաբաղի հայկական մասը: Այսինքն՝ եթե համարենք, ինչպես դա համարվել է 70 տարի շարունակ, որ Կովբյուրոյի որոշումը, դա միջպետական, միջազգային փաստաթուղթ է, ապա նրանք խախտել են այդ պայմանագիրը և հաստատել են ԼՂԽՄ-ի իրենց սահմանները: Կովբյուրոյի որոշմամբ, լայն մարզային ինքնավարություն էր տրամադրվում ողջ Լեռնային Ղարաբաղին և ոչ թե նրա մի մասին: Այդ իսկ պատճառով, մենք Լեռնային Ղարաբաղից դուրս չենք եկել և դեռ նույնիսկ քիչ ենք արել, որովհետև Լեռնային Ղարաբաղի կենտրոնական և հյուսիսային մասերը դեռևս դրսում են:

Իզոր Մուրադյան

Իմ կարծիքով, Դուք հենց հիմա փոխեցիք Ձեր կարծիքը:

Ալեքսանդր Մանասյան

Ոչ, ես դրա մասին բազմիցս գրել եմ:

Արամ Գ. Սարգսյան

Ես կարող եմ հաստատել դա, ինքս եմ կարդացել:

Ռաֆայել Ղազարյան

Ես մի հարց էի ուզում տալ պարոն Ռուստամյանին: Ձեր զեկույցի մեջ ինձ ուրախացրեց նախահարձակության մասին հնչեցրած թեզը: Վաղուց էր պետք դա առաջ քաշել, որովհետև մենք տարօրինակ իրավիճակում ենք հայտվել. այնտեղ հայտարարում են՝ ոչ մի զիջում, մենք, ընդհանրապես, չենք կարող սկսել որևէ բանակցություն կամ զալ որևէ համաձայնության, քանի դեռ չենք համաձայնվել, որ ԼՂԽՄ-ն էլ է մերը, մենք՝ Եվրախորհրդի հետ միասին, նրանց առաջ անընդհատ տարբեր ճաշատեսակներ ենք մատուցում, հուսալով, որ գուցե ինչ-որ մի բան նրանց դուր կգա: Այսինքն՝ տարբերակներ ենք մատուցում:

Աղբբեջանը հայտարարում է, որ ոչ մի տարբերակի համաձայն չէ, իսկ մենք մատուցում ենք՝ այ, միգրացե, սա՞ նրան բավարարի ու նա կմեղմանա ի վերջո և դրա հետ կհամաձայնի: Այնպես որ, ես հիմա կուզենայի իմանալ նախահարձակության այն չափերը, սահմանները, որոնք Դուք եք տեսնում: Ասենք, ի՞նչ նախահարձակություն ենք մենք քույլ տվել, երբ նրանք բուլդոզերներով ոչնչացնում են Ջուղայի 14 000 խաչքարերը, որոնցից միայն երկուսն են փրկվել, որովհետև ժամանակին բերվել են էջմիածին և, վերջերս, վերջին օրերս վերացնում են մնացած 3-4 հազարը: Ի՞նչ նախահարձակություն մենք այստեղ ցուցաբերեցինք: Մա մեկ. շատ հետաքրքիր կլինեք լսել նախահարձակության Չեր պատկերացումը, և երկրորդ հարցը. Դուք ասացիք, որ իրոք այս բանակցությունները, որ տեղի են ունեցել Քոչարյանի և ավագ ու կրտսեր Ալիևների միջև, ավելի շատ խորհրդատվական են եղել, բայց մյուս կողմից այնտեղ քննարկվում են հարցի լուծման արդեն շատ կոնկրետ տարբերակներ, որտեղ բոլորովին չի երևում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կարծիքը: Նա տարբերակների քննարկման հարցում բոլորովին բացակայում է: Էլ ի՞նչ կոնսուլտատիվ, եթե այնտեղ արդեն կոնկրետ լուծում են առաջարկում՝ չհետաքրքրվելով դարաբաղցիների կարծիքով:

Արմեն Ռուստամյան

Ես իհարկե չեմ տիրապետում ամբողջ նյութին: Այն, ինչ զաղտնի ու փակ է ընթանում այս փուլում, ես չեմ կարող արձագանքել դրան, նախ՝ որովհետև չգիտեմ թե այնտեղ, ի վերջո, ամբողջական իմաստով, նրանք ինչի՞ են հանգել: Գիտեմ, որ մի քանի սկզբունքներ կան, որոնք որպես նորություն են այս գործընթացում: Եթե համեմատության մեջ ենք դնում Միմսկի խմբի ներկայացրած փաթեթները, ապա որոշ սկզբունքներ նոր երանգ են ստացել, իսկ թե ինչպե՞ս է իրականացվում նրանց հաղորդակցությունը Ղարաբաղի հետ, ասեմ, որ կարծում եմ, որ այն ամենը, ինչ տեղի է ունենում քննարկումների ժամանակ, Հայաս-

տանի Հանրապետության Նախագահին առանց համաձայնեցնելու Լեռնային Ղարաբաղի ղեկավարության հետ՝ չի անի: Գոնե այդքանը, կարծում եմ, հաստատ պահպանվում է: Բայց իմ ասածն այլ է: Ես ասում եմ, որ անգամ այն, ինչ տեղի է ունենում, չի կարելի բանակցություն համարել: Որևէ բանակցությանը պետք է անպայման երեք կողմ նստեն սեղանի շուրջ և համաձայնության գան ու նոր հետո միասին փաստաթուղթ ստորագրեն: Իսկ այն՝ ինչ տեղի է ունենում, նույնպես նույն տրամաբանության մեջ է: Դա նախապատրաստություն է, այո, դա, ըստ ևրդյան, կոնսուլտացիաներ են, որի ժամանակ կարող են տարրեր սկզբունքներ քննարկվել և համաձայնեցվել: Հիմա, մինչև վերջնական տեքստը չկա և չկան վերջնական տեքստի ընդունման մեխանիզմները, մի քիչ վաղաժամ է գնահատականներ տալ և ես ձեռնպահ կմնամ: Դեռ հարց է, թե ասենք, եթե մենք ինչ-որ համաձայնության եկանք, այդ ձևաչափով Ղարաբաղը ինչպե՞ս է մտնելու այս գործընթացի մեջ, մտնելուց, ստորագրելուց հետո ինչպե՞ս է դա համաձայնեցվելու Հայաստանում, Ղարաբաղում, Աղբբեջանում: Այս ամենը դեռ խնդիրներ են, որոնք մեզ համար մինչև այսօր այնքան էլ դեռ պարզ չեն: Երբ դա տեղի ունենա, բնական է, այդ ժամանակ կարելի է ավելի հստակ մտնեցում հանդես բերել: Ինչ վերաբերում է նախահարձակության հնարավորություններին, ապա ես բավականին մեծ ծավալի այդպիսի դաշտ կամ թեմաներ տեսնում եմ, որովհետև, տեսեք, ամենապարզ օրինակը կարող են Եվրախորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի վրա բերել: Աղբբեջանը 30-ից ավելի փաստաթղթեր է ներկայացրել Եվրախորհրդարանում, փաստաթղթեր՝ մեկը մյուսից զավեշտալի, չիմնավորված, աղավաղված, սակայն եկեք ու տեսեք, որ իրենց համար դրանով որոշակի տրյունքների են հասել, որովհետև այնպիսի ձևաչափերում, ինչպիսին են օրինակ, խորհրդարանական հանձնաժողովները, պատգամավորները շատ չեն խորանում փաստաթղթերի մեջ,

Շափարշ Բոչարյան

Շատ կարճ մեկնաբանեմ: Ժամանակին, պարոն Գալոյանի և նախորդ պատվիրակության աշխատանքի շնորհիվ, ընդունվեց այսպես կոչված *Մինուպիա*, որը ենթադրում էր, որ այց պիտի լինի, որը տեղում պետք է պարզեր ամեն ինչ: Այդ գծով գեկուցող Օ'Հարթան, որն, ի դեպ, բրիտանացի է, խուսափեց այդ այցից: Այն պահից, երբ ես դարձա վեհաժողովի անդամ, դարձյալ հարցում կատարեցի Ջուդայի գերեզմանոցի հետ կապված նախարարների կոմիտեին, բնական է, նախապես հասկանալով, որ նախարարների կոմիտեում անհնարին է հասնել լուծման, որովհետև այնտեղ որոշումները կոնսենսուսով են ընդունվում: Այն պարագայից հետո, երբ ես ընտրվեցի Մշակութային ժառանգության պահպանման ենթահանձնաժողովի փոխնախագահ, օգտագործելով այդ լծակը՝ հասանք նրան, որ այս մոտակա ժամանակներս պետք է կազմակերպվեր այդ այցը Նախիջևան: Հիմա դա ինչպե՞ս կլինի, ես չգիտեմ:

ՆԻՍ ԵՐԿՐՈՐԴ

ԱԶԱՏԱԳՐՎԱՅ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ՝
ՈՐՊԵՍ ՂԱՐԱԲԱԳՅԱՆ ԲԱՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՌԱՆՑԱԶՅՈՒՆ ԽՆԴԻՐ

Արմեն Աղայան

*«Ազատագրված տարածքների պաշտպանության»
հասարակական նախաձեռնության քաղաքական քարտուղար*

Թվում է, թե Ղարաբաղյան թեմայով ընթացող բանակցություններում քննարկվող հարցերը շատ են. կարգավիճակ, փախստականներ, հաղորդակցության ուղիներ, անվտանգություն: Սակայն իրականում, հայ-ադրբեջանական հարաբերություններում գոյություն ունի մեկ և միայն մեկ խնդիր, այն է. թե ո՞ւմ է պատկանելու Արաքսի ափը և նրա երկայնքով անցնող հաղորդակցության ուղիները: Մնացած բոլոր հարցերը իմաստավորվում են ճիշտ այնքանով, որքանով որ նպաստում են այս խնդրի հայանպաստ կամ թրքանպաստ լուծումներից որևէ մեկին:

Այսպես, փախստականների վերադարձման խնդիր ընդհանրապես գոյություն չունի: Այնհայտ է, որ հայերը Ադրբեջանում չեն ապրելու: Ոչ էլ թուրքերը (ադրբեջանցի թուրքերը) կվերադառնան Արցախ, քանի դեռ այն միացած է Հայաստանին: Փախստականների հարցը շահարկվում է Արցախի (ժամանակն է, որ մենք այլևս տարբերություն չգնենք, օրինակ, Կովսակյանի և Մարտակերտի միջև) որոշ տարածքներ Ադրբեջանին հանձնելու համատեքստում, որպեսզի վերադառնան նախկինում այնտեղ բնակվող և իբր բռնի տեղահանված թուրքերը:

Գոնե Հայաստանի համար գոյություն չունի Ադրբեջանի տարածքով արտաքին աշխարհի հետ կապվելու խնդիր: Չի լինի նաև Արցախի հետ կապվելու խնդիր, եթե պաշտպանության նախարարի առանձին խորհրդակցանքներ չգծեն «ճանապարհա-

յին քարտեզներ» «Լաչին-Քելրաջարյան ազատ տնտեսական գոտու» վերաբերյալ: Իսկ Ադրբեջանի համար հաղորդակցության ուղու հարցը իմաստալից է դառնում միայն այն դեպքում, երբ նա տիրանում է Արաքսի ափի արցախյան ամբողջ հատվածին: Այդ դեպքում նա իհարկե Մեղրիի հատվածով հաղորդակցային միջանցք պահանջելու իրավունք ունի՝ իր կողմից գրավված Նախիջևանի և Թուրքիայի հետ կապվելու համար:

Կարգավիճակի խնդիր նույնպես գոյություն չունի: Բոլորի համար էլ պարզ է, որ հեռանկարային իմաստով ԼՂ առանձին պետության գոյությունն անհնար է և անիմաստ: Այն, ի վերջո, միանալու է Հայաստանին: Հակառակ Ադրբեջանի արմատական հայտարարությունների, Քի Ուեսթում փաստվեց, որ նրա կողմից իրապես վիճարկվող միակ հարցն այն է, թե ինչ սահմաններով է դա տեղի ունենալու:

Կողմերի համաձայնությամբ որևէ կարգավորումից հետո բնակչության անվտանգությունը սպահովելու խնդիրը նույնպես ուռճացված է: Այն նույնպես կապված է Արաքսի ափի հետ: Եթե այն մնում է հայկական, ապա անվտանգությունը լիարժեք ապահովված է, եթե՝ ոչ, ապա նշանակում է Հայաստանը անվտանգության խնդիր իր առջև ընդհանրապես չի դնում, հրաժարվում է տարածաշրջանային դերակատարության որևէ հավակնությունից և աստիճանաբար ինտեգրվում է թուրք հարևանների հետ: Այս փուլում անվտանգության խնդիրը ավելի շատ օգտագործվում է հիմա խաղաղապահներ ներգրավելու՝ Արաքսի նկատմամբ օտար վերահսկողություն սահմանելու նպատակով:

Այսօրվա քննարկման թեմայի համատեքստում ևս մեկ անգամ հատուկ ընդգծենք, որ փախստականների մասին խոսվում է գլխավորապես տարածքների հանձնումը հիմնավորելու նպատակով: Ահա թե ինչու «Ազատագրված տարածքների պաշտպանություն» հասարակական նախաձեռնությունը քննադատում է ոչ միայն հայրենի տարածքները Ադրբեջանի սեփական

նությամբ համարող բոլոր հայտարարությունները, այլև պատեյազմի զոհերի նյութական իրավունքներին և դրանց փոխհատուցմանը վերաբերող բոլոր դատողությունները: Իսկ դրանք անչափ շատ են «*Ղարաբաղյան հակամարտություն. փախստականներ, տարածքներ, անվտանգություն*» աշխատությունում:

Միանգամից ասեմ, որ հիշյալ աշխատության մեր քննադատությունը սկզբունքորեն տարբերվում է այն քննադատությունից, որը սովորաբար ուղղում ենք բացահայտ պարտվողական և լավաճանական երևույթների դեմ, ինչպիսին էր, օրինակ, վերջերս Հայկ Քոթանջյանի հրապարակած «Ճանապարհային քարտեզը»: Քննարկվող գրքում մենք գնահատում ենք, որ առաջին անգամ պաշտոնական դիրքորոշում արտահայտող աշխատությունում կարևորվում է ազատագրված տարածքները պահպանելու խնդիրը: Մեր քննադատությունը վերաբերում է միայն նրան, որ այդ խնդիրը փորձ է արվում լուծել այնպիսի հարթությունում, որտեղ այն փաստորեն լուծում չունի՝ միջազգային իրավունքի դաշտում: Փոխարենը, այդպիսի բովանդակությունը պարունակում է շատ վտանգավոր մտքեր, որոնք ադրբեջանցիների կամ միջնորդների կողմից փոքր-ինչ այլ և միգուցե ավելի հիմնավոր մեկնաբանությամբ կողոպեն հայերի դեմ:

Աշխատության հիմնական գաղափարը «Պաղաքակիրթ ապահարգանք» է, որի հիմնական կողմը պետք է ադրբեջանահայությունը լինի և նրա ներկայացուցիչ ԼՂՀ-ն: Մենք նույնպես օգտակար ենք համարում «ադրբեջանահայության գործունը»՝ որպես հավելյալ օժանդակ փաստարկ միջազգային խոսակցություններում: Երկու տարի առաջ նույնիսկ նախաձեռնեցինք մի այդպիսի կոմիտեի ստեղծում: Սակայն, անմիջապես հասկացանք, որ շատ վտանգավոր է խոսել ադրբեջանահայերի մասին, չունենալով քաղաքականապես կազմակերպված ադրբեջանահայություն: Չմոռանանք, որ Ադրբեջանը, մեր յուրաքանչյուր իրական «ադրբեջանահայի» դիմաց, շատ հեշտությամբ կարող

է հանել իրենց իրավունքները պահանջող մի քանի հարյուր «դարաբարդաթուրք»: Ակնհայտ է, որ մարդկային չափումով շատ տարվելը և հակամարտության գոհերի մասին հոգ տանելը ավելի շատ համապատասխանում է հենց Ադրբեջանի շահերին:

Մյուս էական քննադատությունը վերաբերում է Արցախյան ազատամարտի էության խեղաթյուրմանը, նյութականացմանը, ազգային եխմնախնդրի փոխակերպմանը առանձին անհատների իրավական խնդիրների: Հայ ժողովուրդը չի հանձնելու որևէ տարածք ոչ թե այն պատճառով, որ դրանով պատրաստվում է փոխհատուցել բարվահայության նյութական կորուստները, այլ այն պատճառով, որ դրանք Հայաստանի նույնպիսի անբաժանելի մասն են, ինչպես Շուշին, Երևանը, նմանապես նաև Գանձակն ու Նախիջևանը: Ինչ վերաբերում է քաղաքական իրավունքներին, ապա եթե որևէ փախստական-ադրբեջանահայ զրկված է դրանից, ապա դա նրա ընտրությունն է, քանի որ ցանկության դեպքում հայկական քաղաքացիություն ստանալու դժվարություն նրանցից ոչ մեկը չի ունեցել: Որպես օրինակ բերենք նաև այսօրվա խորհրդածողովի վերնագիրը. «Ադրբեջանահայություն. կորսված հայրենիք. համարժեք փոխհատուցում»: Հարց է ծագում, թե այդ ո՞ր հայրենիքն է կորցրել ադրբեջանահայությունը: Ամեն երկիր, որի հետ մարդը իրավաբարաքացիական կապի մեջ է՝ դեռ հայրենիք չէ: Իսկ եթե նկատի ունենք ոչ թե Բաքուն ու Սումգայիթը, այլ Գանձակն ու Նախիջևանը, ապա դրանց համարժեք փոխհատուցում իրականում գոյություն չունի:

Գիրքը առաջին հերթին հասցեագրված է օտար փորձագետներին: Սակայն այս խորհրդածողովն էլ վկայում է, որ պակաս կարևոր չէ նրա ներքին նշանակությունը: Հետևաբար մենք չպետք է թերագնահատենք այն բացասական ազդեցությունը, որ նման, իրականում կեղծ, դատողությունները թողնում են հանրային պատկերացումների վրա, իսկ ժամանակի ընթացքում՝ նույնիսկ ձևավորում դրանք:

Քաղաքական իմաստով ԼՂՀ-ի արտաքին քաղաքականությունն ներքին գովազդումը կարող է ունենալ երկու մեկնաբանություն: Մեկն այն է, որ իշխանությունը (ՀՀ-ն, որը ԼՂՀ-ի իշխանության վրա ազդելու բավարար լծակներ ունի) վերջնականապես որոշել է զիջել, զիջել այնքան, որ Ադրբեջանը ընդունի, և որպեսզի մեղմի ժողովրդական հակազդեցությունը, թույլ է տալիս, որ առանձին գործիչներ, հատկապես Ստեփանակերտից, հանդես գան ոչինչ չնշանակող հայրենասիրական դիրքորոշմամբ: Երկրորդն այն է, որ հայկական իրականության մեջ նորից ձևավորվել են «հանձնողների» և «չհանձնողների» կուսակցություններ և ԼՂՀ-ի դիրքորոշման հրապարակումը այդ հակասությունը և «չհանձնողների» դիրքորոշումը ներկայացնելու միջոց է: Պետք է ընդունել, որ առաջին դեպքում և մասամբ՝ երկրորդ դեպքում, առկա է 2006 թ. տարածքները հանձնելու փորձի սպառնալիք: Եվ դրա պատճառը ոչ թե միջազգային հանրության լավատեսությունն է կամ արտաքին ճնշումները, այլ ՀՀ-ի առանձին բարձրաստիճան և ազդեցիկ գործիչների անձնական անհիմն շահագրգռվածությունը:

Մենք ամեն դեպքում համոզված ենք, որ պարտվողական համաձայնագիր ստորագրելու ցանկացած փորձ կկանխվի: Սակայն կանխելը անբավարար է: Ժամանակն է, որ վերջապես արմատապես փոխվի դարաբարդյան քաղաքականությունը: Այս իմաստով կա երկու քննադատություն, երկու այլընտրանք:

Մեկը իրավական փաթեթի օգտագործումն է: Այս համատեքստում է գրված նաև քննարկվող աշխատությունը: Սակայն իրավական փաստարկները ինքնին որևէ խնդիր չեն լուծում, այլ միայն ձգձգում են բանակցային գործընթացը: Բացի այդ, իրական միջազգային ճնշման դեպքում դրանցով պաշտպանվելն անհնար է: Յուրաքանչյուր փաստարկ կարող է հանվել համատեքստից, մեկնաբանվել հօգուտ Ադրբեջանի և ի վերջո պարտադրվել մեզ՝ որպես միջազգային «դատավորի» որոշում:

Երկրորդը՝ հիմնախնդրի ապամիջազգայնացման պահանջն է, որը ենթադրում է հարցի լուծում միակողմանի քայլերով: Դրանք են բոլոր տարածքների նկատմամբ հայկական գերիշխանության հայտարարումը, ՀՀ-ի և ԼՂՀ-ի միավորումը և նախկինում թուրքաբնակ շրջանների լիարժեք բնակեցումը: Այս փաթեթի մեջ կարող են ներառվել նաև թուրք բնակիչների հավանական վերադարձի և Հայաստանի տարածքով անցնող հաղորդակցություններից օգտվելու մեր կողմից սահմանված պայմանները:

Այս մտտեցումը այլևս ձգձգում չէ, այլ նշանակում է խնդրի լուծում, որը կարող է և դուր չգալ Ադրբեջանին: Հետևաբար, շատ կարևոր է, որ ոչ միայն Ադրբեջանը, այլև ամբողջ աշխարհը իմանա, որ նոր պատերազմի սանձազերծման գինը Գանձակն ու Նախիջևանն է: Սա՝ այսինքն՝ Արաքս-Կուր բնական սահմանների վերականգնումն է, հայ-ադրբեջանական հարաբերությունները վերջնականապես կարգավորելու ուղին: Լուծման ուրիշ հայկական տարբերակ գոյություն չունի:

Այս քաղաքականությունը սակայն չեն կարող իրականացնել մարդիկ, ովքեր նախկինում արդեն հայտարարել են ազատագրված տարածքները նորից Ադրբեջանին հանձնելու իրենց պատրաստակամության մասին:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԵԼՈՒՅԹՆԵՐ

Ուսֆայել Ղազարյան

Կուզենայի քո կարծիքն իմանալ, Արմեն, ի՞նչ ես կարծում, առաջին հերթին ո՞վ պետք է իրեն պարտավորված զգա այդ ազատագրված հողերի վերաբնակեցման հարցում՝ Հայաստանը, թե՞ Ղարաբաղը և կկարողանա՞ արդյոք Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն այդ հարցը լուծել, եթե համեմատենք մեր և Ադրբեջանի կողմից կիրառվող հնարավորությունների

մասշտաբները: Միայն վերջերս ինձ ասացին, որ Շահումյանի շրջանի յուրացման, վերաբնակեցման և այլնի համար Ադրբեջանի կառավարությունը տրամադրել է 100 միլիոն դոլար: Ես վստահ չեմ, որ մենք կարող ենք 100 միլիոն դոլար տրամադրել... Մի խոսքով, փորձեն ճիշտ ձևակերպել հարցս. «Ո՞վ պետք է իրեն պարտավորված զգա և ի՞նչ միջոցներով»:

Արմեն Աղայան

Ինչ վերաբերում է պարտավորվածությանը, սպա ակնհայտ է, որ դա ընդհանրապես հայ ժողովրդի պարտավորությունն է՝ անկախ արհեստական պետական կազմավորումներից, իսկ ռեսուրսների մասով ասեմ, որ հայությունն իսկապես որոշակի ռեսուրսներ տրամադրում է այս հիմնախնդրին: Այն կարող է ավելի շատ տրամադրել, եթե այդ ռեսուրսները չկորցնի անպտուղ ծրագրերի և պարզապես այլ շռայլությունների մեջ: Եվ կա երրորդ խնդիրը նաև, այն է. արդեն տրամադրված ռեսուրսների օգտագործման ուղղվածությունը և արդյունավետությունը: Օրինակ, կարծում եմ, որ եթե վերաբնակեցումը սկսվեր ոչ թե Բերձոռից կամ Քարվաճառից, այլ Ադրամի շրջակայքի գյուղական բնակավայրերի և Հադրութի վերականգնումից, սպա Քարվաճառի հողերը կարելի էր պարզապես աճուրդով վաճառել և, այդ դեպքում, միջոցները գուցե ավելի շատ կլինեին: Այսինքն՝ կա նաև ընտրության հարց: Մեզանից մեծ ջանքեր պահանջվեցին, որպեսզի տարբեր վայրերում, այսպես ասած, կարողանայինք լրբրինգ անել նախկին Շուքուրբեյլի վերաբնակեցման խնդիրը: Ովքեր չգիտեն՝ ասեմ, որ դա Ջեբրաիլից Արաքսի ափն իջնող հայտնի խաչմերուկն է: Այս գործընթացը բավականին դժվարությամբ է մեզ տրվում, այդ այն դեպքում, երբ կարելի էր ի սկզբանե դնել որոշակի սկզբունքներ և լուծել բոլոր հարցերը: Մասնավորապես, մոնիթորինգային խումբը, որը ստուգում էր, թե քանի հայ է ապրում զրավված տարածքներում, պարզեց, որ այնտեղ կա ադրբեջանահայության որոշակի քանակություն, սակայն այդ քանակությունն այնքան էր, որ խումբը արձանա-

գրեց, որ Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը պլանավորված վերաբնակեցման քաղաքականություն չեն իրականացնում: Հիմա, դա մեզ օգո՞ւտ էր, քե՞՞ վնաս: Ես կարծում եմ, որ դա մեզ վնաս էր, որովհետև, եթե հայտնաբերեին տասն անգամ ավելի շատ բնակչություն, ապա Ադրբեջանի կողմից պատերազմ սկսելու անհիմաստ հայտարարություններ կլինեին և ուրիշ ոչինչ:

Մարասար Մարյան

Ես ինձ փախստականի դասական օրինակ եմ համարում, ընդ որում՝ ինտեգրված փախստական, որովհետև իմ կինը Ստեփանակերտցի է և ավարտել է Երևանի համալսարանը, իսկ իմ երկու երեխաներն ապրում են Շուշիում: Սույնով, ես ցանկանում եմ ձեզ ներկայացնել փախստականի հոգեբանությունը, քանի որ գտնում եմ, որ դա պետք է արվի այս կոնֆերանսի ժամանակ, որովհետև այսօր շատ լուրջ և կշռադատված ելույթներ են չեցին այստեղ, բայց իրականում չի զգացվում այն ամենը, ինչ կատարվում է փախստականների հետ: Ես շնորհակալ եմ այս կոնֆերանսի, այս համաժողովի կազմակերպիչներից հենց այն պատճառով, որ վերջապես փախստականների հարցը սկսեց քննարկվել և կարծում եմ, որ դա պետք էր առաջներում արվեր: Հիմա, փախստականների առաջին հոսքը, ինչպես դուք գիտեք, սկսվեց Սումգայիթից: Այսպես ասած, չոր փաստերով, շուրջ 120 000 փախուտական եկավ: Փախստականների մի հսկա զանգված մտավ Ղարաբաղ, մասնավորապես՝ Ստեփանակերտ, որովհետև այդ փախստականները՝ ադրբեջանահայերը, իրենց արմատներով հիմնականում Ղարաբաղից էին և Չանգեզուրից: Բոլորը ձգվեցին դեպի Ղարաբաղ, չնայած այդ պահին Ղարաբաղը գտնվում էր պատերազմական վիճակի մեջ Ադրբեջանի հետ: Դա էլ չվախեցրեց մարդկանց: Երևի ինչ-որ մեկին դուր չգա, բայց ասեմ, որ պատերազմի ընթացքում, համաձայն վիճակագրության, 1000 մարդուն բաժին ընկած զոհերի քանակով փախստականները գերազանցում են տեղացիներին: Ես ուզում եմ ասել, որ փախստականները ակտիվ մասնակցել են այն տա-

լածքների պաշտպանության ռազմական գործողություններին, որտեղ նրանք պատրաստվում էին ապրել: Այսօր խոսում են վախստականների մասին Ադրբեջանում... Մենք դրան պետք է սթափ մոտենանք, որովհետև նրանք արհեստականորեն բարձրացնում են այդ գործոնը և այն օգտագործելու են: Ես ապրում եմ Շուշիում, որտեղ ամեն տուն և կառույց բնակեցված է Ադրբեջանից և Շահումյանից եկած փախստականներով: Ղարաբաղի ողջ տարածքում շարունակում են ապրել փախստականներ, սլոնց մի մասը, սոցիալական խնդիրներից ելնելով, մեկնել է արտազնա աշխատանքի և օգնում է հարազատներին, ծնողներին, կանանց և երեխաներին:

Ես հիմա վերջացնում եմ, բայց ուզում եմ մի քանի խոսք ասել պարոն Բոչարյանի կողմից ներկայացված ԵԱՀԿ-ի հայեցակարգի կապակցությամբ: Պետք է ասել, որ այդ հայեցակարգը մի քիչ անհիմաստ է, օրինակի համար վերցնենք, մասնավորապես, ադրբեջանցիների՝ իրենց նախկին բնակության վայրեր վերադառնալու և որոշ ժամանակ անց հերթական հանրաքվե անցկացնելու առաջարկությունը կամ, օրինակ, Միջազգային ճգնաժամային խմբի ներկայացրած նախագիծը, որտեղ ոչ մի խոսք չի ասվում ադրբեջանահայ փախստականների մասին: Դիտեք, իմ անձնական կարծիքն այն է, որ դա լուրջ չէ: Ես, հավենայնդեպս, եկել եմ այնտեղից և այդ իմաստով գիտեք ի՞նչ եմ զգում. որ մեզ պետք է պաշտպանել մեր տարածքը, բնակեցնել այն և լուծել խնդիրը իրավական շրջանակներում, բայց ոչ այնպես, ինչպես այս պահին դա առաջարկում են Միջազգային ճգնաժամային խումբը կամ ԵԱՀԿ-ն: Ի՞նչ է անելու փախստականը Բաքվից, Սումգայիթից և այլ վայրերից, եթե նրան բնակեցնեն կողք-կողքի, ասենք՝ շուշեցու հետ: Այս հարցն, ըստ իս, մինչև վերջ դեռ վերլուծված և մտածված չէ: Իսկ ինչ վերաբերում է Ադրբեջանից մեր փախստական հայրենակիցներին իրենց պատմական հայրենիքը բերելու հարցին, ապա ասեմ, որ իս առանձնապես մեծ դժվարություն չի ներկայացնի իրենից,

եթե այդ մարդկանց համար սոցիալախնայական պայմաններ ստեղծվեն: Ես կարծում եմ, որ մենք կարող ենք ընդունել Ռուսաստանում և այլուր ոչ լավագույն պայմաններում ապրող մեր հայրենակիցներին: Այդ ուղղությամբ հարկավոր է մտածել:

Իզոր Մուրադյան

Արմեն, ես Ձեզ բավականին վաղուց գիտեմ և պատկերացնում եմ Ձեր գործունեությունը: Ձեր ոչ մեծաքանակ կազմակերպությունը քանի տարի շարունակ փորձում է հասարակության ուշադրությունը սևեռել որոշակի խնդիրների վրա... Ինչ վերաբերում է ազատագրված տարածքների խնդրին... Ի միջի այլոց, իսկապես պետք է ասել. «մեր հայրենիքի ազատագրված տարածքները» և այն ժամանակ պարզ կլինի, թե ինչի մասին է խոսքը: Ինչպե՞ս եք կարծում, այսքան ժամանակ ինչո՞ւ ո՛չ ձեզ և ո՛չ էլ ուրիշներին չհաջողվեց ստեղծել ոչ միայն քիչ թե շատ ներկայանալի մեծ կազմակերպություն, այլև կազմակերպել փոքրիշատե կանոնավոր հասարակական բանավեճ այդ կապակցությամբ, ինչի պատճառով, փաստացի, դուք՝ բոլոր քաղաքական կուսակցությունները, քաղաքական խմբավորումները և երկրի ղեկավարությունը հեռանկարներ չեք պատկերացնում ձեր համար առանց տարածքների հանձնման: Դա միանգամայն պարզ է: Առաջներում մենք դրա մասին լուր էլինք, որպեսզի չստեղծվեցինք մեր հայրենակներին, ես ի նկատի ունեմ հակառակորդին, իսկ հիմա լռելն անիմաստ է: Ինչո՞ւ է դա տեղի ունենում և ինչո՞ւ եք շարունակում լուսանցքից դուրս մնալ: Ինչպես հասկանում եմ՝ երկու ակադեմիկոս, երկու գեղապետ և մեկ գեներալ... Երկա՞ր եք պատրաստվում պահել այդ տարածքները, եթե հասարակությունը չի ուզում դա, ոչ որ չի ուզում, ոչ որ չի պատկերացնում, թե ինչպես է հնարավոր դա անել:

Արմեն Աղայան

Հասարակությունը նրա համար է, որպեսզի նրան առաջնորդեն: Քաղաքական դաշտի մասին իմ անձնական գնահատականները կարող են շատ ավելի ծայրահեղական հնչել, քան սո-

վորաբար իմ այն արտահայտությունները, որոնք վերաբերում են դարաբաղյան թեմային: Քաղաքական դաշտում չկան կազմակերպություններ, որոնք հայ ժողովրդի հետ ինչ-որ կապ ունենան: Նույնիսկ, եթե ինչ-որ թեթև բացառություններ կան, դրանք շատ դրվագային բնույթ են կրում և կարծես թե ընդհանուր պատկերը չեն փոխում: Ինչ վերաբերում է մեր գործունեությանը. մենք դարաբաղյան խնդրի կարգավորման տասնամյակի կուսակցությամբ գեկույց ենք ունեցել և այս տարի ամփոփիչ գեկույց ևս կպատրաստենք, որտեղ կտրվեն որոշ հարցերի պատասխաններ: Սակայն այստեղ մեկ օրինակ եմ ուզում բերել. Քի Ռեսթին հաջորդող ամիսներին, մեր քաղաքական գործիչներից մեկը մեր հետ հանդիպման ժամանակ, որին մասնակցել է նաև պարոն Ղազարյանը, ասաց. «Եթե աշխարհը մեզ մի ապահով վերմակ առաջարկի, որի տակ մտնելու համար պետք է խուզենք մեր պոչը, ապա պետք է խուզենք և մտնենք այդ վերմակի տակ»: Այդ նույն գործիչը խորհրդարանական լուսններից հետո Մերձ Մարզայանին ուղղված ամենաուժեղ քննադատական արտահայտություններից մեկն արեց: Այսօր, ազատագրված տարածքներ են ասում նույնիսկ նրանք, ովքեր դրա տակ հասկանում են օկուպացված տարածքներ: Այն հանգամանքը, որ այսօր «ազատագրված տարածքներ» արտահայտությունը նորից մտել է շրջանառության մեջ, դա ինչ-որ իմաստով որոշակի գործունեության արդյունք է, քանի որ մի քանի տարի շարունակ այն շրջանառությունից դուրս էր բերված: Հիմա, ինչ վերաբերում է կազմակերպության կառուցվածքին. մենք խնդիր չենք դրել ստեղծել ձևական բնույթ կրող կազմակերպություն, ինչպես անում են սովորաբար փող ունեցող մարդիկ: Այս իմաստով ևս մեկ անգամ պնդում եմ, որ այս երկրում լուսանցքից դուրս գտնվում են քաղաքական կուսակցությունները: Հայ ժողովրդի իմաստով, լուսանցքից դուրս մնացածները հենց կուսակցություններն են: Ինչ էլ որ ասեն Եվրոխորհրդարանում, ինչպիսի բանաձևեր էլ որ ընդունեն-չընդունեն, ինչ-որ մտացածին ձևա-

կերպումներով փորձեն խաբել կամ չգիտեն ինչեր անել, արդյունքը մնալու է այն, որ տարածքները ոչ ոքի չեն հանձնվելու և Ղարաբաղի հարցը, ի վերջո, լուծվելու է պատերազմով, այսինքն՝ Նախիջևանի և Գանձակի ազատագրումով: Այսօր, հասկանալի կամ անհասկանալի պատճառներով, մենք այդ պատերազմը չենք արագացնում, բայց սա՝ սրա անխուսափելի լուծումն է, որը մի օր լինելու է: Հիմա սրանից պետք չէ վախենալ, պետք չէ փախչել, պետք է պարզապես մտածել քանակի մասին, իսկ նրանք ովքեր պաշտոններ ունեն և արդեն սպիտակ դրոշակներ են բարձրացնում, դե հիմա, ինչ արած, այդ մարդիկ կզման և կզան ուրիշները:

Իզոր Մուրադյան

Լուսանցքից դուրս լինելու մասով ասեն, որ այդ հարցը վաղուց արդեն տեսականորեն լուծված է: Լուսանցքից դուրս գտնվող հասարակության մեջ չեն կարող լինել էլիտար կազմակերպություններ: Ես այլ բան էի սպասում, այսինքն՝ դուք ոչ թե, այսպես ասած, պատերազմի կուսակցություն եք, այլ դուք գաղափարների վերարտադրման կուսակցություն եք, որովհետև տարածքը միայն պատերազմի միջոցով պահպանելու գաղափարը շատ պրիմիտիվ է և դա կարող է հայտարարել ցանկացած աֆերիստ: Մենք ձեզ հետ միասին տեսնում ենք, որ գոյություն ունի մեզ համար կենսական նշանակություն ունեցող այս տարածքի պահպանման մեկ ուրիշ այլ ճանապարհ, գաղափար: Այդ գաղափարը հասու չէ մյուսներին: Եվ գիտեք ինչո՞ւ, որովհետև երևի տարածքների հանձնման գաղափարը սերտորեն կապված է հենց ներքին քաղաքականության հետ:

Արմեն Աղայան

Անշուշտ, այո: Գիտեք, եթե մարդը հայկական դիրքերից, անկախ ով լինելուց, կուսակցական պատկանելությունից այս հարցին տալիս է պատասխան, ապա պատասխանը լինում է նույնը, իսկ եթե մարդը ելնում է իր կուսակցական շահերից կամ քաղաքական կարիերայից, կամ չգիտեն եվրոպացիների հետ

շատ շփվելու արդյունքում ինչ-որ այլ պատասխաններ փնտրելուց՝ փորձելով ավելի քաղաքակիրթ, ավելի, այսպես ասած, մասնագետ, ավելի կոնստրուկտիվ և այլն երևալ, ապա պատասխանը ստացվում է այն, ինչ որ հիմա ընդհանրապես ունենք: Նայեք թերթերում, բանակցությունների ժամանակ հայկական կողմի ասածները և այլն: Արդյունքը սա է: Միևնույն մարդը, երբ մեջը հայն է խոսում՝ պատասխանը մեկն է, իսկ մյուս դեպքում՝ երբ քաղաքական գործիչը, պատասխանը ուրիշ բան է դառնում: Հիմա ամբողջ աշխարհում է այդպես, ոչ մի նոր բան չեն ասում:

Իզոր Մուրադյան

Բայց Դուք ինչպե՞ս եք կարծում, ո՞վ է առավել շատ հետաքրքրված այդ տարածքային զիջումների մեջ՝ ներկայիս իշխանությունը, թե՞ ընդդիմադիր քաղաքական կուսակցությունները, արդիական ընդդիմադիր կուսակցությունները:

Արմեն Աղայան

Դրա պատասխանը իրենք ցույց տվեցին խորհրդարանական լուծման ժամանակ, երբ Հրանտ Մարգարյանը գովեց պարոն Բազեյանին, այսպես «կշռադատված» և չեմ հիշում էլ ինչ բառերով, ինչն ըստ էության ցույց տվեց, որ թե՛ նրանք, թե՛ մյուսները նույն բանն են ասում ու ոչ մի տարբերություն չկա նրանց մեջ: Եվ դուք շատ ճիշտ նկատեցիք, որ Շավարշ Քոչարյանի և պետության դիրքորոշումները համընկնում են:

Իզոր Մուրադյան

Դե, Շավարշ Քոչարյանն, այսպես ասած, այդ ամենի առավել մարդասիրական տարբերակն է:

Ալբերտ Բազեյան

Ես ստիպված եմ արձագանքել: Այստեղ հնչեց իմ ազգանունը և եղել են դիտարկումներ նաև թերթերում: Եթե հարցը լուծվելու է պատերազմով, ապա դա լուծում չէ: Մենք արդեն հարթել ենք, ավարտվել է պատերազմը, ապա ինչ քննարկումներ, ինչ

բանակցություններ, սակայն եթե ընդունում ենք բանակցությունները, ապա դիվանագիտությունը չի՞ պահանջում արդյոք պատրաստակամություն հայտնել ինչ-որ փոխզիջումների անհրաժեշտության, բայց կարող է ոչինչ էլ չզիջենք, իսկ եթե զիջելու ոչինչ չունենք, ապա ի՞նչ ենք քննարկում, եթե ընդհանրապես միջազգային կարծիքը պետք է հաշվի չառնենք: Մենք ունենք ոչ միայն բռնագրաված Նախիջևան, Գանձակ, Արևմտյան Հայաստան և այլն և այլն: Ինչո՞ւ է այդպես: Ո՞րն է մեր հնարավորությունը, արդյոք կարո՞ղ է այդ ամենը, այսօրվա մեր իրականությամբ, որ առկա է Հայաստանում, այդ խնդիրները լուծել: Ես հասկանում եմ, որ որևէ լուծում ո՛չ հաջորդ տարի, ո՛չ մյուս տարի չի լինելու, բայց քանի որ ընդունում ենք բանակցություններ... Այո, մենք այսօր շահեկան վիճակում ենք և նոր պատերազմի անհրաժեշտություն Հայաստանի ժողովուրդը չունի: Մենք պարտավոր ենք մեր պետության մեջ նորմալ հարաբերություններ հաստատել, ապահովել քաղաքական, իրավական, տնտեսական զարգացում, որպեսզի կարողանանք Ղարաբաղի անկախության և անվտանգության երաշխավորի մեր դերակատարումն ունենալ: Եվ այստեղ, ես չեմ գտնում, որ մենք պետք է առանձնանանք հայ ժողովրդից և փորձենք հայրենասիրության դասեր տալ բոլորին: Յուրաքանչյուրս իր կյանքով, իր անցած ճանապարհով ապացուցել է, թե որքանով է այդ հարցերում շահախնդիր: Մի խոսքով, կրկնում եմ, գնահատականներ տալուց առաջ պետք է մի քիչ ավելի սթափ նայել և հետո նոր գնահատականներ տալ:

Արմեն Ադայան

Որպես պարոն Մուրադյանի հարցի պատասխանի շարունակություն՝ ես մի ռեպլիկ ունեմ, իսկ պարոն Բազեյանի ասածները ես թողնում եմ առանց մեկնաբանության, որովհետև ինձ թվում է՝ ամեն ինչ ակնհայտ է: Ես արդեն ասացի, որ այս հարցերում իշխանությունը և ընդդիմությունը սկզբունքորեն տարբեր դիրքորոշումներ չունեն: Հիմնական գծերով դրանք համընկնում

են, սակայն իշխանավորության համատեքստում կա շատ սկզբունքային մի խնդիր: Բոլոր այն մարդիկ, որոնք տարբեր ժամանակներում հայտարարություններ են արել այս կամ այն վիջման մասին և, եթե նույնիսկ այսօր փոխեն իրենց հայտարարությունները, չեն կարող լինել իշխանությունում: Նրանց փոխարեն պետք է լինեն ուրիշները: Սակայն խնդիրը նրանում է, որ այդ ուրիշները կարծես դեռևս չեն ձևավորվում, իսկապես, չեն ձևավորվում քաղաքական դաշտում: Այստեղ ես շատ լուրջ մտածելու խնդիր եմ տեսնում: Ցավոք սրտի, մենք դեռ այս խնդիրը չենք լուծել, բայց պարտավոր ենք առաջիկա տարիներին դրա լուծումները գտնել:

ՂԱՐԱՔԱՂՅԱՆ ՀԻՄՆԱՆԵՂԻԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Վազգեն Մանուկյան

*Ազգային ժողովրդավարական միության նախագահ
ՀՀ ԱԺ պատգամավոր*

Դժվար է այսօր իմ այս ելույթը զեկույց անվանել, ես կփորձեմ կարճ խոսել: Ընդհանրապես, այս քննարկման մեջ հարցերի երեք փունջ կա, որոնցից մեկը՝ իրավական, պատմական, միջազգային իրավաբանության մեջ ինչպես ներկայանալն է և այլն և այլն, ինչը շատ կարևոր է: Այստեղ շատ խելոք, երբեմն իրարամերժ առաջարկություններ հնչեցին, բայց մենք հիմա, այնուամենայնիվ, արտաքին գործերի նախարարության կողմից գիայի նիստում չենք, որ այդպիսի հարցեր քննարկենք և տեսնենք, թե ինչպես ավելի ճիշտ կլինի ներկայացնել: Այդ հարցերի փնջից ես միայն մեկը կհանեի, որը շատ ավելի վեր է կանգնած արտաքին գործերի նախարարության կողմից խնդիրներից: Դա՝ Ղարաբաղի ճանաչումն է կամ չճանաչումը: Ռուստամյանը կարծես թե ասում էր, որ մենք ուշացել ենք: Դեռ այնքան էլ չենք ուշացրել ճանաչումը: Ես մի քիչ փտանգավոր եմ համարում ճա-

նաչումը: Ես գտնում եմ, որ միգուցե ապագայում դա կարող է բայլ լինել, բայց այս պահին պատճառաբանված չի լինի, որ Հայաստանը ճանաչի Ղարաբաղի անկախությունը և հարց առաջանա՝ թե ո՞ր սահմաններում, հետո էլ փորձի մյուս պետություններին մտցնել այդ խաղի մեջ: Այդ միջազգային փունջից միակ հարցը, որը վեր է կանգնած դիվանագիտական ամենօրյա խորամանկություններից՝ հենց դա է: Իմ կարծիքն այն է, որ դեռ հիմա շուտ է դրա մասին խոսելը, բայց չեմ քացառում, որ մի պահ կարող է գալ դրա համար:

Հարցերի երկրորդ փունջը, դա աշխարհաքաղաքական վիճակն է, այսինքն՝ այս տարածաշրջանում Ղարաբաղի հարցում կամ այդ տարածքներում, ո՞վ ինչ շահագրգռվածություն ունի: Դրանք բավականին բարդ աշխարհաքաղաքական հարցեր են, որոնց ես անդրադառնալ չեմ ուզում: Երկի Իզոր Մուրադյանը, որի ելույթը հենց այդպես էլ վերնագրված է, ինքը կանի դա: Ես միայն կարող եմ ասել, որ աշխարհում ընդհանրապես երբեք այսքան անորոշություն չի եղել աշխարհաքաղաքական հարցերում, չկան նախագծեր, թե ինչպիսին պիտի լինի աշխարհը և շահերի բախման ամենաանորոշ տեղը, որտեղ շահերի բախում կա և, որտեղ իրականացման ոչ մի գծագիր չկա, դա՛ այս Կովկասն է: Իրան, Թուրքիա, այս ողջ կովկասյան տարածաշրջանը... Այսպես սովորաբար լինում է այն դեպքում, երբ դու մի արդյունք ես ստանում, իսկ մյուսները դրա հետ համակերպվում են: Ամբողջ դարաբաղյան շարժումը, ամբողջ դարաբաղյան պատերազմը մեզ բերել է այդ եզրակացության: Ազդեաոր են անվանել թե չեն անվանել, միևնույն է, դրա հետ հաշվի են նստում: Ուրիշ խնդիր է, որ պետք է ճիշտ ներկայացնել այդ ամենը: Այդ տեսանկյունից հարցերի երկրորդ փունջը խնդրի բուն էությունն է: Երկու պետություն կամ երկու ժողովուրդ կանգնած են իրար դեմ և փորձում են ինչ-որ մի հարց լուծել: Ես ուզում եմ, որ մենք դրա մասին խոսենք: Նախևառաջ, ասեմ, որ առաջարկված ցանկացած փուլային լուծում իր մեջ վնաս է պարունակում մեզ համար

և օգուտ՝ Ադրբեջանի համար, որովհետև ցանկացած փուլայինն ի՞նչ է ասում. դու ինչ-որ բան պիտի տաս, ապագայում ինչ-որ բան կարող ես ստանալ: Հենց ինչ-որ բան տվեցիր՝ ստատուս քվոն փոխվեց, արդեն կատացվի, որ այլևս կապ չունի, դու այդ տարածքները վերցրել ես կամ չես վերցրել, դու արդեն մի ստատուս քվոնց անցել ես մեկ այլ ստատուս քվոն, որտեղ դու արդեն թուլացած վիճակում ես: Ինչ վերաբերում է փախստականներ բերելուն. ես կարծում եմ, որ դա անհեթեթություն է: Դա՛ կամ կհաջողվեր և կդառնար պաղեստինյան Իսրայել, չմարող մի բան, որովհետև բնական է, որ եթե ադրբեջանցիներին, ենթադրեմք, գոռով բերեն 1996-ին Շուշի, ի՞նչ են անելու հայերը: Հայերը չեն թողնելու և զիջերով դուրս են գալու ու ադրբեջանցիների հետ միմյանց մորթեն: Այսինքն՝ դուրս է գալիս, որ մարդիկ խաղաղ ապրում էին իրենց համար, մեկ էլ նրանց մտցնում ես մի նոր ցեղասպանության մեջ: Իրար կոտորելու են մինչև վերջ, ինչի՞ մասին է խոսքը: Ես համարում եմ, որ այդ փուլայինն ընդհանրապես նշանակում է. դու մի բան ես զիջում, ուրիշը մի բան է շահում, իսկ իրավիճակը մնում է նույնը: Ես համարում եմ, որ դա անհեթեթություն է: Այստեղ ինչպիսի՞ լուծում կարող էր ընկալվել: Օրինակ, այս և անցած տարի, շատերը՝ թե՛ իշխանությունից և թե՛ ընդդիմությունից, համաձայն կլինեին, եթե հարցը այդպես լուծվեր և ասվեր, որ Ղարաբաղը՝ Լաչինով, Քարվաճառով և էլի ինչ-որ տարածքներով հռչակվում է անկախ պետություն կամ միանում է Հայաստանին, իսկ մնացած տեղերից դուրս ենք գալիս, աշխարհը հաստատում է դա, իսկ Ադրբեջանը համաձայնում է դրա հետ: Կարելի է սրա հետ վիճել: Ոմանք կարող են ասել, որ դրա մեջ դավաճանություն կա, որովհետև դու ինչ-որ տարածքներ ես տալիս, ոմանք կարող են ասել, որ դա լուծում է, որից հետո սկսվում է երկրի զարգացումը: Դա քննարկելու խնդիր է: Երկու տեսակետներն էլ տեղի ունեն, բայց դա չէ կարևորը: Իսկ կարևորն այն է, որ այդպիսի բան լինել չի կարող: Ադրբեջանը երբեք չի համաձայնվի, որ Ղարաբաղն իր կազմում

չլինի: Ես չեմ տեսնում մի իրավիճակ, որպեսզի Ադրբեջանը համաձայնվի, տարածքները դեռ մի կողմ թողնենք, որ Ղարաբաղն իր կազմի մեջ չլինի: Ես չեմ տեսնում որևէ մեկ հոգեկան հիվանդի մեզ ստա, որն ասի, որ Ղարաբաղը ինչ-որ կարգավիճակով թող լինի Ադրբեջանի կազմում: Այստեղ նույնիսկ հայրենասիրության խնդիր չէ: Ղարաբաղը Ադրբեջանի կազմում չի կարելի պատկերացնել ոչ միայն հայրենասիրությունից ելնելով, այլ՝ դա ուղղակի ռացիոնալ չէ, այդպիսի բան աշխարհում չի կատարվում: Մի լիրիկական շեղում կատարեմ. վերջերս Թուրքիայից եկած մի գործարարի հանդիպեցի, որի հետ զրույցի ժամանակ նա ասաց, որ ինքը Ղարաբաղ է, և որ իրենք գիտեն, որ Ղարաբաղը հայկական է եղել, բայց հիմա իրենք են վերցրել, ուրեմն՝ իրենցն է, ավելացրեց նա, որ իրենք գիտեն, որ այդ տարածքները եղել են ադրբեջանական, հիմա դուք եք վերցրել, ուրեմն՝ ձերն են: Սա շատ պարզունակ ձևակերպում է, խոսում է գործարարը, բայց շատ հստակ է ձևակերպում: Ես կարծում եմ, որ մենք հիմա մեկ ուրիշ պոլիտեմ ունենք: 2006 թվին Ղարաբաղի հարցը չի լուծվելու, դրանք բոլոր դատարկ խոսակցություններ են: Մենք կանգնած ենք մի բանի առջև, ինչը պայմանականորեն ես կոչում եմ սառը պատերազմ: Երկու ժողովուրդներ կանգնած են իրար դեմ, գնում է մրցակցություն՝ տնտեսության, միջազգային հարաբերությունների, աշխարհաքաղաքականության, ռազմական ոլորտներում: Ո՞վ կհաղթի այդ մրցույթում: Եթե դու հակառակորդիդ հավասար ուժեր ունես կամ նրանից ուժեղ ես, ապա երբևէ նա քեզ վրա չի հարձակվի: Ինչպիսի՞ պետություն կարող է գնալ այդպիսի մրցակցության: Որքանո՞վ է այդ գաղափարը մեր ժողովրդին միացնող գաղափար: Այդքան էլ միացնող գաղափար չէ: Իշխանությունների մասին ենք խոսում... Ինձ համար բացարձակապես նշանակություն չունի, թե իշխանությունների մեջ ով է իրեն ավելի հայրենասեր անվանում, իսկ ով՝ ոչ: Եթե իշխանությունն ամբողջությամբ զբաղված է երկիրը կաշառակերությամբ ողողելով, երբ նախագահից սկսած, ամբողջ ժո-

լովրդի աչքի առջև դրյալներ են կառուցում իրենց համար, մտնում են գործարքների մեջ և տասնյակ հարյուր միլիոն դոլարներ են աշխատում, երբ դաշնակցությունը Եվրոպային դուր գալու համար պնդում է, որ պետք է կեղծել հանրաքվեն և կեղծում են, ապա ինչի՞ մասին է խոսքը: Ինձ Եվրոպայի կարծիքը հետաքրքիր չէ, ինձ իմ ժողովրդի կարծիքն է հետաքրքրում: Մեր ժողովուրդը չի կարող համախմբվել ազգային գաղափարի շուրջ այսպիսի իշխանություններով: Դրա համար իրավիճակն այսպիսին է: Ես գտնում եմ, որ հիմա հարցի ոչ մի լուծում չի լինելու, Ադրբեջանը երբեք չի համաձայնի ճանաչել Ղարաբաղն անկախ, Հայաստանն էլ, նույնիսկ այդքան կարևոր չէ որքան Ղարաբաղը, երբեք չի համաձայնվի դրա հետ: Ռացիոնալ չէ, որ Ղարաբաղը գտնվի Ադրբեջանի կազմում: Սառը պատերազմ է: Ինչպիսի՞ պետություն ունենք, որպեսզի ժողովուրդը վստահի և ոգևորվի ազգային գաղափարներով, գաղափարներ, որոնք կկարողանան համախմբել ամբողջ աշխարհի հայությանը: Իշխանության մեջ լինելով, կաշառք վերցնելով, ժողովրդին ոտնահարելով, հայրենասիրական այդ գեղումները ես համարում եմ գրոյական արժեք, համարում եմ ազգային դավաճանություն: Այդ պատճառով բոլորովին կարևոր չէ, թե ինչ են նրանք հայտարարում, կարևորն այն է, թե ինչ են անում: Խնդիրը՝ ո՛չ միջազգային քաղաքականության և ո՛չ էլ աշխարհաքաղաքականության մեջ է: Խնդիրը մեր ազգային մտածողության կառուցվածքի և արդարացի լինելու մեջ է: Ծնորհակալություն:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԵԼՈՒՅԹՆԵՐ

Իգոր Մուրադյան

Ես լիովին ողջունում եմ և հիացած եմ, real politic-ի դասական օրինակ էր: Այստեղ մի հարց եմ ուզում տալ. «Եթե Դուք նախագահ դառնաք, նույն կե՞րպ եք դատելու»:

Վազգեն Մանուկյան

Իգոր, դու ինձ գիտես 1988 թվականից, երբ մենք միասին Ղարաբաղ կոմիտեում էինք, երբ ես վարչապետ էի, պաշտպանության նախարար և, երբ ես ընդդիմության մեջ էի: Այս բոլոր տարիների ընթացքում դու որևէ պատճառ ունե՞ս կասկածելու, որ եթե ես իշխանություն ունենամ, ապա կսկսեմ մտածել արքայաց ունենալու մասին:

Իգոր Մորադյան

Ես կարող եմ հարցս հռետորական հարձարել:

Վազգեն Մանուկյան

Մի բան էլ ավելացնեմ, Իգոր, որ ասեմ, թե՛ շատ-շատ եմ ուզում նախագահ լինել, այդքան էլ ճիշտ չի լինի, չնայած հիմա կարող ես ասել, թե երեք անգամ թեկնածությունդ դրել ես: Բայց հարցն այստեղ հետևյալն է. իմ նման մարդը կարո՞ղ է դառնալ նախագահ մի երկրում, որտեղ արդեն կտրուկ փոփոխություններ են տեղի ունեցել: Չես կարող խորամանկությամբ գալ իշխանության: Եթե այդպիսի մարդիկ գալիս են իշխանության, ապա դա նշանակում է, որ երկրում տեղի են ունեցել հիմնարար փոփոխություններ և մարդիկ իրենք կարող են թելադրել այն նախագահին, որը կլինի, և որը արդեն չի կարող թաքտալ:

Հրայր Արզումանյան

Ռեպլիկի կարգով ուզում եմ անդրադառնալ այն հանգամանքին, որ Դուք իրավիճակը դիտարկում եք որպես պատերազմ երկու ժողովուրդների միջև: Այսպես ասենք, որ դա լավ պարադիգմա է, լավ կարծիք և լավ տեսանկյուն: Ես կարծում եմ, որ այս մտքին պետք է ավելացնել ևս մեկը, այն է, որ մենք պետք է հստակ հասկանանք, որ այս սառը պատերազմում հայկական կողմից ցանկացած հանձնում, ցանկացած պարտություն ավարտվում է աղետով: Այսինքն՝ հայկական հասարակական մտածելակերպի մեջ պետք է ամրագրվի այն միտքը, որ սա կենաց-մահու պատերազմ է և, ցավոք սրտի, 1914 թվականից, 20-

րդ դարի բոլոր կորուստներից հետո, ևս մեկ փոքր թվացող, լրացուցիչ պարտությունը, ևս մեկ քառակուսի մետրի հանձնումը Հայաստանի համար աղետ կնշանակի, որը, վերջին հաշվով, 10 տարի կամ 50 տարի հետո կրերի այն բանի, որ Հայկական պետությունը կանհետանա: Հանրային գիտակցության մեջ պետք է հայտնվի այս միտքը, որ հանձնումը՝ աղետ է, այդ պատճառով հայկական հասարակական կարծիքից ընդհանրապես պետք է բացառվի այս հարթությունը, բացառվեն այս մտքերը: Իմ կարծիքով, մենք շուտ դուրս գրեցինք «աղետ» բառը հայկական անցյալ պատմության միջից: Այս բառը դանդաղաց սրի պես դուռնա կախված է մեր գլխավերևում:

Վազգեն Մանուկյան

Գիտեք, դա մի քիչ ճիշտ չէ: Ես ասացի, որ փուլային լուծումը նշանակում է կործանում, որովհետև դու մի բան տալիս ես իրեն ու, կարևոր չէ, թե նրանք ինչ թուղթ են ստորագրելու, դու մնալու ես անորոշության առջև կանգնած: Այ դա՛ աղետ է: Երբ խոսում եմք զիջումների մասին, շատերը դա դավաճանություն են համարում: Գիտեք ինչ կա, եթե հայ մարդկանց ասվեր, որ Ղարաբաղը, Քելբաջարը, Լաչինը և այլնը միանում են Հայաստանին, իսկ այնտեղ որոշ տարածքներ տրվում են Ադրբեջանին և որ դրանից հետո Ադրբեջանը և ամբողջ աշխարհը ճանաչում է այդ ու որ պատերազմը կվերջանա, մարդիկ համաձայն կլինեին: Բայց մենք ճիշտ չենք ասում մեր ժողովրդին, որ այդ տարբերակի հնարավոր չէ, քանի որ երբեք Ադրբեջանը չի համաձայնվի զիջել Ղարաբաղը և այն՝ իրավացի է: Ես էլ լինեի Ադրբեջանի տեղը, ես էլ կասեի. «Ոչ մի թիզ հող չեմ թողնելու Հայաստանին կամ Ղարաբաղին»: Ադրբեջանը համարում է, որ այս պայմաններում ժամանակն աշխատում է իր օգտին: Կարևոր չէ, դա այդպես է, թե ոչ, բայց Ադրբեջանն այդպես է կարծում: Եվ, ցավոք սրտի, դրա մեջ ինչ-որ տարրեր կան: Օրինակ, նույն Ռուսաստանը, նավթի հետ կապված, հիմա շատ ավելի շահագրգռված է Ադրբեջանի հետ ունենալ հարաբերություններ, քան՝ Հայաստա-

նի: Հայաստանը, Ղարաբաղը իրենց համար դառել են խաղաքարտ, որն իրենք կարող են օգտագործել: Հիմա չկա մի երկիր, որն իր շահերի համար որպես խաղաթուղթ չօգտագործի Ղարաբաղի հարցը: Հայերը հաղթեցին, որովհետև ունեին վստահություն և համախմբված էին մեկ ազգային գաղափարի՝ արդարության գաղափարի շուրջ: Մա է որոշիչը և մինչև մենք չունենանք այնպիսի պետություն, որը ժողովրդին կմիավորի մեկ գաղափարի շուրջ, մենք պարտված ենք: Ես այսպես եմ մտածում:

Մարասար Մարյան

Մառը պատերազմի հետ կապված այս գաղափարը ինձ դուր եկավ, եթե դրան նայում ես Խորհրդային Միության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև գոյություն ունեցող սառը պատերազմի պրիզմայով, սակայն ինձ դուր չեկավ այն ենթատեքստը, որում այդ ամենը ներկայացվեց: Ահա, ես համաձայն չեմ այն պնդման հետ, որ Ադրբեջանը երբեք չի համաձայնվի ճանաչել Ղարաբաղը: Դա իմ կարծիքով սխալ է, որովհետև սույնով մենք նախապես մեր հասարակության ենթագիտակցության մեջ մտցնում ենք, որ հանկարծ հույս չունենաք...

Վազգեն Մանուկյան

Իսկ դու ստիպիր նրան: Եթե նրան չստիպես, չի համաձայնվի:

Արկաղի Կարապետյան

Դուք գիտեք, որ ամբողջ գործն ի սկզբանե հենված է գաղափարի վրա: Անհնարինության գաղափարը սերմանելով, մենք նահանջի փոքրիկ քայլ ենք անում: Այստեղ պետք է մի քիչ զգույշ լինել:

Իզոր Մուրադյան

Մենք լավ գիտենք այդ ժողովրդին: Առանց արտաքին աջակցության ոչինչ անել չի կարող, սակայն այն դեռ ունի արտաքին աջակցություն:

Վազգեն Մանուկյան

Եթե կարելի է, ես ուզում եմ անդրադառնալ այն հարցին, թե սկսած 1998 թվականից մինչև հիմա ինչպիսի՞ փոփոխություններ են տեղի ունեցել և արդյոք ժամանակն աշխատե՞լ է մեր օգտին: Մեկ հարցում մեր օգտին է աշխատել: Գիտեք, օրինակ, Լևոն Տեր-Պետրոսյանի ասած տարբերակի դեպքում, եթե այդ տարածքները տրվեին, ապա Ղարաբաղը միանգամից չէր ճանաչվում անկախ պետություն: Հիմա ես խոսում եմ միջազգային տարբեր փորձագետների հետ, շատ բարձրաստիճան մարդկանց հետ, բոլորն էլ հասկանում են, որ Ղարաբաղը այլևս տրվելիք չէ: Այդ մի բանը ժամանակը հաստատ ցույց տվեց: Որքան շատ ժամանակ անցնի, այնքան ավելի հասկանալի կլինի, որ տրվելիք չէ:

ԱՐՅԱՆԻ ՀԻՄՆԱԽՆԳԻՐԸ՝
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵԶՍՈՒՄ

Լարիսա Ալավերդյան
ՀՀ մարդու իրավունքների պաշտպան
(Զեկույցը չի ներկայացվել)

ՆԱՎԹԱՅԻՆ ՄԵԿՏՈՐԻ ԻՐԱՎԱՆ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԱՂԻՔԵԶԱՆԻ ՍՈՑԻԱԼՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՄԱՏԵԶՍՈՒՄ

Աշոտ Եղիազարյան
Տնտեսագետ

1994թ. Ադրբեջանը օտարերկրյա նավթային ընկերությունների հետ կնքեց Համաձայնագիր՝ «Ազերի-Չիրազ-Գյումեշլի» նավթային հանքավայրերի բլոկի շրջանակներում նավթի արդյունահանման վերաբերյալ: Վերջինիս տրվեց «Դարի համաձայնագիր» պատվախնդիր անվանումը: Համաձայնագրի ստու-

րագրումից անմիջապես հետո ստացված բոնուսները կառավարությանը հնարավորություն տվեցին կայունացնել մակրոտնտեսական իրավիճակը և, մեծ հաշվով, կանխել պետական համակարգի փլուզումը: Հատկանշական է, որ այդ համաձայնագիրն՝ ի տարբերություն դրանից ուշ կնքված, այդ թվում նաև Ղազախստանում և Թուրքմենիայում կնքված նմանատիպ այլ համաձայնագրերի, ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք բազմաթիվ տեսանկյուններով, մասնավորապես, ստացվելիք եկամուտների բաժանման առումով շահավետ չեն Ադրբեջանի համար: Դա վկայում է այն մասին, որ Ադրբեջանը իր համար անբարենպաստ պայմաններով Համաձայնագիրը կնքելու պահին գտնվում էր չափազանց ծանր պայմաններում և Ալիևը իր իշխանությունը պահելու համար գնաց այդպիսի առևտրի:

Համաձայնագիրը ստորագրվել է 30 տարի ժամկետով: Դրա գործողության ժամկետի ընթացքում հանքավայրերից պետք է արդյունահանվի 4 մլրդ բարել նավթ: Ավելի ուշ այդ ցուցանիշը վերագնահատվել է 5,4 մլրդ բարել:

I. Մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների դինամիկան

Ադրբեջանի տարեկան տնտեսական աճը վերջին չորս տարիների ընթացքում կազմել է 10,1%: 2004թ. Ադրբեջանի համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ-ն) կազմել է \$8522 մլն, պետական բյուջեի եկամուտները և ծախսերը համապատասխանաբար՝ \$1507 մլն և \$1527 մլն, ներդրումները տնտեսությունում՝ \$5,4 մլրդ, իսկ արտաքին առևտրի շրջանառությունը՝ \$7,1 մլրդ:

Ադրբեջանում 2005թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին ստեղծված ՀՆԱ-ի ծավալը 23,4%-ով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշը: Կանխատեսվում է, որ տարվա կտրվածքով այն կկազմի 20-22%՝ պլանավորված 14,1%-ի փոխարեն: Ադրբեջանի կառավարության կանխատեսմամբ ՀՆԱ-ն 2006թ. կաճի 30,5%-ով և կկազմի \$15,862 մլրդ:

2006թ. կանխատեսվում են ներդրումներ \$5,977 մլրդ չափով, որից արտաքին ներդրումները՝ \$3,938 մլրդ:

2006թ. համախմբված պետական բյուջեի եկամուտները հաստատված են \$3,8 մլրդ, ծախսերը՝ \$4 մլրդ չափով:

2006թ. կանխատեսվում է նաև արտաքին առևտրաշրջանառության կտրուկ աճ: Ըստ սպասումների, այն կկազմի \$11,812 մլրդ, որից արտահանումը՝ \$7,812 մլրդ, ներմուծումը՝ \$3,812 մլրդ:

Առաջին հայացքից Ադրբեջանի կողմից վերջին տարիներին արձանագրված, իսկ հատկապես ընթացիկ տարում սպասվող և հաջորդ տարում կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշները իսկապես տպավորիչ են:

Սակայն այդպիսի ցուցանիշները ինքնին, առանց դրանց ձևավորման վրա ազդող հիմնական գործոնների քննարկման, չեն խոսում Ադրբեջանի տնտեսության իրական վիճակի և զարգացման խոստումնալից հեռանկարների մասին:

Պատահական չէ, որ հակառակ տարիներ շարունակ քարոզվող և խոստացվող նավթային բարգավաճմանը, Ադրբեջանը մնում է աղքատ և թույլ երկիր, որի բնակչության ավելի քան 40%-ը աղքատ է: Համաշխարհային Բանկի գնահատականներով մինչև 2010թ. ծայրահեղ աղքատության վերացման համար պահանջվում է ոչ նավթային ՀՆԱ-ի տարեկան 14% աճ, որը ավելի քան երկու անգամ բարձր է սպասվող 6,3% ցուցանիշից: Սակայն դա Ադրբեջանի տնտեսության, ճիշտ է՝ կարևոր, բայց բազմաթիվ հիվանդություններից ընդամենը մեկն է:

Իսկ առաջիկայում սպասվող նավթային բուռը իր մեջ թաքցնում է բազմաթիվ սպառնալիքներ երկարաժամկետ զարգացման առումով:

Ինչպիսի՞ն է տնտեսության իրական պատկերը:

II Տնտեսության իրական պատկերը

1. ՀՆԱ-ի աճ

ՀՆԱ-ի աճի բարձր տեմպերը Ադրբեջանում իհարկե պայմանավորված են նավթի արդյունահանման ծավալների ավելաց-

մամբ: Սակայն ՀՆԱ-ի աճի բարձր տեմպերին անդրադառնալիս հարկ է հաշվի առնել մի շատ կարևոր հանգամանք, այն է. Ադրբեջանում առաջիկա տարիներին ՀՆԱ-ի ավելացմանը զուգահեռ կավելանա այդ ցուցանիշի և համախառն ազգային արդյունքի (ՀԱԱ-ի) միջև տարբերությունը, այն պարզ պատճառով, որ նավթագազային սեկտորում օտարերկրյա ընկերությունների կողմից ստեղծված ավելացված արժեքի մեծ մասը ուղղակի կլքի Ադրբեջանի տարածքը: Անցյալ տարիներին ՀՆԱ-ի և ՀԱԱ-ի միջև տարբերությունը եական չի եղել: Այսպես, 2002թ. տարբերությունը կազմել է \$300 մլն, իսկ 2003թ.՝ \$400 մլն: Այս տարվանից «Ազերի-Չիրազ-Գյումեշլի» (ԱՉԳ) նավթային հանքավայրերի հատվածում սկսվել է արագացված նավթարդյունահանումը, որի հետ կապված այդ տարբերությունը տարեցտարի կնեծանա: Ադրբեջանում մակրոտնտեսական վիճակի վերաբերյալ Համաշխարհային Բանկի կանխատեսումների համաձայն, նավթային կապիտալի հայրենադարձումը 2000-2010թթ. կգերազանցի \$15 մլրդ-ը, չնայած նրան, որ այդ միջոցները ներառված են ՀՆԱ-ում: Այդ թիվը իրականում կլինի շատ ավելի մեծ, քանի որ նշված կանխատեսումը կատարվել է մինչև նավթի համաշխարհային գների բարձրացումը: Միջազգային փորձագետների գնահատականների համաձայն 2001-2010թթ. Ադրբեջանի ՀՆԱ-ի աճի միջին տարեկան տեմպը կկազմի 13%, իսկ եկամուտները կաճեն ավելի դանդաղ՝ տարեկան մոտավորապես 5%-ով:

Ադրբեջանի նավթային եկամուտների աճը գերազանցապես (ավելի քան 90%-ով) կապված է ԱՉԳ հանքավայրերից ստացվող իր բաժին շահութաբեր նավթի վաճառքի հետ: Այդ հանքավայրերի շահագործման նպատակով է ստեղծվել Ադրբեջանի Միջազգային Օպերացիոն Ընկերությունը, կրճատ՝ AMOK:

AMOK-ի հանքավայրերի շահագործման առաջին փուլի շրջանակներում մինչև 01.01.2005թ. Ադրբեջանը ստացել է 4,95 մլն տոննա շահութաբեր նավթ, կամ արդյունահանված ամբողջ

ծավալի 13%-ը, դրամական արտահայտությամբ՝ մոտավորապես \$1,1 մլրդ եկամուտ:

2. ՀՆԱ-ի կառուցվածքը

Նավթագազային ճյուղը բազիսային է ադրբեջանական տնտեսության համար և հանդիսանում է նրա հիմնական շարժիչը, քանի որ դրանում և հարակից ճյուղերում համակենտրոնացված է երկրի արտադրական ներուժի հիմնական մասը: 2000-2004թթ. ընթացքում նավթագազային սեկտորը ապահովել է ՀՆԱ-ի ավելի քան 1/3-ը, բյուջետային մուտքերի 60%-ը և արտահանման 85-90%-ը:

2000-2004թթ. ՀՆԱ-ի կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ ժամանակաշրջանի համար բնորոշ են եղել հետևյալ հիմնական միտումները.

- տնտեսությունում մեծությամբ երկրորդ ճյուղի, գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ կրճատվել է 2000թ. 15,9%-ից մինչև 11,3% 2004թ.,

- արդյունաբերության տեսակարար կշիռը նույն ժամանակաշրջանում աճել է 36%-ից մինչև 37,8%,

- նավթի և գազի արդյունահանումը 2004թ. կազմել է ամբողջ արդյունաբերական արտադրության 74,6%-ը, իսկ նավթամթերքների արտադրության հետ միասին՝ 81,2%,

- սննդի արդյունաբերությունը ՀՆԱ-ի մեջ զբաղեցնում է համեստ տեղ՝ 3,1% 2004թ.:

Հարկ է նշել, որ վերը նշված միտումները առաջիկա տարիներին կխորանան՝ էլ ավելի ակնառու դարձնելով Ադրբեջանի տնտեսության դեֆորմացված կառուցվածքը: Ըստ կանխատեսումների 2006թ. ՀՆԱ-ի արդեն 42,1%-ը բաժին կընկնի նավթագազային սեկտորին:

3. Ոչ նավթային սեկտոր

Ոչ նավթային սեկտորը բնութագրվում է հետևյալ հիմնական գծերով.

- եթե նավթային սեկտորը մեծ հաշվով շահութաբեր է, ապա ոչ նավթային սեկտորում շահութաբերությունը շատ ցածր է կամ ընդհանրապես բացակայում է,

- եթե արտադրական ցուցանիշները նավթային սեկտորում վերջին տասը տարիների ընթացքում աճել են ավելի քան երեք անգամ, ապա ոչ նավթային սեկտորում զգալիորեն կրճատվել են՝ վերջինիս տալով մարզինալ դեր,

- Աղբբեջանի գյուղատնտեսությունը և գյուղատնտեսական հումքը վերամշակող արդյունաբերությունը մրցունակ չեն: Աղբբեջանը ներմուծում է երկրում սպառվող սննդամթերքի 70%-ը: Աղբբեջանական շուկան հեղեղված է Թուրքիայից, Ռուսաստանից և Իրանից ներմուծված սննդամթերքներով: Գյուղացիական տնտեսությունները չեն կարողանում կերակրել նույնիսկ իրենց ընտանիքները, որի արդյունքում չի դադարում միգրացիան՝ քաղաք և արտասահման,

- արդյունաբերական արտադրությունը գրեթե իսպառ վերացել է ռեզիմներից: Հատկանշական է, որ էներգետությանը հարուստ երկիրն ի վիճակի չէ ռեզիմների բնակչությանը և տնտեսությանը ապահովել էլեկտրաէներգիայի անխափան մատակարարմամբ: Բաքվից և Ապշերոնի թերակղզուց դուրս գտնվող տարածքները էլեկտրաէներգիա ստանում են օրական մի քանի ժամով: Հասարակական ֆինանսների մոնիթորինգի կենտրոնի տվյալների համաձայն, Բաքվից և նրա արվարձաններից ստացվող հարկերը և այլ վճարումները կազմում են բոլոր պետական եկամուտների 90%-ը:

4. Օտարերկրյա ներդրումներ

Օտարերկրյա ներդրումների գծով Աղբբեջանի ամբողջ գրավչությունը կայանում է նրանում, որ ներդրողներին այդ երկրում, որը տնտեսական ազատության ինդեքսով աշխարհի 161 երկրների շարքում 2004թ. տվյալներով զբաղեցրել է 103-րդ տեղը (Heritage Foundation և Wall Street Journal), առաջին հերթին

հետաքրքրում են Կասպից ծովի ավազանի նավթային հարստությունները:

Ընդհանուր առմամբ, անկախության տարիներին երկրի տնտեսությունում իրականացվել են \$17,5 մլրդ ներդրումներ, այդ թվում \$13 մլրդ օտարերկրյա ներդրումներ, որից ավելի քան \$10 մլրդ ներդրվել է նավթային արդյունաբերության մեջ (որոնց մեծ մասը ուղղվել է ԱՉԳ հանքավայրերի բոկը):

Նավթային արդյունաբերությունում ներդրված օտարերկրյա ուղղակի ներդրումների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է 1995թ.՝ 5,8%, 1999թ.՝ 11,9%, 2000թ.՝ 10,4%, 2001թ.՝ 14,4%, 2002թ.՝ 27,1%, 2003թ.՝ 38,6%, 2004թ.՝ 42,9%.

Վերը նշված միտումները բնորոշ են նաև ընթացիկ տարվան և, ըստ կանխատեսումների, կշարունակվեն միջնաժամկետ հեռանկարում: Իսկ ոչ նավթային սեկտորում «ներդրումային քաղցր» կպահպանվի:

5. Վճարային հաշվեկշիռ

Աղբբեջանի վերջին տարիների վճարային հաշվեկշիռների վերլուծությունը ցույց է տալիս, որ.

- երկրի տնտեսության նավթից կախվածության աստիճանը (ՀՆԱ-ի նկատմամբ արտահանվող նավթի և նավթամթերքների տեսակարար կշիռը) տարեցտարի աճում է: Եթե Աղբբեջանի համար այդ ցուցանիշը 1995թ. հավասար է եղել 15,4-ի, ապա սկսած 1997 թվականից, երբ ստացվեց առաջին շահութաբեր նավթը, այդ ցուցանիշը սկսեց աճել: Մինչև այն պահը, քանի դեռ Աղբբեջանի Միջազգային Օպերացիոն Ընկերությունը (AMOK-ը) չէր սկսել նավթ արդյունահանել Չիրազ հանքավայրից, նավթի և նավթամթերքների կշիռը Աղբբեջանի արտահանման ընդհանուր ծավալի մեջ կազմում էր 61%: Բայց արդեն 2001թ. այդ հարաբերակցությունը հասավ 90,1%, 2002թ.՝ 88,8%, 2003թ.՝ 85,7%, 2004թ.՝ 82,7%: Համապատասխանաբար, նավթից կախվածության ցուցանիշը 2001թ. հավասարվեց 33-ի, իսկ 2004թ.՝ արդեն 36-ի: ԱՉԳ հանքավայրերից «մեծ նավթի» արդյունահանմամբ

այդ ցուցանիշը կտրուկ կմեծանա: Նավթագազային սեկտորի կշիռը ներմուծման ծավալում 2004թ. կազմել է 56,6% (այդ ցուցանիշը 2001թ. կազմել է 32,0%, 2002թ.՝ 38,3%, 2003թ.՝ 56,5%): Արդեն այսօր միանշանակ կարելի է պնդել, որ Ադրբեջանը դարձել է մոնոկուլտուրային տնտեսություն ունեցող երկիր,

- նավթային սեկտորը հանդիսանում է հանրապետության արտաքին առևտրի հավասարակշռության հենման կետը և միաժամանակ այդպիսի հավասարակշռությունը դարձնում է թվացյալ, քանի որ նավթի գների դինամիկան ունի հստակ արտահայտված փոփոխություն՝ բարձր գների ժամանակաշրջանը անխուսափելիորեն փոխարինվում է դրանց անկմամբ,

- նավթային սեկտորը հանդիսանում է ծառայությունների խոշոր ներմուծող, որը պայմանավորված է Պետական նավթային ընկերության տարբեր կառուցվածքային ստորաբաժանումներից օտարերկրյա նավթային ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների մեծ ծավալներով: 2004թ. ծառայությունների արտահանումը Ադրբեջանից կազմել է \$492,0 մլն, ներմուծումը՝ \$2730,4 մլն: Ծառայությունների բացասական հաշվեկշիռը կազմել է \$2238,7 մլն, որը ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է 26,3%: Ըստ պաշտոնական վիճակագրության ծառայությունների՝ արտահանումը իրականացվել է հիմնականում ոչ նավթային սեկտորի կողմից: Իրականում այստեղ էլ մեծամասամբ դերակատար է նավթային սեկտորը, եթե ընդունենք, որ ծառայությունների մեծ մասը վերաբերում է այսպես կոչված գործարար ծառայություններին, իսկ դրանց սպառողները մեծ հաշվով հանդիսանում են նույն օտարերկրյա ընկերությունների ներկայացուցիչները,

- 2004թ. օտարերկրյա ներդրումների ընդհանուր ծավալից (\$4,1 մլրդ) \$1,9 մլրդ վճարվել է Ադրբեջանում նավթային բիզնեսով զբաղվող արտասահմանյան ռեզիդենտներին,

- 2004թ. AMOK-ի նավթի արտահանումից ստացվել է \$1779,2 մլն, որից Ադրբեջանի կառավարության բաժինը կազմել

է \$320,1 մլն, այսինքն՝ ընդհանուր գումարի 18%-ը, իսկ մնացած 82%-ը բաժանվել է կոնտրոլիումի արտասահմանյան մասնակիցների միջև,

- եկամուտների ընդհանուր շրջանառությունը 2004թ. կազմել է \$806,4 մլն: Ադրբեջանից վճարումները կազմել են \$753,5 մլն (եկամուտների հայրենադարձում և աշխատավարձ AMOK-ի ադրբեջանցիներից), իսկ եկամուտները՝ \$52,9 մլն (Պետական նավթային հիմնադրամի, Ազգային բանկի և բանկերի ակտիվների կառավարումից ստացված եկամուտներ):

III Նավթային սեկտորի զարգացման հիմնախնդիրները և հեռանկարները

British Petroleum (BP) նավթային ընկերության տվյալներով, նավթի ապացուցված պաշարները Ադրբեջանում 2004թ. վերջին դրությամբ կազմել են 1 մլրդ տոննա, կամ՝ մոտավորապես 7 մլրդ բարել:

Ադրբեջանի պետական նավթային ընկերության կողմից օտարերկրյա ներդրողների հետ 1994-2004թթ. կնքված 25 նավթային պայմանագրերից 10-ը արդեն պաշտոնապես չեղյալ են հայտարարվել, քանի որ նավթի առևտրային պաշարներ չեն հայտնաբերվել: Ընդ որում, 1997-2002թթ. Կասպից ծովի ադրբեջանական հատվածում իրականացված երկրաբանական հետախուզական աշխատանքները ցույց են տվել, որ նոր խոշոր և հեռանկարային հանքավայրերի հայտնաբերումը գրեթե բացառված է:

Ամենահաջողված նավթային նախագիծը Ադրբեջանում «Ազերի-Չիրազ-Գյումեշլի» հանքավայրերի բլոկի շահագործումն է:

Ադրբեջանում արդյունահանվող նավթի 95%-ը բաժին է ընկնում Ադրբեջանի պետական նավթային ընկերությանը և AMOK-ին: Նավթարդյունահանմամբ զբաղվում են նաև մի քանի փոքր համատեղ ձեռնարկություններ և ընկերություններ, սա-

կայն դրանց դերը այսօր և ապագայում Ադրբեջանի նավթարդյունաբերության ճյուղում աննշան է:

Վերջին մի քանի տարիների ընթացքում Ադրբեջանում նավթի արդյունահանումը կայունացել է 15 մլն տոննայի մակարդակում (անցած տարի արդյունահանված 15,4 մլն տոննայից 8,9 մլն բաժին է ընկել պետական նավթային ընկերությանը, իսկ 6,5 մլն տոննան՝ AMOK-ին): Ադրբեջանի հույսերը ապագայում նավթի վաճառքից եկամուտներ ստանալու հարցում կապված են AMOK-ի նավթի հետ: AMOK-ը պլանավորում է 2005թ. արդյունահանել 11,3 մլն տոննա նավթ, 2006թ.՝ 19,8 մլն տոննա:

Հատկանշական է, որ պետական նավթային ընկերությունը հիմնականում շահագործում է հին հանքավայրերը և նրա գերխնդիրն է թույլ չտալ վերջին տարիների արտադրության ծավալների անկումը: Այդ նպատակով ընկերությունը մշակել է 2004-2008թթ. զարգացման ծրագիրը, որը նախատեսում է կայունացնել նավթարդյունահանումը տարեկան 8,75 մլն տոննայի մակարդակում: Սակայն, ներկայումս, ընկերության հանքավայրերում նկատվում է արդյունահանման ծավալների, ճիշտ է, դեռևս քիչ, բայց որոշակի նվազման միտում: Արդեն 2009թ. սպասվում է արդյունահանման ծավալների արդեն ավելի մեծ անկում:

Ադրբեջանի սեփական նավթարդյունաբերության արդի վիճակը կարելի է բնութագրել հետևյալ հիմնական գծերով.

- նավթի արդյունահանման ինքնարժեքը Ադրբեջանի պետական նավթային ընկերության հանքավայրերում տարեցտարի ավելանում է: Մասնավորապես, եթե 2003թ. այդ ցուցանիշը կազմել է \$35 մեկ տոննայի համար, 2004թ.՝ ավելացել է մինչև \$39, ապա 2005թ. առաջին եռամսյակում կազմել է \$41: Նավթի արդյունահանման բարձր ինքնարժեքը բացատրվում է հանքավայրերի շահագործման մեծ ժամկետով (մինչև 100-120 տարի) և նավթի ցածր փոխհատուցմամբ,

- գաղտնիք չէ, որ ադրբեջանական պաշտոնական վիճակագրությունը խեղաթյուրում է նավթային արդյունաբերությու-

նում տիրող իրական վիճակը: Դա հաստատվում է պետական մարմինների վիճակագրության միջև առկա տարբերությամբ: Իրականում Ադրբեջանի սեփական նավթարդյունաբերությունը գտնվում է կրիտիկական վիճակում: Պատճառներից մեկը ճյուղի բարոյապես և ֆիզիկապես մաշված հիմնական ֆոնդերի նույնացման համար անհրաժեշտ միջոցների բացակայությունն է: Սակայն, դա իշխանությունների անհանգստության միակ պատճառը չէ: Չնայած այն հանգամանքին, որ ներկայումս Ադրբեջանն ի վիճակի չէ ինքնուրույն արդիականացնել սեփական նավթարդյունաբերությունը, իշխանությունները ձգտում են չկիսել մնացած նավթը օտարերկրյա ընկերությունների հետ և վերջիններիս հետ համատեղ գործունեության համար առաջարկում են չափազանց խիստ և գործնականում անընդունելի պայմաններ: Բանն այն է, որ Ադրբեջանի պետական նավթային ընկերության նավթի սեփական պաշարները (ադրբեջանական գնահատումներով դրանք կազմում են 150-200 մլն տոննա) արագ տեմպերով պակասում են:

Որոշ գնահատականների համաձայն, չնայած դրա մասին ձգտում են չխոսել ընկերության ղեկավարությունում և կառավարությունում, մոտակա տարիներին նավթի արդյունահանման համար անհրաժեշտ միջոցների բացակայության պայմաններում ընկերության նավթի արտադրությունը կարող է իջնել մինչև տարեկան 0,5 մլն տոննա: Դա կնաշանակի, որ Ադրբեջանում ուղղակի կդադարի գոյություն ունենալ սեփական նավթարդյունահանումը: Իր հերթին գործերի այդպիսի ընթացքը աղետալի անդրադարձ կունենա Ադրբեջանի պետական բյուջեի համար, որը գերկախված է նավթային սեկտորից: Սկզբունքորեն դա նշանակում է, որ Ադրբեջան պետությունը ամբողջությամբ կախված կլինի օտարերկրյա ընկերությունների երկրում իրականացվող նավթագազային ծրագրերից, Ադրբեջանի պետական նավթային ընկերության կողմից արդյունահանվող մոտավորապես 9 մլն տոննա նավթից 2,5 մլն տոննա արտահանվում է, իսկ 6,5

մլն տոննան վերամշակվում է երկրում գործող երկու նավթավերամշակող գործարաններում, որոնց ընդհանուր հզորությունը կազմում է 22 մլն տոննա, այսինքն՝ դրանք աշխատում են 32% ծանրաբեռնվածությամբ: British Petroleum ընկերության հաշվետվությունների համաձայն 1994-2004թթ. նավթի սպառումը Ադրբեջանում կրճատվել է գրեթե 44%-ով: Եթե 1994թ. Ադրբեջանի նավթի օրական սպառումը կազմում էր 163 հազար բարել, ապա 2004թ.՝ 91 հազար:

Բացառված չէ, որ առաջիկայում այդ ճյուղում որոշակի օտարերկրյա ներդրումային նախագծերի իրականացման հետ կապված իրավիճակը փոփոխվի, սակայն չի կարելի սպասել նավթամթերքների արտադրության աճ: Իշխանությունները գտնում են, որ տարեկան 6,5 մլն տոննա նավթի վերամշակումը յիտվին օպտիմալ ծավալ է Ադրբեջանի համար: Երկրում արտադրվող նավթամթերքների ծավալը թույլ է տալիս ոչ միայն ամբողջությամբ բավարարել ներքին շուկայի պահանջումը և չի, այլև տարեկան արտահանել 2,5-3 մլն տոննա բենզին, կերոսին, դիզելային վառելիք և այլն: Բացի այդ, տնտեսապես շահավետ է ադրբեջանական բարձրորակ նավթը արտահանել: Այդ նպատակով կառավարությունը մտադրություններ ունի վերամշակման նպատակներով երկրորդական նավթ ներմուծել Դազախստանից և Թուրքմենիայից:

Միաժամանակ ընկերության գործերը հարթ չեն նավթամթերքների արտահանման հարցում: Բանն այն է, որ 2006թ. հունվարի 1-ից վրացական «Մակնավտոբուրանս» պետական ընկերությունը, որը հանդիսանում է Վրաստանում ադրբեջանական նավթամթերքների ամենամեծ գնորդը, անցնում է ավտոմոբիլային վառելիքի Եվրամիության ստանդարտներին: Ներկայումս Ադրբեջանում արտադրվող A-92 ավտոմոբիլային բենզինը որակով զգալիորեն զիջում է Վրաստանում պահանջվող նոր ստանդարտներին: Այս փաստը, եթե վտանգի տակ չի դնում ադրբեջանական ավտոբենզինի արտահանումը Վրաստան.

ապա կարող է զգալիորեն ազդել վաճառվող նավթամթերքի գնի վրա:

Ինչպես նավթարդյունահանման, այնպես էլ նավթավերամշակման մեջ հիմնական հիմնախնդիրը գործարանների բարոյապես և ֆիզիկապես մաշված հիմնական արտադրական ֆոնդերն են, որը բացասաբար է անդրադառնում ադրբեջանական նավթամթերքների որակական բնութագրերի վրա: Այս հանգամանքը թույլ չի տալիս մրցակցել ժամանակակից եվրոպական ստանդարտների հետ և որպես հետևանք, ադրբեջանական նավթամթերքների հիմնական սպառողները ԱՊՀ երկրներն են:

Առանց նավթավերամշակող գործարանների արդիականացման, որը պահանջում է զգալի միջոցներ, անհնար է երկար ժամանակ պահել արտաքին շուկաները:

Ինչ վերաբերում է զազի արդյունահանմանը, ապա սույն գեկույցում չենք փորձել անդրադառնալ այդ ոլորտի հարցերին: Նշենք միայն, որ գոնե մինչև 2010թ. էական եկամուտներ գազի արտահանումից չեն ակնկալվում: Ավելին, Պետական նավթային ընկերության կողմից արդյունահանվող գազի, ինչպես նաև երկրի տարածքում իրականացվող գազի արդյունահանման և փոխադրման հետ կապված բոլոր նախագծերից ստացվող գազի, այդ թվում նաև ԱՉԳ-ի ուղեկից գազի, ընդհանուր ծավալը չի կարող այդ ժամանակաշրջանում բավարարել նույնիսկ Ադրբեջանի ներքին պահանջումները:

IV Պետական բյուջե

2004թ. մասնավոր հատվածի հատկացումները կազմել են պետական բյուջեի բոլոր եկամուտների ընդամենը 26%-ը: Պետական բյուջեի եկամտային մասում, ինչպես և նախորդ տարիներին, հիմնական ծանրությունը ընկած է եղել պետական սեփականություն հանդիսացող օբյեկտների վրա, այն դեպքում, երբ մասնավոր հատվածի կշիռը ՀՆԱ-ի ձևավորման մեջ կազմել է 74%: Դա բացատրվում է հետևյալ գործոններով.

- զուտ աղյբեջանական ոչ նավթային մասնավոր սեկտորը թույլ է: 2004թ. Աղյբեջանի խոշոր պետական հարկատուները, որոնք հիմնականում նավթագազային սեկտորի, այն սպասարկող և հարակից ճյուղերի պետական ձեռնարկություններն են եղել, պետական բյուջե են վճարել նրա եկամտային մասի ավելի քան 40%-ը: Ընդ որում, միայն Աղյբեջանի Հանրապետության Պետական Նավթային Ընկերության մասով պետական բյուջեում հարկային հատկացումների կշիռը կազմել է շուրջ 32%: Ընկերության ղեկավարությունը ենթադրում է, որ 2005թ. պետական բյուջեի եկամուտների 35%-ը կծեկավորվի նավթի և նավթամթերքների իրացումից ստացված միջոցների հաշվին,

- աճում է օտարերկրյա նավթային ընկերությունների մասնակցությունը ՀՆԱ-ի ձևավորման գործընթացում: Սակայն, օտարերկրյա նավթային ընկերությունները խոշոր հարկատուներ չեն համարվում, քանի որ նրանք ազատված են ԱԱՀ-ի և ընդհանրապես հարկերի մեծ մասի վճարումից: Վերջիններս ըստ էության չեն վճարում նաև շահութահարկ, քանի որ դեռևս դուրս չեն եկել շահութաբեր գործունեության դաշտ,

- որոշ անկախ վերլուծաբանների գնահատականների համաձայն, պետական բյուջեի նավթային կախվածության ցուցանիշը, հաշվի առնելով էներգառեսուրսների արդյունահանման և արտահանման գծով Աղյբեջանի տնտեսության մասնագիտացումը, գերազանցում է 65%-ը: Իրականում, բյուջեի եկամտային մասի ձևավորման գործընթացում զգալի դեր են խաղում ոչ հարկային եկամուտները, հարկերը միջազգային առևտրից և գործառնություններից և ռենտային վճարները, որոնց հիմնական մասը նույնպես կապված է նավթագազային սեկտորի հետ: 2004թ. գումարային առումով այդ վճարները կազմել են բյուջեի եկամուտների 30%-ը: Պետական ֆինանսների կախվածությունը նավթի արտահանումից հեռանկարում կավելանա:

Ընթացիկ տարվա պետական բյուջեի եկամուտները պլանավորված են \$1.92 մլրդ չափով, որը 2004թ. համապատասխան

ցուցանիշը գերազանցում է 25,3%-ով: 2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պետական բյուջեի եկամուտները աճել են 35,2 %-ով: Կանխատեսվում է, որ տարեվերջին պետական բյուջեի եկամուտները կկազմեն \$2,1 մլրդ, որից շուրջ \$130 մլն կկազմեն Նավթային ֆոնդի տրանսֆերտները: Պետական բյուջեի եկամուտների այդպիսի աճը բացատրվում է 2005թ. ընթացքում նավթի համաշխարհային գների աննախադեպ բարձրացմամբ: Ընդ որում հարկ է նշել, որ բյուջեի պլանավորման ժամանակ 1 քարել նավթի գին է ընդունվել \$25-ը: Այդ ցուցանիշի համեմատությամբ, ընթացիկ տարում նավթի գները աճել են առնվազն երկու անգամ: Դա նշանակում է, որ նավթի \$25 գնի դեպքում բյուջեն պարզապես չէր կատարվի: Տեղին է նշել, որ առաջիկայում աստիճանաբար նվազելու է պետական բյուջեի դերը պետական ֆինանսների ձևավորման գործընթացում, իսկ փոխարենը, այդ գործում մեծանալու է Պետական Նավթային հիմնադրամի դերը:

2006թ. բյուջեի առանձնահատկությունը նախորդ տարիների բյուջեների համեմատությամբ կայանում է նրանում, որ Աղյբեջանի Պետական Նավթային հիմնադրամի եկամուտները և ծախսերը հաստատվել են որպես համախմբված պետական բյուջեի մաս (այդ պատճառով տպավորություն է ստեղծվում, թե Աղյբեջանի բյուջեն գրեթե կրկնապատկվում է): Ընդ որում, հիմնադրամի 2006թ. ընդհանուր եկամուտները կազմում են \$888,5 մլն, ներառյալ շահութաբեր նավթի վաճառքից ստացված եկամուտները՝ \$752,4 մլն, տրանզիտային եկամուտները՝ \$14,85 մլն, բոնուսներ՝ \$74,25 մլն, հաշվետու տարում հիմնադրամի ակտիվների կառավարումից ստացված եկամուտներ՝ \$38,83 մլն, այլ եկամուտներ՝ \$8,25 մլն:

Հիմնադրամի 2006թ. ծախսերը պլանավորված են \$1045,33 մլն, որից \$643,5 մլն (585 մլն մանաթ) կկազմեն պետական բյուջեի տրանսֆերտները:

2006թ. համախմբված բյուջեն պլանավորվել է՝ ելնելով նավթի մեկ բարելի համար՝ \$40 գնից:

Այսպիսով, հաշվի առնելով, որ.

- ըստ բազմաթիվ հեղինակավոր կազմակերպությունների գնահատումների 2006թ. նավթի համաշխարհային գների բարձրացում չի սպասվում, ընդհակառակը՝ սպասվում է դրանց որոշակի անկում,

- վերջին տարիներին Ադրբեջանի պետական բյուջեի եկամուտների աճի սովորական տեմպերը կազմել են 10-15%,

- Նավթային հիմնադրամի բյուջետային տրանսֆերտները պլանավորված են \$643,5 մլն չափով, պետական բյուջեի եկամուտները կկազմեն առավելագույնը \$3 մլրդ:

Մյուս կողմից, անհրաժեշտ է հաշվի առնել, որ 2006թ. չափազանց մեծ են բարձր արժեզրկման ռիսկերը: Ինֆլյացիայի մակարդակը պլանավորվում է 9%: Սակայն, այս առումով հարկ է նշել, որ կառավարությունը չկարողացավ ապահովել ընթացիկ տարում պլանավորված 5% ինֆլյացիայի ցուցանիշը (Ադրբեջանում վերջին տարիներին ինֆլյացիան երբեք չի գերազանցել 2-3%-ը): Ներկայումս, այն, ըստ պաշտոնական տվյալների, կազմում է 12%, ոչ պաշտոնական տվյալներով՝ էլ ավելի մեծ: Ընթացիկ տարվա ապրիլին, երբ ինֆլյացիան հասավ 15%-ի, իսկ որոշ ապրանքների և ծառայությունների գծով գերազանցեց 20%-ի սահմանը, այն կարող էր վերաճել նույնիսկ հիպերինֆլյացիայի: Դրանից անմիջապես հետո հրապարակվեց «Հակահիմնական միջոցառումների մասին» նախագահի հրամանագիրը, որը ուժի մեջ մտավ հունիսի 1-ից: Ներկայումս շարունակվում է ինֆլյացիայի զսպման կոշտ քաղաքականությունը: Եվ հայտնի չէ, թե ինչպես իրեն կդրսևորի 2006թ. հունվարի 1-ից շրջանառության մեջ դրվող դեմոնիացված մանաթը: 1 դեմոնիացված մանաթը հավասարեցվում է 5000 ներկայումս գործող մանաթին: Կանխատեսվում է, որ ԱՄՆ դոլարի միջին կուրսը հավասար կլինի 4500 ներկայումս գործող մանաթին կամ 0,9 դեմոնիացված մանաթին:

Այնուամենայնիվ, ի՞նչ են իրենցից ներկայացնում բյուջետային այդ ընդհանրացնող ցուցանիշները, քի՞չ են, թե՞ շատ են, ինչպե՞ս պետք է Ադրբեջանը իր այդ բյուջեից \$600 մլն հատկացնի ռազմական ծախսերի համար: Եթե բացարձակ մեծությամբ համեմատելու լինենք Հայաստանի պետական բյուջեի ցուցանիշների հետ, իհարկե՝ շատ են, բայց եթե հաշվի առնենք Ադրբեջանի տնտեսության առանձնահատկությունները՝ քիչ են:

Եթե ՀՆԱ-ի դեպքում ստեղծված նոր արդյունքի մեծ մասը դուրս է գալիս Ադրբեջանից, ապա այս դեպքում էլ ստացված նավթային եկամուտների մեծ մասը վերադառնալու է նավթագազային սեկտոր, մեծանում են այդ սեկտորի սպասարկման Ադրբեջանի ծախսերը: 2005-2009թթ. AMOK-ը իրականացնելու է բազմամիլիարդ ներդրումներ: Ներդրումները 1-ին փուլում (Կենտրոնական Ազերի) կկազմեն \$ 3,4 մլրդ, 2-րդ փուլում (Արևմտյան և Արևելյան Ազերի)՝ \$5,2 մլրդ, 3-րդ փուլում՝ (խորքային Գյումեշլի)՝ \$ 3 մլրդ: Ադրբեջանը դեռ պետք է կարողանա իր 10% բաժնեմասի չափով մասնակցի այդ ներդրումներին: Ադրբեջանը մեկ անգամ արդեն ներդրումային պարտականությունները ֆինանսավորել չկարողանալու պատճառով 1995թ. իր 20% բաժնեմասից 10-ը \$173 մլն դոլարով փաճառել է Էքսոնին և բուրքական նավթային ընկերությանը: Ադրբեջանն՝ իր 25% բաժնեմասի չափով, պետք է շարունակի մասնակցել Բաքու-Թբիլիսի-Ջեհյան նավթամուղի շինարարության համար կատարված \$4 մլրդ ներդրումների փոխհատուցմանը, իր 10% բաժնեմասով՝ Շահ-Գենիզլի (ներառյալ Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը) նախագծի կապիտալ ներդրումներին (նախագծի կապիտալ ներդրումները կկազմեն \$3-4 մլրդ):

Եվ վերջապես, Ադրբեջանը պետք է կարողանա զգալի միջոցներ հատկացնել սեփական նավթարդյունաբերության սուբսիդավորմանը, քանի որ դա Ադրբեջանի տնտեսության գործնականում միակ աշխատող սեկտորն է:

Այսպիսի պայմաններում Ադրբեջանի նավթագազային սեկտորի «մեծ հաջողությունների» քարոզչությունը հիշեցնում է

«լայնորեն քայլում է Ադրբեջանը» կոմունիստական լճացման ժամանակաշրջանի բամբակի զանգվածային «հավելագրումների» քաղաքականությունը: Այն կոչված է սեփական քաղաքական մանիպուլյացիաների համար բարենպաստ ֆոն ապահովելուն և այդ մանիպուլյացիաներին աջակցող համապատասխան հասարակական կարծիքի ձևավորմանը:

Չարգացման բնագավառի վերաբերյալ վերջին 20-30 տարիներին իրականացված բազմաթիվ հետազոտությունները ցույց են տվել, որ նավթի արտահանումից ստացված մեծ եկամուտները նպաստում են զարգացող երկրների ավելի շուտ հետամնացության ամրապնդմանը, քան՝ այդ երկրների բարգավաճմանը: Ավելին, ուժեղ տնտեսական և քաղաքական ինստիտուտների բացակայության պայմաններում ստացված նավթային դուլարները այդպիսի հասարակություններում կարող են «արջի ծառայություն» մատուցել, ստեղծելով բազմաթիվ լուրջ և, ըստ էության, անլուծելի ֆինանսատնտեսական հիմնախնդիրներ: Այդ առաջին հայացքից, պարադոքսալ երևույթի հիմքում ընկած են իրական տնտեսական պատճառներ՝ այսպես կոչված «հուլանդական հիվանդության» սինդրոմը, ոչ լրիվ զբաղվածությունը, կոռուպցիան, սուբսիդիաները և արտաքին պարտքի բեռը:

Ընթացիկ տարվա հոկտեմբեր ամսին ԱՄՆ դուլարի նկատմամբ ադրբեջանական մանաթի կուրսի կտրուկ բարձրացումը կարծես թե «հուլանդական սինդրոմի» ադրբեջանական տարբերակի առաջին ազդանշանն է:

Նավթարդյունաբերությունը ոչ թե աշխատատար, այլ կապիտալատար ճյուղ է, այսինքն՝ դրա զարգացումը պահանջում է զգալի կապիտալ ներդրումներ, այլ ոչ թե աշխատուժ: Այսպես, Ադրբեջանի նավթարդյունահանող սեկտորին, որտեղ ստեղծվում է ՀՆԱ-ի շուրջ 40%-ը, ընկնում է երկրի աշխատատեղերի ընդհանուր թվի մոտ 1%-ը: Մյուս կողմից, քանի որ պահանջվող աշխատուժի մեծ մասը պետք է ունենա բարձր որակավորում, ապա նավթի արդյունահանումը վերահսկող օտարերկրյա նավ-

րային ընկերությունները իրենց ազատ աշխատատեղերը լրացնում են ավելի կրթված օտարերկրացիներով: Այսպես, Ադրբեջանում ներկայումս AMOK-ի նախագծերում զբաղված 16 հազար աշխատողներից՝ ավելի քան 25%-ը, այլ երկրների քաղաքացիներ են:

Երբ արդյունաբերական արտադրության ծավալները նավթարդյունահանող երկրներում կրճատվում են, նավթի և գազի արդյունահանման և մշակման բարձր մասնագիտացում ունեցող և կապիտալատար սեկտորը չի կարող աշխատանքի տեղավորել գործազուրկ դարձած անձանց: Արդյունքում, գործազրկության մակարդակը աճում է, աշխատավարձերը ընկնում են, աղքատության մակարդակը և պետությունից կախված մարդկանց թվաքանակը աճում է: Այսպես, 1999-2004թթ. հիմնականում նավթարդյունահանող սեկտորի հաշվին, Ադրբեջանի արդյունաբերական արտադրությունն աճել է երկու անգամ, իսկ արդյունաբերական սեկտորում զբաղվածների թիվը 2004թ. կազմել է 176,3 հազար մարդ, որը 24,5 հազարով քիչ է, քան 1999թ.: Նավթարդյունահանող արդյունաբերությունում զբաղվածների թիվը կազմել է 38 հազար մարդ և 1999թ. (33,7 հազար) համեմատ քիչ է փոխվել, չնայած նավթի արտադրության և նավթային սեկտորում ներդրումների աճը անհամեմատ մեծ է եղել: 1995թ. (44 հազար) համեմատ զբաղվածների թիվը այդ սեկտորում նույնիսկ կրճատվել է:

Ադրբեջանն աշխարհի ամենակոռումպացված երկրներից մեկն է: Կոռուպցիայի բարձր մակարդակը խոչընդոտում է առաջին հերթին ոչ նավթային մասնավոր հատվածի զարգացմանը:

Նավթագազային հարուստ ռեսուրսներ ունեցող երկրների կառավարությունների՝ նավթագազային եկամուտները, որպես վարկեր տնտեսության զարգացման և նոր աշխատատեղեր ստեղծելու համար օգտագործելու ջանքերն, ի սկզբանե, ձախողված են: Որպես կանոն այդպիսի պետական վարկերը սուրվում են քաղաքական նախընտրությունների հիման վրա և տնտեսական առումով իրենցից ներկայացնում են ոչ շահութա-

բեր ձեռնարկությունների սուբսիդավորում: Իշխանությունները շահագրգռված չեն փակել այդպիսի ձեռնարկությունները, օգտվելով դրանցից, որպես քաղաքական աջակցություն ստանալու միջոց, ի շնորհիվ մեծ թվով մարդկանց աշխատանքի տեղավորման: Այդպիսի քաղաքականությունը բարձրացնում է սուբսիդիաների համակարգից դուրս գտնվող մասնավոր բիզնեսի արժեքը, ստիպում է մասնավոր հատվածին դառնալ սովետային տնտեսության մաս:

Եզրակացություններ

1. ՀՆԱ-ի աճի բարձր տեմպերը պայմանավորված են նավթի արդյունահանման ծավալների ավելացմամբ, նավթային սեկտորում օտարերկրյա մեծ ներդրումներով և համաշխարհային գների բարձրացմամբ: Չնայած այդպիսի աճի, ստեղծված նոր արժեքի գերակշիռ մասը երկրից դուրս է գալիս, իսկ օտարերկրյա ներդրումների զգալի մասը վերահայրենադարձվում է:
2. Ադրբեջանն ունի տնտեսության դեֆորմացված կառուցվածք, ոչ նավթային սեկտորը կայացած չէ և դրա զարգացման համար որևէ հիմք չկա:
3. Օտարերկրյա ներդրումների մեծ մասն ուղղվում է դեպի նավթային սեկտոր, իսկ ոչ նավթային սեկտորում շարունակվում է պահպանվել «ներդրումային քաղցր»:
4. Ադրբեջանի տնտեսության նավթի արտահանումից կախվածության աստիճանը տարեցտարի մեծանում է, խորացնելով տնտեսության համար դրա բոլոր բացասական հետևանքները:
5. Ադրբեջանի ներքին ռեզերվները չեն բավարարում ներկայիս մակարդակի վրա սեփական նավթի արդյունահանումը և վերամշակումը պահելու, առավել ևս այն արդիականացնելու համար: Սեփական նավթարդյունաբերությունը ապրում է իր մայրամուտը: Արագորեն մաշվում են մասն Աետական նավթային ընկերության նավթի պաշարները:

6. Մի կողմից՝ աճող և բյուջեի ձևավորման գործընթացում քույլ մասնակցություն ունեցող մասնավոր հատվածը, ներառյալ օտարերկրյա ընկերությունները, և մյուս կողմից՝ որպես բյուջե կազմավորող գործոն հանդիսացող պետական հատվածը, ի դեմս Ադրբեջանի նավթային պետական ընկերության, վկայում են այն մասին, որ Ադրբեջանի պետական բյուջեի ձևավորումը հանդիսանում է նավթագազային սեկտորի գործունեության արդյունք, բյուջեի եկամուտները մեծ հաշվով կրում են ռենտային բնույթ և չեն հանդիսանում ամբողջ տնտեսության՝ որպես մեկ միասնական ամբողջության, գործունեության արդյունք:
7. 2006թ. ռազմական ծախսերը 600 մլն դոլարի հասցնելու, իսկ հաջորդ տարի նորից կրկնապատկելու Ադրբեջանի հայտարարությունները որևէ կերպ հիմնավորված չեն և արված են ընդամենը քարոզչության և շանտաժի նպատակներով: Ավելին, երկարաժամկետ տնտեսական աճի առումով Ադրբեջանի նավթագազային սեկտորից գերկախված տնտեսությանը սպառնում է մակրոտնտեսական անհավասարակշռվածություն, որի ռիսկերը կմեծանան արդեն 2006թ.՝ կապված հանրապետություն նավթային դոլարների հոսքի ավելացման հետ:

ՀԱՐՑՆԵՐ ԵՎ ԵԼՈՒՅԹՆԵՐ

Ռաֆայել Ղազարյան

Ես հարց եմ ուզում ուղղել պայրոն Եղիազարյանին: Իհարկե, այն հանգամանքը, թե ինչպես Դուք ներկայացրեցիք Ադրբեջանի նավթարդյունաբերության անմխիթար ապագան, մեզ շատ է մխիթարում, բայց այդ կապակցությամբ հասկանալի չեն այն թվերը, որ բերել էր շատ հեղինակավոր մի ամերիկյան պարբերական՝ «Ալմանախ» պարբերականը, որտեղ նշվում է, որ 2009

թե 2010 թվականին Ադրբեջանի բնակչությունը դառնալու է 9 միլիոն, իսկ Հայաստանինը՝ 2 միլիոն: Եթե մենք հաշվի առնենք, հիշենք այս հանրաքվեի նախօրեին հրապարակված մեր ընտրողների թիվը՝ 2 միլիոն 400 հազար, դա նշանակում է, որ բնակչությունը երևի թե 3,5 միլիոն պիտի լիներ, որպեսզի 2,4 միլիոնը քվեարկեր, ապա դա նշանակում է նաև, որ Հայաստանի բնակչությունը էապես նվազելու է, իսկ Ադրբեջանինը՝ աճելու: Ինչո՞վ եք դա Դուք բացատրում, դրանք զուտ տնտեսակա՞ն, թե՞ այլ հանգամանքներ են, որոնց հիման վրա «Ալմանախը» այդ կանխագուշակումներն է անում:

Աշոտ Եղիազարյան

Ինչով ենք մենք հիմնավորում այսօր, որ Ադրբեջանը շատ է ուժեղանալու, իսկ մենք՝ թուլանալու, այսինքն՝ երբ որպես հիմք ինչ-որ մի տեսակետ է ընդունվում հետագա վերլուծության համար, ապա այդ տեսակետի հիման վրա կատարվում են որոշակի եզրակացություններ: Հիմա ես չգիտեմ, թե ինչ նպատակներով է դա «Ալմանախը» արել, բայց ասեմ հետևյալը. իսկ ո՞վ է ասում, որ Ադրբեջանում այսօր կա 9 միլիոն մարդ, այո, պետք է դառնան, բայց ո՞վ է ասել, որ պետք է դառնան այդքան: Ըստ որոշ գնահատականների, Ադրբեջանում նույնիսկ 4 միլիոն չկա:

Իզոր Մուրադյան

3 միլիոն 600 հազար մարդ կա այնտեղ:

Աշոտ Եղիազարյան

Այսինքն՝ այդ թիվը ինչպե՞ս պետք է դառնա 9 միլիոն:

Ռաֆայել Ղազարյան

Դա նշանակում է, որ կրկնապատկվելու են: Նրանք կարող են: Մենք գիտենք նրանց այդ հատկությունը, նրանք լրջորեն զբաղվում են դրանով՝ ոչ թե մեզ նման:

Իզոր Մուրադյան

Իմ կարծիքով ես մի քանի էական բաներ ունեմ ավելացնելու: Տեսնո՞ւմ եք, ինչքան թվեր կան, իսկ ընդդիմությունը նշում է միայն մեկ թիվ. ազգաբնակչության թիվը՝ 1 միլիոն 250 հազար: Իսկ իրականում աշխարհը շատ մեծ է: Թվերը շատ կարևոր են, թվերով կարելի է կեղծել, թվերով կարելի է բացատրել... Եթե որևէ մեկն ասում է, որ թվերն ուռճացված են, ապա նա աշխատել չգիտի թվերի հետ: Հարկավոր է սովորել դա անել:

Ռաֆայել Ղազարյան

Իզոր, ես ինչ-որ չհասկացա, ինչի՞ մասին է խոսքը:

Իզոր Մուրադյան

Ադրբեջանն իր նավթի արտահանումը մեծացնելու նպատակով փորձում է ներմուծել ռուսական գազը, որովհետև դա ձեռնտու է: Հիմա, երբ գազի գները բարձրացել են, անհասկանալի է դարձել, արժի՞ արդյոք դա անել, իսկ քանի որ Ադրբեջանի էներգետիկան ընդհանուր առմամբ 9/10-ով հիմնված է ջերմաէլեկտրակայանների վրա, որոնք բավականին ծախսատար են, ապա որքա՞ն մագոթ կպահանջվի դրանց համար և արդյոք հնարավոր կլինի՞ այն արտահանումը, որը նրանք պլանավորել էին: Եվ, ահա, թե ինչ այլ հարց է ինձ հետաքրքրում. ազատականացվե՞լ են արդյոք երկրում էներգետիկայի սակագները և ինչպե՞ս դա կարող է ազդել էներգառեսուրսների սպառման վրա: British Petroleum-ի նյութերում իր ենթակայության տակ գտնվող հանքավայրի մասով բերվում է այնպիսի մի թիվ, որից բացարձակապես չես հասկանում, թե այդ պաշարների ո՞ր կատեգորիայի մասին է խոսքը, այսինքն՝ Եվրոպական ստանդարտներով ընդունված A, B, C կատեգորիաներից ո՞րն ի նկատի ունի: Բանն այն է, որ այն նավթը, որն արտահանում է British Petroleum-ը, դա մեղրոբյան նավթն է, իսկ դա բավականին բարդ երկրաբանություն է: Ըստ էության, այստեղ կարելի է արտահա-

նել բախանաային պաշարների միայն 60%-ը, իսկ 40%-ը՝ չարտահանվող պաշարներն են: Նավթի արդյունահանմանը զուգընթաց կնվազի ճնշումը նաև հանքերում: Գնչման հետ կապված մնացորինակ խնդիր արդեն իսկ գոյություն ունի Գյումրեշի հանքավայրի հորատախմբերից մեկում: Դրա ծախսերը կենձաման, իսկ պետության եկամուտները կախված են նրա շահութաբերությունից: Ինձ թվում է, որ դա շատ կարևոր հանգամանք է:

Աշոտ Եղիազարյան

Նույնիսկ հիմա, քանի որ գներն այս պահին բարձր են, այդ արտասահմանյան ընկերությունները շատ ավելի են շահում, քան Ադրբեջանը: Ինչո՞ւ: Որովհետև հիմա, քանի դեռ կապիտալ ծախսերը չեն փոխհատուցվել, այստեղ եկամուտների բաշխումը, բաժանումը կատարվում է ի օգուտ արտասահմանյան ընկերությունների: Այսինքն՝ պահն էլ նույնիսկ հարմար չէ Ադրբեջանի համար: Գնչտ է, գնի բարձրացումը նշանակություն ունի Ադրբեջանի համար, բայց արտասահմանյան ընկերությունները շատ ավելի են հիմա դրանից օգտվում:

Հարցերից մեկը վերաբերում էր էներգակիրների ներքին գներին: Ադրբեջանում այդ ազատակամացումը դեռ տեղի չի ունեցել, ի դեպ, դա Միջազգային արժույթի հիմնադրամի պահանջներից մեկն է, որն ամեն անգամ դրամական հատկացումներ կատարելուց առաջ հիշեցնում է Ադրբեջանին այդ պայմանի մասին: Ի՞նչ է նշանակում էներգակիրների գների ազատակամացում: Դա նշանակում է ադրբեջանական արտադրանքի գների բարձրացում, դա նշանակում է նրա արտադրանքի մրցունակության անկում: Ես, առայժմ, գնահատական չունեմ այն հարցի կապակցությամբ, թե գազը որքանով կփոխհատուցվի նավթով, այսինքն՝ մագուրով: Բայց մի բան ակնհայտ է, որ Ադրբեջանի նավթի սպառումը ներսում ձեռնտու չէ՝ ի տարբերություն արտահանման, որը նախընտրելի է բարձր գների այս պայման-

ներում: Համենայնդեպս, գազի գները կախված են նավթի գների բարձրացումից, այսինքն՝ միշտ էլ նավթի արտահանումը ավելի ձեռնտու կլինի, նույնիսկ բարձր գնով գազ ներմուծելու պայմաններում:

Վազգեն Մանուկյան

Եթե կարելի է, ես էլ մի երկու խոսք ունեմ ասելու: Իհարկե, չարժե ընկնել երկու ծայրահեղությունների մեջ: Ադրբեջանի զարգացման մեջ գերազնահատվում է նավթի պաշարների օգտագործման գործոնը, ինչը ոմանց մոտ հուսալքություն է առաջացնում այն մասով, որ կարծում են, թե նրանք մեզանից առաջ են ընկել, և որ մենք տնտեսությամբ երբեք իրենց չենք կարող հասնել, կամ որ նրանց զարգացման տեմպերն ավելի բարձր են: Ես հակված չեմ այդպես մտածելու, ինչն ուղղակի ցույց են տալիս նաև ձեր թվերը: Մակայն Ադրբեջանն իր ներուժի 60-70 %-ով զոնե օգտագործում է իր հնարավորությունները: Ես կարծում եմ, որ մենք ավելի քիչ ենք օգտագործում: Նույնչափ վտանգավոր է նաև ներկայացնել հարցն այնպես, որ Ադրբեջանը ուր որ է կործանվելու է և մենք նստած տեղում հաղթելու ենք: Դրա համար այստեղ հավասարակշռությունը պետք է պահել: Ընդ որում, այստեղ գործոնները տարբեր են, օրինակ, ես հնարավորություն եմ ունեցել խոսելու Shell ընկերության ներկայացուցիչների հետ, որոնք ասում էին, որ Ադրբեջանն իսկապես կոռումպացված է և, որ այստեղ փողը տալիս ես ու գիտես, որ անելու են: Այսինքն՝ կոռուպցիան Ադրբեջանում համակարգ է, ըստ որում իր ժողովրդի մենթալիտետի մեջ դա վաղուց մտած է:

Ես ողջունում եմ Ձեր ելույթը և շատ կուզենամ, որ այդ թվերը հրապարակվեն և շատ օգտակար կլինեն ծանոթանալ դրա հետ: Լավ կլիներ մնան մի վերլուծություն ունենալ նաև Հայաստանի տնտեսության վերաբերյալ իրենց՝ ադրբեջանցիների աչքերով: Օրինակ, այ հետաքրքիր է, Դուք կկարողանալի՞ք այդպիսի մի վերլուծություն կատարել իրենց աչքերով, այսինքն, ասենք,

Դուք, օրինակ, հակառակ կողմում եք, Դուք կկարողանա՞ք դա անել և երկու վերլուծություն դնեք կողք-կողքի: Մեր նպատակը այն չէ, որ ասենք, տեսնենք, որ Հայաստանն ավելի լավ կամ ավելի վատ վիճակում է: Դուք կկարողանա՞յի՞ք գնահատել իրականությունը:

Իզոդ Մուրադյան

Այստեղ, գիտեք, բանն այն է, որ նավթը դառել է աղբբեջանական ժողովրդի ազգային գաղափարը և դա նրանց կկործանի:

Վազգեն Մանուկյան

Այո, բայց, Իզոդ, նստենք ու սպասե՞նք մինչև կործանվեն: Փորձը ցույց է տալիս, որ առանց միջամտության նրանք չեն կործանվում:

ՆԻՍՏ ԵՐՐՈՐԳ

ԼՂՀ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՐԳՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԻՑ

Անդրանիկ Գասպարյան

*Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի
դարաբաղյան մասնաճյուղի տնօրեն*

Նախևառաջ, կցանկանալի շնորհակալություն հայտնել կազմակերպիչներին այս խորհրդաժողովի, ինչպես նաև վերջինիս համար հիմք հանդիսացող աշխատության հրատարակման համար: Ինչպես երևի գիտեք, այսօր սեղանին դրված խնդիրը տարիներ շարունակ մտահոգել է մեզանից շատերին՝ սակայն ոչ պաշտոնական և թույլ համակարգված կերպով: Այսօր մենք մեծապես ոգևորվում ենք՝ տեսնելով, որ այս խնդիրը արժանացել է քաղաքականություն իրականացնող մեր հասարակայնության տարբեր հայտնի շերտերի պատշաճ ուշադրությանը և հույս ունենք, որ այն սկիզբ է դնում մեր դիվանագիտության և այս խնդրին ուղղված գործունեության մեջ մի նոր, համարձակ, ճկուն և աշխույժ գործընթացի:

Ես այսօր նպատակ չունեմ անդրադառնալու խնդրո առարկա աշխատության բովանդակությանը: Ես վստահ եմ, որ դա կարվի այսօրվա խորհրդաժողովի այլ ելույթների ընթացքում: Իրականում, ես կցանկանալի Ղարաբաղի ներկա իրավիճակի համատեքստում հակիրճ կերպով անդրադառնալ տարածքային, մարդու իրավունքների և անվտանգության խնդիրներին: Ես, որպես վերաբնակեցման ոլորտում վերջին մի քանի տարիները ներգրավված մասնակից, համոզվել եմ, որ այս խնդրի հետ առնչվող հարցերը լինելով, իհարկե, կարևոր, կարող են դառնալ բավականին վերացական, եթե իրականացվեն առանց փաստացի իրավիճակի հետ կապված հստակ ցուցումների:

Ակնհայտ է, որ աշխատությունը հստակորեն ներկայացնում է Ղարաբաղի տարածքային, մարդու իրավունքների և անվտանգության գործոնները, ցույց տալով, թե ինչպես են այդ գործոնները լրացնելով մեկը մյուսին, կազմում մեկ ամբողջություն: Սակայն, ամենահատկանշականն այն է, թե ինչպես է այս աշխատությունը հեռու գնում ընդունված սովորական՝ մեծապես պաշտպանողական փաստարկներից և ուղղորդում դեպի այն առավել համապարփակ պատկերը, որում Ղարաբաղը գործնականում կարող է լինել անվտանգ և ինքնաբավ: Մենք բուլոբս լսել ենք բազմիցս, որ ազատագրված տարածքները կազմում են այն անվտանգության գոտին, որը ապահովագրում է Ղարաբաղին ապագա հարձակումներից: Սակայն, ցավոք սրտի, հազվադեպ ենք լսում, որ այդ տարածքները դիտարկվեն որպես փոխհատուցում Ադրբեյջանի կողմից 1988 թվականին սանձարձակված ազրեսիայի հետևանքով մարդկային զոհերի և կորսված սեփականության դիմաց: Ներկայացնելով խնդիրն այս տեսանկյունից, մենք անդրադառնում ենք Ղարաբաղին ոչ միայն տարածքային, այլև մարդու միջազգային իրավունքների տեսակետից, որտեղ ԼՂՀ-ն հանդես է գալիս որպես Ադրբեյջանի կողմից հալածված և հետո բռնի տեղահանված անձանց իրավունքների տրամաբանորեն հիմնավորված երաշխավորը: Այս մարդկանց համար, որպես միջազգային իրավունքի սուբյեկտներ, հաստատելով իրավական լայն շրջանակներ և ներկայացնելով սահմանամերձ շրջանների վերաբնակեցումը՝ որպես նրանց իրավունքների վերականգնման անհրաժեշտ մեխանիզմ, մենք պաշտպանությունից արդյունավետորեն անցնում ենք հարձակման: Լիառույս են, որ սա կլինի մեր առաջին քայլը՝ մարդկանց այս հողերում վերաբնակեցնելու համար մեր կողմից երկշտ և պաշտպանվող լինելու վարքագծից ազատվելու ուղղությամբ, փոխարենը՝ խրախուսելով մեզ դառնալու ավելի նախաձեռնող և անկաշկանդ: Այսպիսով, մենք կարող ենք խուսա-

վել անցած ձմռանը տեղի ունեցած անհեթեթ իրավիճակից, երբ ի պատասխան Ադրբեյջանի և ԵԱՀԿ-ի ճնշումների, մեզանից շատերը հայտնվեցին մեկուսացված փրճակում, նյարդայնացած շփոթմունքով ժխտելով ազատագրված տարածքներում կազմակերպված վերաբնակեցման փաստը, հավանաբար, միջազգային հանրության բարեհաճությունը չկորցնելու նպատակով:

Միևնույն ժամանակ, չնայած իրավական դաշտն անհրաժեշտ է Ղարաբաղի վերանբակեցումն իրականացնելու համար, բայց՝ ոչ բավարար: Այս մոտեցումն ավելի քան բարձր դիվանագիտության խնդիր է և պետք է աջակցվի և սնուցում ստանա տեղում վերաբնակեցման իրական գործընթացով: Հատկապես ԼՂՀ-ն և Հայաստանն այս կապակցությամբ պետք է ճիշտ ազդակներ, հրահանգներ և խթաններ տան այն կազմակերպություններին և անհատներին, որոնք պատրաստ են և ունակ՝ դեր ունենալու այս գործընթացում: Ոչ թե հասարակական կազմակերպությունները կամ մասնավոր անձինք, ինչպես եղել է մինչև հիմա, այլ հատկապես ԼՂՀ-ի իշխանությունները պետք է մշակեն ԼՂՀ-ի վերահսկողության տակ գտնվող բոլոր տարածքների վերաբնակեցման ռազմավարությունները: Այստեղ, ի նկատի ունեն ոչ միայն Լաչինը, որը հասկանալի կերպով եղել է ամենաակտիվ վերաբնակեցման քաղաքականության սուբյեկտը, այլ բոլոր այն ազատագրված տարածքները, որոնք բազմանշանակ արժեք են ներկայացնում որպես տրամապորտային միջանցքներ, տնտեսական զարգացման գոտիներ, ռազմական բուֆերային գոտիներ և հարևան պետությունների հետ կարևոր սահմանային գոտիներ: Ցավոք սրտի, առ այսօր բավարար աշխատանք չի տարվել նման մի քաղաքականություն մշակելու համար և մենք թանկարժեք ժամանակ ենք կորցնում: Թույլ տվեք նշել այն մի քանի հատուկ ոլորտները, որոնք շտկումների կարիք ունեն:

- ԼՂՀ-ի իշխանությունները ոլորտի արտերկրյա գործիչներին առաջարկելով մեծ համագործակցություն, պատշաճ սեփական ռեսուրսներ չեն տրամադրում այս ուղղությամբ: Ներկայումս, վերաբնակեցումը զբաղեցնում է ԼՂՀ-ի բյուջեի փոքր մասը, իսկ «Հայաստան» հիմնադրամից եկած տարեկան գումարներից միայն չնչին մասն է տրամադրվում վերաբնակեցման գործունեությանը: Ռեսուրսների պակասը իր հերթին ներագրում է ընդհանուր ջանքերի տեմպի (չափազանց՝ դանդաղ), մասշտաբների (չափազանց՝ փոքր) և որակի (հաճախ՝ միջակ և մասնակի) վրա: Իրականում, այն անձինք, որոնք այսօր վերաբնակեցվել են սահմանամերձ հողերում, միշտ չէ, որ մնում են այնտեղ: Լքված և արհամարհված պայմաններում գտնվելու պատճառով նրանք հեռանում են այդ վայրերից:
- Ներկայումս միայն մի քանի կազմակերպություններ կան, որոնք միջոցներ և ուշադրություն են տրամադրում վերաբնակեցման գործունեությանը: Գրա պատճառը խնդրով չհետաքրքրված լինելը չէ: Շատ են այնպիսի կազմակերպությունները, որոնք կարող էին հեշտությամբ մտնել այս ոլորտը և որոշ ջանքեր գործադրելուց հետո վերաբնակեցումը կարող էր վերածվել համահայկական գործունեության, եթե, իհարկե, այդ կազմակերպությունները. ա) պատշաճ կերպով խրախուսվեն պաշտոնական շրջանակների կողմից և, բ) ստանան վստահեցում, որ այդ հողերի ետ վերադարձման որևէ միտում չկա, այլ ընդհակառակը, որ պետությունն ունի քաղաքական կամք՝ պայքարելու՝ դրանք պահելու համար, քանի որ, փաստացի, վերաբնակեցման աշխատանքները անհրաժեշտ են, որպեսզի տեղում ստեղծվեն այնպիսի պայմաններ, որոնք անհնարին կդարձնեն տարածքների վերադարձը:

- Ավելի մեծ ջանքեր են պահանջվում Ադրբեջանից և Ղարաբաղից տեղահանված այն հայերի հետ կապ ստեղծելու և նրանց կազմակերպելու համար, որոնք առ այսօր գուրկ են քաղաքացիության երկրից: Այդ մարդիկ, հատկապես նրանք, որոնք ադրբեջանական անձնագրեր ունեն, պետք է կազմեն ապագա վերաբնակեցման գործընթացի ողնաշարը, դառնալով մեր գաղափարների «միս ու արյունը»՝ համապատասխանաբար առավելագույնի հասցնելով մեր դիվանագիտական նախաձեռնությունների արդյունավետությունը:
- Վերաբնակեցմանն ուղղված ջանքերը պետք է ամբողջական և ընդգրկուն լինեն հատկապես տնտեսական բնագավառում: Սա նշանակում է, որ տնտեսական զարգացման բաղադրիչը պետք է ընդգրկված լինի ցանկացած վերաբնակեցման գործընթացում (օրինակ՝ ենթակառուցվածք, աշխատելու հնարավորություններ), որպեսզի վերաբնակիչները մեկընդմիջտ կապվեն այդ հողերի հետ:

Եթե այդ մտտեցումները լրջորեն կիրառվեն՝ գուցորդելով մեր դիվանագիտության և տեղում գործադրված ջանքերը, ապա մենք ականատեսը կլինենք ոչ միայն ԼՂՀ-ի սահմանամերձ տարածքների ծաղկման, այլև՝ նոր Ղարաբաղի զարգացման, Ղարաբաղի, որը կծառայի որպես հավաքատեղի բոլոր մեր վտարված հայրենակիցների համար, Ղարաբաղի, որը կդառնա կարևոր տնտեսական շարժիչ և, վերջապես, Ղարաբաղի, որը կարող է դուրս գալ իր ներկա մեկուսացված վիճակից և դառնալ հայկական այնպիսի պետության հիմնաքարը, որը ոչ միայն գոյատևում՝ այլև բարգավաճում է: Պատահական չէ նաև, որ բացի անմիջական օգուտներից, վերաբնակեցման առավելությունը կայանում է նրանում, որ այն կարող է Ադրբեջանին ստիպել նստել բանակցությունների սեղանի շուրջ, այսինքն՝ որքան Բաքուն երկար սպասի, ձգձգի և մերժի հայերի իրավունքների ճանաչումը, որքան շարունակի նույն գործելակարգը, այնքան

կրախվի այն փաստի հետ, որ Ադրբեջանի արդարացի մոտեցման կարողության նկատմամբ հավատը կորցրած մարդիկ այս հողերը կհռչակեն որպես իրենց փոխհատուցում: Ադրբեջանը տարիներ ուներ, որպեսզի կարողանար կողմնորոշվել Ղարաբաղի անկախության հարցում, սակայն դեռևս շարունակում է պատերազմի և ճնշումների կոչեր անել: Բարվին պետք է ստիպել, որպեսզի հասկանա, որ որքան մա պահպանի այս կեցվածքն, այնքան իր վիճակը կբարդանա: Բայց, որպեսզի սա իրականանա, մենք պետք է վերջ տանք մեր անգործությանը և Ադրբեջանի նախաձեռնություններին արձագանքելու փոխարեն պետք է թելադրենք մեր պայմանները: Նմանօրինակ նախաձեռնություններից ամենակարևորը՝ վերաբնակեցման արդյունավետ ծրագիրն է, որը կարող է համոզել Ադրբեջանին, որ ժամանակն իր օգտին չի աշխատում, և որ այն պետք է կողմնորոշվի:

Մեկ այլ առիթի դեպքում, ես ուրախ կլինեմ քննարկելու Լաչինի և հարավային սահմանամերձ հողերի, որտեղ մենք ծրագրեր ենք իրականացնում, վերաբնակեցման նկատմամբ մեր ունեցած մոտեցումների մանրամասները: Տվյալ պահին ոլորտի մեր համակարգող պարոն Կամո Մարտիրոսյանը սիրով կպատասխանի ձեր բոլոր հարցերին:

Ես ձեզ հաջողություն եմ մաղթում ձեր նախաձեռնություններում, բայց իրապես հույս ունեմ, որ այս խորհրդածրոյվը չի դառնա տոսկ մի «միջոցառում», այլ կծառայի որպես խթան այս բնագավառում արագ ներգրավվելու համար: Համոզված եղեք, որ Սփյուռքում շատ և շատ աղքյուրներ կան, որոնք պատրաստ են աջակցելու այնպիսի նախաձեռնությունների, ինչպիսին է այս մեկը, որտեղ կա պայծառ միտք, հստակ ռազմավարություն և գործելու կամք: Առանց այսպիսի մոտեցման և գործելակարգի մեր աջակցությունն արդյունավետ չի լինի:

Շնորհակալություն ձեր ուշադրության համար:

*Նյու Յորք,
18 դեկտեմբերի, 2005թ.*

ԿՈՐՄՎԱՆԸ ՀԱՅՐԵՆԻՔ.
ՀԱՄԱՐԺԵՔ ՓՈՒՆՀԱՏՈՒՅՄԱՆ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

Արա Տեր-Մարտիրոսյան
ՀՀ ԿԲ նախագահի խորհրդակցան
(Զեկույցը չի ներկայացվել)

ԼԵՈՆՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՏԱՐԱԾԱՆՈՐՁԱՆԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Սերգեյ Մինասյան
Քաղաքագետ

Ներկայումս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավական և, հատկապես, քաղաքական կայացվածությունը գնահատող կարևորագույն գործոնն է հանդիսանում վերջինիս համապատասխանությունը ցանկացած պետության անկապտելի մաս կազմող մի շարք ատրիբուտների: Անհրաժեշտ է արձանագրել նաև, որ պետականության այդ բոլոր ատրիբուտներին համապատասխանելու հետ մեկտեղ, ԼՂՀ-ն Հարավային Կովկասի անվտանգության և կայունության համակարգի կարևորագույն, անգամ որոշիչ քաղաքական գործոն է: Այն փաստը, որ ԼՂՀ-ն դեռ ճանաչված չէ ավանդական միջազգային-իրավական դաշտում, ամենևին էլ չի նշանակում, որ դա կարող է որևէ կերպ անդրադառնալ նրա ֆիզիկական «գոյատևման» վրա և նսեմացնել այն դերը, որը ԼՂՀ-ն խաղում և խաղալու է Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության ժամանակակից ճարտարապետության մեջ:

Սակայն, վերջին ժամանակներս, Հայաստանում առանձին փորձագետներ հապճեպ առաջ են քաշում գաղափարներ, որոնք ոչ միայն հաշվի չեն առնում դարաքաղյան հիմնախնդրի շուրջ ծավալվող գործընթացների զարգացման ընդհանուր տրա-

մաքանությունը, այլև ունակ են վտանգելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես ինքնաբավ պետություն և տարածաշրջանային անվտանգության գործոն լինելու հանգամանքը: Այդ գաղափարների կենսագործումը չափազանց վտանգավոր է մեր տարածաշրջանում երկարատև խաղաղություն հաստատելու համար: Առաջարկվող գաղափարները իրավական տեսանկյունից թերի են ներկայումս ԼՂՀ-ի իրավասության ներքո գտնվող Դաշտային Ղարաբաղի տարածքների նկատմամբ Ադրբեջանական Հանրապետության հավակնությունների համատեքստում: Ադրբեջանական Հանրապետությունը չի հանդիսանում Ադրբեջանական ԽՍՀ-ի իրավահաջորդը և, հետևաբար, չի կարող հավակնել նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ի ողջ տարածքին: Այս հարցում, հաշվի առնելով ԼՂՀ-ում 1991 թվականի դեկտեմբերի 10-ին կայացած հանրաքվեն, բացի հստակ արտահայտված իրավական հիմնավորումներից, լուրջ փաստարկ է հանդիսանում նաև այդ տարածքների նկատմամբ պետության «արդյունավետ վերահսկողությունը»:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ ձևավորված քաղաքական իրողությունները ստիպում են ավելի հստակ ֆիքսել հայկական երկու պետությունների դիրքերը, ինչպես նաև ստեղծում են Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի վերլուծաբանֆորձագետների կողմից նոր հանձնարարականների մշակման անհրաժեշտություն: Դա հատկապես վերաբերում է դարաբաղյան հիմնախնդրի լուծման տևական երաշխիքներն ապահովող կարևորագույն բաղադրիչների՝ կարգավորման քաղաքական և ռազմաքաղաքական մեխանիզմների բլոկին: Տարածաշրջանում երկարատև խաղաղության հաստատման հեռանկարները կախված կլինեն նրանից, թե որքանով իրատեսական և իրագործելի կլինեն այդ մեխանիզմները Հարավային Կովկասի անվտանգության նոր համակարգի ձևավորման տեսանկյունից:

Այս առումով, ստիպված ենք արձանագրել, որ դարաբաղյան կարգավորման գործընթացում այս կամ այն չափով ներգրավ-

ված միջազգային կազմակերպությունների այս ոլորտում առկա ռեսուրսները բավարար չեն, ինչպես նաև կասկածելի է մեր տարածաշրջանում այդ կազմակերպությունների իրական գործունեության և շահերի «համակցման» հնարավորությունն՝ այն էլ անվտանգության հարցերում: Չնայած միջազգային կազմակերպությունների խաղաղարար գործընթացում ներգրավված լինելու մասին հնչեցվող հայտարարությունների, բոլոր այդ կազմակերպությունները, մինչ օրս, սպառազինությունները և ռազմական գործունեությունը վերահսկելու միայն մեկ գործող մեխանիզմ ունեն, որը կարող է կիրառվել Հարավային Կովկասի պետությունների ռազմականացվածությունը նվազեցնելու համար: Այդ մեխանիզմն է Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին Պայմանագիրը և կից վստահության և անվտանգության ամրապնդման Միջոցները, պարբերական ստուգայցերը և այլ միջոցառումները, որ նախատեսված են կամ իրականացվում են ԵԱՀԿ-ի շրջանակներում: Լուրջ չի լինի ենթադրել, թե Լեռնային Ղարաբաղում խաղաղարար գործընթացի ապահովման համար հնարավոր է սպառազինությունները վերահսկելու և ռազմականացվածությունը նվազեցնելու բացառիկ մեկ այլ մեխանիզմի ստեղծումը: Սակայն այս պայմաններում ստիպված ենք արձանագրել, որ այսօր Եվրոպայում գործող (և նախորդող երեք տասնամյակների ընթացքում այդքան դժվարությամբ ստեղծված) սովորական սպառազինությունների վերահսկողության ռեժիմը լրջագույն ճգնաժամ է ապրում: Անգամ 1999 թվականի Ստամբուլի գազաթափոցովի ժամանակ Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին Պայմանագրի ադապտացումն այդ մեխանիզմի արդյունավետությունը չավելացրեց: Իրականում ադապտացված Պայմանագիրը ոչ միայն չի գործում, այլև չի վավերացվել առաջատար արևմտյան երկրների կողմից, դրան չեն մասնակցում անգամ ՆԱՏՕ-ի որոշ անդամ-պետություններ, իսկ Ռուսաստանի ռազմաքաղաքական դեկավարությունը վերջին տարիներին բազմիցս ամենաբարձր մակարդակով հայտարարել է պայմանագրից իր հնարավոր դուրս գալու

մասին: Ավելին, եթե իրերն իրենց անունով կոչելու լինենք, ապա ո՛չ եվրոպական և ո՛չ էլ համաշխարհային հանրությունը այդպես էլ չկարողացան ստեղծել սպառազինությունների ոչ միայն սովորական, այլև վերահսկման և սահմանափակման իրական մեխանիզմներ: Գզնաժամ են ապրում ոչ միայն Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին Պայմանագիրը, այլ՝ անգամ զանգվածային ոչնչացման զենքի վերահսկման ռեժիմները: Դրա մասին են վկայում Արևելյան և Հարավարևելյան Ասիայում այդ զինատեսակի շարունակվող տարածման փաստերը: Արդյունքում ստեղծվում է մի իրավիճակ, երբ արդեն 15 տարի շարունակ Ադրբեջանը նվազագույնը երեք կատեգորիաներով խախտում է Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին Պայմանագիրը՝ 2-2,5 անգամ գերազանցելով սպառազինությունների և ռազմական տեխնիկայի ազգային թույլատրելի մակարդակը: Մինչդեռ միջազգային հանրությունը լռում է (թեև քաջատեղյակ է գործերի իրական վիճակից), իսկ եվրոպական փորձագիտական հանրությունը չի համարձակվում անգամ ներկայացնել Բաքվի զինանոցում առկա զենքի և ռազմական տեխնիկայի քանակությունն արտացոլող իրական թվերը, վերջնականապես չվարկաբեկելու և դեռ երկար ժամանակ անալիզներանքային Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին Պայմանագրի «կյանքը հնարավորինս երկարած գելու» համար: Այս համատեքստում ակնհայտ է Ադրբեջանի պարագայում ռազմականացվածությունը վերահսկելու համար այդ մեխանիզմի սնանկությունը:

Ռազմաքաղաքական բլոկի մյուս կարևոր ասպեկտը՝ հակամարտության գոտի խաղաղապահ ուժերի հնարավոր ներմուծումն է: Հարկ է նշել, որ վերջին 50 տարիների համաշխարհային պրակտիկան ցույց է տալիս, որ խաղաղապահները՝ որպես ռազմական հակամարտությունների կարգավորման միջոց, արդյունավետ են բացառապես երկու իրավիճակներում. եթե հակամարտության կողմերն արդեն իսկ հասել են ուժերի իրական հավասարակշռության և հակամարտությունը համարում են

վերջնականապես սպառված, կամ եթե կողմերից մեկը հակամարտության արդյունքում հասել է այնպիսի առավելության (ինչպես օրինակ՝ Կոսովոյի արքանացիները 1999 թվականին), որ խաղաղապահներն անիրաժեշտ են միայն հակամարտության գոտում ստեղծված իրավիճակին օրինականություն (լեգիտիմություն) հաղորդելու համար: Հակառակ դեպքում հակամարտության գոտում խաղաղապահների ներկայությունը չի կարող երաշխավորել, որ ռդրեքությունները չեն կրկնվի, ինչպես օրինակ՝ Մրեբրենիցայում, երբ հողանրացի խաղաղապահների գումարտակը չկարողացավ կանխել հազարավոր մարդկանց մահը, կամ կոսովյան Միտրովիցայում վերջին դեպքը 2004 թվականի մարտին, երբ KFOR մեծաթիվ անձնակազմի առկայությունը չկանխեց սերբերի և ալբանացիների զանգվածային բախումները, որոնք հանգեցրին նոր էթնիկ գոտումների: Եվ դա տեղի ունեցավ Եվրոպայի կենտրոնում: Պետք է արձանագրել ևս մեկ, ոչ պակաս կարևոր գործոն՝ հակամարտության գոտում խաղաղապահների երկարատև ներկայության չերաշխավորված լինելը կամ քաղաքական հնարավոր ֆորս-մաժոր հանգամանքները, որոնք օբյեկտիվորեն նրանց ներկայությունը կդարձնեն անհնարին կամ անցանկալի: Օրինակ, 1990 թվականին ԽՍՀՄ-ը ստանձնել էր (ԱՄՆ-ի հետ միասին) իսրայելաարաբական խաղաղարար գործընթացի կարևորագույն երաշխավորի դերը: Բոլորը հիշում են, թե ինչ եղավ ԽՍՀՄ-ի հետ մեկ տարի անց: Կամ Ռուսաստանը, որը հանդես է եկել որպես Արխազիայում և Հարավային Օսիայում խաղաղության երաշխավոր: Եթե որպես հիմք ընդունենք կայունության պահպանման և ռազմական գործողությունների չվերսկսման հրամայականը, ապա Մոսկվան հարաբերականորեն լավ էր կատարում երաշխավորի իր դերը գրեթե 10 տարի՝ մինչև Հարավային Կովկասում նրա դիրքերի թուլացումը չհանգեցրեց հակամարտության այդ գոտիներից ռուսական ստորաբաժանումների դուրս քերման պահանջի առաջ քաշմանը, ինչը մոտ ապագայում կարող է շատ լուրջ

հետևանքներ ունենալ Աբխազիայի և Հարավային Օսիայի համար: Ղարաբաղյան խաղաղարար գործընթացի, նաև ողջ Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության ցանկացած երաշխավորի անսպասելի «հեռանալը» կամ ներուժի նվազումը անխուսափելիորեն կհանգեցնի ամբողջ համակարգի փլուզմանը: Առավել ևս, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը լավ է հիշում 1988-91 թվականներին տարածաշրջանում համանման խաղաղարար խնդիրների լուծման համար խորհրդային բանակի զորամասերի և ներքին զորքերի տեղակայման «արդյունքները»:

Այսպիսի պայմաններում օրինաչափ հարց է ծագում. կա՞ն արդյոք Ղարաբաղյան հակամարտության գոտում և, ընդհանրապես, ամբողջ Հարավային Կովկասում երկարատև խաղաղության հաստատման այլ միջոցներ:

Ղարաբաղյան հակամարտության ցանկացած հնարավոր լուծում անպայման պետք է հեռանկարում նախատեսի դրա երկարաժամկետ և կայուն բնույթը: Առաջին հայացքից թվում է, թե մինչ օրս այդ նպատակի համար քաղաքական գիտությունը և պրակտիկան չեն գտել այլ մեխանիզմներ, բացառությամբ՝ «ուժերի հավասարակշռության» իրավիճակի:

Սակայն պետք է նշել, որ «սառը պատերազմի» շրջանի համար բնորոշ դասական «ուժերի հավասարակշռությունն» այլևս չի հանդիսանում ներկայիս բարդ ռազմական հակամարտությունների կարգավորման համընդհանուր լուծում: Եվ խնդիրը միայն պատմական և գաղափարական համատեքստերի տարբերությունները չեն: Ակնհայտ է, որ հակամարտության գոտիներում երբեք չի հաջողվում հասնել սիմետրիկ «ուժերի հավասարակշռության», ինչը միանգամայն հաստատվում է «ԼՂՀ-Հայաստան-Ադրբեջան» եռանկյան օրինակով: Ի դեպ, հակամարտության շուտափույթ կարգավորման կողմնակիցները արդարացնում են այդ շտապողականությունն Ադրբեջանի կողմից մոտ ապագայում 600 մլն դոլարի համարժեք ռազմական բյու-

ջեի հնարավոր հաստատման կամ կողմերի միջև առկա տնտեսական և ժողովրդագրական նեյտրոսի մշտական անհավասարության մտացածին փաստարկներով: Խիստ կասկածելի համարելով նշված թվերը, պետք է հատակեցնել, որ ինչպես ցույց է տալիս գիտական և պատմական փորձը, խաղաղությունը և անվտանգությունը ոչ միայն և ոչ միշտ են ապահովվում հակամարտության կողմերի ռազմական ներուժի բացառապես թվաբանական և քանակական հարաբերակցությամբ: Օրինակ, արաբախարայելական հակամարտության գոտում ներկայիս հարաբերական կայունությունը ապահովվում է ոչ միայն և ոչ այնքան «ուժերի հավասարակշռությամբ», որքան կողմերի հստակ գիտակցմամբ, որ ագրեսորը անխուսափելիորեն պատժվելու է, ինչը քաղաքագիտական տերմինաբանության մեջ անվանվում է զսպում՝ «սպառնալիքների հավասարակշռության» քաղաքականության միջոցով:

«Սպառնալիքների հավասարակշռության» քաղաքականության միջոցով զսպման գլխավոր իմաստը կայանում է նրանում, որ հակամարտող կողմերի մոտ համոզմունք ստեղծվի, որ այն կորուստները, որոնք կլրի ռազմական գործողություններ նախաձեռնող-պետությունը, ամեն դեպքում և ռազմական հակամարտության ցանկացած ելքի պարսզայում կգերազանցեն պատերազմի սանձազերծման բոլոր օգուտները: Այս տեսանկյունից անհնար է անտեսել ներկայումս ԼՂՀ-ի իրավասության ներքո գտնվող Դաշտային Ղարաբաղի տարածքների նշանակությունը ոչ միայն որպես ԼՂՀ-ի անվտանգության և զարգացման կարևորագույն քաղկացուցիչ, այլ նաև որպես ռազմական գործողությունների չվերսկսման կարևոր նախապայման: Չէ որ, նախևառաջ, այդ տարածքները անվտանգության ապահովման պայման կլինեն ոչ միայն ԼՂՀ-ի ներկայիս բնակչության, այլ նաև փախստական և ժամանակավորապես տեղահանված անձինք դարձած Ադրբեջանական ԽՍՀ-ի նախկին հայ քաղաքացիների համար, որոնք մոտ հեռանկարում կարող են դառնալ

ԼՂՀ-ի քաղաքացիներ և բնակություն հաստատել այդ տարածքներում: Ավելին, Դաշտային Ղարաբաղի տարածքները և Իրանի հետ ընդհանուր սահմանի առկայությունը կարևոր են ոչ միայն անվտանգության տեսանկյունից, այլև որոշիչ գործոն են դարաբաղյան պետականության կենսունակությունն ապահովելու համար՝ հաշվի առնելով նաև այդ տարածքների նշանակությունը ԼՂՀ-ի սոցիալտնտեսական և հաղորդակցության ներուժի զարգացումն ապահովելու համատեքստում: Պատմական հեռանկարում պակաս կարևոր չէ նաև հարավում ԼՂՀ-ի կողմից իր բնական աշխարհագրական սահմանների վերականգնումը Արաքս գետի երկայնքով:

Առկա պայմաններում դարաբաղյան հակամարտության գոտում ռազմաքաղաքական հավասարակշռությունը կարելի է բնութագրել որպես հակառակորդ ուժերի որակական-քանակական հավասարագորություն, որում գուտ տեխնիկական ցուցանիշների հետ մեկտեղ, կարևոր դեր են խաղում նաև աշխարհագրական գործոնը և պաշտպանական գործողությունների համար ԼՂՀ-ի սահմանների ներկայիս հարմար ուրվագիծը: Բնականաբար, Ադրբեջանի թվային գերակշռությունը ռազմական տեխնիկայում և անձնակազմի թվաքանակով մեծապես փոխհատուցվում է Հայաստանի զինված ուժերի և Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության Բանակի որակական գերազանցությամբ: Սակայն, միաժամանակ պետք է հաշվի առնել նաև ինչպես սպառազինությունների տարբեր տեսակների ընդհանուր հարաբերակցությունը, այնպես էլ ռազմական հակամարտության հնարավոր վերսկսման դեպքում դրանց արդյունավետ կիրառման հնարավորությունը. Ադրբեջանի առավելությունը հարձակվողական սպառազինությունների մասով, ի թիվս այլ գործոնների, փոխհատուցվում է ԼՂՀ-ի ներկայիս պաշտպանական դիրքերի օպտիմալությամբ: Այլ կերպ ասած, դարաբաղյան բանակի պաշտպանական դիրքերի ներկայիս գծագրությունը, այդ թվում նաև Դաշտային Ղարաբաղի տարածքների հաշվին, թույլ

է տալիս չեզոքացնել սպառնալիքը, որը ստեղծում են Ադրբեջանի կողմից սպառազինությունների չվերահսկվող և զանգվածային զնումները: Այս պայմաններում ռազմական գործողությունների դեպքում Ադրբեջանի համար աճում է հնարավոր կորուստների ծավալը, ինչը հանդիսանում է նրա զսպման առավել գործոն միջոց:

Այդքանով հանդերձ, հարկավոր է հասկանալ, որ կողմերից մեկը կարող է օգտագործել սպառնալիքների հավասարակշռություն կատեգորիան՝ որպես տարածաշրջանային անվտանգության քաղադրիչ միայն այն դեպքում, եթե հակառակորդ կողմը համոզված լինի, որ այդ երկիրը առանց տատանվելու կդիմի նման գործողությունների: Թվում է, թե հաշվի առնելով Ադրբեջանի շարունակվող ակտիվ ռազմականացումը, տրամաբանորեն անհրաժեշտ է ամրապնդել Հայաստանի և ԼՂՀ-ի ռազմական ուժերի մարտունակությունը, ինչին ներկայումս անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում: Ոչնչով չի կարելի բացատրել, օրինակ, այն փաստը, որ հայկական զինված ուժերի զոյության գրեթե 15 տարիների ընթացքում ռազմական գործողությունների վերսկսման մշտական վտանգի առկայության պայմաններում, Հայաստանում չի անցկացվել ռազմական ոլորտի իրական և զանգվածային բարեփոխում: Մինչդեռ ռազմական բարեփոխումները և՛ Հայաստանում, և՛ ԼՂՀ-ում զինված ուժերի կառուցվածքի ու զինծառայողների անձնակազմի որակական փոփոխությունը թույլ կտան շատ հարցերում փոխհատուցել Ադրբեջանի ռազմական և ռազմատնտեսական ներուժի քանակական աճը:

Հաջորդ քաղադրիչը պետք է լինի ռազմաքաղաքական դեկավարության կողմից այն իրականության գիտակցումը, որ որոշ պայմաններում՝ ելնելով անվտանգության երկարաժամկետ շահերից, հնարավոր է անգամ կանխարգելիչ միջոցառումներ նախաձեռնելով, չեզոքացնել Ադրբեջանի շարունակական ռազմականացման վտանգը: Ռազմական ոլորտի բազմաթիվ

փորձագետներ այսօր արդեն կարծիքներ են արտահայտում այն մասին, որ Ադրբեջանի արագընթաց ռազմականացման առկա պայմաններում, հայկական կողմը նույնպես կարող է ձեռնամուխ լինել համապատասխան կանխարգելիչ ակտիվ միջոցառումների, քանի դեռ գոյություն ունի ուժերի քանակական հավասարություն: Ակնհայտորեն, այսօր այդպիսի կանխարգելիչ միջոցառումները արդարացված կլինեն հայկական կողմից անհամեմատ ավելի պակաս կորուստներով և ռեսուրսների ծախսմամբ, քան եթե դա տեղի ունենա այն ժամանակ, երբ Ադրբեջանը կհասնի իր ռազմականացման գագաթնակետին:

Բացի այդ, Հայաստանում դարաբաղյան հիմնախնդրում դիրքորոշումների ձևավորման և որոշումների կայացման համար պատասխանատու անձինք չպետք է շարունակեն արհամարհել ԼՂՀ-ի պետական կառույցների և քաղաքացիական հասարակության դերը բանակցային գործընթացում:

Անկասկած, դարաբաղյան հասարակությունը կփորձի ավելի ակտիվ մասնակցել իր հայրենիքի ճակատագիրը որոշելու գործընթացին և այդ պատճառով Երևանից եկող բոլոր նախագծերը և նախաձեռնությունները ինչպես բանակցային գործընթացի վերաբերյալ, այնպես էլ անվտանգության ոլորտում, պետք է հաշվի առնեն ԼՂՀ-ի ժողովրդի կարծիքը: Միայն այդ դեպքում մենք կարող ենք խոսել Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության համակարգում ԼՂՀ-ի աճող դերակատարության մասին:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԵԼՈՒՅԹՆԵՐ

Շավարշ Լոչարյան

Պարոն Մինասյան, շնորհակալություն ելույթի համար: Դուք նշեցիք, որ կասկածի տակ եք առնում ժողովրդագրական տվյալները: Ես, անշուշտ, խուճապ չեմ ուզում առաջացնել, բայց հիշեցնեմ թվերը: Իհարկե, այն, ինչ վերաբերում է Ադրբե-

ջանում 7,9 միլիոն թվին՝ ակնհայտորեն չի համապատասխանում իրականությանը ճիշտ այնպես, ինչպես ժամանակին արձանագրված 3,8 միլիոնը՝ Հայաստանում, որը հանրաքվեի արդյունքում դարձավ 3,6 միլիոն: Դա ակնհայտ է, բայց ես ուզում եմ մի քանի թիվ հիշեցնել. Հայաստանում ծնելիության մասով մեկ կնոջը բաժին է ընկնում 1,2 երեխա: Վերջին տարիներին այդ թիվն աճելու միտում ունի մինչև՝ 1,35-ի: Եվրոպական միջին չափանիշը 1,5 է, իսկ Ադրբեջանինը՝ 1,6-1,7: Հիշեցնեմ, որ վերաբնակչության համար այդ թիվը պետք է լինի 2,1: Հաջորդ թիվը, դա 18-50 տարեկան կանանց տոկոսն է, որոնք ամուսնացած են կամ եղել են ամուսնացած: Հայաստանում այդ թիվը սարսափելի փոքր է՝ 50%: Եվրոպայում այդ թիվը 66% է, իսկ Ադրբեջանում՝ 70%-ից մի քիչ ավելի: Մա երկրորդ ցուցանիշն էր՝ իր հավաքական արտահայտությամբ: Եթե 70-ական թվականներին ծնելիությունը մեզ մոտ կազմում էր տարեկան 90 հազար երեխա, իսկ 90-ականներին այդ թիվը դառել է 60 հազար, ապա այսօր այն կազմում է 30 հազար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծնվածների կեսն իզական սեռի ներկայացուցիչներ են, ապա այս պայմաններում՝ ևս երկու գորակոչ և մենք լավագույն դեպքում կունենանք 25 հազարանոց բանակ: Նորից եմ կրկնում, խուճապ առաջացնելու համար չեմ ասում այս թվերը, բայց այս թվերը արձանագրված են մեր պետական վիճակագրական ծառայությունների և միջազգային կազմակերպությունների կողմից: Դրա համար ինձ մոտ մի հարց է առաջանում, երբ Դուք ասացիք, թե կասկածի տակ եք դնում ադրբեջանական կողմի թվերը, Դուք կոնկրետ ի՞նչն ի նկատի ունեիք:

Մերզեյ Մինասյան

Երբ խոսում էի կասկածի մասին, ես առաջին հերթին ի նկատի ունեի նրա ռազմական բյուջեն, բայց միևնույն ժամանակ, ինչ վերաբերում է ժողովրդագրական վիճակին և դրա համեմատությանը, ապա իրականում միանշանակ է, որ Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի ռազմական հակադրու-

թյան ժամանակ մեզ երբեք չի հաջողվի սիմետրիկ իրավիճակի հասնել: Միաժամանակ ասեմ, որ 1992-1994 թվականներին և՛ դարաբաղյան պատերազմի առաջին փուլը, և՛ ռազմական գործողությունները ցույց տվեցին, որ բացառապես քանակական առավելության հաշվին հնարավոր չէ հասնել հաղթանակի: Այժմ, ինչ վերաբերում է Հայաստանին սպառնացող ժողովրդագրական «սիսին» և դրա հետ կապված զինակոչի խնդիրներին, ինչի մասին, ի միջի այլոց, բազմիցս հնչեցվել է ո՛չ միայն և ո՛չ այնքան Ձեր՝ այլ այն մարդկանց կողմից, որոնք սկզբունքորեն պատասխանատու են այս իրավիճակի համար: Այսպիսի իրավիճակի համակշռման այլ մեթոդներ գոյություն ունեն, օրինակ, բացառապես պրոֆեսիոնալ ռազմիկներով համալրված զորամասերի ստեղծում, կամ զինված ուժերի համալրում որոշակի պաշտոններում պայմանագրային ծառայողների, սպայական կրտսեր անձնակազմի հաշվին և այլն: Ամեն դեպքում, ռազմական ոլորտի փորձագետները հասկանում են, որ մոտ ապագայում մեզ չի հաջողվի անցնել պրոֆեսիոնալ բանակի, բայց միևնույն ժամանակ, ասենք, օրինակ, նույն որոշակի պաշտոնների համալրումը բանակում մասնագետների հաշվին, կարող է մեծապես թույլ տալ փոխհատուցելու այդ բացը: Ի միջի այլոց, հենց սա՛, նախևառաջ, պետք է հասկանալ այն անհրաժեշտ ռազմական բարեփոխումների և կառուցվածքային փոփոխությունների շրջանակներում, ինչի մասին ես խոսում էի: Իսկ ինչ վերաբերում է ժողովրդագրական գործոններին, ապա բացի բնական վերարտադրությունից պետք է նաև հաշվի առնել, որ Ադրբեջանի դեպքում նույնպես փոքր չէ բնական արտագաղթը, ինչը նույնպես կարևոր գործոն է հանդիսանում:

Շավարշ Բոչարյան

Դուք խոսում եք իսրայելակա՞ն, թե՞ շվեյցարական մոդելի մասին:

Մերգեյ Մինասյան

Այո, խոսքը գնում է համալրման, այսպես ասենք, միլիցիական համակարգի մասին: Ես վստահ եմ, այն հնարավոր չէ ամբողջությամբ կիրառել Հայաստանում, նույնիսկ բացառապես միայն Լեռնային Դարաբաղի դեպքում, սակայն, միևնույն ժամանակ դրա որոշակի տարրեր կարող են կիրառվել: Մրանում, այնուհանդերձ, պետք է ասել, որ կա որոշակի վտանգ, քանի որ ինչպես ցույց է տվել, այսպես կոչված, ռազմական բարեփոխումների վերջին փորձը Վրաստանում, այն է՝ պահեստայինների ջոկատների ստեղծում և այլն, դա իրականում, մեծապես, ուղղակի միջոցների վատնում է: Մեր դեպքում, զինված ուժերի բացառապես միլիցիական համալրման տարբերակը չի կարող սպեղանի լինել:

Արման Մելիքյան

Պարոն Մինասյան, ես մի այսպիսի հարց ունեմ Ձեզ, քանի որ կարծում եմ, որ ոչ բոլորն են այստեղ ռազմական փորձագետներ, Դուք չէի՞ք կարող բացել փակագծերը և ասել, թե ի՞նչ է նշանակում կանխարգելիչ գործողություններ:

Մերգեյ Մինասյան

Սկզբունքորեն, երբ ռազմական փորձագետները խոսում են ԼՂՀ-ի կողմից կանխարգելիչ գործողությունների հնարավորության մասին, ապա ի նկատի ունեն գործողությունների ողջ բլոկը՝ ընդհուպ մինչև Ադրբեջանի զինված ուժերի նկատմամբ ակտիվ հարվածները, այսինքն՝ գնահատականներում խոսքը գնում է բաց ռազմական գործողությունների մասին:

Արման Մելիքյան

Այսինքն՝ եթե ես ճիշտ Ձեզ հասկացա, նշանակում է, որ դիտարկելով Ադրբեջանի կողմից սպառազինությունների գնումների նման տեմպերը, գուցե ինչ-որ պահից նպատակահարմար լինի կանխարգելիչ հարվածներով կասեցվե՞ն դրանք:

Մերզեյ Մինասյան

Որքան էլ բարդ դա հնչի, բայց Հայաստանում շատ են սիրում օրինակ բերել խորայելյան փորձը. 1967 թվականին 6-օրյա պատերազմը կանխարգելիչ գործողությունների դասական օրինակ է:

Արկաղի Կարապետյան

Սկզբունքորեն մենք այդ կանխարգելիչ գործողությունների փորձը ունենք:

Իգոր Մուրադյան

Կարելի՞ է ես պատասխանեմ պարոն Մելիքյանին: Շատ կարճ: Չորս տարի առաջ էր, եթե չեմ սխալվում, Մեծ Բրիտանիայի ռազմական ակադեմիան խաղ էր կազմակերպել, որը կապված էր դարաբաղյան հակամարտության հետ: Ասեմ ձեզ, որ արդյունքներն Ադրբեջանի համար աղետալի էին: Խաղի մասնակիցները միանգամայն օբյեկտիվ մարդիկ էին և նույնիսկ ընդհանրապես կապված չէին քաղաքական վերլուծության խնդիրների հետ: Դուք գիտեք, որ քաղաքական փորձագետները այսպես կամ այնպես որոշակի նախասիրություններ են ունենում, իսկ սրանք բացարձակ մեծ հմտություններ ունեցող մասնագետներ էին: Ես հիմա կարող եմ մի քանի պարամետրեր ներկայացնել այստեղ: Եթե ռազմական գործողություններն անցկացվում են բարձր ինտենսիվությամբ վեց շաբաթվա ընթացքում, ապա ադրբեջանական զինված ուժերը կորցնում են հարձակման և այլ գործողությունների հնարավորությունը: Ասեմ նաև, որ բոլորովին վերջերս նմանատիպ մի խաղ էր կազմակերպել Մեծ Բրիտանիայի տեղեկատվության պաշտպանության կենտրոնը, որին մասնակցում էին ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական փորձագետները՝ հանձինս գեներալների և բարձրաստիճան սպաների: Այստեղ նշվեց, որ շատ շուտով տեղի կունենա ռազմական գործողությունների լծացում, այսինքն՝ ռազմական գործողություններ սկսելուց հետո, եթե դրանք իրականացվեն զորաշարժի տեսքով, ապա շատ շուտով այդ լծացու-

մը տեղի կունենա և կողմերը, արդյունքում, ոչ մի բեկումնային հաջողության հասնել չեն կարող:

Արկաղի Կարապետյան

Քանի որ խոսում ենք քվերի մասին, ապա որպես լրացում՝ ես նույնպես մի քանի թիվ բերեմ: Լայնամասշտաբ ռազմական գործողությունների սկզբում Ղարաբաղում ուժերի հարաբերակցությունն հետևյալն էր (ես դա ասում եմ որպես բանակի իրամասնատար՝ այն ժամանակ դրանք իմ ուժերն էին). 610 ակոսավոր փողեր՝ մեր բանակում, մեկ ԵՐԺՄ, երկու ԵՄԴ-1, որոնցից մեկը՝ նույնիսկ չէր աշխատում: Ահա այսքանը: Մեր դեմ առաջին անգամ զնացին մոտ 10-ը T-72 տանկեր, 15-ը՝ T-55, զրահատեխնիկայի 40 միավոր, 800 սրվոնացի վարձկաններ և այլն: Եթե նայենք, թե խորհրդային բանակից ում որքան զինամթերք էին թողել, ապա կտեսնենք, որ Հայաստանում մնացել էր 4000 վազոն զինամթերք, որի մի մասը տարել էին, իսկ մյուսը՝ ոչնչացրել, իսկ Ադրբեջանում թողել էին 12 500 վազոն զինամթերք, որն ամբողջությամբ մնացել էր ադրբեջանցիներին: Ղարաբաղին ոչինչ չէր մնացել: Ահա այսքանը, հիմա հաշվեք:

Իգոր Մուրադյան

Ես նույնպես կարող եմ ավելացնել: 1998 թվականի ապրիլ ամսին Ալիևը եղավ Թուրքիայում՝ իբրև թե բուժման նպատակով, որտեղ Դեմիրելի հետ տեղի ունեցան հետաքրքիր, սկզբունքային ոչ պաշտոնական բանակցություններ: Ծերուկ Դեմիրելն ասաց, որ դուք պետք է լավ հասկանաք, որ ընդհանուր առմամբ բացառվում է պատերազմում մեր մասնակցության հնարավորությունը, առավել ևս, որ մենք արեցինք ամեն ինչ, որպեսզի թույլ չտանք ռազմական գործողությունների սկիզբը, այնպես Թուրքիան խառնաշփոթ վիճակի մեջ կընկնի: Հետաքրքիր է, որ այս տեղեկատվությունը ժամանակին շատ բացառիկ բնույթ ուներ, բայց ես այն անմիջապես գետեղեցի ինտերնետում: Այդպիսի բաների վրա, նրանք շատ շուտ խայծը կուլ են տալիս: Իսկ ընդհանրապես ասած, ռեակցիան շատ աննշան էր:

Մարասար Մարյան

Պաթոս չհամարեք, բայց Հայաստանի ողջ պատմությունը կազմված է այսպիսի սրահերից, երբ ահա 7-ը՝ կոչվում են 700-ի դեմ: Հիշեք Գևորգ Մարգալետունուն, այն ժամանակ էլ էր այդպես, իսկ հիմա Ղարաբաղի դասական օրինակը գալիս է սա հաստատելու: Ես ուղղակի ուզում էի ձեր ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ պարոն Քոչարյանը նշեց շատ լուրջ մի բան, որի կապակցությամբ ցանկանում եմ հարցնել նրան, թե ինչպե՞ս կարելի է կանխարգելել այն ժողովրդագրական անկումը, որը մեզ սպասում է: Իմ կողմից էլ ցանկանում եմ առաջարկություն կատարել այն կապակցությամբ, թե ինչպես կարելի է ստեղծել պայմաններ հայերի՝ այդ թվում նաև փախստականների վերադարձի համար:

Շավարշ Քոչարյան

Գիտեք ինչ կա, շատ լուրջ հաշվարկներ են կատարվել և ներգաղթով ծերացման խնդիրը չես լուծի: Այո, չի լուծվում: Պետք է ծնելիությունը բարձրացնել, որովհետև եթե ծնելիության մասն միտում կա, ապա ներգաղթի թվերը ահավոր մեծ պետք է լինեն և դա առանձին խոսակցության նյութ է: Իհարկե, ներգաղթը շատ կարևոր է, բայց դա չի լուծում հիմնական խնդիրը: Ասեմ, որն է այդ խնդիրը. 50 տարի հետո Եվրոպայում միջին տարիքը լինելու է 50 տարեկանը, Հայաստանինը՝ 53: Եթե այս միտումը շարունակվի մեզ մոտ, ապա մենք ավելի շուտ ենք ծերանալու, քան՝ ձեր Եվրոպան: Ներգաղթն այս խնդիրը չի լուծում, այդ պատճառով խնդրում եմ այդ ուղղությամբ չխորանաք, իսկ եթե դա Չեզ հետաքրքրում է, ապա մենք կարող ենք դրա մասին առանձին խոսել:

Իզոր Մուրադյան

Դրանք ձախամետ մտավորականների փաստարկներն են: Իսկ իրականում միակողմանի զարգացում չի լինում: Էթնոսն այսօր կարող է լինել մեռնող, ռեիկտային, իսկ վաղը՝ դառնալ բռնկվող:

Շավարշ Քոչարյան

Ոչ, այստեղ խոսքը գնում է սուկ խիստ հարաբերական թեմաների մասին: Այսօր ամբողջ աշխարհում քննարկվում է ծնելիության խնդիրը, իսկ Հայաստանում այդ կապակցությամբ տեղի է ունենում մի գործընթաց, որը առաջ է քնկել թե՛ Ադրբեջանից, թե՛ Թուրքիայից: Խոսքն այստեղ դրանց հարաբերակցության մասին է:

Եվ ես մեկ հարց էի ուզում տալ հենց պարոն Մուրադյանին կամ գուցե պարոն Մինասյանին, չնայած երևի այն կուղղեմ պարոն Մուրադյանին, որովհետև նա հիշատակեց այն մոդելավորած խաղերի և դրանց արդյունքների մասին, որոնք անցկացվել են Մեծ Բրիտանիայում. «Այդ խաղը հաշվի առնո՞ւմ էր արդյոք հակամարտության արդյունքում ձեռավորված սահմանները և, եթե էլ մենք այն բանից, որ մենք վերադարձնում ենք ազատագրված տարածքները, ապա, այդ դեպքում, ինչպիսի՞ն կլինեք այդ խաղերի ելքը: Ընդհանրապես, այդ ամենը հաշվի առնվե՞լ է»:

Իզոր Մուրադյան

Գիտեք, ես այդ տեղեկատվությունը ստացել եմ Լոնդոնի Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի դոսյեից: Բնական է, որ ինստիտուտը չէր կարող այդ դետալներն իր մոտ ունենալ: Ես չեմ կարող պատասխանել այդ հարցին:

Մերգեյ Մինասյան

Եթե կարելի է, ես ավելացնեմ: Արևմուտքի ինստիտուտներում տեղի ունեցող բոլոր մոդելավորումները իրականացվում են՝ ելնելով ստեղծված իրական վիճակից, այսինքն՝ ռազմական գործողությունների բոլոր մոդելավորումները, ներկայիս կոնֆիգուրացիան քիչ թե շատ հարմար է ինչպես պաշտպանական, այնպես էլ հարձակողական գործողությունների համար: Ներկա կոնֆիգուրացիայի փոփոխության դեպքում մեծանում է հավանականությունը, որ այդպես Լեռնային Ղարաբաղն ինքը կայող է նախաձեռնել ռազմական գործողություններ, քանի որ իրավի-

ճակի ցանկացած սրման դեպքում, թեկուզ հաշվի առնելով ներկա կոնֆիգուրացիան, նրա համար անհրաժեշտ կլինի գոնե գրավել հնարավոր մեկնարկային դիրքեր:

Աշոտ Եղիազարյան

Բոլոր այս քննարկումների մեջ մենք աչքից բաց ենք թողնում հետևյալ հանգամանքը, որ հակամարտության ձևավորված գիծը, հակատանկային խրամատները և այլն, այս բոլորը չափվում են միլիարդավոր դոլարներով: Ոչ ոք այդ մասին չասաց, ես հույս ունեի, որ Սերգեյը կխոսի այդ բաղկացուցչի մասին: Այդ գծի ցանկացած փոփոխություն, գաղափարախոսական, հոգևոր, քաղաքական, բարոյական աղետից բացի, ինչի մասին ես արդեն ասել եմ, կհանգեցնի վիթխարի ծախսերի: Իսկ ո՞վ է դրա համար վճարելու: Մի անգամ կարողացել ենք այսպիսի պաշտպանական սահմաններ ստեղծել, որն արժե միլիարդավոր դոլարներ...

Արմեն Աղայան

Պարոն Մուրադյան, իմ հարցը վերաբերում է խաղաղապահների խնդրին, որի մասին այստեղ խոսվեց: Փաստորեն հայտնի է, որ երբ հակամարտություն չկա, ապա կարծես թե խաղաղապահների ներգարվումն անիմաստ է դառնում: Այս հարցը վերջին մեկ տարվա ընթացքում է մտել ակտիվ շրջանառության մեջ: Խոսքը խաղաղապահների գալու համատեքստում ակտիվ փուլի մասին է: Ես ինչ-որ չեմ հիշում, որ դրանից առաջ այդպիսի մտքեր լինեին: Նկատե՞լ եք, թե այդ հարցն, ընդհանրապես, ի՞նչ համատեքստում է հայտնվել բանակցային գործընթացում: Այդ ո՞ր համատեքստում հանկարծ ծնվեց այդ խաղաղապահների խնդիրը, ո՞ւմ կողմից, ո՞ւմ նախաձեռնությամբ: Այսպիսի դիտարկում կա՞:

Իզոր Մուրադյան

Առաջին անգամ դա եղավ դեռևս 1996-1997 թվականներին, երբ շատ մանրամասն ծրագիր կար, որի մասին հավանաբար

զիտեր մաև ԼՂՀ ղեկավարությունը, համաձայն որի սահմանված էին խաղաղապահների տեղակայման կետերը: Ըստ էության, կազմված էր մի կոնֆիգուրացիա, որը նշանակում էր Ղարաբաղի անջատում Հայաստանից: Այսինքն՝ օրինակ, Լաչինը դիտարկվում էր որպես մեզ համար հետաքրքրություն չներկայացնող գոտի և մենք, այստեղ, արդեն ընկնում էինք այդ խաղաղապահների վերահսկողության տակ: Խոսքը գնում էր ոչ թե մարդկանց զինված խմբերի, այլ ավելի շուտ ռազմական տեխնիկայով զինված հսկիչների մասին: Դա առաջին փուլն էր: 2001 թվականին խաղաղապահ նախաձեռնություն ցուցաբերեցին մի քանի փոքր պետություններ՝ Նորվեգիան, Հունգարիան, Իտալիան, կարծես թե Գերմանիան նույնպես մասնակցում էր դրան: Գերմանիան պետք է ֆինանսավորեր այդ ձեռնարկը: Լավ չեմ հիշում, խոսքը գնում էր 9-ը կամ 11 միլիոն մարկի թե՞ դոլարի մասին: Սակայն այն ժամանակ արդեն շատ բաներ մանրամասն ընկած էր: Խոսքը գնում էր արդեն ոչ թե դիտորդների, այլ ռազմական համակազմի առկայության մասին, որը նախատեսում էր 2100 մարդ, 16 թե 24 դիտարկման կամ հեռման կետեր, ինչպես կուզեք դա անվանեք: Այս պլանը նախատեսում էր մաև մեր զորքերի նահանջ Արաքսից՝ 5-10 կմ-ով: Սակայն այս երկու փուլերը սահուն կերպով ավարտվեցին: Կարծում եմ, որ հիմա ավելի արդիական բան կասեմ, եթե պնդեմ, որ ո՛չ արևմտյան հանրությունը և ո՛չ ամերիկացիները դրանում շահագրգռված չեն:

Արմեն Աղայան

Հենց այստեղ է, որ ծագում է այս հարցը, թե ինչո՞ւ մեկ տարի առաջ այդ հարցը սկսեց մեր միջավայրում ակտիվորեն քննարկվել:

Իզոր Մուրադյան

Մե՞ր միջավայրում... Սատանան զիտե, թե ինչո՞ւ: Ինչ-որ բան պետք էր քննարկել՝ քննարկել են: Երևի այստեղ է տրամաբանությունը: Իհարկե, կան որոշ տարբերակներ, բայց այդ մասին ես հիմա չեմ խոսի:

Արկաղի Կարապետյան

Մա այն մտածելակերպի խնդիրն է, որ ինչ-որ մեկը մեզ կպաշտպանի...

Իգոր Մուրադյան

Հանգիստ թողե՛ք մտածելակերպը:

Արամ Գ. Մարգարյան

Մեկ տարի առաջ չէր, մի քանի տարի առաջ սկսեցին դրա մասին խոսել, որովհետև համապատասխան առաջադիպելներ եղան միջնորդների կողմից: Սկզբում, երբ Ռուսաստանը դեռ հնարավորություններ ուներ Կովկասում ամուր լինելու, խոսքը գնում էր Ռուսաստանի ուժերի մասին: Հետո, երբ կամաց-կամաց այդ դերը թուլացավ, սկսեցին խոսել ՆԱՏՕ-ի զորքերի մասին: Այնպես որ, խաղաղարար ուժերի անվան տակ լինելու են ՆԱՏՕ-ի զորքերը, դա միանշանակ է և, եթե մենք համաձայնվենք որևէ խաղաղարար ուժերի մուտքի հետ, ապա մենք վերածվում ենք տարածաշրջանի Կոսովոյի:

Իգոր Մուրադյան

Մենք ժամանակին շատ մի կարևոր բան չարեցինք, այսինքն՝ Հայաստանի պառլամենտը չարեց... Մենք մոռացել ենք, որ մենք խաղաղարարների ներկայության տխուր փորձ ունենք. պատժիչ երկու էքսպեդիցիաներ, մոտ հազար զոհ քաղաքացիական բնակչությունից, 40 ոչնչացված գյուղեր: Եվ այդ ամենը իրականացվեց սկզբում՝ խորհրդային զինված ուժերի, չեմ ուզում ասել բանակի, իսկ 1992 թվականին, երբ ԽՍՀՄ-ը չկար, ռուսական բանակի կողմից: Եթե այդ հարցը մենք ժամանակին բարձրացնեինք և սկզբունքորեն անհնարին դարձնեինք որևէ այլ երրորդ զինված ուժի մասնակցությունը հակամարտության մեջ, ապա այսօր փաստարկ կունենայինք: Իսկ մենք ոչինչ չունենք: Պառլամենտի ո՛չ ազատական, ո՛չ պահպանողական և ո՛չ էլ կոռումպացված ոչ մի կազմ չբարձրացրեց այս հարցը: Դու՛ման այդ իրադարձություններին նույնպես պետք է գնահատա-

կան տար: Շատ մեծ դժվարությամբ, այդ իրադարձությունների 10-ամյակի կապակցությամբ հաջողվեց մի քանի նյութ հրատարակել *Голос Армении*-ում: Վերջ, դրանով ամեն ինչ ավարտվեց: Աստվածաշնչի պես այդ ռուս-հայկական պայմանագրի վրա ուղղակի վախենում են շնչել: Լավ, հիմա փորձեմ կարճ ներկայացնել խնդիրը: Դուք գիտեք, որ բացի ՆԱՏՕ-ից, գոյություն ունի նաև Արևմտաեվրոպական միությունը, այսինքն՝ Եվրոպայի գիված ուժերը կամ Եվրոպայի արագ արձագանքման կորպուսը, որը Մեն Մալոյի, Հելսինկյան, Մասստրիխտի և այլ համաձայնագրերի արդյունք է: Այսինքն՝ այդ ուժերը գոյություն ունեն, դրանք ինքնուրույն չեն, այսինքն՝ դրանք եվրոպական պետությունների զինված ուժերի մասն են կազմում: Դրա մասին դեռևս քչերը գիտեն: Նույնիսկ ռազմական և ռազմաքաղաքական ոլորտի մասնագետներից շատերը չգիտեն, որ նման արձանագրություն գոյություն ունի: Այդ արձանագրությամբ օրինականացվել է այդ կորպուսի հնարավոր մասնակցության հանգամանքը շատ ու շատ վայրերում, օրինակ ասենք՝ Կոլումբիայում, Պանամայում կամ Արևմտյան Աֆրիկայում, Ինդոնեզիայում: Բայց չգիտես ինչու, այնտեղ Կովկասը չկար: Եվ, հանկարծ, 2003 թվականին միտք ծնվեց այդ ուժերը Աբխազիայում կիրառելու կապակցությամբ: Այդ հարցը բավականին հանգամանալից բննարկվել է նաև ռուսների հետ: Ես, ահա, մի այսպիսի տարբերակ ունեմ, որ Ղարաբաղ խաղաղարարներ ուղարկելու այդ թե՛ման ինչ-որ կերպ կապված է սրա հետ: Ես ծանոթ եմ ԱՄՆ-ի ռազմական նախագծողներից մեկի մի զեկույցի հետ, որտեղ շատ հետաքրքիր հարց է դրվում, թե մինչև երբ է ԱՄՆ-ն պատրաստվում ռազմական ներկայություն ունենալ Կովկասում և Կենտրոնական Ասիայում: Այսինքն՝ նշանակում է, որ վաղ թե ուշ մենք այնտեղից պետք է գնանք, և որ եթե ՆԱՏՕ-ն հայտնվի այնտեղ, ապա՝ ոչ շատ երկար ժամանակով, բայց մենք այնտեղ խնդիրներ ունենք, իսկ ո՞վ է դրանք լուծելու: Եվ արվում է հետևություն՝ Եվրոպական կորպուսը: Հասկանում ե՞ք:

Շափարշ Քոչարյան

Այս խոսակցությունների հետ կապված ցանկանում եմ ուղղակի մի տարբերակ էլ ես առաջարկել: Սովորաբար, երբ խոսքը գնում է այդ խաղաղապահ ուժերի մասին, մենք պետք է մեր մտքում պահենք դրանց կիրառման երկու հնարավոր սցենար: Մեկը պայմանականորեն կոչեմ *Դեյտոն*, այսինքն՝ այն սցենարը, որը ուղղված է կողմերին կամ կողմերից մեկին ուժային պարտադրանքի ենթարկելու, մյուսն այն է, ինչի մասին մենք խոսում էինք այսօր առավոտյան, որ եթե կողմերը գալիս են համաձայնության, ապա այդ համաձայնության ընթացքն ապահովելու համար պետք է բացառվի նրանց միջև եղած կոնտակտը: Այդ պարագայում, խաղաղարարներն, իրոք, հանդես են գալիս որպես բաժանարար: Իմ գնահատմամբ, այս խոսակցությունները պայմանավորված են այն մղումներով, որ Ադրբեյջանին թվում է, որ ինքը միջազգային առումով հասել է որոշակի առավելության, իսկ դրա միտումները կային, և որ արդեն հայկական կողմին կարող է պարտադրվի այսպես կոչված *Դեյտոնի* տարբերակը: Սակայն, փառք Աստծո, դա չկայացավ:

Արամ Գ. Մարգարյան

Ներողություն, եթե դրա մասին է արդեն խոսքը գնում, ապա ես ուղղակի ուզում եմ հիշեցնել, որ երկու հիմնական փաստաթղթերում խաղաղարար ուժերի մասին հստակ գրված է: Խոսքը գնում է ընդհանուր պետության, այդ փաստաթղթի և փուլային տարբերակի մասին: Ինչի՞ վրա ենք զարմանում: Նրանք վաղուց էին դրել այդ գաղափարը և փորձում էին իրականացնել այն: Ինչ վերաբերում է Իզոբ Մուրադյանի ասածին, որ Դուման և մյուսները պետք է գնահատական տան 1991-1992 թվականի «Кольцо» օպերացիաներին, ապա, առաջին հերթին դրա գնահատականը մենք պետք է տանք:

Իզոբ Մուրադյան

Այստեղ պատգամավորը Դուք եք:

Արամ Գ. Մարգարյան

Ես հենց դրա մասին էի ուզում ասել: 1991 թվականին, երբ դա արդեն տեղի էր ունեցել և Լևոն Տեր-Պետրոսյանը պատասխանատու էր այդ ամենի համար, ես կարող եմ դա վստահաբար ասել, որովհետև...

Իզոբ Մուրադյան

Բարկեն Արարքցյանը...

Արամ Գ. Մարգարյան

...որովհետև մասնակցել եմ այդ գործողություններին Մոսկվայում, երբ կանխարգելիչ գործողություններ էին ձեռնարկվում 1991 թվականին Շահումյանը չհանձնելու ուղղությամբ, հենց այդ ժամանակ էլ Ազգային ժողովը պետք է դրան գնահատական տար: Բայց, ցավոք սրտի, նրանք չէին կարող դա անել, որովհետև իրենց ղեկավարն էր հավանություն տվել «Кольцо» օպերացիաներն իրականացնելու համար: Ես դա հայտարարում եմ պատասխանատվությամբ:

Իզոբ Մուրադյան

Դուք արդեն վերջապես պատգամավոր եք դարձել, ուրեմն վաղը բարձրացրեք այս հարցը:

Մուրեն Չոլյան

Իրականում Ռուսաստանի խորհրդարանն է 1991 թվականի հունիսին իր համազումարի մակարդակով ընդունել որոշում «Кольцо»-ի մասին և տվել հանձնարարականներ Մարդու իրավունքների կոմիտեին լսումներ կազմակերպելու մասին: Եվ արդեն զեկույցով, այսինքն՝ երկու մակարդակներով և համազումարով այն ընդունվել է Ռուսաստանի կողմից: Ըիշտ է, շատ ընդհանուր ձևով: Այնտեղ խորհրդային բանակի գործողությունները դատապարտող շատ բաներ կային: Ժամանակին խորհրդարանի կողմից ժամանակավոր հանձնաժողով ստեղծվեց Գետաշենի, Մարտունաշենի հարցերով և ես այդ հանձնաժողովի նախագահն էի: Այդ կապակցությամբ զեկույց էր պատրաստվել, որը

սակայն չի լավել: Ինչո՞ւ: Որովհետև Խորհրդային Միությունն արդեն չկար և այդ պատրվակով հանձնաժողովի մանդատն իր ուժը կորցրած համարվեց և նյութերը մնացին առանց քննարկման: Բայց ուզում եմ ասել, որ այնուհանդերձ, այդ նյութերը որոշ չափով տեղ են գտել Ռուսաստանի Մարդու իրավունքների հանձնաժողովի և Հայաստանի դատախազության պատրաստած տեղեկանքներում: Այսինքն՝ անհետևանք չի մնացել և ցանկացած պահի մենք կարող ենք ամեն ինչ վերակենդանացնել: Բոլոր դեպքերում, դա եղել է, դա եղել է Խորհրդային Միության բանակը, եղել է նաև հանձնարարականը...

Իզոր Մուրադյան

Ամեն ինչ այնքան գաղտնի արվեց, որ ոչ ոք ոչինչ չնկատեց:

Մուրեն Չոլյան

Ինչո՞ւ: Կներեք, բայց շատ նյութեր հրապարակվեցին այն ժամանակ և այդ փաստաթղթերը հիմք ծառայեցին շատ իրավապաշտպանների համար: Այդ նյութերի տասնյակ հրապարակումներ են եղել և դա, այսպես ասած, որևէ գաղտնիք չէ: Այլ բան է, թե մենք ինչ գնահատական ենք տալիս դրան: Վերջ ի վերջո, Խորհրդային Միության գործողությունները չեն կարող հիմք ծառայել, որպեսզի մենք արգելափակենք ցանկացած խաղաղասեր ուժերի մուտքը Ղարաբաղ: Եթե խոսքը խաղաղասեր գործերի մասին է, ապա ավելի լուրջ հիմքեր պետք է լինեն:

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԽՆԴԻԻ
ԱՇԽԱՐՀԱՔԱՐԱՔԱԿԱՆ ՏԵՄԱՆԿՅՈՒՄԸ

Իզոր Մուրադյան

Քաղաքագետ

Երևի իմաստ ունի այսօր խոսել ղարաբաղյան խնդրի արտաքին գործոնների մասին: Կուզենայի շատ կարճ, այսպես ասած, տեսականացնել այն: Բանն այն է, որ վերջին ամիսներին, վերջին շաբաթներում աշխարհում իրապես շատ կարևոր

իրադարձություններ տեղի ունեցան: Դա, կամ շատ քիչ է մեկնաբանվում, կամ էլ մեկնաբանվում է ընդհանուր լրագրողական արձակագրության մակարդակում: Ես կարծում եմ, որ բեկումներ են տեղի ունեցել և՛ Միացյալ Նահանգների քաղաքականության, և՛ Եվրոպայի քաղաքականության մեջ: Ինչի՞ հետ է դա կապված: Դրա մասին շատ կարելի է խոսել... (*Հարց գեկուցողին յարանից.* «Օգուտ ո՞ւմ»: *Պատասխան.* «Միշտ ի օգուտ մեզ»): Միգուցե, դա կապված է թե՛ մեկի և թե՛ մյուսի ռազմավարությունների իրականացման անհնարինության, միգուցե՝ համաշխարհային ֆինանսական ճգնաժամի կանխարգելման խնդիրների, գուցե նաև՝ համաշխարհային էներգետիկ բալանսում աճող խնդիրների հետ: Հնարավոր է, որ դա ինչ-որ տեղ առնչություն ունի նաև ամերիկյան շատ խոշոր խմբավորումների համաշխարհային բնույթի պայքարի հետ: Դա ինչ-որ կերպ կարելի է կապել նաև այն բանի հետ, որ ընդհանրացված գլոբալ խնդիրները հակասության մեջ են մտել ազգային խնդիրների, այսինքն՝ ազգային պետությունների խնդիրների և շահերի հետ: Այժմ մենք տեսնում ենք, որ այն վարդագույն խոստումները, որ տալիս էին գլոբալ իրադարձությունների զարգացման մասով, չեն կարող իրականացվել: Եվ դա չի կարող չառնչվել միջպետական հարաբերությունների ընդհանուր կարգին, ընդհանուր կանոններին: Միջպետական հարաբերությունները շատ բազմակողմանի երևույթ է և ունի շատ ուղղվածություններ ու, այստեղ, շատ ուռճացված տեսք ունի տարածքային ամբողջականության սկզբունքների մասով ուղղումների հնարավորությունը: Սակայն, այս պրոբլեմը հիմա չի ծագել, այն ծնվել է շատ մեղ ինտելեկտուալ շրջանակներում, այնուհետև վերածվել է գործնական փորձաքննության միայն այն բանից հետո, երբ էմպիրիկ շատ նյութեր հայտնվեցին: Սակայն, սա իր մեջ պարունակում էր նաև շատ բացասական պահեր, քանի որ դրանով սկսեցին զբաղվել պետության մեջ ինտելեկտուալ, այսպես կոչված, քաղաքագետներ, քաղաքական նախագծողներ:

Տարածքային անբողջականության խնդիրը գլոբալ բնույթ չի կրում, այն ընդգրկում է միայն առաձին տարածաշրջաններ, սակայն դարձել է անվտանգության, ավելի ճիշտ, անվտանգության բացակայության այնքան կարևոր գործոն, որ հնարավոր չէ այն արհամարհել: Ինձ հետ ունեցած գրույցներից մեկի ժամանակ Փոլ Գորլն ասաց, որ մենք գալիս ենք այն եզրակացության, որ շատ ավելի հեշտ է խախտել սահմանները, քան դրանք պահպանել՝ ոչ միայն ծախսերի, այլև անվտանգության մասով: Ասեմ, որ այս միտքը Գորլի մոտ հերթապահ թեզ է դարձել և այն օգտագործում է համարյա իր բոլոր գրույցներում: Ի միջի այլոց, իմ գրքերից մեկում, կարծեմ հրատարակված 2001 թվականին, ես այդ մեջբերումը արել եմ: Այդ թեզը ես լսել եմ շատերից տարբեր ռակուրսներով. եվրոպացիները այդ մասին խոսում են մի քիչ այլ կերպ, ամերիկացիները ավելի ռադիկալ են տրամադրված: Բայց նայենք, թե ինչ կատարվեց. հետևյալում իստական տարածքում կարգավորման հետ կապված ոչ մի նախագիծ չիրականացվեց՝ ո՛չ Բոսնիայում, որը բերվում էր որպես դասական օրինակ, որպես այդ հարցերի լուծման իդեալական գործիք, ո՛չ Կոսովոյում, որի համար, փաստացի, լայնածավալ պատերազմ սկսվեց: Այդ տարածաշրջանում չստացվեց: Եկեք այժմ նայենք Հյուսիսային Իրաքը, այսպես կոչված Քուրդիստանը, որը չէր մտնում սոցիալիստական հարաբերությունների համակարգի մեջ. այնտեղ առանց Իրաքի ռազմական միջամտության ստեղծվեց պետություն, այսինքն՝ այնպիսի պայմաններում, երբ պայման էր դրված, որ Իրաքը չպետք է խառնվի: Ես, ի միջի այլոց, երկու անգամ եղել եմ այնտեղ և համոզվել, որ այս միջին կարգի մերձավորարևելյան պետության մակարդակում գոյություն ունի 5-6 միլիոնանոց մի հասարակություն՝ երկու մայրաքաղաքներով, բանկով, ենթակառուցվածքի բազմաթիվ օբյեկտներով և հանգստի գոտիներով: Հիմա՝ Հյուսիսային Կիպրոսը. թվում է, թե այսքան երկար ժամանակ, սկսած 1973 թվականից, շարունակվում է այս քաշքշուկը, սակայն միայն հիմա են սկսել

երևալ պայմանավորվածության որոշ նախանշաններ: Այն շատ շուտով կճանաչվի և պետք չէ մտածել, որ այն կապված է ինչ-որ եվրոպական գործընթացի հետ: Դա կապված է միանգամայն կոնկրետ թուրք-ամերիկյան պայմանավորվածության հետ, որի մեջ մտնում է նաև ռազմական բազաների տեղակայման նոր սխեման: Իսկ որպես կանխագուշակում՝ ես ձեզ կասեմ, որ մոտակա տասը տարում պաղեստինյան պետություն չի ստեղծվի: Թվում էր, թե արդեն վերջ, շատ բան արդեն որոշված է, շատ բան՝ արված: Չի ստեղծվելու: Լավ, ես սրա մասին չեմ խոսի:

Ինչ վերաբերում է այստեղ հավաստվող փաստերին, ապա ասեմ, որ այդ առումով ես հիմա բավականին խոցելի վիճակում եմ գտնվում, քանի որ այժմ անհնար է վերլուծական հաշվարկներ ներկայացնել և, միգուցե, պետք էլ չէ: Ես ձեզ հետ կկիսեմ իմ ունեցած տեղեկատվությունը:

ԱՄՆ-ն, պատկերավոր ասած, Աբխազիան տվել է Ռուսաստանին: Աբխազիան Ռուսաստանին պետք է որպես ռազմավարական օբյեկտ՝ դա ծովն է, հանգստյան գոտին: Այնտեղ շատ որոշակի շահ կա: Մինչև վերջին ժամանակներս Հարավային Օսիայում, որքանով ես համոզվեցի, Ռուսաստանի պրոբլեմը կայանում էր նրանում, որ թույլ չտա ցեղասպանության գործողություններ, տեղի բնակչության տեղահանում: Ինչո՞ւ: Մույնով, Ռուսաստանը հարավային ռազմավարական ուղղությամբ դադարում էր հզոր պետություն լինելուց: Մեկ տարվա վաղեմություն ունեցող իրադարձություններից հետո, երբ փորձ եղավ հարցը լուծել ուժային մեթոդներով, ըստ երևույթին, բոլորը չհասկացան, որ իրավիճակը փոխվել է: Այժմ այդ տարածքը հետաքրքրում է Ռուսաստանին որպես ռազմավարական հրապարակ: Այդ տարածքներն, անշուշտ, արդեն կորսված են իրենց կենտրոնների համար, և ո՛չ արևմտյան հանրությունը և ո՛չ էլ Միացյալ Նահանգները դրանց համար չեն պայքարի: Վրաստանին չեն պաշտպանի, իսկ Վրաստանն այդ հասկացել է: Աբխազիայի և Հարավային Օսիայի կապակցությամբ ամերիկա-

ցիները բավականին վաղուց արդեն որոշում են կայացրել: Ունիվերսալ ամերիկյան քաղաքականություն գոյություն չունի և չի կարող գոյություն ունենալ: Յուրաքանչյուր դեպքում, յուրաքանչյուր տարածաշրջանի համար կոնկրետ խնդիր է լուծվում: Ելնելով դրանից, հարկավոր է հետևություններ անել: Հարավկովկասյան տարածաշրջանը չի տեղավորվում աշխարհաքաղաքական խնդրի ոչ մի մասում: Այստեղ ավելի շուտ գոյություն ունի աշխարհատնտեսական խնդիր: Նավթի փոխադրում. թվում է ծամծմված թեզ է. բայց ով չգիտի այն մասին, որ ամերիկացիները ցանկանում են նավթ քաշել: Սակայն նրանց, ովքեր իրենց կոչում են քաղաքագետներ, քաղաքական գործիչներ և այլն (իրականում աշխարհում ընդամենը 5-6 քաղաքագետ կա, չնայած շատ-շատերը, որոնք դրամաշնորհներ են ստացել, նույնպես իրենց քաղաքագետ են համարում), հարկավոր է ինչ-որ անաուրած ստեղծել, ինչ-որ հետևություններ անել, կառուցել ինչ-որ բարդ կառուցվածք, որպեսզի պահանջարկ ունենան և այստեղ է, որ ստեղծվում է ամերիկացիների համար շատ ձեռնառու իրաբանցում: Նրանց՝ այս պարզ սխեմային, Աստված գիտի, թե ինչեր են կապում՝ Չինաստանի հետ պայքար Կովկասում, պատերազմ Իրանի հետ, Ռուսաստանի դուրս մղում և այլն: Այո, հնարավոր է, որ այս ամենը թաքնված է ետևում, բայց ամերիկացիներն այստեղ միայն մեկ խնդիր ունեն՝ նավթ, նավթ, ոչինչ բացի նավթից և միայն նավթ: Բոլոր այդ մանր-մունր բազաները, կադրերով համալրված գործառնաբանները ամերիկական ռազմավարության համար միկրոակցիաներ են: Ինչի՞ է բերում նման ռազմավարությունը: Նման ռազմավարությունը բերում է նրան, որ տարածաշրջանը դիտարկվում է այնպես, ինչպես Պանամայի ջրանցքը, այսինքն՝ այդ ջրանցքի սահմաններից դուրս ոչինչ չի հետաքրքրում: Ես մի փաստաթուղթ եմ տեսել սխեմատիկ քարտեզով (որը կազմված էր Վրաստանում Միացյալ Նահանգների նախկին ռազմական կցորդ գնդապետ Ֆիլիպ Ռիմլերի ղեկավարությամբ, որը Պետդեպարտամենտ մտավ սպիտակ

ծիու վրա, իսկ հետո հայտնվեց կոտրած տաշտակի առջև, որովհետև, ինչպես պարզաբանեց հետո դեսպանը, Վրաստանում նա ոչինչ չէր կատարել, որը, ոչ ավել ոչ պակաս, կոչվում էր «Կոմպակտ վրացական պետության տարբերակ», որտեղ Արխագիան չկա: Այնտեղ կա Հարավային Օսիան՝ որպես շատ բարձր աստիճանի ինքնավարություն, իսկ Արխագիան՝ չկա: (*Հարց գեկուցողին լսարանից*. «Իսկ Աջարիան կա՞»): Աջարիան կա, այն էլ ինչպես... Ես հիմա կպարզաբանեմ նաև կապված Աջարիայի հետ: Այդ փաստաթուղթը կազմել էին ոչ ամերիկացիները, այլ երկու բավականին հայտնի վրաց քաղաքագետներ, մեկը՝ ռուսամետ, մյուսը՝ խիստ ամերիկամետ, որոնք ատում են միմյանց: Նրանց ազգանունները դուք հավանաբար գիտեք: Նմանօրինակ բաների համար կարգին հասարակության մեջ սպանում են: Սակայն նրանք հանգիստ քայլում են Ռուսթավելու պողոտայով և ոչինչ: Այստեղ հարց է ծագում. «Իրականում, գոյություն չունի՞ արդյոք ամերիկացիների և նրանց գործընկերների միջև ստեղծված իրավիճակի հիմքի վրա կառուցած գործնական մտածելակերպի ինչ-որ համաձայնություն»: Նայենք անցած տարվա իրադարձություններին: Այստեղ ուզում եմ գանք, այսպես ասած, այդ առեղծվածային 2006 թվականին, ինչո՞ւ այն հանկարծ ջրի երես դուրս եկավ, ընդ որում ոչ միայն մեզ մոտ, այլև Սերձոկեստրում, Օսիայում, Արխագիայում, Կոսովոյում, Հյուսիսային Կիպրոսում: Դուք պատկերացնո՞ւմ եք, թե սա ինչ գրքալ նախագիծ է: Սեկ տարի առաջ, երբ ռազմական գործողություններ էին տեղի ունենում Հարավային Օսիայում, ամերիկացիներն ամեն ինչ արեցին դրանք կանգնեցնելու համար: Բայց կարելի է կարծել, որ վրացական իշխանությունները բառացիորեն մարիոնետի պես գործում են Միացյալ Նահանգների հրահանգով: Ոչ միայն ամերիկացիները, այլև անգլիացիները արեցին ամեն ինչ, որպեսզի կանգնեցնեն այդ օպերացիան և թույլ չտան այդ ամենը: Հակամարտության գոտում 40 կմ տրամագծով Հարավային Օսիայի հարավ-արևելյան ուղղությամբ՝

դեպի Բաքու-Ջեյհան նավթամուղը, տեղակայված էր բրիտանական հետախուզական գումարտակը, որի կազմում գտնվում էին Կոլումբիայում և Անգոլայում, այսինքն՝ այն վայրերում, որտեղ գործում է British Petroleum-ը, մեծ փորձ հավաքած շուրջ 100 մարդ: Գումարտակի կազմում էր նաև իմ ծանոթներից մեկը, որն ավարտել էր Լոնդոնի արևելագիտության և Աֆրիկայի համալսարանը (CBAC), որը արիստոկրատ ընտանիքից էր և հրաշալի խոսում էր չեչեներեն: Փաստացի, այստեղ ամեն ինչ արվեց, որպեսզի նավթամուղի հետ ոչինչ չպատահի, քանի որ վայրկյանական հոդս կցնդեին ապահովագրական պոլիսները, արմատապես կփոխվեր իրավիճակը և դեռ պարզ չէ, թե ինչպիսին կլիներ նավթամուղի ճակատագիրը: Եվ պետք է հաշվի առնել, որ սույնով երկրորդ նավթամուղը՝ Բաքու-Սուպսան, որի մասին մոռացել են, ևս անցնում է հարավօսական այս սահմանի երկայնքով: Իսկ Աբխազիայով ամերիկացիները երբեք չեն հետաքրքրվել, որովհետև այն շատ հեռու է նավթամուղից: Իսկ, օրինակ, Բաթումիի համար նրանք պատրաստ էին նավախումբ ուղարկել: Ինչո՞ւ: Որովհետև Բաթումին պետք է դառնա տարածաշրջանային մեծ արտահանող նավահանգիստ: Դրա համար էլ Աջարիան շատ կարևոր էր և նրա հետ մեծ հույսեր էին կապված: Երբ տեղի ունեցան հայտնի իրադարձությունները Աջարիայում, Մեծ Բրիտանիան շատ լրջորեն այլընտրանքային երթուղիների հարցերն էր քննարկում: Նրանք վստահ էին, որ ռուսները իրենց կվերապահեն այս մարզը: Բրիտանացիները քննարկում էին նաև իրանական երթուղիները: Իրանն այդ ժամանակ Լոնդոնում փութաջանորեն զբաղվում էր իր երթուղիների լոբբինգով:

Հիմա Ղարաբաղի մասին. այժմ արդեն երևի կարելի է ասել, որ ամերիկացիները Ղարաբաղը համարում են ոչ միայն միանգամայն անվտանգ գոտի, այլև ընդհանրապես գտնում են, որ այն՝ տարածաշրջանային անվտանգության կարևոր տարր է: Ես կարծում եմ, որ եթե մեր ղեկավարությունը մի քիչ ավելի ու-

չին լինել և մի քիչ ավելի շատ երևակայություն ունենար, ապա ԼՂՀ-ԱՄՆ ռազմաքաղաքական համագործակցությունը կարող էր վաղուց արդեն կայացած լինել:

Բաքու-Ջեյհան ուղեգծի կառուցման նախաշեմին, երբ պետք էր արդեն խողովակներ բերեին Մալազիայից և այլև, ինչ-որ մեկը սկսեց շատ հետաքրքրվել Հայաստանում չվերահսկվող ուժերով, խմբերով: Տրվեցին անուններ, որոնք վաղուց մոռացել էին, թե ինչպես են հնչում պայթյունները: Հետաքրքրվում էին անուն առ անուն, ցուցակներով: Հիմա 2006 թվականը. ի՞նչ է իրենից այն ներկայացնում: Ինչո՞վ է այն տարբերվում 2005 թվականից և տարբերվելու՞ է արդյոք այն 2007 թվականից: Ես ձեզ հավաստիացնում եմ, որ այդ 2006 թվականը մի քանի տասնամյակ է տևելու: Այս ժամանակահատվածի այս կատեգորիան կծգծվի մի քանի տասնամյակ, քանի որ 2006 թվականը տրված է հակամարտող կողմերին լուծելու համար հարցերը այն միջազգային հարաբերությունների համակարգում, որոնք գոյություն ունեն հիմա աշխարհում: Իսկ թե ինչպիսի՞ հարաբերություններ գոյություն ունեն աշխարհում՝ անհասկանալի է: Այս տարին լրանալուն պես, կսկսեն որոշումներ ընդունվել բոլոր այս գոտիների կարգավիճակների մասին, քանի որ այլևս այսպես շարունակվել չի կարող: Ինչո՞ւ: Ինչո՞ւ: Դա մույնպես հետաքրքիր հարց է: Մերձավոր Արևելքը՝ Մերձավոր Արևելքով, բայց վաղուց արդեն որոշում է ընդունված, որ Կովկասը պատկանում է Եվրոպային: Որքան էլ Հայաստանը ցանկանար դրսևորել իրեն որպես մերձավորարևելյան կողմ կամ կողմ, որը շահեր ունի, ասենք, Իրանում կամ արաբական աշխարհում, որքան էլ ոմանք, այդ թվում նաև ես, ցանկանում են զարգացնել հարավկովկասյան տարածաշրջանի գոյության կեղծ ուսմունքը, այնուհանդերձ այն այստեղ չկա, քանի որ տարածաշրջանը, դա մի ամբողջականություն է, որտեղ գործում են զարգացման որոշ կանոններ և օրինաչափություններ: Այնուհանդերձ, Եվրոպան այն համառորեն պահում է տարածաշրջանի վիճակում: Եվրոպայում չեն կարո-

ղանում տանել այդքան ցածր ստանդարտի գոյությունը այս գոտիներում: Այդ հարցերը պետք է լուծվեն: Կարող է դա այդպես չէ, կարող է ես ճիշտ չեմ պատկերացնում այդ պահը: Այսինքն՝ սա վերջին շանսի տարի՞ն է: Բայց ո՞նի համար: Իհարկե՛ Ադրբեջանի և, տվյալ դեպքում, նաև Վրաստանի համար: Հետաքրքիր է տեսնել, թե ի՞նչ է կատարվելու հիմա Վրաստանում: Վրաստանը սպառազինվում է, իսկ ի՞նչ է կատարվում Հարավային Օսիայում: Այնտեղ ստեղծվել է շատ ուժեղ խմբավորում: Շատ ուժեղ: Իսկ ի՞նչ է այն իրենից ներկայացնում. մի ութ հազար մարդ, տանկային զույգ, ըստ էության հետևակային ռազմական մեքենաների (ԵՄՄ) և ռազմական զրահամեքենաների (ԵՄՔ) 3-4 գումարտակ, Շերք-եր, Կրահ-ներ, Օսա-ներ: (*Հարց զեկուցողին յաբանից.* «Ինչի՞ համար է այդ ամենը»): Ցանկացած բանի համար, օրինակ, կարելի է ռմբակոծել Թբիլիսին: Դա կարգավորման համար է: Վրաստանի առջև ադրբեջանական մոդելի խնդիր է կանգնել: Վրաստանի առջև կանգնել է ադրբեջանական մոդելի կրկնման խնդիրը: Ես մոդելն, իհարկե, պայմանականորեն եմ ադրբեջանական անվանում: Այստեղ ի նկատի ունեմ ադրբեջանական իշխանությունների վարքագծային պահերը: Այդ մոդելը հայտնվեց Քի Ուեսթից հետո, երբ Քոլին Փաուելն ասաց, որ ես այլևս չլսեմ այդ Ղարաբաղի մասին և ընդհանրապես, եկել եմ երկու խաբերա և ցանկանում եմ կարգավորել հարցը: Դա երբեք չի լինի, գնացեք և զբաղվեք կարգավորման իմիտացիայի սցենարներով: Դա շարունակվում է մինչև այսօր: Նույնիսկ եվրակառույցների ներգրավվումն էր այստեղ իմիտացիա և ով ցանկացավ դրանից օգտվել, օրինակ՝ Ադրբեջանը, հաջողության չհասավ: Վրաստանը հիմա միայն այս ճանապարհն ունի: Վրացական հանրությունը ո՛չ Աբխազիան և ո՛չ էլ Օսիան չի համարում առաջնայնություն իր համար: Ինչո՞ւ: Որովհետև այն հասկացավ, որ եթե դրանով զբաղվի, ապա տանուլ կտա իր երկիրը: Վրաստանի առջև կանգնած է Բաքվի վարքագծային ստերեոտիպի կրկնման խնդիրը: Այլապես իրա-

վիճակից ելք չկա: Եվ ահա, այս առավելագույն բարենպաստ իրավիճակում, գրողը տանի, մենք ուզում ենք տալ այդ տարածքները Ադրբեջանին:

Ես վերջացրեցի, շնորհակալություն:

ԼՂՀ ՎԱՐՎՈՂ ԱՐՏԱԹԻՆ ԶՄԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՏԱՐԳԵՐԸ

Արման Մելիքյան

ԼՂՀ արտաքին գործերի նախարար

Ես ներկաների ուշադրությունն այսօր ցանկանում եմ հրավիրել մեր կողմից պնդվող մեկ թեզի վրա: Մենք ասում ենք, որ մենք Լեռնային Ղարաբաղի միջազգային ճանաչման խնդիրը տարանջատում ենք կարգավորման և կարգավորման արդյունքների խնդիրներից: Ի՞նչ է սա նշանակում: Ըստ մեզ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կայացած պետություն է և, այդ առումով, մենք իրապես խնդիր չունենք: Խնդիր կա Ղարաբաղի միջազգային ճանաչման հարցում, որը գործընթաց է և հանդիսանում է մեր պետականության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունը: Չասեմ՝ հիմնականներից մեկը, այլ հիմնական ուղղությունը, որովհետև ես կարծում եմ, որ այդ միջոցով մենք իսկապես կկարողանանք ամրագրել մեր ինքնուրույն գոյատևման իրավունքը այն տարածքում, որն այսօր ունենք: Բայց, միևնույն ժամանակ, մենք պետք է ելնենք որոշակի իրողություններից, որոնք անխուսափելի են: Լեռնային Ղարաբաղը հռչակվել է շատ որոշակի տարածքում, որը ընդգրկել է ԼՂԻՄ-ը, Շահումյանի շրջանն ու Գետաշենը: Հաճախ մարդիկ խուսափում են այդ մասին հանգիստ արտահայտվելուց, կարծելով, որ այդպիսով կասկածի տակ կդնեն այն տարածքների ճակատագիրը, որոնք այսօր վերահսկվում են մեր կողմից: Ես ուզում եմ ասել, որ դա բոլորովին էլ այդպես չէ: Իսկապես, մենք պետություն ենք հռչակել շատ որոշակի սահմաններ ունեցող տարածքում: Այդ մասին այսօր արդեն ասվել է: Սակայն, ելնե-

լով այն հանգամանքից, որ աղբրեջանական պետությունը չհաշտվելով մեր այդ որոշման հետ, զինված ագրեսիա է սկսել Ղարաբաղի նկատմամբ, տարածքային առումով՝ իրավիճակը կտրականապես փոխվում է: Ի վերջո, երևի թե որևէ մեկի համար գաղտնիք չէ, որ այսօր, ասենք, Կալինինգրադի մարզը գտնվում է Ռուսաստանի կազմում մեկ պատճառով. ժամանակին, երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո պետությունները որոշեցին, որ Գերմանիան հանդիսացել է ագրեսիա նախաձեռնած պետություն, և որ հետագայում կարող է վտանգ ներկայացնել աշխարհի համար: Հետևաբար, որպես պատիժ ագրեսիայի համար և հետագա ագրեսիան կանխելու նպատակով, աշխարհը տարածքային խնդիրներ լուծեց: Մենք այսօր, այստեղ, բազմիցս խոսեցինք այն մասին, որ այն տարածքները, որոնք ներկայումս գտնվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնիշխանության ներքո, կարող են դիտարկվել որպես մեր հայրենակիցների՝ աղբրեջանահայության բնական բնակության գոտի: Բայց ես կարծում եմ, որ այն ոչ պակաս կարևոր խնդիր է մաս աղբրեջանական հետագա ագրեսիան կանխելու և անցյալ ագրեսիան պատժելու տեսանկյունից: Եվ այս առումով, մենք պետք է խնդիր չունենանք ասելու, թե որ սահմաններում է հռչակվել բուն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և թե մեր ինքնիշխանության ներքո գտնվող այսօրվա տարածքները ինչ դերակատարություն կարող են ունենալ հինա և ապագայում: Պարզապես, թերևս այս ուղղությամբ լրացուցիչ ջանքեր գործադրելու անհրաժեշտություն կա և այս մոտեցումները հանրությանն ավելի ծանոթ դարձնելու խնդիր ունենք: Սա է իրականությունը: Մենք չենք կարող կասկածի տակ դնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծման փաստը և իրավասությունը ու չենք կարող ուրանալ բոլոր այն իրադարձությունները, որ տեղի ունեցան այդ պահից ի վեր և մինչ՝ այդ: Եվ, այստեղ, ես հակասություն չեմ տեսնում: Միանգամայն օրինաչափ եմ համարում, որ մեր աղբրեջանահայ հայ-

րենակիցները իրավունք ունեն կողմնորոշվելու, թե նախկին Խորհրդային Աղբրեջանի տարածքում այսօր գոյություն ունեցող երկու պետություններից ո՞ր մեկի տարածքում իրենք պիտի բնակվեն, ո՞ր իշխանությունները իրենց կապահովեն բարվոք և ապահով ապագայով: Եվ, ի վերջո, դրան պետք է միտված լինեն մեր արտաքին քաղաքականության ջանքերը: Ես դրանում միանգամայն համոզված եմ:

Անդրադառնալով բանակցային գործընթացին, պետք է ասել, որ կա մեկ խնդիր. ի՞նչ են առաջարկում միջնորդները, ասենք, միջազգային հասարակական և ոչ հասարակական տարատեսակ ու տարաբնույթ կառույցները, որոնք այսօր տարածաշրջանում փորձում են կարգավորման ինչ-որ մոդելներ առաջարկել: Ի վերջո, բոլոր մոդելները հանգում են մեկ բանի, հանգում են նրան, որ պիտի հաստատվի միջհամայնական հաշտություն: Անհասկանալի է, թե որտեղից են վերցրել, որ Ղարաբաղում երբևէ եղել են ինչ-որ համայնքներ: Վերջ ի վերջո, համայնական կառուցվածքը բնորոշ է եղել Խորհրդային Աղբրեջանին, որտեղ իսկապես կար բուն հայկական համայնք և աղբրեջանական մեծամասնություն ու հայ համայնքի իրավունքները, գուցե ձևականորեն, պաշտպանելու նկատառումներով բուշնիկները ժամանակին ստեղծեցին ոչ միայն Ղարաբաղի՝ այլ մաս Նախիջևանի ինքնավարությունները: Ինչևէ, ես միանգամայն համոզված եմ և այդ մասին ասել եմ պաշտոնատար գրուցակիցներին՝ փիզավիներին, այն մարդկանց, որոնք զբաղվել են այդ հարցով, առիթը եղած ժամանակ՝ մաս համանախագահներին, որ համայնական լուծման տարբերակը տանում է դեպի փակուղի: Ահիշուն ասած, չեմ կարծում, որ նրանք միամիտ են և չգիտեն այդ մասին: Այդ կապակցությամբ, կիպրոսյան փորձը միջհամայնական համերաշխության հիմունքներով հակամարտությունը լուծելու անհնարինությունը փաստող ցայտուն օրինակ է:

Այսօր, այստեղ խոսք գնաց Հայաստանի կողմից Ղարաբաղի ճանաչման մասին: Ես չեի ցանկանա հենց այս հարթության

մեջ խնդիրը դնել: Կարծում եմ, մենք՝ Ղարաբաղը, պարտավոր է այսօր այնպիսի պայմաններ և իրավիճակ ստեղծել, մոդելավորել, որպեսզի ոչ միայն Հայաստանը, այլև միջազգային համայնության այլ անդամները կարողանան անվարան և հանգիստ իրագործել Ղարաբաղի ճանաչման ակտը: Մա է այն հիմնական ուղղությունը, որի վրա մենք այսօր պետք է աշխատենք: Անշուշտ մենք ունենք դժվարություններ, որոնք հաճախ կազմակերպչական բնույթ են կրում: Ունենք նաև դժվարություններ գաղափարախոսական առումով, որովհետև ես ավելի քան վստահ եմ, որ այստեղ հնչած փաստարկներին կարելի էր ևս այդքանն էլ ավելացնել, բայց այս առումով մեր փորձագիտական համույթը ևս պետք է ուղղորդված աշխատի: Մենք նոր թարմ գաղափարների ներդրման կարիք ունենք: Մենք հին գաղափարների թարմացման կարիք ունենք: Ես վստահ եմ, որ մեր ընդհանուր, միասնական ջանքերի շնորհիվ դա պետք է որ իրագործվի, որովհետև ոչ թե հայտարարությունները, այլ ակտիվ գործողություններն են, որ պիտի հաջողության և որոշակի արդյունքի բերեն. առաջին հերթին՝ մտավոր աշխատանքի արդյունքի առումով: Բայց դրանից էլ պետք է բխեն նաև մնացած բոլոր գործողությունները: Այսինքն՝ այսօր մենք այս մոտեցումների կողմնակիցն ենք և փորձում ենք հնարավորինս այս ուղղությամբ գործողություններ կատարել: Ինչ վերաբերում է արդեն կոնկրետ գործողություններին. ասենք այս կոնֆերանսի թեման՝ «Ղարաբաղյան հակամարտություն. փախստականներ, տարածքներ, անվտանգություն» աշխատությունն է, որի հիմնական մեխը աղբրեջանահայության խնդիրն է: Ասեմ ձեզ, որ ժամանակի ընթացքում ինչպես Ղարաբաղում բնակվող աղբրեջանահայերից շատերը, այնպես էլ այսօր դրսում գտնվող աղբրեջանահայերը օրինաչափ հարց են դնում մեր առջև, թե լավ, հարյուր հազարավոր մարդիկ վտարվեցին Աղբրեջանից, կորցրեցին իրենց ունեցվածքը, շատերը կորցրեցին իրենց հարազատներին, հաշմանդամ դարձան, իսկ այդ երկրի իշխանություններին չի՞ հետա-

քրքրում այդ մարդկանց ճակատագիրը: Մի՞թե այդ մարդիկ, իսկապես, հետաքրքիր չեն այլևս ոչ միայն պետության, այլև մեր ազգային ընդհանրության համար: Այս հանգամանքը մեզ ստիպել է, որպեսզի մենք արդեն իսկ որոշակի քայլեր ձեռնարկենք: Կոնֆերանսի մասնակիցների թղթապանակներում գետեղված է «Դիմում-հարցաթերթիկի» այն ձևը, որը մշակվել է ԼԳՀ արտաքին գործերի նախարարության կողմից և դրվել շրջանառության մեջ աղբրեջանահայության շրջանակներում, որով այդ մարդիկ կարող են դիմել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը՝ հանձինս նախագահի, խնդրանքով՝ միջնորդ հանդիսանալ և աջակցել նրանց ոտնահարված իրավունքների վերականգնման հարցում: Այդ մարդիկ ունեն և՛ նյութական, և՛ բարոյական և, կարծում եմ, այս առումով նաև կորսված հայրենիքի վերականգնման խնդիր, որովհետև այսօր նրանց մեծ մասը գտնվում է ոչ միայն Ղարաբաղի կամ Հայաստանի տարածքներից դուրս, այլև առհասարակ դուրս են կոմկասյան տարածաշրջանից: Ձեզ ուղղակի տեղեկատվության կարգով ասեմ, որ արդեն ունենք նմանատիպ հազարավոր դիմումներ: Յուրաքանչյուր դիմում մի աղբրեջանահայ ընտանիքի պատմություն է, յուրաքանչյուր դիմում պարունակում է համապարփակ տեղեկատվություն յուրաքանչյուրի նախկին բնակության և քաղաքացիության, ներկա կարգավիճակի, կրած նյութական և բարոյական վնասների, կրած խոշտանգումների և բռնությունների, տեղահանման ձևերի, հետապնդման պատճառների և այլնի մասին: Դիմումներն ընդգրկում են նաև տեղեկատվություն աղբրեջանահայ մեր հայրենակիցների կրթական ցենզի և մասնագիտական որակավորման վերաբերյալ:

Ես կարծում եմ, որ մենք, իհարկե, ժամանակը կորցրել ենք: Այստեղ իրավացիորեն նշվեց, որ աղբրեջանահայության մի զգալի մասը լսել չի ուզում ոչ Ղարաբաղի, ոչ Հայաստանի և ոչ էլ Կովկասի մասին, իսկ դրանում մենք բոլորս մեր մեղքի բաժինն ունենք: Սակայն, միևնույն ժամանակ ես գտնում եմ, որ

մենք կարող ենք այս ուղղությամբ, հետևողական լինելով, հասնել դրական արդյունքների և, այստեղ, ես համաձայն չեմ պարոն Աղայանի հետ այն առումով, որ չկա այն աղբբեջանահայությունը, որը մասնակից կլինի սեփական ճակատագրի համար տարվող պայքարին: Կա այդ աղբբեջանահայությունը և մենք դա գիտենք, որովհետև մենք արդեն աշխատում ենք այդ մարդկանց հետ: Ես կարծում եմ, որ պահը կգա և այդ կազմակերպչական խնդիրները ևս կլուծվեն: Դրանք արդեն լուծվում են: Ես չեմ ուզում ավելորդ լավատեսություն արտահայտել, բայց համեմայնդեալս, ելնելով իրավիճակից, կարող եմ ասել, որ մենք լավատեսության հիմքեր ունենք, այսինքն՝ նախաձեռնությունն արդեն կա և այն գնալով զարգանում է: (*Հարց գեկուցողին լսարանից.* «Խոսքը ներգաղթի՞ մասին է»): Խոսքը միայն ներգաղթի մասին չէ: Խոսքն, առհասարակ, աղբբեջանահայերի կողմից իրենց իրավունքները պաշտպանելու առումով ակտիվ գործողության դիմելու մասին է: Դա կլինի վերաբնակեցում՝ թե՛, ասենք, Մոսկվայում կամ Կրասնոդարում, կամ Բեռլինում ու Փարիզում, ակտիվ գործողություններ, որոնք միտված կլինեն նրան, որ բացահայտվի Աղբբեջանի ազրեսիվ քաղաքականությունը, բացահայտվի այն, որ մարդկանց իրավունքները ոտնահարվել են և շարունակում են ոտնահարվել Աղբբեջանում: Այսինքն՝ այս ամբողջ խնդիրների թնջուկը, ես կարծում եմ, որ համատեղ լուծման կարոտ է:

Սրանք էին այն հիմնական խնդիրները, որոնց մասին ես կուզեի խոսել: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել, գուցե նաև դուք միանաք դրան, այսօրվա խնդրո առարկա աշխատության համահեղինակներին և կոնֆերանսի կազմակերպիչներին, որովհետև սա լավ առիթ էր բավականին գործնական և բաց մթնոլորտում քննարկելու համար այն խնդիրները, որոնք, սովորաբար, ինչ-որ տեղ կուլուարներում են քննարկվում կամ ընդհանրապես չեն քննարկվում:

Շնորհակալություն:

ԵԼՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԱՐՅԵՐ

Արամ Գ. Սարգսյան

Ես ափսոսում եմ, որ Արման Մելիքյանի ելույթը, գեկույցը վերջինն էր, որովհետև այն երևի թե ամենա... Չեմ ուզում որևէ մեկի ելույթին գնահատական տալ, բայց ուղղակի այս գեկույցում կար այն նորությունը, որն անհրաժեշտ էր լրջորեն քննարկել: Խոսքը գնում է այն մասին, որ սա, հավանաբար, կարող էր փոխել նաև ամբողջ իրավիճակը: Այն, որ գաղափար կար վերաբնակեցնելու ազատագրված տարածքները և, որ դա չիրականացավ, իհարկե, միայն ու միայն մեր մեղքն է. իշխանության, երկրի, ժողովրդի: Դա արդեն այլ հարց է: Բայց, որ այստեղ նոր տարր է ի հայտ գալիս, այն, որ իրականում, փախստականները իրենց իրավունքներն են պահանջելու և այդ իրավունքները պետք է իրականացվեն այն տարածքներում, որոնք այսօր ազատագրված են, որովհետև ինքնին հասկանալի է, որ Հյուսիսային Ղարաբաղ, առավել ևս Բաքու վերադառնալու հնարավորությունը չկա, դա կարևոր է: 500 000 հազար մարդ կարող է վերադառնալ Աղբբեջան և ապրել իրենց բնակավայրերում: Բայց այդպիսի հնարավորություն դեռևս չկա: Ես կարծում եմ, այս նոր տարրը բանակցային գործընթացում կարող է շատ հետաքրքիր ձևով փոխել իրավիճակը:

Ես ուղղակի ուզում եմ ողջունել այս գաղափարը և կարծում եմ, որ արժեք, որ մենք այն իսկապես մանրակրկիտ քննարկեինք: Գաղափարն առողջ գաղափար է և, այս տեսանկյունից, իրոք արժեք մեր այսօրվա այս լուրջ քննարկումը տանել հենց այս ուղղությամբ:

Շնորհակալություն:

Սուրեն Չոլյան

Ընդամենը երկու բառ եմ ուզում ասել: Իսկապես, շատ կարևոր է և՛ այս քննարկումը, և՛ այս նոր մտտեցումը: Ես կար-

ծում են, որ այստեղ կարևոր է, որ ոչ միայն հայեցակարգային առումով, այլ նաև գործնական առումով աղբրեջանահայությունը դառնա սուբյեկտ, որովհետև խոսելով սուբյեկտի մասին, միշտ հարց է բարձրանում, թե ինչու միևնույն ժողովրդի երկու հատվածները պետք է առանձին պատվիրակություններով հանդես գան: Այստեղ այն պահը կա, որ ասում են, ենթադրենք, Ղարաբաղի այսօրվա կարգավիճակը բավարար չէ, որպեսզի այն դառնա բանակցային կողմ, իսկ այս գաղափարով այդ պակասը կարող է լրացվել, քանի որ այն ներկայացնում է կոնկրետ սուբյեկտի շահեր: Դա բավականին հեռանկարային գիծ է նաև այլ հիմնահարցերի առումով: Այստեղ շատ ճիշտ էր նաև այն երկրորդ միտքը, որ վաղուց ի վեր պետք էր, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն ունենար իր Սահմանադրությունը և, ինչպես իր ելույթում նշեց պարոն Մելիքյանը, որ եթե Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ստեղծվել է ինչ-ինչ տարածքների վրա, ապա դա բոլորովին չի նշանակում, որ այդ տարածքների կապակցությամբ հնարավոր չէ որևէ բանավեճ սկսել: Ինչո՞ւ են ասում: Տվյալ դեպքում, մենք հիանալի փաստ ունենք՝ Էլչիբեյի 1992 թվականի մասնակը, որտեղ գրված է, որ Լեռնային Ղարաբաղը միասնական է և հնարավոր չէ տարանջատել այն Դաշտային Ղարաբաղից: 1992 թվականի, կարծես, սեպտեմբեր ամսին գրված մասնակն է, որը մինչև հիմա դրված է ԵԱՀԿ-ի փաստաթղթերի հիմքում: Ինչո՞ւ են նրանք հրաժարվում առհասարակ մատնանշել Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը: Սա նույնպես կարելի է հիմք ընդունել:

Եվ, ի վերջո, ես կուզենայի, որ մենք շատ կտրուկ անդրադառնանք ճանաչման հարցին, որովհետև, պարոն Ռուստամյան, ես ողջունում եմ, իհարկե, Չեր գեկույցը, բայց պիտի նաև հասկանանք, որ այդ բանակցությունների ընթացքը, գործընթացը Մինսկի խմբի շրջանակներում, որոշ առումներով բացառում է ճանաչմանն ուղղված քայլերը: Ինչո՞ւ: Դուք՝ պարոն Մելիք-

յան, այստեղ ասացիք, որ որևէ մեկը կասկածի տակ չի դնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, բայց ես դրա հետ համաձայն չեմ, որովհետև հենց այդ բանակցությունների ընթացքն է դա կասկածի տակ դնում: Քանի դեռ կարգավիճակի հարցը պիտի որոշվի Մինսկի կոնֆերանսի կամ մեկ այլ ձևով, բնական է, որ այսօր խոսքը գնում է գոյություն չունեցող և միայն այս գործընթացի վերջում միգուցե վավերացվող կարգավիճակի մասին: Այսինքն՝ բնական է, որ մենք կարող ենք բազմաթիվ ձևակերպումներ գտնել և միմյանց համոզել, որ մեկը մյուսին չի հակասում, բայց իրականում՝ հակասություն կա: Եվ այս առումով, ես նույնպես գտնում եմ, որ (ես չեմ ասում, որ ես երբեք չեմ եղել կտրուկ գործողությունների կողմնակից) ռազմական բյուջեի և մնացածի մասին Աղբրեջանի վերջին հայտարարությունները ցույց են տալիս, որ Աղբրեջանը չի պահպանում այն նախապայմաններից մեկը, որ պիտի բացառի քարոզչական պատերազմը և թշնամական գործողությունները կողմերի հանդեպ: Իմ կարծիքով, դա հնարավորություն է տալիս կողմերին՝ և Հայաստանին, և Աղբրեջանին, գոնե հայտարարությամբ հանդես գալ, որ նման վարքագծի շարունակման դեպքում Հայաստանը կարող է կասեցնել իր մասնակցությունը գործընթացում և, որպես միջանկյալ բուժում՝ ճանաչումից, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ կնքել ռազմաքաղաքական դաշինք: Սա այդպիսի մոտեցումներից մեկն է, որովհետև Աղբրեջանը, նորից եմ ասում, բազմաթիվ հիմքեր է տալիս հրաժարվելու համար բանակցային գործընթացից, քանի որ, եթե կողմերից մեկը կրկնապատկում է ռազմական բյուջեն, ինչը միանգամից ցույց է տալիս, որ դա բանակցությունների ընթացքում ուղղակի ժամանակ շահելու միջոց է, ապա մյուս կողմը կարող է արդեն ավելի ազատ գործել և կաշկանդված չլինել նախնական պայմանավորվածություններով: Այսքանը:

Մարասար Մարյան

Ես նորից խոսք եմ վերցնում փախստականների անունից և կփորձեմ հայերեն խոսել, այդ պատճառով խնդրում եմ չծիծաղել ինձ վրա: Հայերենի վատ իմացությունը ևս մեկ խնդիր է և պատասխան, թե ինչո՞ւ չենք կարողանում հավաքվել և միասին ապրել: Լեզվի հարցն առանձին խնդիր է և դրա մասին նույնպես պետք է առանձին մտածել:

Ես նորից եմ ուզում նշել, որ փախստականները իսկապես գոյություն ունեն և դա առասպել չէ, փախստականներն իրոք կան: Նրանք կան նաև Ղարաբաղում: Թերի Դևիսն ուղղակի զարմացել էր, որ այդքան փախստական էր տեսել Ղարաբաղում: Նա հանդիպեց նրանց հետ, շատերի հետ առանձին գրույց ունեցավ: Ես չեմ հասկանում, ինչո՞ւ մենք պետք է անընդհատ բացատրենք, որ մենք գոյություն ունենք և ապրում ենք Ղարաբաղում: Ճիշտ է, Ղարաբաղում այսօր շատ տնտեսական, սոցիալական խնդիրներ կան, բայց եթե մի քիչ այդ հարցերը լուծվեն, շատ ու շատ հայեր կգան այստեղ ապրելու, քանի որ Ղարաբաղը շատ հարուստ երկիր է:

Արմեն Աղայան

Ես պարոն Մելիքյանի ելույթից հետո այնպիսի տպավորություն եմ ստացել, որ ժամանակն է, որ ինչ-որ մեկը նորից գրի «Պատերազմ թե՞ խաղաղություն» կամ «Ճշմարտության պահը» վերնագրով մի հոդված, որովհետև հատակ երևում է, որ կրկնվում է 1997 թվականի իրադրությունը, երբ Հայաստանում քաղաքական վերնախավում կար երկու, այսպես ասած, տարամետ դիրքորոշում: Իմ տպավորությամբ, չեմ ուզում շատ այսպես ոգևորված արտահայտություններ անել, բայց իմ տպավորությամբ, այստեղ խաղ չի երևում՝ այս պահին գոնե և, կարծում եմ նաև, որ պահն իրոք հասունացած է, որովհետև երբ նախորդ անգամ այսպես եղավ՝ հետագա զարգացումները ավելի դրական ուղ-

ղությամբ զնացին: Այն ժամանակ, պայմանականորեն ասած, այդ պատերազմի կուսակցության դիրքորոշումը այն իդեալականը չէր, որը գոնե ես կպատկերացնեի: Օրինակի համար, մինչև հիմա, որքան էլ, ասենք, պնդենք և աշխարհին ներկայացնենք առանձին Ղարաբաղ և առանձին Հայաստան, միևնույն է, հարց է բարձրանում, թե ո՞վ է սուբյեկտը: Ինձ համար նման հարց ընդհանրապես գոյություն չունի, բայց այնուամենայնիվ, սա դրական առաջընթաց է իր մեջ ենթադրում: Ես կուզեմայի մի փոքր խորացնել այդ դրական առաջընթացը:

Այստեղ մեզ բաժանվել է մի քարտեզ, որը ցանկանում եմ համեմատել բոլոր այն քարտեզների հետ, որոնք ամեն օր մենք ցույց ենք տալիս հեռուստատեսությամբ, ասենք՝ եղանակի տեսություն հաղորդելիս, կամ Գրանդ Քենդիի զովագրների ժամանակ և այլն: Մենք նախաձեռնություն ցուցաբերեցինք և խոսեցինք, մասնավորապես, ՄԵՏԵՈ TV կազմակերպության, ինչպես նաև բոլոր հեռուստաալիքների հետ, որպեսզի, վերջ ի վերջո, նրանք այդ քարտեզները համապատասխանեցնեն եղած իրողություններին: Բոլորը պատճառաբանեցին, որ իրենք ելնում են պաշտոնական մոտեցումներից: Անկեղծ ասած, այս քարտեզները ոչնչով էլ պաշտոնական չեն: Այստեղ, իմ ձեռքում գտնվող քարտեզը մի քիչ ավելի նման է պաշտոնականին, քանի որ այստեղ գոնե ընդգրկված են այն տարածքները, որտեղ Ղարաբաղում ընտրություններ են եղել կամ որտեղ Ղարաբաղի ոստիկանությունը, ասենք, վերահսկում է իրավիճակը և այլն: Չնայած այստեղ էլ չկա Գետաշենը: Որևէ քարտեզում չկա: Հայաստանում և Արցախում տպագրված որևէ քարտեզում չկան, գոյություն չունեն Գետաշենը, Մարտունաշենը և շատ այլ բնակավայրեր: Ես առաջարկում եմ, որ եթե հնարավոր է ստեղծել մի պաշտոնական, կամ թեկուզ ոչ այնքան պաշտոնական, բայց բավարար հիմք հեռուստաընկերությունների համար, որպեսզի փոքրահասակ հայ երեխաները այս պահին տեսնեն, չեն ասում

ամբողջական Հայաստանը, զոնե այն՝ ինչը գտնվում է մեր վերահսկարության տակ: Եվ հաջորդ առաջարկը, այստեղ, այս քարտեզում նշված են բնակավայրեր, որտեղ իրականում համարյա թե բնակչություն չկա, խոսքը վերաբնակեցման խնդիրներով զբաղվող կազմակերպությունների ուղղվածությունը փոխելու մասին է՝ ներդրումների իմաստով, ինչին ես անդրադարձա իմ զեկույցում: Մեզ, իհարկե, բավարարում են բոլոր այն կազմակերպությունները, որոնք գործում են այս բնագավառում, բայց ուզում ենք, որ այդ ծրագրերն անհրաժեշտ ուղղվածություն ունենան: Եվ այդ իմաստով, ես հույս ունեմ, որ առաջիկայում հնարավորություն կունենանք ավելի սերտորեն համագործակցելու զոնե այդ ծրագրին ավելի պաշտոնական բնույթ տալու առումով: Եթե դա հնարավոր չի լինի պետական մակարդակով, զոնե, չգիտեմ, միգուցե եկեղեցու միջամտությամբ:

Այսքանը, շնորհակալություն:

Իզոր Մուրադյան

Հաճախ կարելի է լսել, թե՛ կարելի էր այսպես անել, կամ լավ կլիներ՝ այնպես լինել: Իսկ ո՞վ պետք է դա անի: Շատ մի էական սահմանափակում կա, նույնիսկ կարելի է ասել, որ բացարձակ սահմանափակում կա արտաքին քաղաքականության մեջ ԼՂՀ-ի մասնակցության համար: Եվ մենք ամոթխածորեն քաքցնում ենք, որ դա իբր գոյություն չունի, որ ԼՂՀ-ի համար արտաքին քաղաքականության մեջ մասնակցելու միակ անհրաժեշտությունը միայն Մինսկի լսմբի հետ շփվելն է և Ալյքբեջանի հետ բանակցություններ վարելը: Մա նույնպես ստերեոտիպների ոլորտից է: Որևէ մեկը մինչև հիմա պատասխանել է այն հարցին, թե որո՞նք են այն պատճառները, որ ԼՂՀ-ն մասնակցություն չունի արտաքին քաղաքականության մեջ: Այ, սա շատ կարևոր հարց է: Գիտե՞ք՝ բանն ինչ է, անկեղծ ասած, դրանում ոչ ոք չափազանցված չէ, ո՛չ Հայաստանի իշխանությունները, ո՛չ

քաղաքական դասն՝ ընդհանրապես և ո՛չ էլ ընդդիմադիր կուսակցությունները: Ղարաբաղում վերջին խորհրդարանական ընտրությունների ժամանակ Հայաստանի ընդդիմադիր կուսակցությունները շահագրգռված էին միայն մեկ բանում, որպեսզի Դաշնակցությունն այնտեղ տեղ չունենայ: Դաշնակցության դեկավարությունը Հայաստանում արեց ամեն ինչ, որպեսզի Դաշնակցությունը տապալի իր ընտրությունները: Եվ միայն Հայաստանի Նախագահն ու նաև, մասնակիորեն, Ղարաբաղի Նախագահն էր շահագրգռված, որպեսզի պառլամենտում 4-5 դաշնակ լիներ: Դա միանգամայն իրական իրավիճակ է և դա այդպես է: Հայաստանում քաղաքական դասը հետաքրքրված է միայն մեկ բանում, այն է, որպեսզի ինչ որ կտրուկ շրջադարձերում կարողանա շահել Ստեփանակերտի համակրանքը և ստանա նրա աջակցությունը՝ դրա վրա սպեկուլյացիա անելու նպատակով: Ուրիշ ոչ մի հետաքրքրություն չկա: Եթե Ղարաբաղի մասին որևէ բացարձակ սենսացիոն տեղեկատվություն լինի, ապա հայաստանյան թերթերը կհիշեն դրա մասին այն դեպքում, եթե այնտեղ կա Մերժ Սարգսյանի անունը, այն էլ կխոսեն միայն նրա մասին՝ չնշելով բուն խնդիրը: Մենք բոլորս ձև ենք թափում, թե, իբր, ինչ-որ շատ կարևոր բանի ենք հասել և հիմա մեզ մնում է միայն այն ուղղել, շտկել և այլն: Աղետ է: Մա կատարյալ աղետ է: Հայաստանում արվել է ամեն ինչ, որպեսզի ատեն դարաբաղցիներին: Այստեղ ամեն ինչ արվել է հետաքրքրությունը խնդրի նկատմամբ կորցնելու համար: Եվ մենք, ահա, հայտնվել ենք բանտախցային վիճակում և, կներք արտահայտությանս համար, օրենքով գողերի նման նստած՝ ժողովներ ենք անում:

Իսկ դիվանագիտական ծառայությունը միայն դիվանագիտական գործառույթներ է իրականացնում: Դիվանագիտական ծառայությունը չի կարող միայնակ զբաղվել արտաքին քաղաքականությամբ: Արտաքին քաղաքականությամբ զբաղվում են ամբողջ հասարակությամբ: Ամերիկայի Միացյալ Նահանգները

աշխարհի հզորագույն պետությունն է և, եթե Պետդեպարտամենտի որևէ մեկ բաժնի վարիչ ինչ-որ կերպ շարժվում է, բայեր է անում, ապա դրա մասին բոլորն իմանում են, քննարկում, կիրառվում են բոլոր միջոցները, դրան սկսում է խառնվել Մենատը, ներկայացուցիչների պալատը, հոլիվուդյան դերասանները, հայտնի գործիչները և այլն: Ամերիկյան հասարակությունը ինքն է կառուցում արտաքին քաղաքականությունը, իսկ մեզ մոտ դրան մոտ գալ չես կարող: Մեզ մոտ արդեն նույնիսկ պառլամենտը դրանում չի մասնակցում: Ես կասեի նաև, որ չի էլ ուզում մասնակցել: Ահա սա է իրականությունը:

Արկարի Կարապետյան

Իզոբն այստեղ ինձնից առաջ ընկավ և ասաց այն, ինչ ես էի պատրաստվում ասել: Ժամանակին մեր հասարակությունը Ղարաբաղում ինքն էր իրականացնում իր արտաքին քաղաքականությունը: Հիմա արվել է ամեն ինչ, որպեսզի մեզանից ոչ մեկը չզբաղվի արտաքին քաղաքականությամբ, ավելին, դրանով չի զբաղվում նաև մեր կառավարությունն այն առումով, որ պիտի զբաղվեր: Կարծես թե բոլոր ճանապարհները կտրված են: Դրանով զբաղվում է միայն Հայաստանը և, ինչպես Իզոբն ասաց, այն թարմ հոսանքը, որն անհրաժեշտ է ներմուծել, դա պիտի այն լինի, որ Լեռնային Ղարաբաղն ինքը կարողանա զբաղվել արտաքին քաղաքականությամբ: Եվ ընդհանրապես, ո՛չ միայն արտաքին, այլ նաև իր ներքին քաղաքականությամբ: Ներքին քաղաքականության առումով պետք է, որ կառավարությունը հասկացնի բոլոր չինովնիկներին, որ եթե մեր հայրենիքում նոր շեներ կառուցվեն, ապա իրենց բարեկեցությունը համամասնորեն կաճի: Այո, ողջ հասարակությամբ պետք է զբաղվենք քաղաքականությամբ, այն իմաստով չէ, որ բոլորս միասին ինչ-որ տեղ պետք է խցկվենք, այլ՝ հստակ կառավարման պայմաններում և ողջ հասարակությամբ:

Ռաֆայել Ղազարյան

Ես երկու պահի մասին եմ ուզում հիշատակել:

Նախ. նախահարձակության թեզի մասին, որն ուրախությանը այստեղ լսեցի և, որը, կարծես թե, ենթադրվում է կիրառել և հաջորդը՝ Ադրբեջանի կողմից մեր նկատմամբ ագրեսիայի վտանգի մասին:

Այս երկու պահի մասին շատ կարճ կասեմ:

Ուրախալի էր այսօր լսել, որ պարոն Ռուստամյանը խոսեց նախաձեռնության և դրա կիրառման մասին, բայց ցավալի է՝ որ շատ մեծ ուշացումով: Դա պետք է հենց ամենասկզբից լիներ մեր զինանոցում: Մենք արդեն տասը տարուց ավելի է, ինչ ասում ենք, որ մենք ագրեսոր ենք, իսկ Ադրբեջանն ամենուրեք այդ մասին գոռում է: Մինչդեռ, բոլորին հայտնի է, որ Ադրբեջանը պատերազմական գործողություններ սկսեց ոչ միայն իր երկրի ժողովրդի՝ ղարաբաղցիների դեմ, այլև ողջ հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով, իսկ Էլչիբեյը զգուշացնում էր, որ մեկ շաբաթ հետո լողալու է Սևանի ջրերում: Հայ-ադրբեջանական սահմանի ամբողջ երկայնքով տեղի էին ունենում պատերազմական գործողություններ, ոմբակոծվում էր Գորիսը, Ղափանը և այլն: Իսկ մենք լուռ ենք, որ ագրեսորը նա է և ոչ թե՛ մենք: Սա, թերևս, նախահարձակության մասնավոր դեպք է: Ես պարոն Մելիքյանի կողմից այսօր բերված թեզը նույնպես համարում եմ նախահարձակության տրամաբանության մեջ տեղավորվող, ինչն, իհարկե, ուրախացնող է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ես այստեղ ներկա գտնվողներից ամենաերիտասարդն եմ՝ ընդամենը 82 տարեկան, իհարկե, նախահարձակության հարցում ես պետք է որ ամենակոշտ դիրքորոշումն ունենամ, ինչը՝ ես արտահայտել եմ խորհրդարանական լսումների ժամանակ: Ուզում եմ մշել, որ այնտեղ ես առաջարկել եմ նախահարձակ լինել շատ ավելի համարձակ: Ասենք, եթե առաջ ենք քաշում Ղարաբաղի հարցը, ապա պետք է պահանջենք այն

քննարկել Հայկական հարցի ողջ համատեքստում, սկսած՝ Եղեռնից, սկսած՝ ուլիսոնյան Հայաստանից, սկսած՝ բոլշևիկների կողմից Թուրքիային ռուսահայքի կեսի հանձնումից, Նախիջևանից և այլն: Այսինքն՝ մենք պետք է պահանջենք, որ դարաբաղյան հարցը դիտարկվի համահայկական հարցի ամբողջականությամբ: Մա ամենամեծ նախահարձակ քայլն է, որ մեր կողմից պետք է արվի և չզիտես ինչո՞ւ, չի արվել: Ես չեմ ուզում թվարկել այլ մասնավոր դեպքեր, որտեղ, դարձյալ չզիտես ինչո՞ւ, լռել ենք, երբ կարելի էր նախահարձակ լինել:

Այսքանը նախահարձակության մասով:

Երկրորդ հարցը, որի մասին ուզում էի հիշատակել, այստեղ կարծես Իզորն ասաց, որ Ադրբեջանը 2,5 անգամ ավելի մեծ բանակ ունի թե՞ ռազմական բյուջե: Դա մեզ կարող է չանհանգստացնել, որովհետև մենք համոզվեցինք, որ երբ կար ժողովրդի ոգին 1988-89 թվականներից մինչև 1994 թվականը, մարդկային ռեսուրսներով և ռազմամթերքի առումով տասնյակ անգամներ մեզ գերազանցող Ադրբեջանը պարտվեց: Այստեղ է Վազգեն Մանուկյանը և նա ավելի լավ կարող է ասել, թե նրանք քանի անգամ ավելի էին լավ զինված մեզանից: Հիշենք, որ ռուսական ռազմամթերքի երկու ամենամեծ բազաները մնացին նրանց մոտ, բայց չնայած դրան, հաղթեցինք մենք՝ լինելով և՛ ավելի սակավ մարդկային թվով, և՛ շատ ավելի սակավ՝ ռազմամթերքի իմաստով: Այսինքն՝ մեզ դա կարող է չանհանգստացնել: Բայց կա մեկ ուրիշ անհանգստացնող հանգամանք. այնտեղ կար ոգի, կար 70 տարվա կուտակված լիցք, պատմական արդարության վերականգնման ցանկություն և այլն և այլն: Կա՞ արդյոք այդ ոգին այսօր: Ցավալի է, շատ ցավալի է: Ես պետք է ասեմ, որ այսօր ժողովրդի մոտ շատ ավելի առարկայական է հակակրանքը սեփական կառավարության, ոստիկանության և այլնի նկատմամբ, քան ասենք, օրինակ, ադրբեջանական ՕՍՕՆ-ի նկատմամբ, որը 1988-90 թվականներին այնտեղ

բռնություններ էր իրակացնում: Դա կարծես արդեն անցյալ է, իսկ, օրինակ, ապրիլի 13-ը՝ այսօրվա իրավիճակ է և այն է հակակրանք ստեղծում: Այսինքն՝ այն քաղաքականությունը, որ մեզ մոտ է իրականացվում, ես չեմ ուզում խոսել այն գործոնների մասին, որոնց մասին խոսեց Վազգեն Մանուկյանը, դրանք բոլորը՝ կոռուպցիան, օլիգարխիկ, ոստիկանական և այլ բաները, ստեղծել են այնպիսի մի իրավիճակ, որ մեզ մոտ առարկայական հակակրանք է ձևավորվել ժողովրդի մոտ, ինչը շատ վտանգավոր է այդ իմաստով: Դա ասվում է, իհարկե, այն իմաստով, որ մենք պետք է այստեղ շատ լուրջ մտածենք այդ մասին: Դուք հասկանում եք, թե ինչի մասին է խոսքը: Ես վերջացրեցի:

Շավարշ Քոչարյան

Ես, ուղղակի շատ կարճ, ուզում եմ ձեր ուշադրությունը հրավիրել հետևյալ հանգամանքի վրա. առաջինը, իմ մոտ այնպիսի տպավորություն է, համենայնդեպս բոլոր ելույթները, որ այստեղ լսեցի, հակված են նրան, որ 2006 թիվը իրականում չի լինելու կարգավորման տարի: Վերջինը դրա մասին Իզոր Մուրադյանն ասաց և ես նրա հետ համամիտ եմ: Մակայն, թե այդ ընթացքում տեղի ունեցող իմիտացիաները ինչպիսի՞ ազդեցություն կթողնեն հոգեբանության և ապագա մոտեցումների վրա՝ դա է խնդիրը: Պարզ օրինակ բերեմ. ես ասացի իմ ելույթում, որ Մինսկի խումբը և կարգավորողները «քարտ-բլանշ» են տվել Ադրբեջանին ընտրություններից առաջ: Ինչո՞ւ: Ադրբեջանում գնում էր բացահայտ մրցակցություն՝ ոյքան հնարավոր է ավելի կոշտ, ավելի բազե երևալու: Ընդ որում, ինչն է էականը, որ եթե դա մինչ այդ կատարում էին միայն հասարակական կազմակերպությունների և տարբեր ուժերի միջոցով, ապա հիմա մրցավազք է սկսվել իշխանական ճամբարում, բարձր պաշտոնյաների միջև, հասել են այն վիճակի, որ պաշտպանության նախարար Աբիևը զառանգանք հիշեցնող հայտարարություններ է անում: Հիմա մեկ հարց

տամ. «Ընտրական տարում ո՞ր ուղղությամբ կգնա մրցավազքը»: Ես ցավով պետք է նշեմ, որ այդ մրցավազքում կարող է մրցակցությունը գնալ ոչ թե «ո՞վ է ավելի շատ բազե», այլ՝ «ո՞վ է ավելի շատ աղավնի» կատեգորիաներում: Սա տերմինալոգիա է և շատ լուրջ պրոբլեմ: Ես ինչո՞ւ եմ սրա վրա ուշադրություն դարձնում: Մենք զգում ենք, որ քիչ հավանական է, որ 2006 թվականը կդառնա կարգավորման տարի, սակայն Ադրբեջանում սույնով առկա ռադիկալացումը ավելի կխորանա, այն նստվածք կտա ժողովրդի մոտ և կունենա լուրջ հետևանքներ ողջ հանրության համար: Այդ միտումը երևում է, այն շատ կարճատես է և ուղղված է դեպի ապագա ընտրությունները: Սա իր մեջ շատ լուրջ վտանգ է պարունակում:

Արման Մելիքյան

Ես կարծում եմ, որ մենք, գուցե, մի քննարկում էլ կազմակերպենք արդեն դեպքի վայրերին ավելի մոտ: Այսինքն՝ ես դիտարկում եմ նաև այդ հնարավորությունը, որ Ղարաբաղում էլ քննարկումներ անցկացվեն և հուսով եմ, որ չեք մերժի՝ համապատասխան հրավեր ստանալու դեպքում: Այս քննարկման ժամանակ մի բաց կա, որը, կարծում եմ, արժեր լրացնել, դա վերաբերում է այն հանգամանքին, որ այսօր այստեղ, փաստացի, չինչեց վերաբնակեցում իրականացնող կազմակերպությունների խոսքը: Հետաքրքիր կլիներ իմանալ, թե նրանք ի՞նչ խնդիրների հետ են բախվում իրենց գործունեության ընթացքում: Բայց երևի դա թողնենք ապագային:

Մարգարիտա Հովհաննիսյան

Ես մի փոքր ռեպլիկ ունեմ: Ուղղակի, այս երկու տարիների գործունեության ընթացքում մենք մեզ միշտ միայնակ ենք զգացել: Երբ որևէ այլ կազմակերպություն, խոսքը ֆինանսավորող կազմակերպության մասին է, լսում է մեր ծրագրերի մասին, մեզ որպես խենթի է նայում: Դրա համար, այս իմաստով, պետական

աջակցությունն այս կարգի ծրագրերին, իրենց մտադրությունների առումով, ուղղակի կարևոր է, որովհետև, օրինակ, հիմա մենք Սփյուռքում գործընկերներ ենք ուզում գտնել և բերել տարածքներ, իսկ դրա համար համապատասխան մթնոլորտ է անհրաժեշտ:

Ռաֆայել Ղազարյան

Պարոն Մելիքյան, կներեք, ես մոռացա հարցնել, որպես նախաձեռնության քայլ, Դուք ե՞րբ եք ենթադրում օրինականացնել այդ ազատագրված տարածքները և ներկայացնել որպես Արցախի իրական տարածքային քարտեզ, ասենք, վարչական մասով:

Արման Մելիքյան

Այդ տարածքներն այսօր գտնվում են Ղարաբաղի իշխանությունների իրավատիրություն, Ղարաբաղի ենթադատության տակ և մենք այդ տարածքների համար կրում ենք իրավական պատասխանատվություն բոլոր առումներով: Իսկ ինչ վերաբերում է օրինականացման խնդրին, ապա այսօր, անկեղծ ասած, պատրաստ չեմ Ձեզ ճիշտ ժամկետ նշելու և ասել թե, օրինակ, կես տարի հետո մենք կհայտարարենք, որ այդ տարածքներում ձևավորվում են այսինչ կամ այնինչ վարչական միավորները: Սա գործընթաց է և կարծում եմ, որ գործընթացն ինքը կթելադրի որոշակի մարտավարություն: Ուստի, չեմ ուզում առաջ ընկնել:

Ռաֆայել Ղազարյան

Չի բացառվում:

Արման Մելիքյան

Ես չեմ կարող որևէ բան բացառել կամ հաստատել: Իհարկե, չի բացառվում:

Մարասար Սարյան

Ես ներողություն եմ խնդրում այս նիստը ձգձգելու համար, բայց ուզում եմ մի բան ավելացնել: Այսօր ես փորձեցի ձեզ ներ-

կայացնել փախստականի հոգեբանությունը, իսկ հիմա ուզում եմ խոսել Սփյուռքի երիտասարդության հոգեբանության մասին: Սփյուռքից երիտասարդները, հատկապես ամռանը, շատ են լինում Շուշիում, այսպես կոչված, շինջոկատներում: Այստեղ նրանք, նույնիսկ խառնածինները, սկսում են փոքրիկ իրենց հայկական արմատները և գտնում դրանք: Մա շատ ու շատ նման է իսրայելական տարբերակին: Ես, իհարկե, չեմ ուզում, որ այն բոլոր տեսանկյուններով նման լինի, բայց այս իմաստով մենք դարձյալ շահում ենք և նրանց կողմից այդ հետաքրքրությունը ոչ թե պետք է կոտրել, այլ անհրաժեշտ է զարգացնել:

Ռաֆայել Ղազարյան

Իգոր, ես ուզում էի քեզ հարցնել, ինչպե՞ս ես նայում կանանց զինակոչին, օրինակ, ասենք, ինչպես դա արվում է Իսրայելում:

Իգոր Մուրադյան

Շատ դրական: Կանայք ցանկացած երկրի զինված ուժերի ամենակատաղի մասն են կազմում:

Էլեոնորա Ասատրյան

Այս գեղեցիկ նոտայի վրա էլ ավարտենք:
Շնորհակալություն:

Կ Ո Ն Ֆ Ե Ր Ա Ն Ս Ի ՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՍԱՐ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՓԱԹԵԹԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿԱԶՄԸ
- ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԾՐԱԳԻՐԸ
- ԼՂՀ ԱԳՆ ՄԵԿՆԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԽՄԲԻ (ՄՃԽ) «ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՅՐԻՑ» ԶԵԿՈՒՅՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ
- ՄԿԶՐՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՍԵՂՈՒՄԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ, ՀԻՄՆԱԽՆԴԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՐՆԹԱՑՈՒՄ: ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԶԱՐՏԵԶԻ ՆԱԽԱԳԻԾԸ
(Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի խորհրդական, զեներալ-մայոր ՀԱՅԿ ԲՈԹԱՆՋՅԱՆԻ՝ ՌԵԳՆՈՒՄ տեղեկատվական գործակալությանը 22.11.2005 տված հարցազրույցը)
- ԲՈԹԱՆՋՅԱՆԻ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ՝ ԿԱՐԾԻՔՆ Է
(ԼՂՀ ԱԺ պրտաքին հարաբերությունների հանճնաժողովի նախագահ Վահրամ Արանեսյանը պատասխանում է Karabakh - online-ի հարցերին, 09.12.2005)
- ԻՄԿ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ, ՊԱՐՈՆԱՅՔ ՄԻՋՆՈՐԴՆԵՐ
(«ԼՂՀ փախստականների կոմիտե» հասարակական կազմակերպության նախագահ Սարասար Սարյանը պատասխանում է Karabakh-online-ի հարցերին, 11.09.2005)
- ԼՂՀ ԱԳՆ ՄԵԿՆԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂՀ-ՈՒՄ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԱՆՅԿԱՑՄԱՆ 14-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹՎ
- ԶԱՂԱԲԱՅԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ՓՈՒՆԵՐԳՈՇՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ԽԱՂԱՂԱՐԱՐ ԳՈՐԾՐՆԹԱՑՈՒՄ
(ԱՕԿՄ-ի և ՌԴ ԱԳՆ աորները Միջազգային գիտական և մշակութային համագործակցության ռուսաստանյան կենտրոնի կողմից՝ «Եվրոպական ֆորումի» մասնակցությամբ, Երևանում 29-30.11.2005 կազմակերպված «ՀԱՅԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ: ՀԱՅԱՅՔ ԴԵՊԻ ԱՊԱԳԱՆ: ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՒՆՈՒՈՒԿԻԱՆՆԵՐԸ» գիտագործնական կոնֆերանսին 29.11.2005 Էլեոնորա Ասատրյանի կողմից ներկայացված զեկույցը: Զեկույցի ներկայացումը կատարվել է նախագահողի կողմից՝ հայալեզու լինելու պատճառով)

- ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԳԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԼՐԱՀՈՄԻՑ, 25.11.2005
- ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԳԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱԳՐԲԵՋԱՆՈՒՄ ԿՐԱԾ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎՆԱՄՆԵՐԻ ՓՈՒՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԸ
- ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԳԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՑՔ (Շափարչ Զոչարյան, «ԱյրՅե», 16, 17, 18, Մայիս, 2005թ.)

ԼՂՀ ԱԳՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԽՄԲԻ (ՄՃՆ)
«ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԳ՝ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ
ԻՐԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՅՐԻՑ»
ՁԵԿՈՒՅՑԻ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՄԲ

Միջազգային ճգնաժամային խմբի (ՄՃՆ) ղեկույցը բաղկացած է «Ամփոփ բովանդակությունից» (“Executive Summary”), հինգ հիմնական բաժիններից և հավելվածներից: Ձեկույցի հեղինակների և ՄՃՆ-ի ղեկավարության ներկայացուցիչները հավաստում են, որ իրենց նպատակն է եղել հակամարտության կողմերին, միջազգային միջնորդներին և, ընդհանրապես, լայն հասարակայնությանը ներկայացնել այնպիսի մի փաստաթուղթ, որն օբյեկտիվորեն կարտացոլեր հակամարտության իրական պատկերը՝ իր զարգացման ներկայիս փուլում: Հեղինակները ենթադրում են, որ ղեկույցը կարող է նշանակալից օգնություն ցուցաբերել Լեռնային Ղարաբաղի խաղաղ կարգավորման բանաձևի սահմանման հարցում ինչպես հակամարտության կողմերին, այնպես էլ միջնորդներին: Ընդ որում, ղեկույցի հեղինակները փորձ են անում կարգավորման վերաբերյալ կողմերի մոտեցումների նկատմամբ համահավասար հեռավորություն պահպանելու:

Ձեկույցի պատրաստման աշխատանքները իրականացված են բարձրորակ մասնագիտական մակարդակի վրա՝ շոշափվող թեմային նվիրված գիտական, հրապարակախոսական և այլ մեծաքանակ գրականության, ինչպես նաև հասարակագիտական հարցումների տվյալների կիրառմամբ: Ձեկույցը կազմելիս լայնորեն կիրառվել է ինչպես հակամարտության մեջ ներգրավված կողմերի իշխանությունների, այնպես էլ բնակչության տարբեր շերտերի ներկայացուցիչների և փորձագետների հետ հարցազրույց վարելու մեթոդը: Մույնով կարելի է արձանագրել, որ ղեկույցը բավականին տեղեկատվական է: Հակամարտության մի կողմի բերված փաստարկները, որպես կանոն, հերքվում են հա-

կառակ կողմի փաստարկներով, ինչը թույլ է տալիս հեղինակներին չեզոք դիրք գրավել և անկողմնապահ կերպով շարադրել հակամարտող կողմերի բերված փաստերը և դիրքորոշումները: Կասկած չկա, որ հենց այսպիսին կլինի գեկույցի ընկալումը ցանկացած ընթերցողի կողմից, որը ծանոթ չէ հակամարտության պատմության և տարածաշրջանում տիրող ներկա իրավիճակի հետ: Այնուհանդերձ, փաստաթուղթը պարունակում է որոշ նրբերանգներ, որոնք թույլ են տալիս խոսել ընթերցողի մոտ հեղինակների կողմից բուն հակամարտության և դրանում ներգրավված կողմերի գործողությունների մասին միանգամայն որոշակի կարծիք ստեղծելու շահագրգռվածության առկայության մասին:

Ձեկույցը նախադրվում է «Ամփոփ բովանդակությամբ», որը հակիրճ կերպով ընդհանրացնում է փաստաթղթի ողջ շարադրանքի էությունը: Մույնով, հենց սկզբից, այս բաժնի միջոցով ընթերցողին որոշակի կողմնորոշմամբ գեկույցը ընկալելու ծրագիր է պարտադրվում, որը հանգեցնում է հետևյալին՝

- Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը հակամարտություն է Հայաստանի և Ադրբեջանի միջև և, հետևաբար, դա տարածքային վեճ է.
- Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը Հարավային Կովկասում խաղաղության և կայունության հաստատման հիմնական խոչընդոտն է հանդիսանում.
- չնայած, որ Լեռնային Ղարաբաղը ոչ առանց հիմքի պնդում է, որ ժողովրդավարական և թափանցիկ ճանապարհով ընտրված ԼՂ իշխանությունների առկայությունը համապատասխանում է ժամանակակից ժողովրդավարական ընկերակցությանը ներկայացվող պահանջներին, միջազգային մակարդակներում այն ճանաչվում է որպես Ադրբեջանի մաս, իսկ անվտանգության և տնտեսական գոյատևման հարցերում էապես կախված է Հայաստանից.

- ադրբեջանական բնակչությունը չի մասնակցում ԼՂ-ի քաղաքական, տնտեսական, մշակութային և սոցիալական կյանքին.
- Լեռնային Ղարաբաղի հասարակությունը մոնոէթնիկ է և հանդիսանում է աշխարհի առավել ռազմականացված հասարակություններից մեկը.
- կես միլիոն ադրբեջանցիներ գրկված են ԼՂ-ում և յոթ հարակից շրջաններում իրենց նախկին բնակության վայրերը վերադառնալու հիմնարար իրավունքը իրականացնելու հնարավորությունից.
- դարաբաղյան հայերի և դարաբաղյան ադրբեջանցիների դիրքորոշումները տրամագծորեն հակադիր են և համայնքներից ոչ մեկը (!?) պատրաստ չէ քայլեր կատարել Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների պայմանավորվածությունների շրջանակներում.
- հակամարտության խաղաղ կարգավորմանը հատկացված ժամանակը սպառվում է.
- գեկույցը՝ լուսաբանելով Լեռնային Ղարաբաղի և հարակից տարածքների հայկական և ադրբեջանական համայնքների կյանքը (!??), կոչված է տալու խաղաղ համաձայնության ձեռքբերմանը և միջհամայնքային հետագա հաշտեցմանը նպատառող հատուկ առաջարկություններ:

Այսպիսով, գեկույցի բովանդակության հետ դեռևս անծանոթ ընթերցողի մոտ կանխավ ձևակերպվում է այնպիսի հանդգնումք, որ Հայաստանը՝ օգտվելով ԼՂ-ում հայ համայնքի առկայությունից, զավթողական գործողություններ է սկսել Ադրբեջանի դեմ, որի արդյունքում Լեռնային Ղարաբաղից և հարակից տարածքներից փտարվել են ավելի քան կես միլիոն ադրբեջանցիներ, որոնք հեղինակների տրամաբանության համաձայն կազմում են ԼՂ-ի ադրբեջանական համայնքը և, այսօր, միջազգային հանրության և, այդ թվում նաև, ՄՐԴ-ի խնդիրն է վերա-

կանգնել աղբբեջանցիների ուսնահարված իրավունքները և ստեղծել նախադրյալներ երկու համայնքների խաղաղ գոյակցության համար:

Ժողովրդավարական ճանապարհով ընտրված կառավարության առկայության փաստով հիմնավորված «ԼՂ-ի անկախության հավակնությունները» այս ֆոնի վրա երերում և վիճելի են թվում, առավել ևս, որ ԼՂ-ն անվտանգության և տնտեսության զարգացման հարցերում լուրջ կախվածության մեջ է գտնվում Հայաստանից: Ըստ երևույթին, ընթերցողին չապակողմնորոշելու համար զեկույցի այս մասում չի խոսվում Աղբբեջանից բռնի տեղահանված մոտավորապես կես միլիոն հայ փախստականների և Միացյալ Նահանգների կողմից ԼՂ-ին տրամադրվող ուղիղ կառավարական ֆինանսական օգնության մասին:

Այսպիսով, հեղինակները այս բաժնում համապատասխան նախադրյալներ են ստեղծում փաստաթղթի դրույթների յուրացման համար, որոնք, հավանաբար, հետագայում պետք է հիմք ծառայեն «հատուկ առաջարկությունների», այսինքն՝ հակամարտության կարգավորման բանաձևի համար՝

- Լեռնային Ղարաբաղի խնդրի էությունը՝ տարածքային վեճն է Հայաստանի և Աղբբեջանի միջև.
- աղբբեջանցի փախստականները և ներքին տեղաշարժի ենթարկված անձինք (ՆՏԱ) պետք է վերադառնան իրենց նախկին բնակության վայրերը.
- և հայերը, և աղբբեջանցիները հավասարապես մեղավոր են վստահության մթնոլորտի բացակայության համար.
- եթե կողմերը չգտնեն հաշտության ճանապարհներ Հայաստանի և Աղբբեջանի արտաքին գործերի նախարարների կողմից քննարկվող որոշումների շրջանակներում, ապա երկարաժամկետ խաղաղության հաստատելու պահը բաց կթողնվի, ինչից հետևում է, որ ռազմական գործողությունները կվերսկսվեն (այս պնդումն իր մեջ քողարկված սպառնալիք է պարունակում).

- ուրվագծվել են այն տարածքի սահմանները, որի բնակչությունը կարող է հավակնել նրան, որ բոլորից շատ է տուժել՝ դա նախկին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի (ԼՂԻՄ-ի) տարածքներն են և երբեմնի Աղբբեջանական ԽՍՀ-ի հարակից շրջանները (նման մոտեցումը բացառում է բանակցությունների ընթացքում Աղբբեջանից հայ փախստականների խնդրի քննարկումը, ինչպես նաև նրանց՝ իրենց նախկին բնակության վայրերը վերադառնալու հնարավորությունը, ինչն արտացոլում է բանակցությունների օրակարգից հայ փախստականների հարցը բացառելու նկատմամբ հատուկ շահագրգռվածությունը):

Այս իմաստով ասվածի բավականին ակնառու հավաստում է հանդիսանում զեկույցի «Բովանդակությունը», որը, ինչպես և «Ամփոփ բովանդակությունը», ծառայում է միևնույն նպատակին, այսինքն՝ համապատասխանում է հայ փախստականների և աղբբեջանցի փախստականների նկատմամբ ասիմետրիկ վերաբերմունքի տրամաբանությանը:

Չեկույցը սկսվում է «Ներածությամբ» (“Introduction”), որտեղ հակամարտության նախապատմությունը դիտարկվում է սկսած առաջին համաշխարհային պատերազմի ավարտից, իսկ դրա ժամանակակից փուլը՝ Հայաստանի և Աղբբեջանի միջև «վիճելի տարածքի համար» լայնածավալ պատերազմի սկզբից, որի արդյունքում «Լեռնային Ղարաբաղի գորբերը, Հայաստանից եկած կամավորների և պայմանագրային զինծառայողների աջակցությամբ, զավթեցին Աղբբեջանի տարածքի 13,4 տոկոսը, ներառյալ բուն ԼՂԻՄ-ի տարածքի 92.5 տոկոսը (!), ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի սահմաններից դուրս հինգ շրջան՝ ամբողջությամբ և երկու շրջան՝ մասնակիորեն»:

Չեկույցի հեղինակներն այս բաժնում ներկայացնում են նաև կողմերի մեկնաբանությունները: Սակայն, միաժամանակ, իրենց կողմից կատարում են մի շարք արձանագրումներ («լայ-

նաժապավազ պատերազմ Հայաստանի և Ադրբեջանի միջև», «վիճելի տարածք» և այլն), որոնք ընթերցողի մոտ հակամարտության նկատմամբ ձևավորում են այնպիսի վերաբերմունք, որը կհամապատասխաներ փաստաթղթի հեղինակների այս հարցի նկատմամբ ունեցած գնահատականներին: Իր վրա ուշադրություն է գրավում այն, թե ինչ կերպ են զեկույցի հեղինակները փորձում ցույց տալ, որ պատերազմական գործողություններին նախորդող էթնիկ զտումների քաղաքականությունը հայկական կողմը կիրառել է շատ ավելի վաղ, քան ադրբեջանականը: Հեղինակները, հաստատելով 1987թ. վերջերին Հայաստանից ադրբեջանցիների երևակայական արտաքսման մասին որևէ տեղեկատվության բացակայությունը, այնուհանդերձ վկայակոչում են Թոմաս դե Վաալի «Սև այգի» գիրքը և մի քանի այլ աղբյուրներ (*տես՝ ՄՃԽ զեկույց, ծանոթություն 19*), որոնցում նմանօրինակ հիշատակումներ հայտնվում են ենթադրական արտաքսման թվականից՝ 3-ից մինչև 15 տարի ուշացումով և, դա այն դեպքում, երբ այն ժամանակ նման կարգի իրադարձություններն անմիջապես և ազատորեն լուսարանվում էին ԽՍՀՄ-ի ՉԼՄ-ով¹:

Դատելով ամեն ինչից, որոշ դիպվածների համար տեղեկատվության հավաստիության ստուգումը առաջնահերթ խնդիր չի հանդիսացել զեկույցի հեղինակների համար, այլապես անհասկանալի է, թե ինչու ՀՀ կառավարության փախստականների և միգրացիայի վարչության պետի պաշտոնական տվյալներն այն մասին, որ 14500 ադրբեջանցի ընտանիքներ (մոտ 80000 մարդ) Հայաստանի կառավարությունից ստացել են ընդհանուր առմամբ շուրջ 110 միլիոն ԱՄՆ դոլարի փոխհատուցում՝ հերքվում են ադրբեջանցի փորձագետի կողմից այդ փաստի պարզ ժխտմամբ: Մինչդեռ, Հայաստանը լքած ադրբեջանական ըն-

¹1987 թվականի վերջում Հայաստանից ադրբեջանցիների արտաքսման մասին վարկածը հայտնվեց 1988 թվականի փետրվարի վերջում Մոսկվայից ադրբեջանցիների կողմից հայերի նկատմամբ իրականացրած էթնիկ զտումներից հետո, որպեսզի հայերի ջարդերը ներկայացվեն որպես Հայաստանից ադրբեջանցիների փտարման պատասխան:

տանիքների փոխհատուցման վճարման փաստը միանգամայն ենթակա է փաստաթղթային ստուգման և եթե այդպիսին չի կատարվել, ապա նշանակում է, որ խնդրի այս տեսանկյան օբյեկտիվ լուսարանման մեջ շահագրգռվածությունը բացակայել է:

Այս առումով բնութագրական են փախստականների և բռնի տեղահանվածների մասով զեկույցում բերված թվերը: Այսպես, փաստաթղթում նշվում է, որ «մոտավորապես 413000 հայեր լքեցին Ադրբեջանը և նրա հետ սահմանամերձ Հայաստանի տարածքները, 724 000 ադրբեջանցիներ (նաև քրդեր) բռնի տեղահանվեցին Հայաստանից, Լեռնային Ղարաբաղից և հարակից տարածքներից»: Մինչդեռ, հայ փախստականների մասով բերված թվերը վերաբերում են միայն այն մարդկանց, որոնք արտաքսման արդյունքում հայտնվեցին անմիջականորեն Հայաստանում, որտեղ էլ գրանցվեցին: Այնինչ, հայ փախստականների թվին պատկանում են Ադրբեջանի հայազգի այն տասնյակ (եթե ոչ հարյուր) հազարավոր քաղաքացիները, որոնք մեկնեցին Թուրքմենստան, Հյուսիսային Կովկաս և այլ վայրեր: Այս հանգամանքը զեկույցում հաշվի չի առնված:

Միաժամանակ փորձ է արվում ընթերցողին մոլորության մեջ գցել Հայաստանի՝ Ադրբեջանի հետ սահմանամերձ շրջաններից ՆՏԱ-ի մասին հիշատակմամբ, քանի որ այսպիսով քողարկվում է այն փաստը, որ բերված թվից մոտ 400 000-ը արտաքսված են անմիջականորեն Ադրբեջանից:

Չեկույցում բացթողում կարելի է համարել նաև այն փաստի լուրջան մատնումը, որ գործնականում հայերի 90 տոկոսը փախստական դարձավ էթնիկ զտումների, ջարդերի և ոստիկանական պատժիչ գործողությունների հետևանքով՝ կազմակերպված Ադրբեջանի իշխանությունների կողմից 1988-1991թվականներին, այդ այն դեպքում, երբ ադրբեջանցիների 85 տոկոսը ստիպված էին լքել իրենց տներն արդեն ռազմական գործողությունների ընթացքում՝ սկսած 1993 թվականից, ընդ որում նրանք բռնի կերպով չէին տեղահանվում, այլ հեռանում էին նահանջող

աղյրեջանական գորքերի հետ միասին՝ իրենց սեփական իշխանությունների հրահանգով: Իսկ ռազմական գործողությունները հրահրված էին Աղյրեջանի իշխանությունների կողմից, որոնք չէին ցանկանում ճանաչել ԼՂՀ անկախությունը:

«Ներածություն» բաժինը եզրափակվում է այն պնդմամբ, որ զեկույցն ուղղված է լուսաբանելու «այն իրավիճակը, որում հայտնվել են Լեռնային Ղարաբաղի և հարակից շրջանների երկու հիմնական համայնքները, որոնք տուժել են ռազմական դիմակայությունից ավելի, քան Հայաստանի և Աղյրեջանի միջև հակամարտության արդյունքում բռնի տեղահանված մնացած բնակչությունը»:

Այս պնդումը հավասարազոր է այն բանի արձանագրմանը, որ տուժել է միայն աղյրեջանական ազգաբնակչությունը, քանի որ ներքին տեղաշարժված աղյրեջանցիների մոտավորապես 85 տոկոսը լքել է իր տները աղյրեջանական բանակի նահանջի ընթացքում: Ընդ որում, այդ ժամանակ աղյրեջանցիները չեն ենթարկվել անարգանքների և կոտորածի, ինչպես դա տեղի ունեցավ հայերի հետ Աղյրեջանում:

Այսպիսով, «Ներածության» մեջ փախստականների և ՆՏԱ-ի նկատմամբ ազգային պատկանելության հատկանիշով ասիմետրիկ վերաբերմունքի հիմքն է դրվում՝ հոգուտ աղյրեջանցիների բացահայտ շեղվածքով՝ հայ փախստականների գործոնի գործնականորեն լիակատար բացառմամբ: Միաժամանակ, հերթական անգամ նշվում է, որ հակամարտությունը տարածքային վեճ է հանդիսանում Հայաստանի և Աղյրեջանի միջև և որ այն պետք է լուծվի միջհամայնքային հաշտեցման ճանապարհով: Հատկանշական է նաև այն, որ տարածքային սահմանները, որտեղ պետք է կայանա միջհամայնքային հաշտեցումը, ընդհանրված են և համապատասխանում են Աղյրեջանական Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերի միջև այսօր գոյություն ունեցող բաժանարար գծին:

Զեկույցի II և III մասերը՝ համապատասխանաբար վերագրված «Կյանքը Լեռնային Ղարաբաղում» (“Life in Nagorno-Karabakh”) և «Աղյրեջանական ՆՏԱ-ի կյանքի պայմանները» (“Living Conditions for Azeri IDPs”), կոչված են խորացնելու ընթերցողի մոտ «Ամփոփ բովանդակությունից» և «Ներածությունից» ստացած տպավորությունները: «Կյանքը Լեռնային Ղարաբաղում» բաժնում, սկզբում բերվում են որոշ տվյալներ ղարաբաղյան շարժման նորագույն փուլի՝ սկսած 1988 թվականից, ինչպես նաև հակամարտության կողմերի փոխադարձաբար բացառող դիրքորոշումների մասին, այնուհետև տրվում են վիճակագրական տվյալներ բնակչության վերաբերյալ, որոնք պետք է հռետեստրեն տրամադրեն ընթերցողին ԼՂՀ-ում առկա ժողովրդագրական իրավիճակի նկատմամբ. այսինքն՝ ցույց տան, որ նրա նախապատերազմյան բնակչության մեկ երրորդը լքել է երկիրը, իսկ ներկայիս բնակչության կեսն՝ ապրում է մայրաքաղաքում: Ընդ որում չի խոսվում այն մասին, որ այդ նույն ժամանակահատվածում Աղյրեջանը լքել են 2,5-3,0 միլիոն աղյրեջանցիներ: Դրա հետ միաժամանակ, հայ այն փախստականների քանակությունը, որոնք հեղինակների հավաստմամբ պատկանում են պատերազմի արդյունքում առավել տուժածների կատեգորիային, կրճատվում է մինչև 35000 մարդ (դրանք ՆՏԱ են Շահումյանի, Մարտունու և Մարդակերտու շրջաններից): Այս թվին հակադրվում են ԼՂՀ-ի վերահսկողության տակ գտնվող տարածքները լքած մոտ 425000 աղյրեջանցիները: Օեղումը հոգուտ աղյրեջանցի փախստականների դրսևորվում է նաև զուտ մաթեմատիկական արտահայտությամբ, այսպես. աղյրեջանցի փախստականները հիշատակվում են 186 անգամ, հայերը՝ ընդամենը 40 անգամ: Ընդ որում հայ փախստականները հաճախ հիշատակվում են բացասական համատեքստում՝ որպես ԼՂՀ վերահսկողության տակ գտնվող տարածքներում ապօրինի կերպով վերաբնակված անձինք:

II մասի երկրորդ ենթաբաժինը վերնագրված է “Power Structures”, ինչը քարգմանաբար նշանակում է «Իշխանության կառույցները», սակայն, քանի որ տվյալ ենթաբաժնի առաջին կետը վերնագրված է «Ձինված ուժերը» (“Armed Forces”), ապա ակնհայտ է դառնում ընթերցողի մոտ ենթագիտակցական մակարդակում ԼՂՀ-ն որպես ռազմականացված կազմակերպություն ընկալելու նախադրյալներն ամրապնդելու ձգտումը:

Առաջին կետի առաջին իսկ նախադասությունը տեղեկացնում է, որ. «ԼՂ-ն, թերևս, աշխարհի առավել ռազմականացված հասարակությունն է»: Հաղորդելով ԼՂՀ-ի Պաշտպանության բանակում (ԼՂՀ ՊԲ) 18500 զինվորների առկայության մասին, զեկույցի հեղինակները նույն տեղում չեն տեղեկացնում նաև, որ ԼՂՀ ՊԲ-ն ստիպված է պահպանել իր պետության սահմանները իր դիմաց կանգնած ադրբեջանական բանակի ավելի քան քառասուն հազարանոց խմբավորումից:

Ընդհանրապես, զեկույցի այս մասի բոլոր կետերի առաջին նախադասությունները յուրովի ծածկագիր են հանդիսանում կետերի բովանդակության համապատասխան ընկալման համար և եթե հաջորդաբար դասավորենք II և III մասերի բոլոր ենթավերնագրերի բոլոր առաջին նախադասությունները, ապա արդյունքում կատանանք ԼՂՀ-ի և ԱՀ-ի վերաբերյալ այն հակիրճ շարադրանքը, որն իրականում հասցեագրված է ընթերցողին: Դա յուրատեսակ տեխնիկական հնարք է, որը կարող է համապատասխան կերպով տրամադրել ընթերցողին և մղել կարգավորման ուղիների վերաբերյալ հետագա առաջարկությունների ընդունմանը:

II ՄԱՍ. ԿՅԱՆՔԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Թեև Լեռնային Ղարաբաղը գործում է հիմնականում որպես ինքնուրույն պետական կազմավորում, որի տնտեսական և ռազմական անվտանգությունը երաշխավորվում է Հայաստանի կող-

մից, սակայն միջազգայնորեն այն ճանաչված է որպես Ադրբեջանի մաս: Լեռնային Ղարաբաղի հասարակությունը, թերևս, հանդիսանում է աշխարհի առավել ռազմականացված հասարակությունը: Սկսած 1992 թվականից ԼՂ-ում մի շարք ընտրություններ են անցկացվել, որոնց արդյունքները միջազգայնորեն չեն ճանաչվել: Լեռնային Ղարաբաղում գրանցված են 80 ոչ կառավարական կազմակերպություններ, որոնցից գործում են ընդամենը մոտ 10 տոկոսը: Լեռնային Ղարաբաղի իշխանություններին խորթ չեն կաշառակերությունը և քրեական բնույթի գործողությունները: ԼՂ տնտեսությունը սկզբում ինտեգրված էր Խորհրդային Ադրբեջանի տնտեսությանը, սակայն այնուհետև այն լրջորեն քայքայվեց պատերազմի արդյունքում: Լեռնային Ղարաբաղը մեծապես կախված է արտաքին օգնությունից, առաջին հերթին՝ եկող Հայաստանից, ինչպես նաև ԱՄՆ-ից և աշխարհի ողջ Միջուրքից: Լեռնային Ղարաբաղը հիմնականում իրենից ներկայացնում է բարձր լեռների և սակավաթիվ հովիտների գոտի: Հողի սեփականաշնորհումը և միջին քիզնեսի ձևավորումը հիմնականում ավարտվել է: Գործազրկության իրական պատկերը դժվար է ուրվագծել, սակայն, համաձայն պաշտոնական տվյալների՝ 2003 թվականին այն կազմել է 5,6 տոկոս:

III ՄԱՍ. ԱՂԻՔԵԶԱՆԱԿԱՆ ՆՏԱ-Ի ԿՅԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Լեռնային Ղարաբաղից և հարակից շրջաններից ավելի քան կես միլիոն ադրբեջանցիներ գրկված են այն տարածքների քաղաքական, սոցիալական կամ տնտեսական ցանկացած մակարդակի կյանքին մասնակցելու հնարավորությունից, որոնցից նրանք դուրս էին մղվել 1988-1992 թվականների միջև ընկած ժամանակահատվածում: Մինչև 2001 թվականը ՆՏԱ-ի մասով կառավարության քաղաքականությունը և համապատասխան նախագծերն ուղղված էին նրանց կարճաժամկետ կարիքների

ապահովմանը: Որոշ միջազգային կազմակերպություններ մեղադրեցին Ադրբեջանին՝ ՆՏԱ-ին որպես «քաղաքական ռազմագերիներ», քաղաքական կարգավորման «պատանդներ» օգտագործելու մեջ: Ադրբեջանական պետության վերաբերմունքը ՆՏԱ-ի նկատմամբ արտահայտված է նախագահական մի քանի հրամանագրերում, ինչպես նաև 2004 թվականին ընդունված «Փախստականների և ՆՏԱ-ի կյանքի մակարդակի բարձրացման և զբաղվածության աճի խթանման համալիր պետական ծրագրում»: Բոլոր ՆՏԱ-ի համար, բացառությամբ նրանց անցյալ փոքրամասնության, որը կարողացել է հաջող ինտեգրվել քաղաքներում, համապատասխան բնակարանի ձեռքբերումը մեծ հաջողություն է հանդիսանում: Չնայած կառավարական օգնությունը ՆՏԱ-ին աճել է, այնուհանդերձ ՄԱԿ-ի Պարենային Ծրագրի նախաձեռնությամբ իրականացված հետազոտությունը ցույց է տալիս, որ. «ՆՏԱ-ի պարենային անապահովվածությունը 1998 թվականի 74 տոկոսից՝ 2001 թվականին աճել է մինչև 90 տոկոս»: Բնակարանային խնդրից հետո, ըստ իր նշանակության, ՆՏԱ-ի համար երկրորդ տեղում է նրանց զբաղվածության հարցը: ՆՏԱ-ն արտահայտում են իրենց դժգոհությունը կառավարությունից՝ հատկապես կաշառակերության մասով: ՆՏԱ-ի, ինչպես նաև Ադրբեջանի մյուս քաղաքացիների համար, իրենց կողմից իրենց իրավունքները պաշտպանելու առումով հիմնական չափանիշը հանդիսանում է քաղաքական կյանքում իրենց մասնակցության ներուժը: Ադրբեջանի Սահմանադրությունը երաշխավորում է տեղաշարժման ազատությունը և բնակության վայրի ազատ ընտրության իրավունքը: ՆՏԱ-ն ունեն մյուս քաղաքացիների հետ միևնույն իրավունքները, սակայն քաղաքական կյանքում, հատկապես պատգամավորական ընտրություններում, նրանց հնարավորությունները սահմանափակ են: Միջազգային կազմակերպությունները վկան են դարձել սեփական թեկնածուների օգտին քվեարկելու գործընթացում ՆՏԱ-ի իրավունքների որոշ խախտումների:

* * *

Ձեկույցի II և III մասերն իրենցից ասես երկու կարճ պատմություններ են ներկայացնում, որոնցից մեկը մոայլ երանգներով ընթերցողին ծանոթացնում է ԼՂՀ-ում տիրող իրավիճակի հետ՝ կասկած սերմանելով նրա գործունակության և ժողովրդավարության նկատմամբ, մինչդեռ երկրորդը գեղարվեստորեն ներկայացնում է Ադրբեջանի հոգածությունը ՆՏԱ-ի նկատմամբ և այն դժվարությունները, որոնք կապված են ժողովրդավարական հասարակության մեջ նրանց խնդիրները լուծելու հետ, հասարակություն՝ որտեղ երաշխավորվում է տեղաշարժի ազատությունը և բնակության վայրի ազատ ընտրության իրավունքը:

Նմանօրինակ հակադրության համար գեկույցում կիրառվել են նաև այլ հնարքներ: Օրինակ, II մասի առաջին գլխում, վերնագրված՝ «Ներկայիս բնակիչները» (“Today’s Inhabitants”), տեղեկատվություն կա ԼՂՀ ԱԳ նախարարի հետ ՄՃԽ-ի ներկայացուցչի ունեցած հանդիպման մասին, ուր ասվում է. «(դե ֆակտո) ԱԳ նախարարը ՄՃԽ-ին հայտարարեց, որ ինքը գտնում է, որ բոլոր այն հայերը, որոնք ապրել են Ադրբեջանում, ինչպես նաև նրանք, որոնց նախնիները ծնունդով այնտեղից են, *նա հաշվեց մինչև 500 000 մարդ*, իրավունք ունեն քաղաքացիություն ստանալու (խոսքը գնում է ԼՂՀ քաղաքացիության մասին-*ծանոթությունը ԼՂՀ ԱԳ-Ն ՏՎՎ-ի*): Նա ավելացրեց նաև, որ Լեռնային Ղարաբաղում ծնված անձանց ԼՂՀ օրենքի նախագծով թույլատրվում է երկքաղաքացիություն ունենալ: Դա նրանց հնարավորություն կտա ձեռք բերել Հայաստանի քաղաքացիություն»: Իրականում ԼՂՀ ԱԳ նախարարը ՄՃԽ-ի ներկայացուցիչներին հայտնել է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը շահագրգռված է Խորհրդային Ադրբեջանից զաղթած հայերի իրավունքների պաշտպանությամբ և, ելնելով այս նկատառումներից, նույնիսկ այլ քաղաքացիության առկայության դեպքում, նրանց համար նաև ԼՂՀ քաղաքացիություն ստանալու պայմաններ է ստեղծում, և որ ԼՂՀ-ն խթանելու է իր

սեփական՝ և ոչ թե Հայաստանի քաղաքացիների քանակության աճը, ինչպես հետագայում ներկայացրել է ՄՃԽ-ի ներկայացուցիչը:

IV և V մասերը, ինչպես նաև զեկույցի հավելվածները, կոչված են տակ ուժեղացնելու փաստաթղթից ստացված տպավորությունը:

Ելնելով վերոշարադրայից, կարելի է նշել հետևյալը.

ԶԵԿՈՒՅՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- Ներկայացնել դարաբաղյան հակամարտությունը որպես Հայաստանի կողմից Ադրբեջանի նկատմամբ տարածքային ոտնձգության հետևանք.
- տպավորություն ստեղծել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն, ըստ էության, չի հանդիսանում գործունակ պետական կազմավորում և ամբողջությամբ կախված է արտաքին տնտեսական օգնությունից, իսկ անվտանգության հարցերով գտնվում է Հայաստանից լիակատար կախվածության մեջ, ընդ որում, ԼՂՀ բնակչությունը լքում է երկիրը, իսկ գերագույն իշխանության ներկայացուցիչներին խորթ չէ կաշառակերությունը.
- համոզել միջազգային հանրությանը, որ ադրբեջանական ազգության ՆՏԱ-ը հակամարտությունից առավել տուժածներն են.
- ցույց տալ միջազգային հանրությանը, որ չնայած որոշ բացթողումների և թերությունների, Ադրբեջանի ղեկավարությունը գործադրում է բոլոր հնարավոր ջանքերը թեթևացնելու համար ադրբեջանցի փախստականների և ՆՏԱ-ի վիճակը.
- համոզել միջազգային հանրությանը, որ ադրբեջանական ՆՏԱ-ը պետք է վերադառնան իրենց նախկին բնակության վայրերը.
- համոզել միջազգային հանրությանը, որ հակամարտության լուծման բանալին՝ «Լեռնային Ղարաբաղի և հա-

րակից շրջանների հայկական և ադրբեջանական համայնքների հաշտեցումն է», իսկ այդպիսի հաշտեցման խթան կարող է հանդիսանալ ադրբեջանական ազգության ՆՏԱ-ի վերադարձը իրենց նախկին բնակության վայրերը.

- համոզել հակամարտության կողմերին, որ այսպիսի որոշման այլընտրանք է հանդիսանում պատերազմը:

ԶԵԿՈՒՅՑԻ ԴՐԱԿԱՆ ՊՆԴՈՒՄՆԵՐԸ

- ԼՂՀ-ն անհիմն չի հավակնում իր անկախությանը.
- ԼՂՀ-ի վերահսկողության տակ գտնվող տարածքները Հայաստանի կողմից չեն բռնազավթված.
- Ադրբեջանի պնդումները մեկ միլիոն ադրբեջանցի փախստականների առկայության և տարածքի 20 տոկոսի կորուստի մասին չեն համապատասխանում իրականությանը:

ԶԵԿՈՒՅՑԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՊՆԴՈՒՄՆԵՐԸ

- զեկույցում լիովին արհամարհված են հայազգի փախստականների և ՆՏԱ-ի շահերը, ինչը հանդիսանում է միջազգային ոչ կառավարական կազմակերպության կողմից ազգային պատկանելության հատկանիշով պայմանավորված խտրականության դրսևորում.
- զեկույցը հակամարտության գոտում պատերազմական գործողությունների վերականգնման սպառնալիք է պարունակում.
- իր զեկույցում ՄՃԽ-ը չի ճանաչում ԼՂՀ-ի սահմանները և ելնում է նախկին ԽՍՀՄ-ում գոյություն ունեցող վարչատնտեսական բաժանումից (տես՝ Հավելված B).
- զեկույցում նկատվում է հեղինակների մտադրությունը հավասարեցնել հակամարտության ծագման հարցում հայերի և ադրբեջանցիների մեղավորության աստիճանը

(այս նոտեցումը կիրառվում էր նախկին ԽՍՀՄ-ի կոմունիստական իշխանությունների կողմից 1988թ.-ից մինչև 1991թ. ընկած ժամանակահատվածում, ինչն արդյունքում հնարավոր դարձրեց Ադրբեջանական Հանրապետության ազդեսիան՝ ընդդեմ ԼՂՀ-ի)։

- ըստ էության, ակնհայտ է ցանկությունը որպես կարգավորման դեղատոմս առաջարկելու միջկամայնքային հաշտեցումը ադրբեջանական ՆՏԱ-ի և փախստականների վերադարձից հետո՝ առանց ԼՂՀ-ի կարգավիճակի խնդիրը լուծելու։

ԼՂՀ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Ղարաբաղյան հիմնախնդրի կապակցությանը ԼՂՀ-ն ունի հետևյալ պաշտոնական դիրքորոշումը

- ԼՂՀ-ի ժողովուրդը և իշխանությունները երախտապարտ են միջազգային հանրությանը այն հետևողական ջանքերի համար, որոնք ուղղված են ԼՂՀ-ի դեմ Ադրբեջանական Հանրապետության զինված ազդեսիայի արդյունքում առաջացած Ղարաբաղյան հակամարտության համապարփակ խաղաղ կարգավորմանը։
- ԼՂՀ-ի ժողովրդի համար գերագույն արժեք է հանդիսանում իր անկախությունը։
- խոսել հայկական համայնքի առկայության մասին ԼՂՀ-ում, դա միևնույնն է, ինչ խոսել ադրբեջանական համայնքի մասին՝ Ադրբեջանում։ ԼՂՀ-ի հասարակությունը երբեք համայնքային կազմակերպության ձև չի ունեցել։
- հակամարտության հետևանքները վերացնելու համար առաջին հերթին պետք է վերացվեն հակամարտության պատճառները։
- Ադրբեջանի հայազգի քաղաքացիների ջարդերի և էթնիկ զտումների, ինչպես նաև ԼՂՀ-ի ժողովրդի դեմ պատե-

րազմ սանձագերծելու համար մեղավորները պետք է պատիժ կրեն։

- կարգավորման բանաձևը պետք է նախատեսի Ադրբեջանական Հանրապետության իշխանությունների և Արցախի ժողովրդի միջև առաջացած դիմակայության ծավալման ընթացքում տուժած բոլոր անձանց իրավունքների նկատմամբ հավասար հարգալից վերաբերմունք և բացառի ազգային կամ քաղաքացիական պատկանելության հատկանիշով ցանկացած խտրականություն։

ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂՈՒՄԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱՆՆԳՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՅՈՒՄ ԸՆՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի խորհրդական, գեներալ-մայոր ՀԱՅԿ ԶՈԹԱՆԶՅԱՆԻ՝ ՌԵԳՆՈՒՄ տեղեկատվական գործակալությանը 22.11.2005 տված հարցազրույցը

ՌԵԳՆՈՒՄ *Որտե՞ր են տարածքային ամբողջականության և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքների համատեղման չափանիշները Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման պարագայում։*

ՀԱՅԿ ԶՈԹԱՆԶՅԱՆ *Ղարաբաղյան հակամարտության անկողմնակալ քաղաքական-իրավական բնորոշումը անշեղորեն բերում է տվյալ սկզբունքների համատեղման գլխավոր չափանիշի սահմանմանը։ Որպես տվյալ չափանիշ և Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման համակարգի որակի բնութագրիչ հանդիսանում է 1991 թվականին Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքում օրինական ճանապարհով երկու լեզիտիմ պետությունների՝ Ադրբեջանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապե-*

տության ստեղծման իրավաբանական փաստի նկատմամբ վերաբերմունքի օբյեկտիվությունը:

ՈՒԳՆՈՒՄ

Ինչպե՞ս կգնահատեիք միջազգային հանրության վերաբերմունքը ԼՂՀ-ի գոյության փաստին և Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործում նրա մասնակցությանը:

ՀԱՅԿ

ՔՈԹԱՆՋՅԱՆ

Հայտնի է, որ ԼՂՀ-ն պաշտոնապես դասվում է չճանաչված պետությունների թվին: Այդուհանդերձ անհրաժեշտ է հիմք ընդունել այն անհերքելի ճշմարտությունը, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը Հարավային Կովկասում տարածաշրջանային կայունության և անվտանգության ճանաչված սուբյեկտ է: Այլ պետությունների համեմատ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախ կարգավիճակի բացառիկ տարբերության ճանաչումը միջազգային հանրության կողմից հիմնվում է նախ՝ ԼՂՀ-ի օրինական ճանապարհով ստեղծված լինելու փաստի վրա: Երկրորդ՝ միջազգային հանրությունն ընդունում է Հարավային Կովկասում անվտանգության ապահովման ուղղությամբ ընդհանուր ջանքերի շրջանակներում ԼՂՀ-ի, այդ թվում՝ նրա կանոնավոր բանակի բազմամյա գործնական ներդրումը հրադադարի ռեժիմի պահպանման գործում: Տվյալ իրողությունները, ինչպես նաև ներքին և արտաքին քաղաքականության ոլորտներում Լեռնային Ղարաբաղի ընտրական ինստիտուտների անընդմեջ 14-ամյա արդյունավետ գործունեությունը անհերքելի հիմք են ծառայում Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործում ԼՂՀ-ի իշխանությունների հետ միջազգային հանրության լիազորված կազմակեր-

պությունների բարեհաջող փոխզործակցության համար:

ՈՒԳՆՈՒՄ

Ինչպիսի՞ն է տարածքային ամբողջականության սկզբունքի կիրառման հնարավորությունը Ադրբեջանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նկատմամբ:

ՀԱՅԿ

ՔՈԹԱՆՋՅԱՆ

Ղարաբաղյան հակամարտության կողմերի նկատմամբ տարածքային ամբողջականության սկզբունքի կիրառումը ենթադրում է 1990 թվականի «ԽՍՀՄ -ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ-ի օրենքի իրավական կիրառման ժամանակահատվածում հանրաքվեի ճանապարհով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծման վերոնշյալ փաստի ճանաչում: Այսպիսով, մինչ ԽՍՀՄ -ի գոյության դադարեցման մասին 1991 թվականի դեկտեմբերի 21-ի Ալմա Աթայի Հռչակագրի հրապարակումը, ԼՂՀ-ի լեգիտիմ ստեղծման արդյունքում Ադրբեջանական ԽՍՀ-ին ԼՂՀ-ի տարածքի և իշխանությունների վարչական ենթակայության հարաբերությունները դադարեցվեցին միանգամայն օրինական ճանապարհով: ԽՍՀՄ-ի գոյության դադարեցման օրվանից, չլինելով արդեն Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում, ԼՂՀ-ն դուրս եկավ նաև ԽՍՀՄ-ին տարածքային ենթակայությունից և ձեռք բերեց անկախ իրավական սուբյեկտի կարգավիճակ: Ըստ որում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ որպես լեգիտիմորեն ստեղծված անկախ պետություն, միջազգային-իրավական հիմք ձեռք բերեց իր անկախությունը պաշտ-

պանելու համար՝ օգտվելով սեփական սահմանների շրջանակներում «տարածքային ամբողջականության» սկզբունքից: Հետևաբար տարածքային ամբողջականության սկզբունքը Ադրբեջանի Հանրապետության նկատմամբ կիրառելի է միջազգային իրավունքի նորմերի սահմաններում, որոնք բացառում են նրա հավակնությունները այլ ինքնավար պետության, այն է՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքի նկատմամբ:

ՌԵԳՆՈՒՄ

Որքանո՞վ է իրատեսական Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ Միջազգային ճգնաժամային խմբի 2005թ. հոկտեմբերի 11-ի եզրակացությունը:

ՀԱՅԿ

ՋՈԹԱՆԶՅԱՆ

Անշուշտ կարևոր է այն ուշադրությունը, որ հատկացնում է Միջազգային ճգնաժամային խումբը Լեռնային Ղարաբաղին՝ որպես հակամարտության կողմի և կարգավորման գործընթացի լիիրավ մասնակցի: ՄՃԽ-ն՝ լինելով վերլուծական հանրության հեղինակավոր անդամ, զնահատում է կառուցողական քննադատությունը և առավել հաճախ հաշվի նստում դրա հետ: Ահա թե ինչու, ՄՃԽ-ի մեր գործընկերների աշխատանքի նկատմամբ ողջ հարգանքով հանդերձ, անհրաժեշտ են համարում նշել նրանց եզրակացությունների անբավարար իրատեսությունը: Հետևելով փախստականների շուտափույթ վերադարձի մասին նրանց խորհուրդներին, դժվար թե հնարավոր լինի հակամարտող ժողովուրդների միջև հարաբերություններում վստահության արմատացած ճգնաժամի պայմաններում հասնել պահանջվող կայունության՝ որպես բախման գոտում լրացուցիչ հան-

րաքվեի անցկացման հիմնարար նախապայմանի: Համաշխարհային փորձը լի է փախստականների նկատմամբ անխռիմ ֆորմալիզմի կիրառման դառը դասերով: Այդ իսկ պատճառով դարաբաղյան փախստականների շրջանում հանրաքվե նախընտրելի է անցկացնել ԼՂՀ-ի տարածքից դուրս նրանց իրական քնակավայրերում՝ միջազգային հանրության լիազոր կազմակերպությունների հսկողությամբ:

ՌԵԳՆՈՒՄ

Որո՞նք են միջազգային իրավունքի նշյալ երկու սկզբունքների գործնական համատեղման հնարավորությունները Ղարաբաղյան խնդրի կարգավորման քաղաքական պրակտիկայում:

ՀԱՅԿ

ՋՈԹԱՆԶՅԱՆ

Այդ մոտեցումը պետք է արտացոլի Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքում 1991 թվականին ստեղծված երկու պետությունների լեգիտիմության, հավասար իրավագործության և տարածքային ամբողջականության փաստը: Տվյալ մոտեցման իրականացման տրամաբանությունը ենթադրում է ընդունել ինքնորոշման սկզբունքի կիրառման անհրաժեշտությունը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի նկատմամբ և տարածքային ամբողջականության սկզբունքին՝ Ադրբեջանի Հանրապետության հողերի նկատմամբ, որոնք գտնվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հսկողության տակ՝ նրան շրջապատող անվտանգության գոտում: Նույն տրամաբանությամբ էլ ԼՂՀ-ի տարածքային ամբողջականության սկզբունքը ենթադրվում է կիրառել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի և Մարտակերտի շրջանների

տարածքների նկատմամբ, որոնք գտնվում են Ադրբեջանի հսկողության տակ:

ՈՒԳՆՈՒՄ

Ինչպիսի՞ն է ձեզ պատկերանում Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման ճանապարհային քարտեզը:

ՀԱՅԿ

ՔՈԹԱՆՋՅԱՆ

Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման ճանապարհային քարտեզը կարող է համարվել տարածաշրջանի անվտանգ ժողովրդավարական զարգացման և տևական խաղաղության հաստատման արդյունավետ գործիք, եթե դա միասնական ջանքերով մշակվի հակամարտող կողմերի, ինչպես նաև միջազգային հանրությունը ներկայացնող ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից, որի կազմում են Ռուսաստանը, ԱՄՆ-ը և Ֆրանսիան: Հաշվի առնելով մեր կովկասյան քաղաքական կուլտուրայի ընդհանուր առանձնահատկությունը, անշուշտ կարևոր են նաև միջոցները հակամարտության բոլոր կողմերի «դեմքի պահպանման» ուղղությամբ: Գործընթացի փորձաքննությունը հուշում է, որ Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման ճանապարհային քարտեզի գլխավոր փուլերը՝ միջազգային իրավունքի դիտարկվող երկու սկզբունքների համատեղմամբ, առավել ընդհանուր գծերով կարող են ներառել հետևյալ տարրերը:

Առաջին փուլ. ԵԱՀԿ Մինսկի խմբի և ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի, ինչպես նաև ԼՂՀ-ի և Ադրբեջանական Հանրապետության տեղական իշխանությունների հովանու ներքո պայմանների ստեղծում՝ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի կիրառման ուղղությամբ.

- Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում ուժի կիրառման ծրագրերից Ադրբեջանի հրապարակավ պաշտոնական հրաժարում՝ միջազգային հանրության երաշխավորությամբ (երաշխավորներ՝ ՄԱԿ-ի ԱԽ, ԵԱՀԿ Մինսկի խումբ, ԵՄ, ՆԱՏՕ, ՀԱՊ, ԱՄՆ, Ռուսաստան, Ֆրանսիա),
- ԵԱՀԿ Մինսկի խմբի, ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի, ինչպես նաև Ադրբեջանի և Հայաստանի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչում որպես փիրավ գործընկերոջ՝ ԼՂՀ-ի բնակիչների, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի սահմաններից դուրս ապրող ղարաբաղյան փախստականների շրջանում լրացուցիչ հանրաքվեի կազմակերպման գործում,
- պատերազմի և բռնության քարոզչության դեմ մորատորիումի հայտարարում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի, Ադրբեջանի, Հայաստանի և ԼՂՀ-ի ՉԼՄ-ների կողմից մոնիտորինգով,
- հակամարտության բոլոր կողմերի և միջազգային հանրության (ԵԱՀԿ Մինսկի խմբի և ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի) փոխհամաձայնությամբ՝ դիտորդների առաքելություն լրացուցիչ հանրաքվեի անցկացման գոտում՝ ԼՂՀ ոստիկանության և ՆՁ-ի (Լեռնային Ղարաբաղի ներսում), ինչպես նաև Ադրբեջանական Հանրապետության ոստիկանության և ՆՁ-ի (Լեռնային Ղարաբաղի սահմաններից դուրս ԼՂՀ-ից ադրբեջանցի փախստականների ժամանակավոր բնակության վայրերում) կողմից կարգուկանոնի և կայունության ռեժիմի ապահովման վերահսկողություն իրականացնելու նպատակով,
- ՄԱԿ-ի և ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո լրացուցիչ հանրաքվեի անցկացում Լեռնային Ղարաբաղի հայկական և ադրբեջանական բնակչության շրջանում՝ նրանց ներկայիս բնակության վայրերում, տրամադրելով մասնակիցներին Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վե-

րաբերյալ այլընտրանքային լուծումների լայն ընտրություն, անկախություն, վերամիավորում Հայաստանի կամ Ադրբեջանի հետ,

- լրացուցիչ հանրաքվեի արդյունքների համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի ներգրավում ԵՄ-ի «Եվրոպական հարևանություն» ինտեգրացիոն ծրագրի շրջանակներում:

Երկրորդ փուլ. Տարածքային ամբողջականության սկզբունքի կիրառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգության գոտու մի մասի (բացի Լաչինի և Քարվաճառի շրջաններից), ինչպես նաև ներկայումս ադրբեջանական զորքերի կողմից գրավված նախկին Շահումյանի շրջանի և Մարտակերտի շրջանի մի մասի նկատմամբ.

- ԵԱՀԿ Մինսկի խմբի և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հովանու ներքո խաղաղարար ուժերի տեղակայում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգության գոտում (բացի Լաչինի և Քարվաճառի շրջաններից), ինչպես նաև նախկին Շահումյանի շրջանում և Մարտակերտի շրջանի մի մասում, որոնք ներկայումս գրավված են ադրբեջանական զորքերի կողմից,
- ԵԱՀԿ Մինսկի խմբի և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հովանու ներքո գործող խաղաղարար ուժերի կողմից Լաչինի և Քարվաճառի շրջանների երաշխավորված գործունեության համատեղ հսկողության ապահովում՝ որպես Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միջև կապուղային միջանցքի, ինչպես նաև նրա գոյատևման անվտանգության գոտու,
- ԼՂՀ-ի զորքերի միաժամանակյա դուրսբերում Ադրբեջանի Հանրապետության տարածքներից (բացի Լաչինի և Քարվաճառի շրջաններից), որոնք ներգրավված են Լեռ-

նային Ղարաբաղի անվտանգության գոտու կազմում, ինչպես նաև ադրբեջանական զորքերի դուրսբերում նախկին Շահումյանի շրջանի և Մարտակերտի շրջանի մի մասի տարածքից,

- Ադրբեջանի կողմից Հայաստանի սահմանների և կապուղիների շրջափակման դադարեցում:

Երրորդ փուլ. Վերադարձված հողերի ռեաբիլիտացիա, փախստականների և տեղիհանված անձանց վերադարձ.

- վերադարձված տարածքների երաշխավորված ակամազերծում,
- հայկական և ադրբեջանական փախստականների, ինչպես նաև տեղահանված անձանց վերադարձ Ղարաբաղյան հակամարտության գոտում իրենց նախկին մշտական բնակության վայրեր,
- Ղարաբաղյան հակամարտության նախկին գոտու համակողմանի ռեաբիլիտացիա՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հովանու ներքո,
- Ադրբեջանի և Հայաստանի ռազմականացվածության մակարդակի նվազեցում ԵՄ, ԵԱՀԿ, ՆԱՏՕ և ՀԱՊ միջազգային կազմակերպությունների հսկողության ներքո՝ նրանց պաշտպանության համակարգերի փոխհամաձայնեցված ձևափոխման միջոցով,
- տնտեսական, քաղաքական և պաշտպանական համագործակցություն Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի միջև՝ Հարավային Կովկասում եվրաինտեգրացման համատեղ ծրագրերի ենթատեքստում իրականացվող տարածաշրջանային անվտանգության արդյունավետ կառույցի ձևափոխման գործում ԵԱՀԿ Մինսկի խմբի և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի վերահսկողության ներքո Քարվաճառի և Լաչինի շրջանների՝ որպես ազատ տնտեսական գոտու, համատեղ բարեկարգում:

ՔՈԹԱՆՁՅԱՆԻ ԿԱՐԾԻՔԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ՞ ԿԱՐԾԻՔՆ Է

*ԼՂՀ ԱԺ արտաքին հարաբերությունների
հանձնաժողովի նախագահ Վահրամ Արամեսյանը
պատասխանում է Karabakh - online-ի հարցերին, 09.12.2005*

Օրերս «Ռեզնում» ռուսական գործակալությունը հրապարակել է հարցազրույց ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական Հայկ Քոթանջյանի հետ: Խորհրդականը ներկայացրել է դարաբաղյան կարգավորման կոնկրետ առաջարկություններ, որոնք պարունակում են Միջազգային ճգնաժամային խմբի կողմից պատրաստված առաջարկների մեծ մասը: Ինչպես հայտնի է, Ղարաբաղը՝ ի դեմս արտգործնախարարության և հասարակական կազմակերպությունների, քննադատության է ենթարկել այդ առաջարկները: Եվ հիմա Հայաստանից են դրանք հնչում:

Ինչպես հայտնի է, Ղարաբաղը բոլոր հարցերի քննարկման հիմք է ընդունում առաջին հերթին բնակչության անվտանգությունը: Եթե խորհրդականի կողմից ներկայացված առաջարկները՝ Հայաստանի «փոխզիջումների» մեկնարկային կետն են, ապա դա նշանակում է, որ Հայաստանը կարգավորման հիմքում դնում է ոչ թե դարաբաղցիների անվտանգությունը, այլ միջնորդներին դուր գալու ցանկությունը:

Karabakh-online-ի հարցերին է պատասխանում ԼՂՀ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Վահրամ Արամեսյանը:

«Այն տեսակետը, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նույն իրավունքով է հռչակվել, ինչ որ Ադրբեջանական Հանրապետությունը, ես կիսում եմ: Իսկ ինչ վերաբերում է դարաբաղյան կարգավորման այն առաջարկություններին, որ ներկայացնում է քաղաքագետը, ապա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտոնական տեսակետը սա է՝ ԼՂՀ միջազգային ճանաչումը կարող է լինել մեր ժողովրդի համար ընդունե-

լի սահմաններում, և կառավարման ու անվտանգության առաջին հերթին՝ ազգային համակարգերի գերակայությունը:

Ժողովուրդը իր կարծիքն արտահայտել է մեկ անգամ՝ դա 1991թ.-ի դեկտեմբերի 10-ի հանրաքվեն է, որին, ի դեպ, կարող էին մասնակցել ազգությամբ ադրբեջանցի ԼՂՀ քաղաքացիները: Եվ ես չեմ կարծում, որ երկրորդ անգամ ժողովրդի կարծիքը հարցնելու անհրաժեշտություն կա: Գտնում եմ, որ առաջիկայում անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմնական օրենքը՝ Սահմանադրությունը կընդունվի դարձյալ համաժողովրդական քվեարկությամբ և այն ժամանակ պարզ կլինի մեր ժողովրդի այսօրվա կարծիքը՝ 18 տարի հետո: Այսինքն՝ ժողովուրդը կարգավորման մասին իր կարծիքը կարտահայտի քվեարկելով կամ չքվեարկելով անկախ ԼՂՀ Սահմանադրության օգտին:

Ինչ վերաբերում է տարածքների վերադարձման տարբերակին, ասեմ, որ այս պահին մենք չենք կարող որևէ կանխորոշող տեսակետ արտահայտել այդ տարածքների վերաբերյալ, քանի որ գոյություն ունի Ադրբեջանից բռնությամբ տեղահանված ավելի քան կես միլիոն հայ փախստականների խնդիր, ինչպես նաև Ադրբեջանը ուղղակիորեն ԼՂՀ իշխանությունների հետ նման հարցեր չի քննարկում: Ակնհայտ է մի իրողություն, այդ տարածքները գտնվում են ԼՂՀ իրավագործության ներքո, և ԼՂՀ ժողովրդի իշխանություններին տրվելիք մանդատի շրջանակներում վերջիններս ԼՂՀ անկախությունը ճանաչելուց հետո կարող են այդ հարցը քննարկել Ադրբեջանի հետ: ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդականը տվյալ դեպքում հանդես է եկել որպես քաղաքագիտության դոկտոր և փորձագետ: Եվ ես դա համարում եմ իր անձնական մոտեցումը, իսկ ԼՂՀ պաշտոնական տեսակետն արտահայտում են ԼՂՀ պաշտոնատար անձինք»:

ԻՍԿ ՀԱՅ ՓԱՆՍՏԱԿԱՆՆԵՐԸ, ՊԱՐՈՆԱՅՔ ՄԻՋՆՈՐԴՆԵՐ

«ԼՂՀ փախստականների կոմիտե» հասարակական կազմակերպության նախագահ Սարասար Սարյանը պատասխանում է Karabakh-online-ի հարցերին, 11.09.2005

Karabakh-online-ին տված հարցազրույցում «ԼՂՀ փախստականների կոմիտե» հասարակական կազմակերպության նախագահ Սարասար Սարյանը, մեկնաբանելով ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական Հայկ Քոթանջյանի «ճանապարհային քարտեզը», նշել է.

«Անկասկած, պաշտպանության նախարարի խորհրդական Հայկ Քոթանջյանի ներկայացրած դարաբաղյան կարգավորման «ճանապարհային քարտեզ» նախագիծը արժանի է ուշադրության, որտեղ փորձ է արված իրար կապել երկու հիմնական սկզբունքներ՝ ինքնորոշման իրավունքը և տարածքային ամբողջականությունը: Իմ կարծիքով, դա փորձ է ընդգրկել անըդգրկելի: Եվ ցավալիորեն նման են պրն Քոթանջյանի հնչեցրած գաղափարները Միջազգային ճգնաժամային խմբի դիրքորոշման հետ, մասնավորապես, լրացուցիչ հանրաքվե անցկացնելու մասով: Սակայն ուրախացնում է այն, որ փախստականների վերադարձի հարցը դիտարկվում է տրամազծորեն հակառակ լույսի ներքո: Հիշեցնենք, որ ՄՃԽ զեկույցում պերճախոսորեն լուրջ է Ադրբեյջանի կես միլիոն հայ փախստականների մասին, ինչպես նաև համապատասխան և կշռադատված օգնության տրամադրման անհրաժեշտությունը պատերազմի արդյունքում տուժված բոլոր բնակավայրի անձանց՝ անկախ ազգային և աշխարհագրական դիրքից: Թե՞ զեկույցի հեղինակների կարծիքով, հայ փախստականները չունեն որևէ մարդկային իրավունքներ: Իսկ, գուցե, նրանք հասկանում են հայ փախստականների Ադրբեյջան՝ նրանց նախկին բնակատեղեր վերադառնալու անհեռանկարային լինելը, որտեղ ոչ միայն չի դադարում, այլև ավելի է ուժեղանում հակահայկական հիսթերիան և արմատա-

վորվում է հայի՝ որպես ադրբեյջանական ժողովրդի թշնամու կերպարը:

Պարոն Քոթանջյանը առաջարկում է չփութացնել փախստականների վերադարձի գործընթացը, միայն անցողակի հիշեցնելով փախստականների երկկողմանի վերադարձի մասին: Մեզ համար առավել ընդունելի է նախկին մշտական բնակավայրեր «երկկողմանի հոժարական վերադարձ» ձևակերպումը: Այդ մասին բազմիցս խոսել են Լեռնային Ղարաբաղ ժամանող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների ժամանակ: Բացի դրանից Փախստականների կոմիտեն բազմիցս փորձել է միջազգային հանրությանը հիշեցնել Ադրբեյջանից հայ փախստականների ոտնահարված իրավունքների վերականգնման հարցի նկատմամբ իրավահավասար մոտեցման անհրաժեշտության մասին:

Մենք չենք կարող անվերջ երկար ժամանակ մնալ մեր քաղաքաիրավական գոյության անցողիկ կարգավիճակում: Եթե Ադրբեյջանը այսուհետ ևս հրաժարվի քննարկել ԼՂՀ հետ այդ հարցը, մենք՝ փախստականներս, մեզ իրավունք ենք վերստահում որոշակի ժամանակով բնակեցնել Լեռնային Ղարաբաղի կողմից վերահսկվող տարածքները, արդեն որպես ԼՂՀ լիիրավ քաղաքացիներ: Ղարաբաղում 15 տարուց ավելի բնակվելով՝ հայ փախստականները և ժամանակավոր բնակավայրի անձինք լիակատար իրավունք ունեն ինտեգրվելու դարաբաղյան հասարակության մեջ: Ընդ որում, պահպանվում է ադրբեյջանական բնակչության՝ որպես լիիրավ քաղաքացիների վերադարձի, պետություն ու Ղարաբաղի քաղաքացիական հասարակություն վերաինտեգրվելու իրավունքը:

Ադրբեյջանից փախսած կես միլիոն հայերից, մոտ 100 հազարը սկզբնական շրջանում Ղարաբաղում ապաստան և որոշակի նյութական աջակցություն են գտել: Սակայն մեր ներկայիս դրության համար լիովին պատասխանատվություն է կրում ադր-

բեջանական պետությունը, որը պատերազմ է սանձագերծել հայ բնակչության դեմ: Այս գործում վճռական դեր պետք է խաղա միջազգային հանրությունը՝ Ադրբեջանի վրա ճնշում գործադրելու համար, ինչպես քաղաքական իրավունքների վերականգնման, այնպես էլ փախստականների և ժամանակավոր բնակավիտխ անձանց բոլոր կատեգորիաների բարոյական և նյութական փոխհատուցումների գործում:

ԼՂՀ ԱԳՆ ՍԵԿՆԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԼՂՀ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԱՆՅԿԱՅՄԱՆ
14-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՉԻ ԱՌԹԻՎ
10.12.2005

1991 թվականի դեկտեմբերի 10-ին, Խորհրդային Միության պաշտոնական անկումից ընդամենը մի քանի օր առաջ, Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունում, մեծաքանակ միջազգային դիտորդների ներկայությամբ, կայացավ հանրաքվե, որի ընթացքում քվեարկությանը մասնակցած քաղաքացիների գերակշիռ մեծամասնությունը՝ 99,89 տոկոսն իր ձայնը տվեց Ադրբեջանից լրիվ անկախության օգտին:

Հանրաքվեին հաջորդած խորհրդարանական ընտրություններում, որոնք տեղի ունեցան դեկտեմբերի 28-ին, ընտրվեց ԼՂՀ խորհրդարանը, որը կազմավորեց առաջին կառավարությունը: Այսպիսով, Ադրբեջանի կողմից շարունակվող համատարած շրջափակման և ռազմական ագրեսիայի պայմաններում ձևավորվեցին մեր պետության իշխանության բարձրագույն մարմինները:

ԼՂՀ պետական անկախությունը բարձրագույն արժեք է Արցախի ժողովրդի համար: Չնայած ներկայումս միջազգային հանրությունը ԼՂՀ-ն ընկալում է որպես դե-ֆակտո անկախ պետություն, տարածաշրջանային անվտանգության էական գործոն, կոչեր են հնչեցվում ժամանակը ետ տալու, այն անցյալին

վերադառնալու մասին, որից մեզ արդեն բաժանում է մի ամբողջ երիտասարդ սերունդ, որը երբեք չի տեսել այն կամայականությունները, խտրականությունն ու բռնությունները, որոնց ենթարկվել են իրենց ծնողներն Ադրբեջանում:

Ոչ մեկը չպետք է պատրանքներ փայփայի. վերադարձ դեպի անցյալ՝ չի լինելու:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ:
ՓՈՆՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ
ԽԱՂԱՎԱՐԱՐ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

Էլեոնորա Ասատրյան

*«Որակի համընդհանուր ղեկավարման աջակցության»
ՀԿ նախագահ, Գերմանիայի TÜV Ակադեմիայի որակի
կառավարման փորձագետ, ՀՀ որակի ղեկավարման փորձագետ,
ՌԴ որակի համակարգերի աուդիտոր*

(ԱՕԿՄ-ի և ՌԴ ԱԳՆ առընթեր Միջազգային գիտական և մշակութային համագործակցության ռուսաստանյան կենտրոնի կողմից՝ «Եվրոպական ֆորումի» մասնակցությամբ, Երևանում 29-30.11.2005թ. կազմակերպված «ՀԱՅԱՍՏԱՆ-ՈՌՈՒՍԱՄՏԱՆ: ՀԱՅԱՑՔ ԴԵՊԻ ԱՊԱԳԱՆ: ՀԱՍՏԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՆՆՈՒՄԻՆԱՆԵՐԸ» գիտագործնական կոնֆերանսին 29.11.2005 Էլեոնորա Ասատրյանի կողմից ներկայացված գեկույցը: Չնկույցի ներկայացումը կատեգորիալ է նախագահողի կողմից՝ հայայեզու լինելու պատճառով)

Միջազգային փորձը գալիս է ապացուցելու, որ ամուր է այն պետությունը, որը հուսալի և թափանցիկ գործիքների կիրառմամբ ապահովում է իր երկրի ազգային հարատւությունը և սոցիալական նվաճումները, որն ունի ազնիվ պետական ինստիտուտներ, որոնք գործում են կարգավորման հստակ և պարզ սահմանված որոշումների հիման վրա՝ կիրառելով լավ մշակված մեխանիզմներ: Այդպիսի պետությունում, որպես կանոն, բոլորի նկատմամբ կիրառելի է օրենքը: Այդտեղ պետության ռազմավարությունը և արդարադատությունը զավթված չեն իր շահերը հետապնդող էլիտայի խմբավորումների կողմից և քա-

ղաքացիական հասարակությունն ու զանգվածային լրատվության միջոցներն ազատ իրականացնում են իրենց անկախ ձայնի իրավունքը, ինչն ապահովում է հաշվետու իշխանության առկայություն: Թերևս, պետական կազմակերպության և ներպետական փոխհարաբերությունների այս կերպն է, որ կարելի է կոչել քաղաքացիական հասարակություն: Պետության կայացվածությունը կախված է հաշվետու իշխանության առկայությունից և պահանջում է լավ պետական կառավարում, որը նախևառաջ նախատեսում է՝ քաղաքական կայունություն, քաղաքացիական հասարակության շահերի արտահայտում, քաղաքացիական հասարակության ազատություններ և մամուլի ազատություն, պետության գործունակություն՝ քաղաքականության մշակման և պետական ծառայությունների մատուցման որակի ապահովմամբ, պետության կողմից կանոնակարգող լուծի բացակայություն, օրենքի գերակայություն, այդ թվում՝ սեփականության իրավունքի պաշտպանություն, դատական իշխանության անկախություն և վերջապես, որպես այս ամենի գոյության երաշխիք՝ սկզբունքային և հետևողական հակակոռուպցիոն գործունեություն:

Հաշվետու իշխանության առկայությամբ քաղաքացիական հասարակության մեջ ժողովրդավարությունը նախատեսում է մարդու իրավունքների նկատմամբ հարգանք, կյանքի անվտանգության ապահովում, քաղաքացիական և սոցիալական հանդուրժողականություն և համատեղելիություն, ինչպես նաև անհանդուրժողական վերաբերմունք անօրինականությունների և դրանց արդյունքում կիրառվող բռնությունների նկատմամբ: Այս ամենը հնարավոր է միայն կյանքի որակի որոշակի ստանդարտներ հաստատելու միջոցով, որոնք կձևավորվեն ժողովրդավարական գաղափարների և սկզբունքների հիման վրա և երկրի սահմանադրական դրույթների ձևով կապահովեն մարդու իրավունքների և հասարակական կարգի հիմքերի պաշտպանությունն ու պահպանությունը: Այստեղ շատ կարևոր է, որ-

պետքի քաղաքացիական հասարակությունը կարողանա ճիշտ համախմբվել և ապահովել փոխըմբռնման, համաձայնության, կառուցողական համագործակցության մթնոլորտ և, իշխանությունը, որին քաղաքացիները կամավոր փոխանցել են երկրի կառավարման իրավունքն ու պատասխանատվությունը, պետք է ճանաչի մարդու իրավունքների գերակայությունը և ապահովի կառուցողական համագործակցություն: Հասարակության մեծամասնության տված իրավունքով երկրի կառավարման ղեկին կանգնած իշխանությունը պետք է համագործակցի սահմանադրական իրավունքի շրջանակներում գործող հասարակության փոքրամասնության վստահությունը վայելող ընդդիմության հետ: Իշխանությունը, որն ընտրվում է հասարակության կողմից՝ նրան կազմակերպելու և կառավարելու նպատակով, պարտավոր է պարզ և հստակ կատարել երկրում ներքին համաձայնությունն ապահովող Սահմանադրությամբ իր վրա դրված բոլոր պարտականությունները:

Յուրաքանչյուր անհատ՝ անկախ իր քաղաքացիությունից, տիրապետում է մարդու համընդհանուր ճանաչված իրավունքների և հիմնարար ազատություններին, յուրաքանչյուր քաղաքացի՝ բացի այդ ամենից, ունի իր քաղաքացիության պետության պատկանելության ուժով իրեն ամրագրված իրավունքներ և ազատություններ: Քաղաքացիության ինստիտուտով արտահայտված անձի՝ պետության հետ հաստատուն իրավաբարական կապը, որն արտահայտվում է նրանց միջև փոխադարձ իրավունքների և պարտականությունների շրջանակների առկայությամբ, ինչպես նաև պետության ներսում և նրա սահմաններից դուրս անձի պաշտպանությամբ, ամրագրվում և երաշխավորվում է պետության Սահմանադրությամբ: Իրավաբանական, բարոյաքաղաքական և սոցիալատեսական բնույթի երաշխիքների հարցում պետությունը բացառիկ դեր ունի և կրում է համապատասխան պատասխանատվություն: Քաղաքացին պետության ինքնիշխանության անհատական աղբյուրն է և կրողը, այն

տիրապետում է տվյալ քաղաքացիական հասարակության մեջ ճանաչված անհատական, քաղաքական սոցիալտնտեսական հնարավորությունների ողջ համալիրի իրավունքին, իսկ Պետությունը՝ այդ ինքնիշխանության կոլեկտիվ արտահայտողն է և պարտավոր է իրականացնել անհատի այդ հնարավորությունների ապահովումը, պաշտպանությունը և երաշխավորումը: Քաղաքացիության ինստիտուտում իրավունքների իրականացման գործընթացում անհամապատասխանությունները կարող են հավասարակշռության խախտում առաջացնել՝ հանգեցնելով իրավաքաղաքական կապի խզման: Այդպես եղավ անցած դարի 80-ական թվականների վերջին, երբ Ադրբեջանական ԽՍՀ-ում հայազգի քաղաքացիների նկատմամբ պարբերաբար կիրառվող ճնշումները և խտրականությունները վերջիվերջո հանգեցրին 1988-1990 թվականների ցեղասպանության, էթնիկ զտումների գործողությունների Մումգայիթում, Բաքվում և Ադրբեջանի այլ հայաբնակ վայրերում: Էթնիկ չափման վրա հավասարակշռության խախտմամբ սկզբնավորվեց դարաքաղյան հիմնախնդրի նոր փուլը՝ հակամարտություն, որն առ այսօր իր հանգուցալուծումը չի գտել: Հիշենք, որ հակամարտությունն իր առավել ակտիվ փուլի մեջ մտավ այն ժամանակ, երբ Խորհրդային Միությունը դե-ֆակտո և դե-յուրե դեռևս գոյություն ուներ: 1991 թվականի օգոստոսի 30-ին Ադրբեջանը հռչակեց իր անկախությունը, հայտարարելով իրեն 1918-1920 թվականների Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդը՝ հրաժարվելով ճանաչել Ադրբեջանական ԽՍՀ-ն որպես նախորդը: Շատ չանցած ԱՀ-ն օրենք ընդունեց ԼՂԻՄ-ի լուծարման մասին, ինչը հակասում էր ժամանակի օրենսդրությանը և վերջնականապես հաստատեց, որ ադրբեջանական իշխանությունները կորցրել են իրենց վերապահված գործառույթներն իրականացնելու ունակությունը: 1991 թվականի սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը հռչակեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ ամրագրելով դա 1991 թվականի դեկտեմ-

բերի 10-ի Անկախության հանրաքվեով: 1992 թվականի հունվարի 6-ին, ԼՂՀ խորհրդարանը, հիմնվելով հանրաքվեի այդպիսի արդյունքների վրա, հռչակեց ԼՂՀ անկախ պետականությունը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակման խաղաղ բնույթը, որը հիմնված էր ժողովրդի ինքնորոշման իրավունքի ուժով ազատորեն քաղաքական կարգավիճակ սահմանելու և տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացում ապահովելու սկզբունքի վրա, մերժվեց Ադրբեջանի կողմից, որը գործի դնելով իր զինուժը՝ հակամարտությունը իրավաքաղաքական հարթությունից բաց ռազմական դիմակայության հարթություն տեղափոխեց:

Ադրբեջանական իշխանությունները ակտիվ ռազմական գործողություններ սկսեցին անկլավային վիճակում գտնվող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի նկատմամբ՝ նրա դեմ կիրառելով խորհրդային ժամանակաշրջանից ժառանգություն մնացած ողջ զինանոցը: Մանձազերծվեց պատերազմ՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Ադրբեջանական ԽՍՀ-ից հայերի վերջին զանգվածային ելքի ժամանակ՝ 1990 թվականի սկզբին, երբ դեռևս գոյություն ուներ ԽՍՀՄ-ը, Ադրբեջանական ԽՍՀ-ի հայազգի քաղաքացիները փաստացիորեն կորցնելով իրենց՝ առանձին խորհրդային հանրապետության քաղաքացու իրավունքները, պահպանեցին իրենց կարգավիճակը խորհրդային քաղաքացիության ձևով՝ դառնալով «ներքին տեղաշարժված անձինք» (ՆՏԱ) կամ «բռնի տեղահանվածներ», հասկացություններ՝ որոնցով թելադրված կարգավիճակի կապակցությամբ միջազգային նորմերն այն ժամանակ նույնիսկ դեռևս ձևավորված չէին: Մինչև ԽՍՀՄ սլո-հունը այս կատեգորիայի անձանց ճակատագրի որոշման խնդրում ներգրավված էին Ադրբ. ԽՍՀ-ն, ՀԽՍՀ-ն և ՌԽԳՍՀ-ն: Ադրբեջանական Հանրապետությունը իր վրա չվերցրեց իր բռնագաղթի ենթարկված քաղաքացիների նկատմամբ ո՛չ քաղաքական և ո՛չ էլ բարոյական պատասխանատվություն՝ իրա-

վահաջորդության հարթության վրա դնելով մարդու իրավունքները և ազատությունները, դրանց պաշտպանությունը և դրանց խախտման պատճառների վերացման համար պատասխանատվությունը: Մինչդեռ իրավահաջորդությունը նախատեսում է միջազգային իրավունքի մեկ սուբյեկտ-պետությունից այլ սուբյեկտ-պետությանը միջազգային իրավունքների և պարտականությունների անմիջական և օրինաչափ անցում, ինչն իրականացվում է համաձայն միջազգային իրավունքի, ինչպես նաև այն միջազգային իրավական սկզբունքների, որոնք արտացոլված են ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ:

Հակամարտության կարգավորման գործընթացում շատ կարևոր է, որպեսզի այսօր Ադրբեջանական Հանրապետությունն իր վրա վերցնի Ադրբեջանական ԽՍՀ-ում 1988-1990 թվականներին իրականացրած էթնիկ զտումների արդյունքում, ինչպես նաև ԼՂՀ-ից և հարակից շրջաններից փախստականների և ներքին տեղաշարժված անձանց նոր այլք առաջացրած հակամարտության պատերազմական փուլի ընթացքում տուժած մարդկանց նյութական և բարոյական կորուստների փոխհատուցման պատասխանատվությունը: Այն, որպես պատերազմ հրահրող պետություն, պետք է պատասխանատվություն կրի Ադրբեջանական ԽՍՀ-ը բոլոր այն քաղաքացիների նկատմամբ՝ անկախ ազգությունից, որոնք ռազմական գործողությունների արդյունքում լքեցին այն տարածքները, որոնց վրա այսօր տարածվում է ԼՂՀ-ի ինքնիշխանությունը: Ադրբեջանական Հանրապետությունն իր վրա պետք է վերցնի իր իսկ տարածքում նախկինում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց այն հետևանքների համար պատասխանատվությունը, որոնք հանդես են գալիս Ադրբեջանական ԽՍՀ-ից խորհրդային նախկին հանրապետությունների տարածքներում ստիպված վերաբնակեցված շուրջ 500 հազար մարդկանց կարգավիճակի անորոշությանը և դրանից բխող՝ նրանց իրավունքների ճնշմամբ և ազատությունների սահմանափակմամբ: Նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ի այդ 500 հազար հայազգի նախկին քաղաքացիները

մշտական բնույթի իրավական կարգավիճակի ճանաչման, պահպանման և ապահովման, պաշտպանության և երաշխավորման կարիք ունեն: Կցանկանա՞նք արդյոք նրանք իրենց հետագա ճակատագիրը կապել էթնիկ հատկանիշներով մեծ ու փոքր ցեղասպանություններ և հետապնդումներ իրականացրած և առայսօր իր մեղքերը չճանաչած պետության՝ Ադրբեջանի հետ. քիչ հավանական է: Մինչև իրենց տեղահանման պահը, այդ անձինք հաստատուն իրավաբաղաքական կապ են ունեցել Ադրբեջանական ԽՍՀ-ի և դրանով միջնորդավորված՝ ԽՍՀՄ-ի հետ: Ընդամին, նրանք իրավունք ունեն բնակություն հաստատելու նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքում, քանի որ պայմանավորված նրանց ներկայիս ժամանակավոր բնույթի կարգավիճակով, նրանց համար նախատեսվում է վերջին քաղաքացիության վայրերը վերադառնալու հնարավորություն: Այդպիսի վայրեր են հանդիսանում նաև ներկայումս ԼՂՀ-ի ինքնիշխանության ներքո գտնվող Դաշտային Դարաբաղի տարածքները, որտեղ նրանց համար ԼՂՀ-ի ուժերով կարող են ապահովվել պայմաններ անվտանգ կենսագործունեության համար: Այս համատեքստում հիշեցնենք, որ Ադրբեջանական Հանրապետությունը, ինչպես նաև իր նախորդը՝ ԱՂՀ-ն, որին ի դեպ Ազգերի լիգան որպես այդպիսին ժամանակին չճանաչեց, Ադրբեջանական ԽՍՀ-ի իրավահաջորդը չէ և բացարձակ իմաստով չի կարող հավակնել նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքներին: Քաղաքացիության տրամադրման ցանկալիությունը՝ բոլոր այն անձանց, որոնք այլ կերպ քաղաքացիություն ստանալու ակնկալիք չեն կարող ունենալ՝ միջազգային իրավունքի հիմնական նորմերից է: Հակամարտության արդյունքում բարոյապես և նյութապես առավելագույնս տուժած անձանց՝ նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ի քաղաքացիներին, ԼՂՀ-ն կարող է հնարավորություն տալ վերաբնակեցվելու ներկայումս իր ենթադատության ներքո գտնվող տարածքներում, պարզեցված կարգով նրանց տրամադրելով իր քաղաքացիությունը՝ ելնելով առնվազն զոնե այն փաստից, որ երբեմնի ԼՂԻՄ-ը (մի կողմ

քողնելով այդ իրողության օրինականությունը) գտնվում էր Ալյք-բեջանական ԽՍՀ-ի կազմի մեջ և հետևաբար՝ Աղբրեջանական ԽՍՀ-ի իրավահաջորդն է և առնվազն բարոյական պատասխանատվություն է կրում մինչև 1991 թվականի օգոստոսի 30-ը Աղբրեջանական ԽՍՀ-ում ապրած բոլոր հայերի համար:

Անձի իրավաբաղաքական կարգավիճակի և նրա պաշտպանվածության վիճակի միջև ստեղծված հակասությունից առաջացած դարաբաղյան հակամարտությունն իր հիմքում խիստ իրավական բնույթ է կրել՝ ինչպես օրենսդրական, այնպես էլ գործառնական առումներով: Դա հակամարտություն չէր՝ տարածքային չափման հասկացությամբ: Տարածքների խնդիրն առաջ քաշվեց քողարկելու համար պետություն կազմավորող ազգի իրավաբաղաքական ինքնորոշման օրինական իրավունքը չճանաչելու ցանկությունը Աղբրեջանական Հանրապետության կողմից, որի հետ ո՛չ ԼՂԻՄ-ը և ո՛չ էլ ԼՂՀ-ն ոչ մի իրավաբաղաքական առնչություն չունեն: Այսօր Աղբրեջանական Հանրապետության կողմից «քոնազավթված» որակվող տարածքները՝ ԼՂՀ-ի վերահսկողության տակ գտնվող այն տարածքներն են, որոնք ծառայում են նաև որպես բնական-նյութական և տնտեսական ապահովության միջոց, գործիք՝ նախկին Աղբրեջանական ԽՍՀ-ի բնակչության այն մասի իրավունքների և ազատությունների ճանաչման, պահպանման, պաշտպանության և երաշխավորման համար, որն՝ անկախ էթնիկ պատկանելությունից, առավելագույնս տուժեց հակամարտությունից:

Աղբրեջանական իշխանությունների անգործունակության դրսևորումներից մեկն էլ այն է, որ նրանք իրենց քաղաքական և ռազմական բացարձակ ձախողումների համար առ այսօր փորձում են որպես մեղավոր ներկայացնել ում ասես՝ բացի իրենցից, թեև իրականում, այս ձախողումների պատճառը Աղբրեջանական իշխանությունների խմբավորումների սեփական երկրի քաղաքացիների նկատմամբ տարվող վարքագիծն էր, այսինքն՝ քաղաքացիական հասարակության հիմնատարների լիակա-

տար բացակայությունը կամ դրանց ոչնչացումը: Այս է պատճառը, որ աղբրեջանական կողմը պարբերաբար մեղադրանքներ է հնչեցնում հայկական Սիյունքի հասցեին՝ արցախահայությանը նյութապես և բարոյապես օժանդակելու համար, Ռուսաստանյան Դաշնության հասցեին՝ հայտարարելով, որ պարստություն են կրել ռուսական բանակի և ոչ թե արցախահայության հետ պատերազմում, Ֆրանսիայի հասցեին՝ հայոց ցեղասպանությունը ճանաչելու պատճառով, ԱՄՆ-ի հասցեին՝ ընդվզելով այս երկրի իշխանությունների կողմից ԼՂՀ-ին պաշտոնապես տրամադրվող ֆինանսական օժանդակության դեմ, Իրանի հասցեին՝ վերջինիս հայտարարելով վատ հարևան, քանի որ չի փչացնում հարաբերությունները Հայաստանի Հանրապետության հետ: Այս շարքը շարունակելի է:

Աղբրեջանական Հանրապետությունը ներկայումս շարունակում է ելնել հակամարտության պատճառների էթնոքաղաքական ընկալումից և հակված է կառուցել հակամարտության կարգավորման իր առաջարկությունները միևնույն դիրքերից՝ շեշտը դնելով ուժային լուծումների և սպառնալիքների վրա՝ աշիեստականորեն գործառնության խոչընդոտներ ստեղծելով հակամարտության կարգավորման գործընթացում՝ չճանաչելով ԼՂՀ-ն որպես հակամարտության կողմ: 1993 թվականից որդեգրված այս մարտավարությամբ հանդերձ, Աղբրեջանական կողմը 1994 թվականի մայիսին ոչ թե երկկողմ, այլ եռակողմ համաձայնագիր կնքեց զինադադարի վերաբերյալ՝ համաձայնագիր, որը ստորագրեցին Աղբրեջանական Հանրապետության, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանական գերատեսչությունների ներկայացուցիչները:

Այսօր իրականացվում է խաղաղաբար գործընթաց, որը ենթադրում է հակամարտության կարգավորման դիվանագիտական միջոցների կիրառում: Ընդ որում, առայժմ, փորձ է արվում հակամարտության լուծումը ապահովել կամային քաղաքական

որոշման միջոցով, առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ ինչպես հարյուր հազարավոր մարդկանց բռնի տեղահանության, այնպես էլ հարցը բռնի ուժով լուծելու ակնհայտ նախաձեռնողը եղել են աղբրեջանական իշխանությունները: Այս առումով միջնորդները հարցին կարող են մոտենալ երկու ձևով. առաջինը՝ հայտարարել, որ հակամարտության մեջ ներգրավված կողմերից յուրաքանչյուրը հավասարապես մեղավոր է և պետք չէ պարզել, թե կատարվածի նախաձեռնության պատասխանատվությունը ով պետք է կրի: Սա այն մոտեցումն է, որն այսօր կիրառվում է միջնորդների և շահագրգիռ ու ազդեցիկ արտատարածաշրջանային ուժերի կողմից: Ի դեպ, այս կոնֆերանսին մասնակցող մեծարգո դեսպան պարոն Կազիմիրովը նույնպես, ըստ էության, այս մոտեցման ջատագովն է: Սակայն կա նաև երկրորդ մոտեցման տարբերակը, որը նախատեսում է պատասխանատվություն այն երկրի իշխանությունների և ժողովրդի համար, որոնք, դիմելով անօրինական բռնությունների, փորձել են իրավաքաղաքական խնդիրը լուծել պատերազմի միջոցով: Այսպիսի վարքագիծը նախատեսում է համապատասխան և համարժեք պատիժ նախաձեռնողների ու փոխհատուցում՝ այս քաղաքականության արդյունքում տուժած մարդկանց համար: Այս մոտեցման կիրառման շնորհիվ է, որ ներկայումս Կալինինգրադի մարզը Ռուսաստանի կազմում է: Այս մոտեցումը կիրառվել է նաև սադանյան Իրաքի պարագայում, երբ վերջինս ունեցավ և տարածքային կորուստներ, և սահմանափակվեց նրա ինքնիշխանությունը երկրի հյուսիսային և հարավային շրջաններում:

Դրա հետ մեկտեղ, միջազգային իրավունքի մեջ ձևակերպված նորմերն այսօր ապահովում են անհրաժեշտ իրավական դաշտ այս հակամարտության հանգուցալուծումները գտնելու համար: Աշխարհում խաղաղության և անվտանգության պահպանմանն ու պետությունների միջև բարեկամական հարաբե-

րությունների և համագործակցության զարգացմանը նպաստելու նպատակով ստեղծված են միջազգային իրավունքի օրինակարգավորմանն ու առաջադեմ զարգացմանը վերաբերող բազմակողմանի համաձայնագրեր, որոնք բաց են համընդհանուր մասնակցության համար և խրախուսվում են հնարավորինս լայն մասնակցություն ապահովելու համար: Դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի 1961 թվականի կոնվենցիա, Հյուսիսատոսկան հարաբերությունների մասին Վիեննայի 1963 թվականի կոնվենցիա, Հատուկ առաքելությունների մասին 1969 թվականի կոնվենցիա և այլն: Իր միջազգային չճանաչվածությունը հաղթահարելու համար ԼՂՀ-ն կարող է միանալ այս համաձայնագրերին՝ թեկուզ դեռևս միակողմանի և սույնով ևս հավաստել միջազգային հանրությանը, որ ինչպես առ այսօր, այսուհետև նույնպես, ժողովրդավարական զարգացման ուղի ընտրած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովուրդն՝ իր ինքնիշխան պետականությամբ, շարունակելու է իր մոտենողները միջազգային ստանդարտներով ամրագրված արժեքներ, ինչն, արդյունքում, անխուսափելիորեն ԼՂՀ-ի քաղաքացիական հասարակությանը կդարձնի միջազգային հանրության լիարժեք անդամ:

Եվ ամենակարևորը՝ հստակ պետք է սահմանվի, որ այս հակամարտության կարգավորումը էնտուզիաստների լուծելիք խնդիրը չէ և այն պահանջում է պատասխանատու ու մասնագիտորեն լավ պատրաստված, սեփական իշխանությունների կողմից լիազորված անձանց հետևողական աշխատանքը: Քաղաքացիական հասարակության գոյության պայմաններում իշխանություններն իրենց վերապահված պատասխանատվությունը պետք է տանեն ողջ ծավալով:



ԼԵՆՆԱՅԻՆ ՂԱՐԱՐԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԵՆԻ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՎԱԿՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ИНОСТРАННЫХ ДЕЛ НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКИ

ԳԻՍՈՒՄ

ԼԵՆՆԱՅԻՆ ՂԱՐԱՐԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՎԱԿՈՒ
ԱԳՐԵՋԱՆՈՒՄԿՐԱՅ ՆՅՈՒԹՎԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎՆԱՆԵՐԻ
ՓՈՒՀԱՏՈՒՑԱՆ ՍՄԱՆ

ПРОШЕНИЕ

ПРЕЗИДЕНТУ НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКИ
О ВОЗМЕЩЕНИИ МАТЕРИАЛЬНОГО И МОРАЛЬНОГО УЩЕРБА,
ПОНЕСЕННОГО В АЗЕРБАЙДЖАНЕ

Խնդրում եմ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իշխանությունների արակցությունը Ադրբեջանում կրած նյութական և բարոյական վնասների փոխհատուցում ստանալու համար Ադրբեջանական Հանրապետության իշխանություններին:
Прошу содействия властей Нагорно-Карабахской Республики для получения возмещения материального и морального ущерба, понесенного в Азербайджане от властей Азербайджанской Республики

1. Գինորդի անձնական տվյալները

1. Личные данные заявителя

1.1	Ազգանունը, անունը, հայրանունը Фамилия, имя, отчество	
1.2	Ծննդյան թվականը, ծննդավայրը Год и место рождения	
1.3	Ներկայիս բնակության երկիրը Страна нынешнего проживания	
1.4	Ներկայիս բնակության հասցեն Адрес нынешнего проживания	
1.5	Հեռախոսը, ֆաքսը, էլ. փոստը Телефон, факс, эл. почта	

Ծանոթություն: Նշումները կատարել կատարելով:

Примечание: Отмечать в клетках.

1.6	Ադրբեջանական ԽՍՀ-ում կամ Ադրբեջանական Հանրապետությունում բնակության հասցեն Адрес проживания в Азербайджанской ССР или в Азербайджанской Республике			
1.7	Ադրբեջանական ԽՍՀ-ում կամ Ադրբեջանական Հանրապետությունում սեփականություն Собственность в Азербайджанской ССР или в Азербайджанской Республике	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
		ունեցել է имел(а)	չեմ ունեցել не имел(а)	
1.7.1	Ադրբեջանական ԽՍՀ-ում կամ Ադրբեջանական Հանրապետությունում սեփականության առկայությունը հաստատող փաստաթուղթ Документ, подтверждающий наличие собственности в Азербайджанской ССР или в Азербайджанской Республике	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
		ունեմ имею	չունեմ не имею	
	(դրական պատասխանի դեպքում սույն դիմումին կցել փաստաթղթերի պատճենները) (при положительном ответе приложить к данному заявлению копии документов)			
1.7.2	Ադրբեջանական ԽՍՀ-ում կամ Ադրբեջանական Հանրապետությունում սեփականությունը Собственность в Азербайджанской ССР или Азербайджанской Республике	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
		կորցրել եմ потерял(а)	կորցրել եմ մասնակիորեն потерял(а) частично	չեմ կորցրել не терял(а)
1.7.3	(ընթացում է 1.7.2 կետի «չեմ կորցրել» և «կորցրել եմ մասնակիորեն» պատասխանի դեպքում) Ադրբեջանական ԽՍՀ-ում կամ Ադրբեջանական Հանրապետությունում սեփականությունը (заполняется при ответе "не терял" и "потерял частично" пункта 1.7.2) Собственность в Азербайджанской ССР или в Азербайджанской Республике	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
		փոխանակել եմ обменял(а)	վաճառել եմ продал(а)	այլ տարբերակ иной вариант
	(«այլ տարբերակ» պատասխանի դեպքում պարզաբանումները տալ դիմումի 3.1 կետում) (при ответе "иной вариант" дать разъяснения в пункте 3.1 заявления)			

1.8	Ներկա իրավական կարգավիճակը Правовой статус в настоящем	քաղաքացի гражданин <input type="checkbox"/> փախուսական беженец <input type="checkbox"/> քաղաքացիություն չունեցող անձ лицо без гражданства <input type="checkbox"/>
1.9	<i>(լրացվում է քաղաքացիություն տեմպոր դեպրտի)</i> Ներկայիս քաղաքացիության երկիրը <i>(заполняется при наличии гражданства)</i> Страна нынешнего гражданства	
1.9.1	Ներկայիս քաղաքացիության շնորհման րվականը Дата присвоения нынешнего гражданства	
1.9.2	<i>(պատճենը կցվում է դիմումին)</i> Անձնագրի կամ անձը հաստատող փաստաթղթի համարը <i>(копия прилагается к заявлению)</i> Номер паспорта или удостоверяющего документа	
1.9.3	Անձնագիրը կամ անձը հաստատող փաստաթուղթը ուժի մեջ է մինչև Паспорт или удостоверяющий документ действителен до	
1.10	<i>(լրացվում է փախուսական կարգավիճակ ունենալու դեպքում)</i> Փախուսականի կարգավիճակ տված երկիրը <i>(заполняется при наличии статуса беженца)</i> Страна, предоставившая статус беженца	
1.10.1	Փախուսականի կարգավիճակ տալու րվականը Дата получения статуса беженца	
1.10.2	<i>(պատճենը կցվում է դիմումին)</i> Փախուսականի անձնագրի կամ անձը հաստատող փաստաթղթի համարը <i>(копия прилагается к заявлению)</i> Номер паспорта или удостоверяющего документа беженца	

1.10.3	Փախուսականի անձնագիրը կամ անձը հաստատող փաստաթուղթը ուժի մեջ է մինչև Паспорт или удостоверяющий документ беженца действителен до	
1.11	<i>(լրացվում է քաղաքացիություն չունեցող անձ լինելու դեպքում)</i> Նախկին քաղաքացիության շնորհման րվականը <i>(заполняется в случае отсутствия у лица гражданства)</i> Дата присвоения прежнего гражданства	
1.11.1	<i>(պատճենը կցվում է դիմումին)</i> Անձնագրի կամ անձը հաստատող փաստաթղթի համարը <i>(копия прилагается к заявлению)</i> Номер паспорта или удостоверяющего документа	
2. Կրթությունը, աշխատանքային փորձը, զինվորական ծառայությունը 2. Образование, опыт работы, военная служба		
2.1	Կրթությունը Образование	<input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> միջնակարգ բրիտ բարձրագույն բարձրագույն среднее неполное высшее высшее
2.2	Մասնագիտությունը Специальность	
2.3	Աշխատանքային փորձը <i>(կազմակերպության անվանումը, հասցեն, պաշտոնը)</i> Опыт работы <i>(наименование организации, адрес, должность)</i>	<i>(զրեկ վերջին աշխատանքային տեղից սկսած)</i> <i>(начиная с последнего места работы)</i>
2.4	Լեզուների իմացությունը Знание языков	<i>(նշել լեզուները)</i> <i>(отметить языки)</i>

3. Նյութական և բարոյական կորուստները 3. Материальные и моральные потери	
3.1	<p>Ադրբեջանական ԽՍՀ-ից կամ Ադրբեջանական Հանրապետությունից հեռանալու պատճառները Причины исхода из Азербайджанской ССР или Азербайджанской Республики</p> <p>ա/ խտրականությունը և հետապնդումները ազգային պատկանելության հատկանիշով дискриминация и преследования по признаку национальной принадлежности <input type="checkbox"/></p> <p>բ/ տնտեսական экономические <input type="checkbox"/></p> <p>գ/ ընտանեկան семейные <input type="checkbox"/></p> <p>դ/ ռազմական գործողություններ военные действия <input type="checkbox"/></p> <p>ե/ այլ Другие <input type="checkbox"/></p>
3.2	<p>Ադրբեջանական ԽՍՀ-ից կամ Ադրբեջանական Հանրապետությունից հեռանալու եղանակը Способ исхода из Азербайджанской ССР или Азербайджанской Республики</p> <p>ա/ իշխանությունների կողմից կազմակերպված տեղահանություն депортация, организованная властями <input type="checkbox"/></p> <p>բ/ փախուստ սեփական կամ պատահական փոխադրամիջոցով бегство с использованием случайных или собственных средств передвижения <input type="checkbox"/></p> <p>գ/ սեփական նախաձեռնությամբ՝ առանց կողմնակի ճնշման по собственной инициативе и без давления со стороны <input type="checkbox"/></p>

3.3	Ադրբեջանական ԽՍՀ-ից կամ Ադրբեջանական Հանրապետությունից հեռանալուց հետո Ձեր ժամանման երկիրը Страна Вашего прибытия после исхода из Азербайджанской ССР или Азербайджанской Республики		
3.4	Ադրբեջանում իրականացված հակահայկական գործողությունների արդյունքում զոհվածներ Ձեր ընտանիքում Погибшие в Вашей семье в результате антиармянских действий, осуществленных в Азербайджане	<input type="checkbox"/> եղի են были	<input type="checkbox"/> չեն եղել не было
3.4.1	<p>(ընթացում է 3.4 հարցի «եղի են» պատասխանի դեպքում) Թվարկեր ընտանիքի զոհված անդամներին՝ ճշելով հարազատության աստիճանը և տարիքը (заполняется при ответе "были" пункта 3.4) Перечислите погибших членов семьи, отмечая степень родства и возраст</p>		
3.5	Ադրբեջանում իրականացված հակահայկական գործողությունների արդյունքում վիրավորներ Ձեր ընտանիքում Раненые в Вашей семье в результате антиармянских действий, осуществленных в Азербайджане	<input type="checkbox"/> եղի են были	<input type="checkbox"/> չեն եղել не было

3.5.1	<p>(<i>բացվում է 3.5 հարցի «եղի են» պատասխանի դեպքում</i>) Թվարկեր ընտանիքի վիրավորված անդամներին՝ մշերով հարազատության աստիճանը, տարիքը, վիրավորվելու հետևանքները (աշխատունակ, անաշխատունակ) (заполняется при ответе "были" пункта 3.5) Перечислите раненых членов семьи, отмечая степень родства, возраст, последствия ранения (трудоспособен, нетрудоспособен)</p>	
3.6	<p>Ադրբեջանում բանկային ավանդներ Банковские вклады в Азербайджане</p>	<p><input type="checkbox"/> ունեցել եմ имел(а) <input type="checkbox"/> չեմ ունեցել не имел(а)</p>
3.6.1	<p>Բանկային ավանդները Банковские вклады</p>	<p><input type="checkbox"/> վերադարձվել են возвращены <input type="checkbox"/> չեն վերադարձվել не возвращены</p>
<p>4. Կորցված սեփականությունը և ֆինանսական միջոցները 4. Потерянные собственность и финансовые средства</p>		
4.1	<p>(<i>Ցանկը հաստատող փաստաթղթերի առկայության դեպքում պատճենները կցվում են դիմումին</i>) Կորցված սեփականության և ֆինանսական միջոցների ցանկը ներկայացվում է դիմումի Հավելված 1-ով: Ծանոթություն: Կորցված սեփականության և ֆինանսական միջոցների առկայությունը հաստատող փաստաթղթերի բացակայության դեպքում լրացվում է դիմումի Հավելված 2-ը: (Копии прилагаются к заявлению при наличии документов, подтверждающих список). Список потерянных собственности и финансовых средств приводится в Приложении 1. Примечание: В случае отсутствия документов, подтверждающих наличие собственности и финансовых средств, заполняется Приложение 2.</p>	

4.2	<p>Ադրբեջանական Հանրապետությունում նախկին բնակության վայր վերադառնալու պատրաստակամություն Готовность возвратиться на прежнее место жительства в Азербайджанской Республике</p>	<p>ա/ կվերադառնամ вернусь <input type="checkbox"/> բ/ չեմ վերադառնամ не вернусь <input type="checkbox"/> գ/ կվերադառնամ միայն ԼՂՀ իշխանությունների կողմից վերահսկվող նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքում գտնվող որևէ բնակավայր вернусь только в населенный пункт, находящийся на территории бывшей Азербайджанской ССР, контролируемый властями НКР <input type="checkbox"/></p>
<p>5. Կրած քարոշական վնասները 5. Понесенный моральный ущерб</p>		
5.1	<p>Կրած քարոշական վնասների բնութագիրը Характеристика понесенного морального ущерба</p>	<p>ա/ բացակայում են отсутствует <input type="checkbox"/> բ/ խտրականություն ազգային պատկանելության հատկանիշով дискриминация по национальному признаку <input type="checkbox"/> գ/ խտրականություն ազգային և կրոնական պատկանելության հատկանիշով дискриминация по национальному и религиозному признаку <input type="checkbox"/> դ/ խտրականություն ազգային և կրոնական պատկանելության հատկանիշով և բռնի զրկում հայրենիքից дискриминация по национальному и религиозному признаку и насильственное лишение родины <input type="checkbox"/></p>

6. Այլ տեղեկություններ 6. Другие сведения	
6.1 Լրացուցիչ տեղեկություններ Дополнительные сведения	<input type="checkbox"/> ունեմ имею <input type="checkbox"/> չունեմ не имею
Ծանոթություն: 6.1 կետի «ունեմ» պատասխանի դեպքում գրառումները կատարվում են այսպես: Примечание: При ответе "имею" пункты 6.1 записи производятся здесь.	
Դիմողի կողմից դիմումը լրացնելու փակվանը (տարի, ամիս, օր) Дата (год, месяц, день) заполнения заявления заявителем	
Դիմողի ստորագրությունը Подпись заявителя	
7. Լրացվում է դիվանագրական ներկայացուցչության պատասխանատու անձի կողմից 7. Заполняется ответственным лицом дипломатического представительства	
7.1 Դիմումը ընդունելու փակվանը (տարի, ամիս, օր) Дата (год, месяц, число) принятия заявления	
7.2 Գրանցամատյանում դիմումի գրանցման հերթական համարը Очередной номер записи заявления в журнале регистраций	
7.3 Դիմումը ընդունող պատասխանատու անձի անունը, ազգանունը, հայրանունը Фамилия, имя, отчество лица, ответственного за принятие заявления	
7.4 Դիվանագրական ներկայացուցչության պատասխանատու անձի ստորագրությունը Подпись ответственного лица дипломатического представительства	

«ԱՂՐԱԵՋԱՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ. ԿՈՐՎԱԾ ՀԱՅՐԵՆԻԷ. ՀԱՄԱՐԺԵ ՓՈՒՀԱՏՈՒԹՅՈՒՄ»
 ԿՈՒՖԵՐԱՆՍԻ ԼՅՈՒԹԵՐԸ, ԵՐԵՎԱՆ, 19.12.2005

Հավելված 1

Приложение 1

N	Արտաքին գործերի նախարարության կողմից հաստատված կորուստների ցուցակ	Список потерь, утвержденный Министерством иностранных дел	Արտաքին գործերի նախարարության կողմից հաստատված կորուստների ցուցակ	Список потерь, утвержденный Министерством иностранных дел	Արտաքին գործերի նախարարության կողմից հաստատված կորուստների ցուցակ	Список потерь, утвержденный Министерством иностранных дел	Արտաքին գործերի նախարարության կողմից հաստատված կորուստների ցուցակ	Список потерь, утвержденный Министерством иностранных дел
	1	2	3	4	5	6	7	
1								
2								
	Ընդամենը Итого	Ընդամենը Итого	Ընդամենը Итого	Ընդամենը Итого	Ընդամենը Итого	Ընդամենը Итого	Ընդամենը Итого	

Դիմող
Заявитель

ՄԻԿ / ՄԻՊ

ՓԻՕ

Կնիք/ստորագրություն/подпись

Հավելված 2

Приложение 2

N	ՁԱՎԿ Մեկնամուրթյան և քրեականացման միջոցների ազդանշանային միջին հավանադրական		Այլ, ոտըրջուողի ուղիղ սեփականության հասցեներ Телефон, факс, эл. почта СМЯՏԵԼԵ
	Հավանադրական ազդանշան (անվանում, համարներ) Личные данные (имя, фамилия, отчество)	Ազդանշանային ազդանշան (անվանում, համարներ) Паспортные данные (номер и серия паспорта, страна)	
1		2	3
2			
3			
4			4

Գրվող
Заявитель _____ ՍԱՀ / ՓԾՈ

տարվաթիվեր / ոտըրջու

« _____ » _____ 2005

220

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԳԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԶԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՎԵՐԼՈՒԹՅԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԼՐԱՀՈՍԻՑ
25.11.2005

Նոյեմբերի 25-ին ՀՀ-ում ԼՂՀ Մշտական ներկայացուցչության շենքում ԼՂՀ ԱԳ Նախարար Արման Մելիքյանն ընդունեց ԵԱՀԿ-ում Բելգիայի Թագավորության հատուկ ներկայացուցիչ, սենատոր Պյեր Շելվայեի գլխավորած պատվիրակությանը:

Ձրույցի սկզբում պարոն Շելվայեն համոզմունք հայտնեց, որ ԼՂ հիմնահարցը մոտ ապագայում լուծելու հնարավորությունները տեսանելի են դառնում: Նա հետաքրքրվեց, թե ինչպիսին է ԼՂՀ դիրքորոշումը հարցի կարգավորման հեռանկարների վերաբերյալ և այդ համատեքստում ինչ է ակնկալվում ԵԱՀԿ-ից:

ԼՂՀ ԱԳ Նախարարը համառոտ ներկայացրեց ԼՂ հակամարտության պատմությունը, պատերազմի պատճառները և հետևանքները, ԼՂՀ իշխանությունների դիրքորոշումը: Պարոն Մելիքյանն ընդգծեց Ադրբեյջանի իշխանությունների կողմից սանձազերծած էթնիկ զտումների և պատերազմի հետևանքով փախստական դարձած 500 000 հայերի խնդրի կարևորությունը: ԱԳ Նախարարը համոզմունք հայտնեց, որ փախստականներն իրավունք ունեն իրենց ընտրությամբ բնակություն հաստատել նախկին Ադրբեյջանական ԽՍՀ տարածքում: ԼՂՀ իշխանությունները պատրաստ են պաշտպանել նրանց իրավունքները և ապահովել անվտանգ գոյությունն ու զարգացման հեռանկարն այն տարածքներում, որոնց վրա ներկայումս տարածվում է ԼՂՀ ինքնիշխանությունը:

Ձրույցի ընթացքում ընդգծվեց նաև եվրոպական կառույցների և ԼՂՀ-ի միջև չմիջնորդավորված հարաբերություններ հաստատելու անհրաժեշտությունը: Այս համատեքստում արցախյան կողմն առաջարկեց ընդլայնել Հարավային Կովկասում

ԵՄ հատուկ ներկայացուցիչ Հ. Տալվիտիեի մանդատը՝ դրանում ներառելով նաև ԼՂՀ-ն:

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ
ՈՐՊԵՍ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՅԸ

Շավարշ Քոչարյան

*ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺԿ նախագահ,
ԵՆԽԻՎ Ղարաբաղի հարցով հատուկ հանձնաժողովի անդամ*

Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման հայեցակարգային մոտեցումը ենթադրում է հստակեցում կամ մոտեցումների վերահաստատում առնվազն հետևյալ փոխկապակցված 6 հարցերում՝

1. Հակամարտության իրավական կողմը.
2. Միջազգայնացման հիմնական շեշտադրումը.
3. Հակամարտության հետևանքների՝ զոհեր, տեղահանվածներ, ԼՂՀ հսկողության տակ անցած տարածքներ, հիմնական պատճառը.
4. Հայաստանի դերի և գործառույթների հստակեցում.
5. Փուլային թե՞ փաթեթային լուծում.
6. Ժողովրդավարության հայեցակարգային նշանակությունը հակամարտության կարգավորման հարցում.

Հակամարտության իրավական կողմը

Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացումը կատարյալ է, դրանով իսկ հակամարտությունը տարբերվում է այլ առկա հակամարտություններից: Իրավական տեսակետից էական է հակամարտության երկու հանգամանք.

Առաջին. Լեռնային Ղարաբաղը երբևիցե չի եղել անկախ Ադրբեջանի կազմում: 1918-20 թթ. Ղարաբաղը վիճելի տարածք

էր այն ժամանակվա անկախ Հայաստանի և Ադրբեջանի միջև: Խորհրդային ժամանակ Ղարաբաղը ինքնավար մարզի կարգավիճակով միացվել էր Ադրբեջանին՝ բոլշևիկյան Կովկասյան բյուրոյի 1921թ. որոշումով: Մակայն համաձայն 1991թ. հոկտեմբերի Ադրբեջանի անկախության մասին սահմանադրական ակտի՝ Ադրբեջանը համարել է Խորհրդային Միության կազմավորման մասին 1922թ. պայմանագիրը անվավեր այն մասով, որը վերաբերում է Ադրբեջանին: Դրանով իսկ Ղարաբաղի միացումը Ադրբեջանին համարվել է չեղյալ:

Երկրորդ հանգամանքը. Խորհրդային Միության վերջին տարիներին, համաձայն այդ պետության օրենսդրությանը, Ղարաբաղը իրավաբանորեն ձեռք էր բերել անկախություն Ադրբեջանից: 1988թ. փետրվարի 20-ին ինքնավար մարզի պատգամավորների խորհուրդը որոշում կայացրեց դիմելու Ադրբեջանի և Հայաստանի պառլամենտներին՝ ինքնավար մարզը Ադրբեջանի կազմից Հայաստանի կազմ տեղափոխելու մասին: Ադրբեջանի և միութենական պառլամենտները մերժեցին այդ խնդրանքը, Հայաստանի պառլամենտը համաձայնվեց, իսկ 1989թ. դեկտեմբերի 1-ին Լեռնային Ղարաբաղի լիազոր ներկայացուցիչների հետ համատեղ որոշում կայացվեց Հայաստանի և Ղարաբաղի վերամիավորման մասին:

Առաջացած փակուղուց իրավական էլք տրամադրեց 1990 թվականի ապրիլի 3-ի «Խորհրդային Միությունից Միութենական Հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքը: Համաձայն այդ օրենքի 3-րդ հոդվածի Միության կազմից Միութենական Հանրապետության դուրս գալու դեպքում ինքնավար կազմավորումները և հավաք բնակվող ազգային փոքրամասնությունները իրավունք ստացան դուրս գալու հանրապետության կազմից՝ դառնալով ինքնուրույն միութենական սուբյեկտ:

1991թ. օգոստոսի 30-ին Ադրբեջանը հռչակեց իր անկախությունը: Սեպտեմբերի 2-ին Ղարաբաղի ինքնավար մարզը՝ Շա-

հունյանի շրջանի հետ միասին, հռչակեց իրեն Հանրապետություն: Իրեն Հանրապետություն հռչակած Լեոնային Ղարաբաղը չմասնակցեց սեպտեմբերի 21-ի Հայաստանի անկախության հանրաքվեին: *(ԼՂՀ-ն, ի տարբերություն 1990թ. Հայաստանի խորհրդարանական ընտրությունների, ապագայում չի մասնակցել Հայաստանի Հանրապետության բոլոր մակարդակի ընտրություններին):*

1991թ. հոկտեմբերին Ադրբեջանն ընդունեց իր անկախության մասին սահմանադրական ակտը: Նույն թվի դեկտեմբերի 10-ին Ղարաբաղում անցկացվեց անկախության մասին հանրաքվե միջազգային դիտորդների հսկողությամբ: *(Ի դեպ, Ադրբեջանի անկախության հանրաքվեն անց է կացվել դեկտեմբերի 15-ին: Այդ ժամանակ տեղի ունեցավ Խորհրդային Միության լուծարումը):*

Այսպիսով, Խորհրդային Միության լուծարման պահից նախկին Ադրբեջանի Միութենական Հանրապետության տարածքում ձևավորվեցին երկու անկախ և իրավահավասար պետություններ՝ Ադրբեջանի Հանրապետությունը և Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունը: Ղարաբաղի ժողովրդի, տարածքի ու իշխանությունների ենթակայության հարաբերությունները Ադրբեջանին դադարեցվել են օրինական ձևով: Դրա հետևանքով Լեոնային Ղարաբաղի ժողովրդը օրինական ձևով հաղթահարել է տարածքային ամբողջականության սկզբունքը՝ կիրառված Ադրբեջանի նկատմամբ:

1992թ. հունվարին Լեոնային Ղարաբաղի խորհրդարանը ձևավորեց կառավարություն և դիմեց աշխարհի բոլոր երկրներին՝ իր անկախությունը ճանաչելու առաջարկությամբ:

Խնդրի միջազգայնացման հիմնական շեշտադրումը

Լեոնային Ղարաբաղի հարցի միջազգայնացումը կարող էր ունենալ 3 հիմնական ուղղվածություն՝

1. Բռնի բաժանված ժողովրդի վերամիավորում.

2. Ազգային փոքրամասնության իրավունքների երաշխավորում.
3. Անկախ պետություն դառնալու ինքնորոշման իրավունքի իրականացում.

Առաջին մոտեցումը ենթադրում է ջանքեր՝ ուղղված վերամիավորված Հայաստանի և Լեոնային Ղարաբաղի՝ որպես մեկ պետության, ճանաչմանը: Ըստ էության, այդ ուղղությունը գործում էր մինչև 1991թ. սեպտեմբերի 2-ի Լեոնային Ղարաբաղի անկախության հռչակումը և ունի մասնապատկան հիմքեր: Այդ ուղղությունը ենթադրում է միջազգային հանրության ավելի մեծ դիմադրություն և հղի է հակամարտությունը որպես երկու պետությունների՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքային վեճ, իսկ Հայաստանը՝ որպես զավթիչ ներկայացնելու վտանգով:

Երկրորդ մոտեցումը միտված է այս կամ այն աստիճանի Լեոնային Ղարաբաղի ինքնավարությանը Ադրբեջանի կազմում և հակասում է Լեոնային Ղարաբաղի ժողովրդի արտահայտած կամքին:

Երրորդ մոտեցումը՝ *անկախ պետություն դառնալու ինքնորոշման իրավունքի իրականացումը, բխում է Լեոնային Ղարաբաղի ժողովրդի փաստացի իրականացված քայլերից և պետք է կազմի Ղարաբաղի հարցի կարգավորման հիմնական ճողը:*

Ցավոք սրտի մինչև 1998թ. Հայաստանի իշխանությունների վարած քաղաքականությունը միտված էր հարցի միջազգայնացման երկրորդ ուղղության վրա շեշտադրմանը, իսկ 1998թ-ից հետո՝ առաջինին:

Լեոնային Ղարաբաղի ժողովրդի կողմից ինքնորոշման իրավունքի իրականացումը բացառիկ է ոչ միայն վերը շարադրված անբերի իրավական կողմով, այլ նաև այն հանգամանքով, որ քավարարում է ինքնորոշման այլ հնարավոր չափանիշներին:

Այդ չափանիշներից են՝

ա) Մեկ պետության կազմում գոյատևման անհնարինությունը՝ անհանդուրժողականության պատճառով (*հայերի ջարդեր 1918-1920թթ-ին և 1988-1990թթ-ին, 1921-1988թթ-ին Ղարաբաղում հայկական բնակչության տոկոսի անկումը և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության օրինակը, 1991-1994թթ-ին Ադրբեջանի փորձերը՝ բնաջնջելու Ղարաբաղի հայությունը*).

բ) Պատմական իրավունքը (*ղարերի խորքից եկող արցախահայության պետականության շարունակ պահպանվող ավանդույթն իր անընդհատ պատմական բնակչության տարածքում, որտեղ առկա է նրա ստեղծած նյութական և հոգևոր մշակույթի հուշարձանների մի ամբողջական համալիր*).

գ) Բնակչության ազգային կազմը (*ինքնորոշված տարածքի բնակչության ավելի քան 75%-ը հայեր են*).

դ) Ինքնորոշման հետևանքների համար պատասխանատվությունը՝ անկախ պետության կայացմանը պատրաստ լինելը (*ԼՂՀ-ն արդեն մոտ 15 տարի է, ինչ կայացած է որպես անկախ պետություն՝ իր բոլոր ատրիբուտներով, ներառյալ իշխանության տարանջատում, քաղաքացիական վերահսկողության տակ գտնվող մարտունակ բանակ և պարբերաբար անցկացվող ընտրություններով ձևավորված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ*):

Հակամարտության հետևանքների՝ զոհեր, տեղահանվածներ, ԼՂՀ հսկողության տակ անցած տարածքներ, հիմնական պատճառը

Ինչու՞ Ղարաբաղի ժողովրդի օրինական քայլերը հանգեցրեցին արյունալի հակամարտության, հազարավոր զոհերի և հարյուր հազարավոր փախստականների: Որովհետև *Ադրբեջանն ի սկզբանե որդեգրեց հարցի կարգավորման ոչ թե խաղաղ բանակցային, այլ ուժային տարրերակը*: Սկսած 1988թ. փետրվարից հայերի ջարդեր իրականացվեցին Ադրբեջանի Մումգայիթ և այլ քաղաքներում, իսկ 1990թ-ին՝ Բաքվում: Էթնիկական գտման

ենթարկվեցին Ղարաբաղին հարակից հայաբնակ բնակավայրերը, իսկ 1992թ. սկզբի դրությամբ՝ բուն Ղարաբաղի տարածքի մոտ 40%-ը:

Ղարաբաղի ժողովրդին բնաջնջելու նպատակով Ադրբեջանը դիմեց նաև վարձկանների, այդ թվում մոտ 2000 թալիբանի մուջահեդների և Շամիլ Բասաևի գրոհայինների օգնությամբ: Ադրբեջանի՝ Ղարաբաղը հայաթափ անելու փորձերը տապալվեցին: Ղարաբաղի Պաշտպանության Բանակը՝ համարված Հայաստանի Հանրապետության և այլ երկրների կամավորներով, ետ մղեց Ադրբեջանի և վարձկանների բանակին և իր հսկողության տակ վերցրեց Ադրբեջանի՝ Ղարաբաղին սահմանակից, առանձին տարածքները:

Ադրբեջանն այսօր էլ խուսափում է Ղարաբաղի հետ բանակցություններից: Նա փորձում է ներկայացնել խնդիրը որպես տարածքային վեճ՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև:

Հայաստանի դերի և գործառույթների հստակեցում

Ելնելով ինքնորոշման՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման հայեցակարգային մոտեցումից, Հայաստանի Հանրապետությունը Լեռնային Ղարաբաղի հարցում ունի 3 հիմնական գործառույթ.

1. Հայաստանը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անվտանգության երաշխավորն է: Հայաստանի Լեռնային Ղարաբաղին տրամադրված օգնությունը՝ ինչպես մինչև 1994թ. զինադադարը, այնպես էլ ապագայում Ադրբեջանի հնարավոր ոտնձգությունների դեպքում համապատասխանում է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի (1981թ. դեկտեմբերի 9-ի «Ինտերվենցիայի անընդունելիության և պետությունների ներքին գործերին չմիջամտելու մասին») հռչակագրին: Այդ հռչակագիրը պնդում է, որ «պետությունների ներքին գործերին չմիջամտելը չի կարող հակադրվել

ժողովուրդների ինքնորոշման իրավունքին» և ամրագրում է «պետությունների իրավունքը և պարտականությունը լիարժեք սատարելու ժողովուրդների ինքնորոշման իրավունքին, ազատությանը և անկախությանը»:

2. Հայաստանը ԼՂՀ անկախության երաշխավորն է:

Հայաստանն իր բոլոր ջանքերը պետք է ուղղի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչմանը: Հայաստանի կողմից ԼՂՀ անկախության չճանաչումը հնարավորություն չի տալիս Հայաստանին լիարժեք հետամուտ լինելու ԼՂՀ-ի ճանաչմանը այլ պետությունների կողմից: Բացի այդ չճանաչման պարագայում միջնորդ միջազգային կազմակերպությունները և պետությունները ավելի են հակված պարտադրելու Լեռնային Ղարաբաղի ինքնավար կարգավիճակը Ադրբեջանի կազմում և ընկալելու հակամարտությունը որպես Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքային վեճ:

3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԼՂՀ-ն դեռևս ճանաչված չէ և չի հանդիսանում միջազգային կազմակերպությունների անդամ, Հայաստանը պետք է նպաստի, որպեսզի միջազգային հանրությանը հասնի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ծայրը:

Բայց ոչ մի դեպքում Հայաստանը չպետք է իրենով փոխարինի Լեռնային Ղարաբաղը: Մասնավորապես Հայաստանի պաշտոնյաների մասնակցությունը բանակցային գործընթացին չպետք է պատրանք ստեղծի, որ առանց Լեռնային Ղարաբաղի մասնակցության հնարավոր է հասնել հարցի կարգավորմանը: Ավելին, Հայաստանի իշխանությունների ջանքերը պետք է ուղղված լինեն Լեռնային Ղարաբաղի լիարժեք ներգրավմանը բանակցային գործընթացին:

Փուլային քե՞ փաթեթային լուծում

Փուլային կամ փաթեթային անվանումները չպետք է քողարկեն հակամարտության կարգավորման հիմնական խնդիրը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կարգավիճակի և անվտանգության այլ երաշխիքների ամրագրումը: Առկա փուլային լուծումների առաջարկությունները անընդունելի են մասնավորապես այն պատճառով, որ շրջանցում են Լեռնային Ղարաբաղի անկախության հարցը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերահսկողության տակ գտնվող Ադրբեջանի տարածքներն, ինչպես նաև Ադրբեջանի հսկողության տակ հայտնված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքները, արդյունք են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ ուղղված Ադրբեջանի ագրեսիայի և տարածքների հարցը կարող է լուծվել միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության և Ադրբեջանի կողմից ԼՂՀ զավթած տարածքների հարցերի լուծման հետ միասին:

ԼՂՀ վերահսկողության տակ գտնվող տարածքները նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի անվտանգության երաշխիքն են և միայն ԼՂՀ-ն կարող է քննարկել հարցեր՝ կապված այդ տարածքների հետ:

Ժողովրդավարության հայեցակարգային նշանակությունը հակամարտության կարգավորման հարցում

Ինչպես ժողովրդավարության, այնպես էլ ինքնորոշման հիմքում են ժողովրդի արտահայտած կամքի անվերապահորեն հարգումը: Այդ տեսակետից ժողովրդավարության հաստատումը քե՛ ԼՂՀ-ում, քե՛ ՀՀ-ում, հիմնարար նշանակություն ունի ԼՂՀ ճանաչման համար:

Այդ ուղղությամբ Լեռնային Ղարաբաղում կատարված են դրական քայլեր: Մասնավորապես Ստեփանակերտի քաղաքապետն՝ ի տարբերություն Երևանի և Բաքվի քաղաքապետերի, ընտրվում է բնակչության կողմից, իսկ 2003թ. ընդդիմության

ներկայացուցիչները հաղթեցին թե՛ Ստեփանակերտի քաղաքապետի, թե՛ մի շարք այլ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում: ԼՂՀ-ն ակնհայտորեն ավելի ժողովրդավարական է, քան Ադրբեջանը: ԼՂՀ-ին բնորոշ չեն ընտրությունների ժամանակ զանգվածային կեղծիքներ և բռնություններ: Բայց դա բավարար չէ: Լեռնային Ղարաբաղը պետք է հասնի եվրոպական չափանիշներին համապատասխանող ժողովրդավարության:

Հայաստանի իշխանությունները չեն կարող արդյունավետ հետամուտ լինել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի արտահայտած կամքի միջազգային ճանաչմանը, քանի դեռ արհամարհում են ժողովրդի կամքը Հայաստանում: Անընդունելի են նաև Հայաստանի պաշտոնյաների կողմից կատարված հայտարարությունները Հայաստանի և Ղարաբաղի վերամիավորված լինելու մասին, քանի որ արհամարհում են Լեռնային Ղարաբաղի ժողովրդի հստակ արտահայտած կամքը: Միջազգային կառույցներում ժողովրդավարության հաստատման հետ կապված պարտավորությունների չկատարումը ոչ միայն թուլացնում է Հայաստանի դիրքերը միջազգային ասպարեզում, այլ նաև հղի է ՀՀ իշխանությունների վրա Լեռնային Ղարաբաղի հարցով միջնորդված ճնշում իրականացնելու վտանգով (ԵԱՀԿ, Լիսաբոն՝ 1996թ., ԵԽՆՎ, Ստրասբուրգ՝ 2005թ.):

«Այբեկ» թ.թ. 16, 17, 18, Մայիս, 2005թ.

«ԱՂԻԲԵԶԱՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ.
ԿՈՐՍՎԱՆԻ ՀԱՅՐԵՆԻՔ.
ՀԱՍԱՐԺԵՔ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ»

ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆՅՈՒԹԵՐԸ
ԵՐԵՎԱՆ, 19.12.2005

Նախատեսված չէ վաճառքի համար

Խմբագիրներ՝ Ա. Վ. Մելիքյան, Է. Չ. Ասատրյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ծանճապանյան
Մրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան
Համակարգչային ձևավորումը՝ Օ. Ղ. Թերզյանի

Պատվեր՝ 8: Տպաքանակ՝ 500:

«Նաիրի» հրատարակչություն» ՓԲԸ
Երևան-9, Տերյան 91